Ռ.Ն.ՍԱՐԻՆՅԱՆ
Վ.Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՐԿՈՒ ԴԱՐԸ

Գիտակենսագրական հանրագիտարան

I

Ա - Հ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 330(479.25)(091):030
ԳՄԴ 65.02(5Հ)+92
Ս 265

Երաշխավորված է հրատարակության ՀՀ ԳԱԱ
Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Սարինյան Ռ.Ն., Հարությունյան Վ.Լ.

Ս 265 Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը. գիտակենսագրական հանրագիտարան (Ա-Հ): Երկու գրքով / Սարինյան Ռ.Ն., Հարությունյան Վ.Լ., Եր.: «Գիտություն» հրատ., 2017. – 464 էջ:

Աշխատությունն արտացոլում է հայ տնտեսագետների համայնքի հետազոտական պարագծերը՝ սկսած XIX դարի կեսերից: Որպես հանրագիտական տեղեկատու՝ օգտակար կարող է լինել ոչ միայն տնտեսագիտական մշակույթի ներկայացուցիչների, այլև հասարակության լայն շրջանների համար:

ՀՏԴ 330(479.25)(091):030
ԳՄԴ 65.02(5Հ)+92

ISBN 978-5-8080-1270-7

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 7

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ ԳԵՎՈՐԳԻ 9
ԱԴԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ ԻՎԱՆԻ 12
ԱԴՈՆՑ ԿԱՐԵՆ ՎԼԱԴԻԿԻ 15
ԱԴՈՆՑ ՄՈՒՇԵՂ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ 18
ԱՁԱՏՅԱՆ ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ.....22
ԱՁԳԱԼԴՈՎ (ԱՁԳԱԼԴՅԱՆ) ԳԱՐՐԻ ՀԱՅԿԻ 25
ԱՁՐՈՅԱՆՑ ԷԴՈՒԱՐԴ ԱՐՍԵՆԻ.....29
ԱԹՈՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ԼՈՒԿԱՇԻ 34
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ ՀԱԿՈԲԻ 38
ԱԼՉԻՅԱՆ ԱՐՄԵՆ ԱԼԲԵՐՏԻ 41
ԱԽԻՆՈՎ (ԱԽԻՆՅԱՆ) ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՒՇԻ.....49
ԱՂԱՆԲԵԳՅԱՆ ԱԲԵԼ ԳՅՈՁԻ.....51
ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՈՎՍԵՓ ԻՎԱՆԻ 59
ԱՃԵՄՕՂԼՈՒ ՏԱՐՈՆ.....65
ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ.....73
ԱՆԱՆՅԱՆ ԼԱՎՐԵՆՏԻ ԶԱՔԱՐԻ 78
ԱՆԱՆՈՒՆ ԴԱՎԻԹ (ՏԵՐ– ԴԱՆԻԵԼՅԱՆ).....81
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐԱՄ ՀՄԱՅԱԿԻ 86
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԱՐՇԱԿԻ.....90
ԱՍԼԱՆՅԱՆ ԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ 94
ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՈՎ ՎԼԱՍԵԿ ՍԵԴՐԱԿԻ 97
ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՎԱԳ ԲԱԽՇԻԻ 98
ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ 100
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԻՇԽԱՆ ԱՐՏԱՇԻ.....103
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՍԵՐՅՈԺԱՅԻ 107
ԱՐԱՍԽԱՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ ՄԿՐՏՈՒՄԻ 111
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՂԱՖՈՆԻ.....120
ԱՐԾՐՈՒՆԻ ԳՐԻԳՈՐ ԵՐԵՄԻԱՅԻ.....123
ԱՐՇԱԿՅԱՆ ԱԼԲԵՐՏ ՀԱՅԿԻ.....129

ԲԱԳՐԱՏՅԱՆ ՀՐԱՆՏ ԱՐԱՐԱՏԻ 133
ԲԱԴԱԼՅԱՆ ՍՄԲԱՏ ԱՂԱԼՈՅԻ.....140
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԵՎՈՒՇ ՎԱՀԱՆԻ 142
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ ՎԱՂԻՆԱԿԻ.....144
ԲԱՅԱԴՅԱՆ ԱՇՈՏ ՀԱԿՈԲԻ.....147
ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ՋԱՔԱՐԵ ԳԵՎՈՐԳԻ.....152
ԲԵՆՈՒՆԻ ՀՄԱՅԱԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ 154
ԲՈՍՏԱՆՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ 156
ԲՈՒԳԱՅԱՆ ԻԼՅԱ ՌՈՒԲԵՆԻ 163
ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՄԵՆՏՈՐ ԱԲՐԱՀԱՄԻ 167

ԳԱԼՈՅԱՆ ԴԻԱՆԱ ՌՈԲԵՐՏԻ.....176
ԳԱՍՊԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ՌՈՒԲԵՆԻ 178
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՇՈՏ ՄՈՒՇԵՂԻ 180
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԻՀՐԱՆ ԱՐԱՄԻ 182
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱԼԲԵՐՏԻ.....186
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶԻ.....190
ԳՅՈՒՐՋՅԱՆ ԱՐԱ ՍՄԲԱՏԻ 193
ԳՈՄՑՅԱՆ ԱՐԱՐԱՏ ԴԱՎԻՆԻ 198
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԻ 201
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԻԱՆԱ ՀԱՅԿԱԶԻ 203
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ԱՇՈՏԻ 205
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԻՀՐԱՆ ԱՎԵՏԻՍԻ.....207
ԳՈՒԼԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԳՐԻԳՈՐԻ.....209
ԳՈՒԼԻՇԱՄԲԱՐՈՎ ՍՏԵՓԱՆ ԻՈՍԻՖԻ.....212

ԴԱԴԱՅԱՆ ՎԼԱԴԻՍԼԱՎ ՍՈՒՐԵՆԻ.....219
ԴԱՆԻԼՈՎ-ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ ԻՎԱՆԻ.....224
ԴԱՎՈՅԱՆ ՍԱՄՍՈՆ ԱՇՈՏԻ 231
ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՌԱՋՄԻԿԻ 234
ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ 236
ԴԱՐԲԻՆՅԱՆ ԳՐԻՇԱ ՍԱՐԻԲԵԿԻ.....241

ԵԳԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՆԻԿՈԼԱՅԻ 243
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ ՀՈՎՍԵՓԻ 246
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՇՈՏ ԱՐՇՐՈՒՆԻ 254
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՏԻ 257
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ԱԴԱՄԻ 262
ԵՐԶՆԿՅԱՆ ԲԱԳՐԱՏ ՀԱՅԿԻ 270
ԵՐԻՑՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴԱՎԹԻ.....274

ԶԱՎԱՐՅԱՆ ՍԻՄՈՆ ՄԵԼԻՔԻ.....278
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ ԵՂԻՇԵԻ.....283
ԶՈՐԱՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԿՐՏՉԻ 286
ԶՈՐՅԱՆ ՀԱԿՈԲ ՆՇԱՆԻ 291
ԶՈՒՐԱԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՇԱՐԲԱԹԻ.....294

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԶՈՅԱ ԱՂՎԱՆԻ 297
ԹԱՎԱԴՅԱՆ ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ 300
ԹՈՎՄԱՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ ՌԱՖԱՅԵԼԻ.....305
ԹՈՐՈՅԱՆ ՎԱՍԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ 310
ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐՇՐՈՒՆԻ ԵՐԶԱՆԻԿԻ.....314
ԹՈՐՈՍՅԱՆ ԹՈՐՈՍ ՇԱՀԵՆԻ 317
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆՈՍԻ 320

ԻՇԽԱՆՅԱՆ ԲԱԽՇԻ ԶԱՔԱՐԲԵԿԻ.....322

ԼԻՍԻՑԻԱՆ ՆԱԶԵԼԻ ՍՏԵՓԱՆԻ 330

ԽԱՆԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԳՈՒՐԳԵՆԻ 332
ԽԱՉԱՏՈՒՐՈՎ ՏԻԳՐԱՆ ՍԵՐԳԵՅԻ.....334
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐՈ ՀԱԿՈԲԻ 340
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ ԵՐՎԱՆԴԻ 341
ԽԼՂԱԹՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ ԵՐԵՄԻ 344
ԽՈՋԱԲԵԿՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԵՂԻՇԻ.....347
ԽՈՐԱՍԱՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԱՐՄԵՆԱԿԻ 352
ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ՆԻԿՈԼԱՅԻ 355

ԾՊՆԵՑՅԱՆ ՀՐԱՉՅԱ ՍԵՐԳԵՅԻ 358

ԿԱԶՈՒՄՈՎ ՀՐԱՉՅԱ ԲԱԳՐԱՏԻ 361
ԿԱԼԵՆՁՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՕՀԱՆԻ 362
ԿԱՐԱԳԵՈՎ ՌԱՅՄՈՆԴ ԳԱՐԵԳԻՆԻ.....366
ԿԱՐԱԳՅԱՆ ԿԱՐՊԻՍ ՊՈՂՈՍԻ 370
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ.....372
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ ՎԻԼՀԵԼՄԻ.....375
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՐՄԵՆԻ.....380
ԿԱՐՃԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ 383
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՍԱՐԻԲԵԿԻ 385
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՂԻՇԻ 389
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ (ՍԵՐԳԵՅ) ԼԱՎՐԵՆՏԻԻ 392
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎՌԱՄ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ 395

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԴԱՎԻԹ ՆԵՐՍԻԿԻ 397
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՇՄԱՏԻ 402
ՀԱԿՈԲՅԱՆ ԼԵՈՆԻԴ ՍԱՄՍՈՆԻ 405
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՍԵՐԳԵՅԻ 407
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱՐՄԵՆԻ 413
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏԻ 415
ՀԱՅՐՈՒՄՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ.....417
ՀԱՅՐՈՒՄՅԱՆ ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳԻ 419
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿ ԳԱՐՈՒՇԻ 422
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՐՈՒՇ ՍՈՂՈՄՈՆԻ.....429
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ 431
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՄԱՉԱՍՊ ՀՈՎԱԿԻՄԻ 436
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԼԵՆԻ.....438
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ 440
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ 446
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԻՐԻՆԱ ՌՈՒԲԵՆԻ 458
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԲԳԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ 461

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայ տնտեսագիտական մտքի ակունքները սկիզբ են առնում հնագույն ժամանակներից, հայ պատմիչների աշխատություններում և այլ աղբյուրներում կարելի է հանդիպել դիտողությունների բնաիրային տնտեսության, կենցաղի, տնտեսության կարգավորման տարբեր հարցերի շուրջ, սակայն դրանցում ուրվագծվում է հայ տնտեսագիտական մտքի նախապատմությունը: Պարզ ու որոշ էին տնտեսության հիմքերը: Այդպիսին էին նաև դրանց մասին հայացքները: Եվ միայն XIX դարի կեսերին է, որ հայ տնտեսագետները հարցերի քննությունը սկսում են կատարել արևմտյան տնտեսագիտական դպրոցներին բնորոշ հասկացություններով ու կատեգորիաներով: «Հայ տնտեսագետներ. գիտակենսագրական ուրվագծեր» (2010) աշխատությունը, որը, ինչպես նշվում է ներածականում, արտահայտում էր XIX դարի կեսերից սկսած «Հայ տնտեսագիտական մտքի անցած ուղին, հետազոտական շրջանակների հետագիծը, տնտեսական հարցերի բարդ ու հակասական լուծումների, վերելքների ու վայրէջքների պատմությունը»: Աշխատության արծագանքը պատշաճ էր հասարակագիտական մտավորականության շրջանակներում: Սակայն, ինչպես հանրագիտարանական բնույթի աշխատության առաջին փորձի, նրանում ընդգրկվածների ցուցակը որոշակի պայմանականությամբ սահմանափակ էր: Սույն՝ «Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը. գիտակենսագրական հանրագիտարան» աշխատությունը լրացվել է նոր անուններով, օգտագործելով նոր աղբյուրներ, նոր գրականություն, ընդլայնել նրանց հետազոտական շրջանակներն ու հայացքների համակարգը, ուրվագծելով հայ տնտեսագիտական մտքի թեմատիկ ընդ-

գրկումների քարտեզը: Նրանում տարբեր առնչություններում հիշատակումներ են կատարվել հայ հասարակական մտքի բազմաթիվ ներկայացուցիչների վերաբերյալ, որոնց արծարծումները, թեև չունեին լայն ընդգրկումներ, սակայն մի հայտնի չափով մասնակից էին ժամանակի որոշակի տնտեսական հատվածի արտացոլմանը: Աշխատությունն առավել ռելիեֆ է ուրվագծում հայ տնտեսագիտական մտքի պարագծերը: Արդյունքում հրապարակի վրա է դրվում, ըստ էության, նոր աշխատություն: Այն կարելի է օգտագործել որպես հանրագիտարանական տեղեկատու, անձնավորված հայ տնտեսագետների համայնքի անուններում (իրենց լուսանկարներով) և օգտակար լինել ոչ միայն հայ տնտեսական մշակույթի պատմությամբ հետաքրքրվողների, այլ նաև լայն շրջանների համար: Աշխատությունն ունի նաև աղբյուրագիտական նշանակություն*:

Վլադիմիր Հարությունյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

* Հեղինակների գիտակենսագրական ուրվագծերում հիմնականում ուշադրության են առնվել մենագրական հետազոտությունները: Նշվել են միայն կառավարական պարգևները:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ ԳԵՎՈՐԳԻ

(1953)

Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1970-75-ին սովորել և ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում «Մեքենաշինական արդյունաբերության էկոնոմիկա և կազմակերպում» մասնագիտությամբ՝ ստանալով ինժեներ-տնտեսագետի որակավորում: 1979-ին ընդունվել է Մոսկվայի Ն.Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական համալսարանի ասպիրանտուրան, որտեղ 1983-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ նույն մասնագիտությամբ: 1975-79-ին և 1983-2003-ին աշխատել է Երևանի հաստոցաշինական արտադրական միավորումում՝ զբաղեցնելով գլխավոր տնտեսագետի, փոխնախագահի (1990-97), գլխավոր տնօրենի (1997-2003) պաշտոնները: 2004-ին անցել է դասախոսական աշխատանքի Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանում: 2011-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 2016-ին ստացել է պրոֆեսորի կոչում:

«Проблемы экономики и управления предприятиями, отраслями, комплексами» մենագրությունում Վ.Աբրահամյանի արծարծումները լայն շառավիղների մեջ իրենց խորացումներն են ստացել նրա հետագա ուսումնասիրություններում և հատկապես «Բազմաանվանացանկային մեքենաշինական արտադրության արդյունավետության բարձրացումը կազմակերպական-ինովացիոն գործընթացների կառավարման միջոցով» աշխատության մեջ: Նրանում ուրվագծվում են հաստոցաշինության՝ որպես մեքենաշինության առաջատար ճյուղերից մեկի, պատմությունն ու նշանակությունը հանրապետությունում տնտեսության վերակառուցման արդյունավետության բարձրացման և տնտեսական աճի ապահովման համար: Հաստոցաշինական արտադրությունը հանրապետությունում դարձել էր խորհրդային երկրի առաջատարներից: Սակայն, աշխարհաքաղաքական փոփոխությունների, 1990-ական թվականների ապապետականացման ու սեփականաշնորհման գործընթացների արդյունքում փոշիացվեց ճյուղի նյութական ու մարդկային կարողությունները: «Անցյալը ոչ թե պետք է փակի ապագայի ճանապարհը, այլ պետք է ուղղորդի այն կերտելուն...»: Սա է այն դիտակետը, համաձայն որի Վ.Աբրահամյանը հիմնավորում է բազմաանվանացանկային մեքենաշինական արտադրության վերակառուցումը հետևյալ ուղղություններով.

- արտադրական-կորպորատիվ համակարգի կազմակերպական կառուցվածքի կատարելագործման գործընթացների կառավարման միջոցով,
- արտադրական-տեխնոլոգիական համակարգի կատարելագործման կազմակերպական-ինովացիոն գործընթացների կառավարման միջոցով:

Աշխատության անվանումն արտահայտում է հեղինակի նպատակադրման գլխավոր առաջադրույթը, որի իրացումը

կատարվում է վերլուծության հետևյալ ընթացքով՝ բազմաանվանացանկային մեքենաշինական արտադրության

- աշխատատարության մեծության որոշման տեսական հիմքերը,
- աշխատատարության ու նյութատարության կառավարման հայեցակարգի մշակումը,
- կազմակերպչական արտադրական-կորպորատիվ համակարգի կառուցվածքի արդյունավետ գործունեության ապահովման կազմակերպական և արտադրական-տեխնոլոգիական գործընթացների ստեղծման ու կառավարման մեթոդաբանությունը,
- կազմակերպական-ինովացիոն գործընթացների կառավարման համակարգի մշակումը:

Աշխ., Проблемы экономики и управления предприятиями, комплексами. Книга №9. Монография (В.Г.Абрамян, Н.И.Белоконь, Н.В.Бушуева и др.), под общ. ред. С.С.Чернова, Новосибирск: ЦРНС, 2009, Բազմաանվանացանկային մեքենաշինական արտադրության արդյունավետության բարձրացումը կազմակերպական-ինովացիոն գործընթացների կառավարման միջոցով, Եր., 2010, Գործնական լոգիստիկա.արտադրանքի կյանքի պարբերաշրջանի փուլերի լոգիստիկական-կողմնորոշիչ կառավարումը (ուսումնամեթոդական ձեռնարկ), Եր., 2014, Логистика:управление бизнес-процессами в интегрированных логистических цепях поставок (Практикум. Учебное пособие), Ер., 2015.

ԱԴԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ ԻՎԱՆԻ

(1929-1989)

Ծնվել է ՀՍՍՀ Շամշադինի շրջանի Ներքին Կարմիր աղբյուր գյուղում (այժմ՝ Տավուշի մարզում): 1953-ին ավարտել է Մոսկվայի Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիան: 1980-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան, իսկ 1982-ին՝ պրոֆեսորի կոչում: 1985-ից եղել է ՀՍՍՀ պետագրոարդի կառավարման բարձրագույն դպրոցի էկոնոմիկայի ամբիոնի վարիչ: Նրա գիտական հետաքրքրությունները վերաբերում են հողի տնտեսական գնահատման հարցերին: Խորհրդային տնտեսագիտական գրականության մեջ տասնամյակներ տիրապետում էր այն կարծիքը, համաձայն որի, եթե սոցիալիզմի պայմաններում ընդունվի տնտեսական գնահատման անհրաժեշտությունը, ապա պետք է ընդունվի նաև կապիտալիստական տնտեսաձևին բնորոշ հողի նկատմամբ մասնավոր սեփականությանը բնորոշ բոլոր կատեգորիաների գոյությունը: Սակայն, հատկապես 1960-ական թվականների կեսերից սկսած խորհրդային երկրում ընդունվեցին մի շարք տնտեսական ակտեր ու իրավական վարչական միջոցառումներ՝ ուղղված բնական ռեսուրսների

պահպանման ու ռացիոնալ օգտագործման ուղղություններին: Վերջինս ինտենսիվ գյուղատնտեսական արտադրություն վարելու պահանջն է: Իսկ դա հնարավոր է, եթե գործի դրվեն բնական հարստությունների ռացիոնալ օգտագործման տնտեսական լծակները: Սույն հարցերը, որոնք արծարծվել են Լ.Ադամյանի «Экономическая оценка земли» (Կ.Պ.Պոսոշնիկովայի համահեղինակությամբ) գրքում, իրենց հետագա շարունակությունը ստացել են «Հողի գնահատման տնտեսական պրոբլեմները Հայկական ՍՍՀ-ում» (Ն.Մ.Մանասերյանի համահեղինակությամբ) աշխատության մեջ: Հողը ԽՍՍՀ-ում ազգայնացված էր և ենթակա չէր առք ու վաճառքի, սակայն, նրա կարծիքով, հողային հարաբերությունները չեն կարող դուրս լինել հողի օբյեկտիվ տնտեսական գնահատման ազդեցությունից: Միայն վարչական միջամտության եղանակով՝ ելակետ ունենալով ռեսուրսների անվճար օգտագործման կոնցեպցիան, երբ հայտնի չեն տվյալ հողամասի դրամական գնահատականը, նրա գինը, հնարավոր չէ որոշել նաև պահպանման հանրորեն անհրաժեշտ ծախսերը և լուծել բնության պահպանման խնդիրը զուտ տնտեսական առումով, ինչպես նաև անհնար է գիտականորեն հիմնավորել գյուղատնտեսական ձեռնարկությունների պետական պարտավորությունների ծավալը: Գոյություն ուներ համամիութենական մշակված մեթոդաբանություն, համաձայն որի երկրի հողի համեմատական տնտեսական գնահատումը պահանջվում էր կատարել՝ հողի ընդհանուր գնահատման (կիրառելով համախառն արտադրանքի արժեքի, ծախսերի հատուցման և դիֆերենցիալ եկամտի մեծության ցուցանիշները) և ըստ առանձին կուլտուրաների արդյունավետության (բերքատվություն, ծախսերի հատուցում, դիֆերենցիալ եկամուտ) ուղղություններով: Հանրապետությունների և մար-

զերի հողագնահատման արդյունքները համեմատելի դարձնելու համար համախառն արդյունքի արժեքը հաշվարկվում է միասնական գներով, որի հիմքում դրվում էին վատագույն պայմաններում կատարված անհրաժեշտ ծախսերը: Միաժամանակ Լ.Ադամյանը նշված մեթոդաբանության մեջ կատարել է որոշ փոփոխություններ, առաջարկել ՀՍՍՀ գյուղատնտեսության օգտագործելի հողերի գնահատման կոնկրետ սկզբունքներն ու ներկայացրել հանրապետության կարևորագույն հողատեսքերի համեմատական և բացարձակ դրամական գնահատման որոշ արդյունքներ:

Աշխ., Экономическая оценка земли, Ер. 1970 (соавтор К.П.Посошникова), Հողի գնահատման տնտեսական պրոբլեմները Հայկական ՍՍՀ-ում, Եր., 1979 (Ն.Մ.Մանասերյանի համահեղինակությամբ):

ԱԴՈՆՑ ԿԱՐԵՆ ՎԼԱԴԻԿԻ

(1962)

Ծնվել է Երևանում: 1985-ին ավարտել է Ուկրաինայի Դնեպրոձերժինսկի ինդուստրիալ ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետը: 1985-88-ին աշխատել է «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորումում որպես ինժեներ-տեխնոլոգ և ապա տնտեսագետ: 1989-ին ընդունվել է Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի ասպիրանտուրա: 1991-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1991-93-ին եղել է Երևանի տեխսարքավորումների արտադրական միավորման գլխավոր տնօրենի տեղակալ տնտեսական հարցերի գծով, 1993-96-ին՝ Հայ-ավստրալիական համատեղ ձեռնարկության տնօրեն: Ղեկավարել է ՏՀԻ-ի տնտեսական վերլուծությունների կենտրոնը: 1997-98-ին ԱՄՆ-ում իրականացրել է հետազոտություններ «Հայաստանի տնտեսության ռազմավարությունը» թեմայով: 1998-ին «Проблемы стратегического развития промышленности РА в переходном периоде» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1999-ից աշխատել է որպես ՀՀ արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի տեղակալ:

Նրա գիտական հետաքրքրությունները վերաբերում են Հայաստանի արդյունաբերության զարգացման հիմ-

նական ուղղությունների հարցերին: Նշված խնդիրներն են քննարկվում նրա «Стратегическое управление в промышленности (промышленность Армении перспективы развития)» մենագրության մեջ: Նրանում տրվում է 1990-ական թվականների վերջերի հանրապետության տնտեսության մակրոտնտեսական գնահատականը, կատարվում արդյունաբերական կառուցվածքի և շուկաների պրոբլեմային վերլուծություն, գնահատվում արդյունաբերության ներդրումային հեռանկարը և արդյունավետության մակարդակը: Հայրենական արդյունաբերության արագ զարգացման կարևոր խնդիր է դիտվում մի քանի խոշոր արդյունաբերական խմբերի ստեղծումը (յուրաքանչյուրում միավորելով 15-20 խոշոր և միջին ձեռնարկություններ): Այդպիսի միավորումները, հետագայում ունենալով նաև սեփական բանկերը և առևտրական ընկերությունները, հնարավորություն կտան յուրացնելու արտաքին շուկաները, կրճատելու ներգրավված կապիտալի ընդհանուր և առևտրատրանսպորտային ծախքերը, կտրուկ բարձրացնելու արտադրության արդյունավետությունը: Կառուցվածքային նորոգությունների և հայրենական արդյունաբերության վերափոխումների համար առանձնացվում են երեք հիմնական պայմաններ. ա) բարենպաստ մակրոտնտեսական իրավիճակի ստեղծում (ցածր ինֆլյացիա, ցածր տոկոսադրույքներ, բարենպաստ հարկային և մաքսային պայմաններ), բ) շուկաների արագ և որակյալ հետազոտում, ստրատեգիական նշանակության ուղղությունների և հեռանկարային ապրանքատեսակների ընտրություն, ռացիոնալ ներդրումային նախագծերի մշակում, անհրաժեշտ սարքավորումների ու տեխնոլոգիաների ձեռքբերում, համապատասխան կադրերի պատրաստում, գ) ներդրումային նախագծերի ժամանակին և արդյունավետ իրացում, կազմակերպչական կառուցվածքների ստեղծում:

Արդյունաբերության ռազմավարական կառավարման հարցերին է նվիրված նաև «Главные рынки Армянской промышленности и основные направления струк-

турных преобразований» աշխատությունը: Նրանում մեծ տեղ է հատկացվում կազմակերպչական վերափոխությունների բնույթին, արդյունաբերական ձեռնարկությունների շահութաբերությանն ու արդյունավետությանը:

Ելակետ ունենալով շուկայի նոր պայմանները՝ հանրապետության արդյունաբերության համար նշվում են կազմակերպչական վերափոխությունների մի քանի տարբերակներ, ինչպիսիք են.

- արդյունաբերական արտադրանքի անվանացանկից շուկայում մրցունակ արտադրանքի ընտրությունը: Այստեղ ներդրումային քաղաքականությունը նպատակ կունենա սարքավորումների համակազմի և տեխնոլոգիաների որակական բարելավումը,
- ձեռնարկություններում գոյություն ունեցող տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորություններով բացարձակապես նոր արտադրանքի թողարկումը,
- տեխնոլոգիական դիվերսիֆիկացիա, որը ենթադրում է ձեռնարկությունների տեխնոլոգիաների և տեխնիկական համակազմի փոփոխություն:

Տնտեսության պետական կարգավորման ուղղությունների առումով դիտարկվում են հարկային և վարկային քաղաքականության առանձնահատկությունները: Առաջարկվում է հարկային բեռն իջեցնել մինչև արագ զարգացող երկրների մակարդակը, պարզեցնել հարկային քաղաքականությունը և սահմանել լիարժեք հարկային կարգապահություն, առանց որի տնտեսության բոլոր կարգավորիչ միջոցառումները կմնան անարդյունք:

Աշխ., Стратегическое управление в промышленности (промышленность Армении перспективы развития), Ер., 1997, Главные рынки Армянской промышленности и основные направления структурных преобразований, Ер.,1998, Проблемы анализа эффективности производства в промышленности Армении, Ер.,1998, Экономичепкий рост и инвестиционная политика (Вопросы стимулирования инвестиционной активности в промышленности), Ер.,1998.

ԱԴՈՆՑ ՄՈՒՇԵՂ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

(1910-1994)

Ծնվել է Բաքվում: 1922-ին Ադոնցների ընտանիքը վերադարձել է Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղ: 1930-ին ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը՝ իր աշխատանքային գործունեությունը սկսելով որպես Խնձորեսկ գյուղի դպրոցի տնօրեն: 1931-32-ին վարել է շրջժողկրթբաժնի ավագ տեսուչի պաշտոնը: 1932-ին ավարտել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը: 1932-33-ին եղել է ԵՊՀ-ում քաղաքատնտեսության ամբիոնի ասիստենտ, 1933-37-ին՝ ՀԽՍՀ Կենտրոնական վիճակագրական վարչությունում արդյունաբերության բաժնի վարիչ, 1937-45-ին՝ ՀԽՍՀ Անտառարդյունաբերության ժողկոմատում պլանային-տնտեսագիտական վարչության պետ: 1945-1948-ին սովորել է Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ասպիրանտուրայում: 1948-1955-ին եղել է ֆիզիկական կուլտուրայի հայկական ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնի, իսկ 1955-1958-ին՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի քաղաքատնտեսության սեկտորի վարիչ: 1958-1961-ին եղել է ՀԿԿ ԿԿ քարտուղար, իսկ 1962-ից՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի տեղակալ:

1957-ին լույս է տեսնում Ադոնցի «Экономческое развитие Восточной Армении» մենագրությունը, որի համար նրան շնորհվում է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Պրոֆեսորի կոչում ստացել է 1961-ին: Այդ

ուսումնասիրության երեք բաժիններում վերլուծության է ենթարկվում Արևելյան Հայաստանի տնտեսական պատմությունը՝ սկսած XVIII դարի վերջերից՝ պարսկական տիրապետության ժամանակաշրջանից մինչև XIX դարի վերջը: Այն լոկ փաստերի խրոնոլոգիա չէ, այլ հիմնարար մի աշխատություն, որը պատկերացում է տալիս պարսկական տիրապետության ժամանակ գոյություն ունեցող հասարակական-քաղաքական կարգի, հողային սեփականության և հողատիրության ձևերի, Ռուսաստանի կողմից իրականացվող հողաշինության ծրագրերի տնտեսական բովանդակության ու կառավարման կարգի, հետռեֆորմյան շրջանի տնտեսության փոխակերպության, գյուղատնտեսության և արդյունաբերության, ապրանքային կապերի աշխուժացման, հասարակության սոցիալական շերտավորման վերաբերյալ: Այդ հարցերը գալիս են լրացնելու նրա «Հայաստանի Ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին» աշխատությունը: Նրանում հարուստ վիճակագրական նյութերի վրա տրված են հատկապես հողային հարաբերությունների վերլուծությունը և տնտեսության մյուս ճյուղերի, ֆինանսների, բնակչության ու նրա սոցիալական կազմի պատմությունը՝ 1900-ից մինչև 1920 թվականն ընկած ժամանակաշրջանը: Հանգամանորեն անդրադարձ է կատարվում ցարիզմի վարչական և տնտեսական քաղաքականության բովանդակությանը: Աշխատությունն ուրվագծում է նաև Հայաստանի՝ այդ բարդ ու հակասական ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական հոսանքների և հատկապես տնտեսագիտական մտքի հիմնական ուղղությունների պատմությունն իր բազմերանգ դրսևորումներով:

Մ.Ադոնցի աշխատություններում քննարկվում են սոցիալիստական տնտեսավարման տեսության ու պրակտիկայի հարցերը: Նա կարևորում է գիտականորեն հիմնավորված հաշվեկշիռների նշանակությունը ժողովրդական տնտեսության կարևորագույն համամասնությունների ու կապերի, երկրի արտադրողական ուժերի զարգացման գործում Խորհրդային Միության հանրապետություններից

յուրաքանչյուրի դերի որոշման համար: Մասնավորապես միութենական հանրապետությունների ազգային եկամտի պլանավորման և հաշվառման աշխատանքներում առկա հակասականությունն է շեշտվում «Սոցիալիստական հասարակարգի ազգային եկամուտը» աշխատության մեջ՝ սրելով ազգային եկամտի ֆիզիկական ծավալի հաշվարկման մեթոդաբանության կատարելագործման անհրաժեշտությունը, նշելով մի շարք վիճելի հարցերի առկայությունը նաև ազգային եկամտի տեսության բնագավառում:

Ադոնցը հայ առաջին տնտեսագետներից էր, որ անդրադարձավ ագրոարդյունաբերական ինտեգրացիայի և միջտնտեսային կոոպերացիայի խնդիրներին՝ ցույց տալով միջտնտեսային կապերի ընդլայնման, գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ու կառավարման հետագա կատարելագործման ուղիները:

1966թ. կեսերին կազմակերպվում է Հայկական ԽՍՀ պետպլանի տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտը, որի առաջին տնօրեն դարձավ Մ.Ադոնցը՝ այն ղեկավարելով մինչև 1989թ.: Արդեն 1967-ին այդ ոչ մեծ կոլեկտիվը ներկայացրեց իր անդրանիկ հետազոտության արդյունքները՝ «1970-1980թթ. Հայաստանի Հանրապետության արտադրողական ուժերի զարգացման և տեղաբաշխման ուրվագիծը»: Հաջորդ տարիներին Ադոնցի ղեկավարությամբ ինստիտուտն արագ զարգացում ունեցավ, ընդլայնվեցին գիտական հետազոտությունների ոլորտներն ու շրջանակները, ստեղծվեցին նոր բաժիններ, բարձրացավ տեսական և մեթոդական հետազոտությունների տեսակարար կշիռը: Ինստիտուտը հանրապետության արտադրողական ուժերի զարգացում և տեղաբաշխում, ժողովրդական տնտեսության պլանավորման մեթոդաբանական և մեթոդական հիմնախնդիրներ, միջճյուղային և միջշրջանային տնտեսական կապեր և հաշվեկշիռներ, ժողովրդագրություն, աշխատանքային ռեսուրսներ, դրանց ձևավորման և օգտագործման հիմնախնդիրներ, գործունեության ոլորտների մասնագիտացում և արտադրության կոոպերացում, ինքնարժեք և գնագոյացում,

նյութական արտադրության առանցքային ճյուղերի զարգացման ուղղություններ, հիմնական ֆոնդերի և կապիտալ ներդրումների պլանավորման մեթոդաբանություն և արդյունավետության գնահատում, սպասարկման ոլորտի տնտեսական հիմնահարցեր, ժողովրդական տնտեսության պլանավորման գործընթացներում մաթեմատիկական մեթոդների և հաշվողական տեխնիկայի ներդրում հիմնական ուղղություններով կոչված էր հանրապետության տնտեսական զարգացման պլանների ձևավորման գործընթացներում տնտեսագիտական բարձր հիմնավորվածություն ապահովելու նպատակին: 1970-ին ինստիտուտում բացվեց ասպիրանտուրա, իսկ 1976-ին սկսեց գործել տնտեսագիտության մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդ, որը մեծապես նպաստեց հանրապետությունը որակյալ մասնագետներով համալրելուն:

Մեծ է Մ.Ադոնցի ավանդը այդ աշխատանքների իրականացման գործում: Ոչ պատահականորեն պետպլանի տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտը պարզապես սկսեց անվանվել «Ադոնցի ինստիտուտ»:

Մ.Ադոնցը միանգամայն արժանի էր տեղ զբաղեցնելու գիտության ամենավերին պատվանդաններում... Նրա պահվածքն ուսանելի է սերունդների համար: Նա պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, Աշխատանքային արիության համար մեդալով և կառավարական այլ պարգևներով:

Աշխ. Արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքը և նրա իջեցման ուղիները», Եր., 1956, Экономческое развитие Восточной Армении, Ер., 1957, Սոցիալիստական հասարակարգի ազգային եկամուտը, Եր., 1963, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Եր., 1968, Պետական պլանավորման զարգացումը Սովետական Հայաստանում, Եր., 1972, Միջտնտեսային կոոպերացիան և ագրոարդյունաբերական ինտեգրացիան, Եր., 1978:

ԱԶԱՏՅԱՆ ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ

(1881-1964)

Ծնվել է Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, ապա տեղափոխվելով Թիֆլիս, ավարտել ռեալական դպրոցը: 1903-ին մեկնում է Գերմանիա, որտեղ 1903-1905-ին ուսանել է Բեռլինի համալսարանի բժշկական ֆակուլտետում և ապա Փարիզի ու Բեռլինի հասարակական գիտությունների դասընթացներում: 1905-ին վերադառնում է Կովկաս և նվիրվում քաղաքական գործունեության: Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում, Մոսկվայում, Թիֆլիսում վարել է տարբեր կուսակցական և պետական պատասխանատու պաշտոններ: 1920-30-ական թվականներից սկսած՝ երկար տարիներ դասախոսել է Երևանի և Թիֆլիսի ուսումնական հաստատություններում՝ ավանդելով քաղաքատնտեսություն, դիալեկտիկական և պատմական մատերիալիզմ, ԽՍՀՄ ժողովուրդների պատմություն: 1928-ին ստացել է պրոֆեսորի կոչում:

Ազատյանի տնտեսագիտական աշխատությունները վերաբերում են սոցիալիստական շինարարության, գյուղատնտեսության կոոպերացման, աշխատավարձի տեսու-

թյան և այլ հարցերի: Նա դրվատում է ՆԷՊ-ը երկրի տնտեսական աշխուժացման առումով, մանր սեփականատերերի տնտեսաձևը համարում գյուղի սոցիալիստական փոխակերպությանը խոչընդոտող գործոն, իսկ կոոպերացումը՝ անհրաժեշտություն արդյունաբերության և գյուղատնտեսության հանրայնացման մակարդակների հավասարեցման և երկրի ինդուստրացումն արագացնելու առումով: Նշված հարցերը նա քննության է ենթարկել «ԽՍՀՄ տնտեսական զարգացումը և գյուղատնտեսական կոոպերացիան» մենագրության մեջ և ժամանակի պարբերական մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածներում: Տեսական հարթություն է ենթադրում նրա «Աշխատավարձի խնդիրներ» աշխատությունը: Նա արժևորում է Կ.Մարքսի ուսմունքում աշխատուժ-ապրանքի առանձնահատկությունների վերաբերյալ վերլուծությունները՝ կապված հավելյալ արժեքի արտադրության հետ: Ընդ որում, նա քննադատում է «անկրճատ եկամտի» տեսությունը, գտնելով, թե հավելյալ արժեքի արտադրությունը բնորոշ է բոլոր տնտեսաձևերին, այդ թվում նաև սոցիալիստական և կոմունիստական, որը, սակայն, ձեռք է բերում նոր սոցիալական բովանդակություն: Կոմունիզմը վերացնում է արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր սեփականությունը, որը նրա կարծիքով դեռևս չի նշանակում հարստության հավասար բաշխման, մարդկանց միջև մտավոր ու հոգևոր ունակությունների հավասարության սահմանում: Ազատյանը որոշակի կապ է հայտնաբերում աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի միջև՝ որպես «զուգահեռաբար կատարվող երկու էվոլյուցիոն պրոցեսների»:

Ազատյանը բազմիցս անդրադարձել է ագրարային հիմնահարցին, այն համարելով հասարակության պատմության ամենակնճռոտ խնդիրը: Նա դրվատում է հողի

բոլշևիկյան ազգայնացման փաստը, մերժում մանր գյուղացիական տնտեսությունների կայունության վերաբերյալ 1920-ական թվականներին տեսաբանների կողմից բերվող փաստարկները՝ կոոպերացիան համարելով գյուղատնտեսական արտադրության առավել արդյունավետ և ռացիոնալ ձևը:

Ազատյանը խմբագրել է Կ.Մարքսի «Կապիտալի» հայերեն առաջին հրատարակության երկրորդ և երրորդ հատորները:

Նա 1956-ին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ: 1961-ին նրան շնորհվել է Վրաստանի ԽՍՀ և Հայաստանի ԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Աշխ. Գյուղացիությունը և սոցիալ-դեմոկրատիան, Թիֆլիս, 1917, Գյուղատնտեսական բանվորությունը և միջազգային բանվորական շարժումը, Եր., 1925, ԽՍՀՄ տնտեսական զարգացումը և գյուղատնտեսական կոոպերացիան, Եր., 1926, Եռադաշտից դեպի սոցիալիզմ կոոպերացիայի վրայով, Եր., 1927, Աշխատավարձի խնդիրներ, Եր., 1929, Բանվորական կառավարությունը Անգլիայում, Եր., 1929:

ԱԶԳԱԼԴՈՎ (ԱԶԳԱԼԴՅԱՆ) ԳԱՐՐԻ ՀԱՅԿԻ

(1931)

Ծնվել է Մոսկվայում: 1956-ին ավարտել է Վ.Կույբիշևի անվան ռազմաինժեներական ակադեմիան: 1969-1989-ին աշխատել է նույն ակադեմիայում՝ զբաղեցնելով դասախոսից մինչև «Շինարարության էկոնոմիկա և կազմակերպում» ամբիոնի պետի պաշտոնները: 1983-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան, 1985-ին՝ պրոֆեսորի կոչում: 1989-ից աշխատում է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի մաթեմատիկական ինստիտուտում (ЦЭМИ), ինվեստիցիոն նախագծերի վերլուծության լաբորատորիայի գլխավոր գիտաշխատող: 1985-ին ստացել է զինվորական ծառայության գնդապետի կոչում:

Ազգալդովի գիտական հետազոտությունների գլխավոր ուղղություններն են.

- կվալիմետրիկական մոդելների կառուցման ճշգրտության բարձրացման տեսական հիմնահարցերի ու կիրառական գործընթացների վերաբերյալ ուսումնասիրությունները՝ կապված արտադրության ոլորտում, տրանսպորտում, բարձրագույն դպրոցում, պաշտպանության տեխնիկայում, շինարարության և ճարտարապետության մեջ

կվալիմետրիկայի կիրառման ընդլայնման հետ,

- մշակումներ ինտելեկտուալ սեփականության գնահատման տնտեսա-մաթեմատիկական մոդելների կատարելագործման ուղղությամբ… տնտեսական շրջանառության մեջ մտցնելու ոչ նյութական ակտիվների, այդ թվում՝ ինտելեկտուալ սեփականության քանակական գնահատության հիմնահարցերը,
- շուկայական տնտեսության պայմաններում պլանավորման տեսական ու մեթոդաբանական, տնտեսության առանձին ճյուղերի և ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերի ու ուղղությունների հետ կապված ստրատեգիական որոշումների ընդունման հիմնախնդիրները,
- սկսած 1960-ական թվականներից, ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ այլ երկրներում, բազմաթիվ փորձեր էին արվում արտադրության տարբեր ճյուղերում ու ոլորտներում քանակապես չափակցել և գնահատել աշխատանքի ամենատարբեր արդյունքների որակը, սկսած լայն օգտագործման ապրանքներից մինչև տիեզերական հրթիռային համակարգերը: Դա վերաբերում էր ինչպես սոցիալական, այնպես էլ արտադրական գործընթացների որակի գնահատությանը: Գ.Ազգալդովի «Количественная оценка качества (квалиметрия)» աշխատությունը (Լ.Ազգալդովայի համահեղինակությամբ) առաջին մատենագիտությունն է այդ ուղղությամբ, որում ուրվագծվում են կվալիմետրիայի նախադրյալները, մեթոդաբանությունը և հիմնահարցերը, ինչպես նաև նրա կիրառական (գործնական) նշանակության արծարծումների շրջանակները արդյունաբերության, շինարարության և ճարտարապետության, գյուղատնտեսության, սպասարկման, կադրերի ուսուցման և պատրաստման, զինվորական գործի, գիտության, կա-

ռավարման գործընթացների, էսթետիկայի, ֆիզկուլտուրայի և սպորտի, կենսաբանության և բժշկության, սոցիոլոգիայի բնագավառներում: Իսկ արդեն 1973-ին լույս է տեսնում Ազգալդովի «О квалиметрии» աշխատությունը, որն, ըստ էության, խորհրդային և արտասահմանյան գրականության մեջ առաջին փորձն էր համակարգված ձևով շարադրել կվալիմետրիայի հիմունքները, որպես գիտության նոր բնագավառի: Նա մի առանձին ուշադրություն է հատկացնում սպառողական արժեքի և նրա չափակցման հիմնահարցին, դա պայմանավորելով գիտական հետազոտությունների պրակտիկայում կիրառական մաթեմատիկայի նոր մեթոդների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ներդրման հետ, ինչը համապատասխան նախադրյալներ ստեղծեց արդյունքի քանակական չափակցումից անցնելու նրա սպառողական արժեքի չափակցմանը: Սպառողական արժեքի քանակական չափակցումն անցյալ դարի 60-70-ական թվականներին դեռևս չէր դարձել լայն ուսումնասիրության օբյեկտ: Եվ այս իմաստով Ազգալդովի աշխատությունները փորձեր էին դիտարկելու սպառողական արժեքի չափակցման հնարավորությունները, այն ուղղությունները, որոնք կարող են նպաստել աշխատանքի ամենատարբեր արդյունքների սպառողական արժեքների չափակցման պրակտիկ մեթոդների մշակմանը: Այսինքն, ուսումնասիրության առարկան մինչ այդ վերաբերել է սպառողական արժեքի առանձին կողմերի բնական, իրային, նյութական հիմքերին, մինչդեռ անհրաժեշտ էր այն դիտարկել իր ամբողջության մեջ որպես սոցիալական օգտակարություն, որը կոչված է հասարակության որոշակի պահանջմունքների բավարարմանը:

Ազգալդովը Ռուսաստանում ինտելեկտուալ սեփականության գնահատության վերաբերյալ առաջին ուսումնա-

կան ձեռնարկի հեղինակն է: Կվալիմետրիայի կիրառության և իրացումների մասին է վկայում նրա աշխատությունների ցանկը:

Ազգալդովը մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ է: Стипендиат премии президента РФ:

Աշխ. Потребительная стоимость и ее измерение, М. 1971, Количественная оценка качества (квалиметрия). Библография соавтор Л.Азгальдова, 1971, О квалиметрии (соавтор Э.Райхман), М., 1973, Экспертные методы в оценке качества товаров, М., 1974 (соавтор Г.Райхман), Оценка и аттестация качества в строительстве, М., 1977 (соавтор О.Сендерова), О возможности оценки красоты в технике, М., 1977 (соавтор Р.Повилейка), Численная мера и проблемы красоты в архитектуре, М., 1978, Теория и практика оценки качества товаров (основы квалиметрии), М., 1982, Квалиметрия в архитектурно-строительной проектировании, М., 1989, Квалиметрия для всех. Учебное пособие (в соавторства), 2012.

ԱԶՐՈՅԱՆՑ ԷԴՈՒԱՐԴ ԱՐՍԵՆԻ

(1937)

Ծնվել է Օդեսայում: 1964-ին ավարտել է Կիրգիզիայի պետական համալսարանը «Արդյունաբերության էկոնոմիկա» մասնագիտությամբ: Աշխատանքային գործունեությունը. 1974-89-ին ԽՍՀՄ երկրաբանության նախարարության համակարգում՝ զբաղեցնելով նորմավորողից մինչև պլանային տնտեսագիտական վարչության պետի պաշտոնները, 1990-91-ին՝ ԽՍՀՄ պետպլանի պլանավորման և նորմատիվների գիտահետազոտական ինստիտուտի (1991-ից Ռուսաստանի էկոնոմիկայի նախարարության կառավարման ինստիտուտ) տնօրեն, 1994-2004-ին՝ կրթության և գիտության նախարարության միկրոտնտեսագիտության ինստիտուտի տնօրեն: 1978-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 1988-ին՝ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանները, 1991-ին՝ պրոֆեսորի կոչում:

Ազրոյանցի առաջին շրջանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են տնտեսական մեխանիզմի կատարելագործման խնդիրներին: Հատկապես վերջին երկու տասնամյակների նրա ուսումնասիրությունների քննության առարկան գլոբալացման ժամանակակից գործընթացներն են, որտեղ հեղինակը փորձում է պատասխանել այն հարցին, թե որն է գլոբալացման էությունը, նրա սուբյեկտիվ և

օբյեկտիվ կողմերը, դիտարկելով այն երեք հարթություններով՝ որպես հիմնահարց, որպես իրականություն և որպես գործընթաց: Ներկայացնելով «գլոբալացում» հասկացության էությունը՝ նա միաժամանակ ընդգծում է դրա պատմագիտական բնույթը, օգտագործելով «համաշխարհային պատմական գործընթաց» տերմինը՝ իբրև հոմանիշ: Պատմական գործընթացը ներկայացնում է սոցիալական օրգանիզմի զարգացման պրոցես՝ ուղղված նրա սահմանային ամբողջականության ձեռքբերմանը, այդպիսի նպատակային ֆունկցիային կամ, ինչպես Ազրոյանցն է նշում, պատմական պրոցեսի վեկտորին: Պատմական պրոցեսն իր մեջ ընդգրկում է ծագող ու անհետացող, իրար հետ միահյուսված միտումների մի ամբողջ փունջ: Այսինքն՝ պրոցեսը և միտումը միմյանց հետ հարաբերվում են որպես ամբողջ և մաս: Իբրև սոցիալական համակարգի զարգացում՝ դա ուղղված է սահմանային ամբողջականության հասնելուն: Պատմական պրոցեսի այդ նպատակային ֆունկցիան նա անվանում է գլոբալացում: Պատմության ցանկացած հատվածում միշտ առկա են ինչպես ինտեգրացիոն, այնպես էլ ապաինտեգրացիոն միտումներ: Ուստի միշտ ունենում ենք երկու այլընտրանքներ, որոնք ձևականորեն կապված են գլոբալացման հետ.

G(Գլոբալացում)≈I(ինտեգրացիա)+D(ապաինտեգրացիա)

Եթե անտեսենք պատմության առանձին հատվածները, ապա կարելի է ասել, որ ինտեգրացիոն պրոցեսները գերազանցում են ապաինտեգրացիոն պրոցեսներին: Ստացվում է, որ գլոբալացումը պատմական պրոցեսների նպատակն է, ինտեգրացիան և ապաինտեգրացիան դրա դինամիկան որոշող միտումները: Նա կիրառության մեջ է դնում «ժամանակակից գլոբալացում» հասկացությունը՝ ցույց տալու աշխարհի նոր վիճակը: Մեթոդաբանական առումով մեծ տեղ է հատկացնում օրգանիզմի և ֆունկցիոնալության սկզբունքներին, դրանք հետևողականորեն կիրառելով մեգահասարակության և գլոբալացման՝ որ-

պես պատմական պրոցեսի՝ իր կողմից առաջ քաշված կոնցեպցիայում: Օրգանիզմը, ինչպես հայտնի է, հասարակությունը դիտում է որպես կենդանի օրգանիզմ, ներքին ամբողջական միավոր, ի վերջո պատմական պրոցեսի միօրինակություն և բնակազմություն: Հասարակությունը, ձեռք բերելով քաղաքակրթության որոշակի մակարդակ, կազմված է հարաբերականորեն ինքնուրույն անհատներից, որոնք առաջնորդվում են իրենց անձնական շահերով: Հասարակությունը չի գործում որպես մեկ ամբողջություն, ինչպես կենդանի օրգանիզմները և այս առումով գործողության սուբյեկտ չէ: Նրա զարգացումն առանձին անձանց, խմբերի և հաստատությունների, ինչպես նաև նրանց միջև առկա հակասությունների և կոնֆլիկտների գործունեության և գործողության արդյունք է: Ուստի Ազրոյանցը հիմնավորված չի համարում պատմական պրոցեսին վերագրել որոշակի «նպատակային ֆունկցիա», չնայած խոսում է պատմական պրոցեսի վեկտորի՝ որպես առանձին հավասարազոր տարբեր միտումների մասին: Այս իմաստով Ազրոյանցի հայացքները մոտ են Տեյյար դը Շարդենի էվոլյուցիոն տեսությանը, համաձայն որի մատերիայի յուրաքանչյուր մասնիկի մեջ ի սկզբանե դրված է ապագա աշխարհի ամբողջ բարդությունը, ներառյալ գիտակցությունը: Նույն ոգով Ազրոյանցը պնդում է, որ աշխարհում «ամենուր և մշտապես» գործում են «խաղի միասնական կանոններ, միասնական օրենքներ», որ գոյություն չունեն բնական, հասարակական, ֆիզիկական, սոցիալական կամ այլ օրենքներ, որ գործում են միայն Բնության օրենքները: Աշխարհի ժողովուրդների և քաղաքակրթությունների պատմությունը զարգացել է տարբեր ձևերով՝ կախված տարածությունից և ժամանակից, և բոլորովին ենթակա չի եղել ինչ-որ միասնական խնդիրների և նպատակների: Ինչ խոսք, գոյություն ունեն ֆիզիկական, կենսաբանական և սոցիալական օրենքներ, որոնք իրարից տարբերվում են այնքանով, որքանով անկենդան և կենդանի բնությունները, որքանով մարդկային հասարակությունը տարբերվում է բնական միջավայրից:

Դրա ապացույցը հասարակության և բնության մեջ էվոլյուցիոն պրոցեսների որակական տարբերությունների տեմպերն են: Մարդկությունը հասել է տեխնիկական այնպիսի հզորության, որ ի վիճակի է ոչնչացնելու կենդանի բնությունը: Շարունակելով այս ոլորտի հետազոտությունները՝ նա կատարում է հետաքրքիր վերլուծություն՝ նկատելով, որ «գլոբալ հարաբերությունների պատմությունը» սկսվել է հարևանների (ցեղերի, տոհմերի, էթնոսների) առաջին իսկ շփումից, որը դրսևորվել է պատերազմի և խաղաղության, փոխանակության, ժողովուրդների վերաբնակեցման և այլ ձևերով: «Պատմությունը» մարդկային ճիգերի արդյունքն է, մեգասոցիումի՝ որպես առանձին օրգանիզմի ինքնակազմակերպման պրոցեսի արտահայտված մասն է, որն արտացոլում է նրա երկու՝ արտաքին (շրջակա միջավայր) և ներքին (մարդու ներաշխարհ) սկիզբների միջև մշտապես առկա փոխզիջումները: Այդ իսկ պատճառով էլ չի կարելի արտաքին աշխարհի «ֆիզիկան» առանձնացնել «մարդու ներաշխարհի մետաֆիզիկայից»: Այս առումով, շարունակում է նա, պատմական պրոցեսում անհրաժեշտ է տարբերել երկու «ճանապարհ», առաջին, երբ պատմական տարածությունը դառնում է ավելի բարդ և ձեռք է բերում նոր որակ (զարգացման ուղի), երկրորդ՝ կառուցվածքի պարզեցում և որոշակի որակի կորուստ (դեգրադացիայի ուղի): Եթե շատ հետազոտողներ գլոբալ պատմական ցիկլերի դիֆերենցման և ինտեգրացիայի ալիքները կապում են աշխարհի բնակչության թվի, կլիմայի փոփոխության, արեգակնային ակտիվության, Երկիր մոլորակի պրոցեսների ցիկլերի և այլ գործոնների հետ, ապա Ազրոյանցը գտնում է, որ արեգակնային ակտիվությունը, իսկ ավելի ճիշտ, նրա ցիկլիկ տատանումները ամբողջ պատմական պրոցեսների համաժամանակացման յուրօրինակ առանցքն են կամ միջուկը: Նոր որակական աստիճանի բարձրանալու համար ցիկլը անպայման պետք է ավարտված լինի: Դա անհրաժեշտ է, բայց ոչ բավարար: Քանի որ ցիկլի ավարտը կախված է կառուցվածքի քաոսայնացումից և

քայքայումից, իսկ այդ երկճյուղ կամ բիֆուրկացիոն գոտում գոյություն ունեն տարբեր «ուղիներ», շատ բան, մասնավորապես, կախված է մարդկային ճիշտ ընտրությունից: Այլ խոսքով, զարգացման ապակառուցողական կամ դեստրուկտիվ տարբերակը ենթադրում է ցիկլի ցանկացած փուլում և ստադիայում պրոցեսի քայքայում կամ վերացում:

Գլոբալացման խնդիրը Ազրոյանցի աշխատություններում քննարկվում է լայն շրջագծերի մեջ՝ իբրև հիմնահարց, իբրև իրականություն, իբրև պրոցես, իբրև ցիկլայնություն, հասարակության ապագա էվոլյուցիայի և էսխատոլոգիական այլընտրանքների վերաբերյալ մտորումներով: Նույնականացման լիբերալ ձգտումը հաշվի չի առնում երկրների առանձնահատկությունները, գերագնահատելով բոլորի համար արևմտյան «մոդելի կրկնության» հնարավորությունը:

Է.Ազրոյանցը 1988-ին արժանացել է «ՌՍՖՍՀ վաստակավոր տնտեսագետի» կոչման:

Աշխ. Некоторые закономерности развитого социализма, Фрунзе, 1978, Экономика и хозяйственный механизм геологоразведочного производства, М., 1984, Глобализация как научная проблема, Полигнозис. 2000. № 4(12), с. 103-112. Глобализация: катастрофа или путь к развитию? Современные тенденции мирового развития и политические амбиции. -М., 2002. Век XX - анфас в профиль: размышления о столетии, ставшем историей (с/о), 2001 (соавтор). Холдинговые компании: особенности, опыт, проблемы, перспективы// М., 1992(соавтор). Современная картина мира. Формирование новой парадигмы [Текст]: сборник статей / Отв. ред. Э.А. Азроянц, В.И.Самохвалова; Министерство экономики Российской Федерации. Институт микроэкономики. -М.: [б.и.], 1997. Последняя империя XX века. Полигнозис. 2000, № 3. Азроянц Э.А., Харитонов А.С., Шелепин Л.А. Немарковские процессы как новая парадигма. // Вопросы философии, 1999, № 7, с. 94-104. Азроянц Э.А. Архитектура внутреннего мира человека, М., Полигнозис, 1998, с. 59 -72.

ԱԹՈՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ԼՈՒԿԱՇԻ

(1956)

Ծնվել է Տավուշի մարզի Բերդ քաղաքում: 1974-ին գերազանցությամբ ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը, իսկ 1979-ին՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: Ստացել է նաև իրավագետի որակավորում: 1982-1985-ին սովորել է Մոսկվայի շինարարության էկոնոմիկայի և կառավարման համամիութենական կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում, պաշտպանել է գիտական թեզը և ստացել տնտեսագիտության թեկնածուի աստիճան (1986թ.): 1994-96-ին սովորել է Մոսկվայի պետական շինարարական համալսարանի դոկտորանտուրայում, որտեղ 1996-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 2006-ին ստացել է պրոֆեսորի կոչում:

Նա հետազոտական աշխատանքը զուգորդել է ակտիվ աշխատանքային գործունեությամբ՝ զբաղեցնելով մի շարք պատասխանատու պաշտոններ. 1998-99-ին՝ ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայությունում, 1999-2000-ին՝ ՀՀ պետական եկամուտների նախարարությունում բաժնի պետ, 2000-2001-ին՝ ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոնում խորհրդական, 2001-2005-ին՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ծախսերի ֆինանսավորման վարչության պետ, 2005-2008-ին՝ ՀՀ

ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ, 2008-ից՝ ՀՀ ֆինանսների նախարարի գլխավոր խորհրդական: 2011-ին ընտրվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր:

Աթոյանի «Կապիտալ շինարարության նյութատեխնիկական ապահովումը շուկայական տնտեսության անցման պայմաններում» աշխատության քննության առարկան շինարարության նյութատեխնիկական ապահովման հիմնախնդիրներն են ինչպես պլանային տնտեսության, այնպես էլ շուկայական հարաբերություններին անցման առաջին տարիներին: Անցյալ դարի 80-ական թվականներից սկսած՝ անցումը տնտեսավարման նոր պայմաններին պայմանավորում և սրում է արտադրության ինտենսիվացման մակարդակի բարձրացման պահանջը: Դա բխում էր տնտեսության ճյուղերում հիմնական արտադրական ֆոնդերի վերարտադրության արագացման և սոցիալական այնպիսի կարևոր ծրագրերի իրականացման անհրաժեշտությունից, ինչպիսին բնակարանային հիմնահարցի արմատական լուծումն է: Նա մեծ դեր է հատկացնում ինվեստիցիոն ցիկլի կրճատմանը, որի իրականացման հիմնական ֆունկցիան դրված է շինարարական արտադրության ինտենսիվացման տեմպերի արագացման վրա: Կարևորելով շինարարության նյութատեխնիկական ապահովման՝ արտադրական տեխնոլոգիական կոմպլեկտավորման համակարգերի դերը, վերջինս քննության է ենթարկվում շինարարության կառավարման տարբեր մակարդակներում, շինարարական կազմակերպությունների արտադրական-տնտեսական գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա կոմպլեկտավորման ունեցած ազդեցության չափի ու դրա քանակական գնահատման առնչություններում, արվում են գործնական ներդրման առաջարկություններ:

Հանրապետության տնտեսական պահվածքի արդյունավետության համար կարևորվում է լոգիստական սկզբունքների ներդրումը, որի հիմնախնդիրները Կ.Աթոյանի «Արտադրության նյութական ապահովում» գրքում (Եր., 2005,

Վ.Աթոյանի համահեղինակությամբ) որոշակիացված են հանրապետության տնտեսության կարևոր ճյուղերից մեկի՝ կապիտալ շինարարության օրինակով շուկայական հարաբերությունների անցման ժամանակահատվածում: Միջազգային փորձի ուսումնասիրման և հանրապետության փաստացի ու վիճակագրական նյութերի վերլուծության հիման վրա հիմնավորվում են շինարարական համալիրում նյութական և ֆինանսական ապահովումների ինտեգրման առավելությունները և շինարարական-ֆինանսական խմբերի ստեղծումը: Հասարակական արտադրության ըստ փուլերի տարանջատման փոխարեն լոգիստական շղթան ենթադրում է երևույթների համակարգային մոտեցման սկզբունքներ, որոնց կիրառումը հանրապետության շինարարական համալիրի գործընթացում կտանի նյութական հոսքերի ռացիոնալացմանը:

Սկսած 1990-ական թվականներից բնակչության միգրացիայի խնդիրը դարձել է հանրապետության տնտեսագետների առավել ուշադրության արժանի թեմաներից մեկը: Լույս են տեսել ուսումնասիրություններ՝ փորձելով հարցը քննության ենթարկել տարբեր կտրվածքների մեջ: Կ.Աթոյանի «Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում» մենագրությունը հեղինակի հետազոտական նոր ոլորտն է, որում փորձ է արվում միգրացիայի, որպես համաշխարհային պրոցեսի, ինչ-ինչ օրինաչափությունների մեջ դիտարկել հանրապետությունում սկիզբ առած վերջին տասնամյակների միտումները: Միգրացիայի երևույթը նոր չէ հասարակության պատմության մեջ, սակայն, ինչպես նկատում է հեղինակը, հատկապես XX-XXI դարերի սահմանագծում միգրացիոն քաղաքականության գերակայություններում կատարվեցին նշանակալից վերափոխումներ կապված «խնդիրների լուծման սկզբունքների և մեթոդների» հետ: Ազգային տնտեսությունները ներգրավվել են համաշխարհային վերարտադրության գործընթացներում, պայմանավորելով աշխատանքային ռեսուրսների միջազգային տեղաշարժը, որն իր ամբողջության

մեջ նպաստելով տնտեսական աճի տեմպերին, միաժամանակ իր էությամբ հակասական է: Այդ ամբողջության մեջ էլ այն ձևավորվել է որպես «տնտեսական հարաբերությունների ինքնուրույն ձև»: Այդ են վկայում աշխատության մեջ միջազգային միգրացիայի տեսակների ու ձևերի, տեսությունների ու հայեցակարգերի, տնտեսական արդյունքների, կարգավորման և վերահսկողության ժամանակակից մեխանիզմների՝ որպես մի ամբողջական ոլորտի վերլուծությունները: Նրանում վիճակագրական առումով փաստարկված են հանրապետության աշխատանքային միգրացիան պայմանավորող գործոնները, միգրացիոն հոսքերը ժամանակի տարբեր հատվածներում, դրանց առանձնահատկությունները: Փորձի առումով աշխատության մեջ ուսանելի դիտողություններ են արվում զարգացած երկրներում բնակչության միգրացիայի տնտեսական հիմքերի ու տեսամեթոդական չափանիշների, կարգավորման և վերահսկողության ժամանակակից մեխանիզմների վերաբերյալ, անդրադառնում ՀՀ-ում և ԱՊՀ երկրներում միգրացիան կարգավորող օրենսդրական դաշտի յուրահատկություններին, կարգավորման գերակայություններին ու հիմնական ուղղություններին: Միգրացիոն քաղաքականությունը դիտարկվում է որպես «բնակչության ներքին և միջպետական տեղաշարժի գործընթացների կարգավորման տեսական դրույթների, նպատակների և խնդիրների, միջոցների և մեթոդների ամբողջություն»:

Աշխ. Կապիտալ շինարարության նյութատեխնիկական ապահովումը շուկայական տնտեսության անցման պայմաններում, Եր., 1995, Արտադրության նյութական ապահովում. ուսումնական ձեռնարկ, Եր., 2005 (Վ.Աթոյանի համահեղինակությամբ), Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2015, Մասշտաբային բնակարանաշինությունը՝ որպես ներքին արտադրության խթանմամբ, տնտեսական աճի ապահովման և համաչափ տնտեսական զարգացման ուղղություն, Եր., 2016 (համահեղինակ, հետազոտական խմբի ղեկավար):

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ ՀԱԿՈԲԻ

(1906-1987)

Ծնվել է Բաքվում: 1934-ին ավարտել է Մոսկվայի մանկավարժական ինստիտուտի տնտեսագիտական բաժինը, ապա աշխատել Մոսկվայում՝ որպես մարզային մանկավարժական (1937-1942) և ֆինանսական (1943-1961) ինստիտուտների տնօրեն: 1958-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան, իսկ 1960-ին՝ պրոֆեսորի կոչում: 1961-ից ավելի քան 20 տարի եղել է ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի տեղակալ: Նա համարվում էր ֆինանսների և վարկի բնագավառի խոշորագույն մասնագետներից մեկը: Ֆինանսավարկային հարցերը նրա ամբողջ հետազոտական գործունեության ընթացքում մնացին միակ ոլորտը: 1950-ական թվականներից սկսած՝ ազգային եկամտի, ֆինանսավարկային մեխանիզմի, ֆինանսական պլանավորման, տնտեսական հաշվարկի և կառավարման, ԽՍՀՄ ֆինանսների պատմության և ֆինանսների տեսության բազմաթիվ այլ հարցեր իրենց արտահայտությունն են գտել նրա աշխատություններում:

Գրականության մեջ փորձեր են արվել ֆինանսները ներկայացնելու որպես մի կատեգորիա, որը վերարտադրության գործընթացի բոլոր փուլերում խաղում է միևնույն դերը՝ դրանով իսկ ժխտելով ֆինանսների յուրահատկությունը: Ալավերդյանը գտնում է, որ ֆինանսները, արտահայ-

տելով սոցիալիստական վերարտադրության գործընթացի օրինաչափությունները, միաժամանակ ունեն իրենց հարաբերական ինքնուրույն օրինաչափությունները: Պրակտիկորեն ֆինանսները կապված են սոցիալիստական վերարտադրության բոլոր փուլերի հետ, սակայն այդ կապը բնավ նույնը չէ: Վերարտադրության գործընթացի վրա ֆինանսներն ակտիվ գործունեություն են ունենում բաշխման փուլի միջոցով, քանի որ հենց այդ փուլում է նյութական բարիքների և արժեքի շարժը բաժանվում և ձեռք բերում հարաբերական ինքնուրույնություն:

Որքանով ֆինանսներն ածանցյալ են նյութական արտադրությունից, դրանք միջնորդավորում են ամբողջական հասարակական արդյունքի շարժումը՝ հանդես գալով որպես վերարտադրության անհրաժեշտ տարր: Հենց այս առումով էլ Ալավերդյանը «Финансы и социалистическое воспроизводство» աշխատության մեջ այն միտքն է զարգացնում, թե ֆինանսները պետք է դիտարկվեն սոցիալիստական ընդլայնված վերարտադրության համամասնությունների պլանավորման հետ օրգանական կապի մեջ: Միևնույն ժամանակ ֆինանսների պլանավորումը ոչ միայն արտահայտում է ժողովրդատնտեսական պլանի հիմնական տարրերի փոխադարձ հաշվեկշռվածությունը, այլև ակտիվորեն օժանդակում է տնտեսական աճի տրված համամասնությունների և տեմպերի ապահովմանը: Նա ֆինանսները բնութագրում է որպես ապրանքադրամական հարաբերությունների հատուկ ոլորտ: Երևույթներն առավել լայնորեն դիտարկելով՝ նա ելակետ է ընդունում այն, որ սոցիալիստական ֆինանսական հարաբերություններն ընդգրկում են վարկային հարաբերությունները՝ որպես դրամական հարաբերությունների կազմակերպման յուրահատուկ ձև: Համապատասխանաբար, վարկային պլանավորումը դիտարկվում է որպես միասնական ֆինանսական պլանավորման օրգանական տարր, իսկ վարկային քաղաքականությունը՝ որպես միասնական ֆինանսական քաղաքականության անհրաժեշտ օղակ: Ելակետ ունենալով կենտրոնացված պլանավորման և պլանային գնագոյացման

սկզբունքը, նա գինը, իբրև հասարակական արդյունքի արժեքի և ազգային եկամտի բաշխման տնտեսական լծակ, կապում է ֆինանսների հետ, քանի որ ֆինանսական հարաբերությունները ծագում են արտադրանքի իրացման, հասարակական արդյունքի բաշխման պրոցեսում: Հենց այդ հիմքի վրա էլ տեղի է ունենում դրամական եկամուտների շարժը և կուտակումների ձևավորումը: Դրանք դինամիկ կապեր են, որպես վերարտադրության ցիկլի կրկնություններ: Հենց նշված մեթոդաբանական նախադրյալներից են հարցերը քննարկվում նաև «Финансово-кредитная система СССР», «Хозрасчет и управление. Теория, опыт и перспективы» (համահեղինակ և խմբագիր) և այլ աշխատություններում:

Ալավերդյանի ղեկավարությամբ է ստեղծվել «Финансы и СССР» առաջին դասագիրքը, որը թարգմանվել է անգլերեն և իսպաներեն: Նա հեղինակ է շուրջ 250 գիտական աշխատությունների: Նա վարել է մանկավարժական և գիտակազմակերպչական ակտիվ գործունեություն, բազմիցս խորհրդային տնտեսագիտությունը ներկայացրել արտասահմանում:

Ալավերդյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և այլ մեդալներով:

Աշխ. Некоторые вопросы теории советских финансов, М., 1951, Роль финансов в распределении национального дохода СССР, М., 1955, Национальный доход СССР, М., 1958, Экономическое содержание расходов советского бюджета, М., 1958, Финансы и финансовая система СССР, М., 1958, Финансы социалистического государства, М., 1961, Некоторые вопросы теории советских финансов, М., 1961, Финансовое планирование в СССР, М., 1966, Использование товарно-денежных отношений при социализме, М., 1968, Финансы промышленности. Учебное пособие, М., 1968, Хозрасчет и управление. теория, опыт и перспективы, М., 1970 (համահեղինակ և խմբագիր), Финансы и социалистическое воспроизводство, М., 1971, Финансово-кредитный механизм развитого социализма, М., 1976, Финансово-кредитная система СССР, М., 1982.



ԱԼՉԻՅԱՆ ԱՐՄԵՆ ԱԼԲԵՐՏԻ

(1914-2013)

Ծնվել է Կալիֆոռնիայի նահանգի Ֆրեզնո քաղաքում: 1934-ին տեղի պետական քոլեջն ավարտելուց հետո ընդունվել է Ստենֆորդի համալսարան, որտեղ 1936-ին ստացել է բակալավրի, 1944-ին՝ փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1940-41-ին աշխատել է տնտեսագիտական վերլուծության Ազգային բյուրոյում և Հարվարդի համալսարանում, 1942-ին դասավանդել է Օրեգոնայի համալսարանում: 1942-46-ին ծառայել է ԱՄՆ-ի բանակի ռազմաօդային ուժերում՝ կատարելով վիճակագրական աշխատանք: Իր հոդվածներից մեկում նա օդանավերի արտադրության օրինակով վերլուծել է ուսուցման կորը, որը, սակայն, կապված լինելով զինվորական վիճակագրության հետ, լույս է տեսել 1963-ին: Նա իր ամբողջ գիտական գործունեությունն անց է կացրել Կալիֆոռնիայի համալսարանում, որտեղ 1946-1954-ին աշխատել է որպես ասիստենտ-պրոֆեսոր, 1958-ից մինչև 1984-ը զբաղեցրել է պրոֆեսորի պաշտոն, 1985-ին ընտրվել է վաստակավոր պրոֆեսորի պաշտոնում: 1946-1964-ին որպես տնտեսագետ աշխատել է Rand կորպորացիայում: Նա երկար տարիներ ղեկավարել է Համաշխարհային բանկին կից ամերիկյան ներկայացուցչությունը: Ա.Ալչիյանի աշխատությունների ցանկը մեծ չէ, սակայն տնտեսագիտական միտքը հաշվի է

նստել դրանցից յուրաքանչյուրի հետ: Իր հետազոտական մեթոդաբանական սկզբունքներով ավելի շատ մոտ է «Չիկագոյի դպրոցին», միաժամանակ կապեր հայտնաբերելով նոր ինստիտուցիոնալիզմի և այլ ուղղությունների հետ: Ավստրիայի հայտնի տնտեսագետ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրիդրիխ Հայեկը ասել է. «Ալչիյանը արժանի է Նոբելյան մրցանակի»:

1950թ. լույս է տեսնում նրա «Անորոշությունը, էվոլյուցիան և տնտեսագիտության տեսությունը» ուսումնասիրությունը, որը հիմնականում վերաբերում է ֆիրմայի տեսությանը, մասնավորապես շահույթի մաքսիմալացման սկզբունքին, որին անորոշության պայմաններում անհնար է միանշանակ պատասխան տալ: Ալչիյանն առաջարկում է ուսումնասիրել «գոյատևելու գործընթացը»: Այստեղ է, որ կենսաբանական երևույթներն ընդհանրություններ են գծում տնտեսական երևույթների հետ: Այսինքն, ինչպես և կենսաբանության մեջ, այստեղ նույնպես, ըստ էության, բնական ընտրության արդյունքները դժվար է ենթարկել կանխատեսման: Ավելի շուտ խոսքը վերաբերում է «հարմարվողականությանն ու չհարմարվողականությանը»: Այն ֆիրմաները, որոնք ի հայտ են բերում բարձր հարմարվողականություն, բնական ընտրության սկզբունքով հնարավորություն են ունենում մյուսների համեմատությամբ ստանալու բարձր շահույթներ: Շուկայական համակարգն իր գների մեխանիզմով ոչ այլ ինչ է, քան դարվինյան սկզբունքի իրագործումը տնտեսական կյանքում: Օպտիմալացման սկզբունքն ու անորոշությունն անհամատեղելի են, քանի որ օպտիմալացումը ենթադրում է շուկայի կատարյալ իմացություն և լրիվ որոշակիություն: «Անորոշության պայմաններում, իսկ դա շահույթի գոյության անհրաժեշտ պայմանն է, բացակայում է շահույթը մաքսիմալացնող որոշման ընդունման համար գիտակցված չափանիշը»: Հաջողությունը որոշվում է արդյունքներով, այլ ոչ թե ցանկություններով: Ստացված դրական շահույթը, այլ ոչ թե շահույթի մաքսիմումն է վկայում հաջողության և

կենսունակության մասին: Առանցքայինն այստեղ այն է, որ որևէ սուբյեկտի վիճակը որոշվում է նրա փաստացի, այլ ոչ թե ինչ-որ իդեալական մրցակիցների համեմատությամբ, նման այն բանին, որ մրցարշավների ժամանակ վարձատրվում է ամենից արագաշարժը, եթե նրանք բոլորն էլ շտապում են:

Շահույթը կարող է գոյություն ունենալ նույնիսկ հիմարների աշխարհում: Որքան մեծ է միջավայրի անորոշությունը, այնքան բարձր է հավանականությունը, որ շահույթ կստանան ռիսկայիններն ու հաջողակները, այլ ոչ թե տրամաբանորեն մտածող, զգուշավոր փաստեր հավաքող մարդիկ: Կամ Ալչիյանը բերում է այսպիսի օրինակ. ենթադրենք, թե հազարավոր ուղևորներ մեկնում են Չիկագոյից, ճանապարհն ընտրելով բախտաբերի: Մեր տնտեսագետը միակն է, ով գիտի, որ միայն այդ ճանապարհի վրա են գտնվում բենզինի լցակայանները: Նա կարող է որոշակիությամբ պնդել, որ ճանապարհը կշարունակեն միայն նրանք, ովքեր հայտնվել են այդ ճանապարհին, իսկ մյուսների մոտ շուտով վառելիքը կվերջանա: Թեև ուղևորները ճանապարհներն ընտրել են պատահականորեն, մենք նրանց, ովքեր ընտրել են ճիշտ ճանապարհը, կարող ենք անվանել իմաստուններ, հեռատեսներ և այլն: Ինչ խոսք, նրանց կարելի է անվանել հաջողակներ: Եթե լցակայանները տեղափոխեն այլ ճանապարհի վրա, ապա նախկին անհաջողակ ուղևորների մի մասը հնարավորություն կստանա շարունակելու ճանապարհը: Այսինքն, շրջակա միջավայրի փոփոխության հետ իրականում փոխվել են հնարավոր երթուղիները: Բերված օրինակները ցույց են տալիս, որ կոլեկտիվ և անհատական պատահական պահվածքն ինքնին չի ենթադրում, թե տեսությունը սկզբունքորեն ընդունակ չէ կանխատեսելու և բացատրելու, որ աշխարհում բացակայում են կարգ ու կանոն ու զարգացման որոշակի ուղղվածությունը: Այնուհանդերձ, համաձայն Ալչիյանի տեսության, ֆիրմաները ստույգ չգիտեն, թե որ պահվածքն է առավել շահեկան

(թեև շնորհիվ պատահականության) և իրենց պահում են տարբեր ձևերով: Ընդ որում՝ յուրաքանչյուր ֆիրմա իրականացնում է որոշումների ընդունման իր եղանակը, և որոշ ֆիրմաներ մյուսների համեմատությամբ հայտնվում են շահույթի մաքսիմալացմանը մոտ վիճակում (թեև շնորհիվ պատահականության): Հետագան կատարում է մրցակցությունը, շնորհիվ որի դուրս են մղվում բոլոր նրանք, ովքեր ստանում են փոքր շահույթ, ավտոմատ ձևով ապահովելով այն ֆիրմաների գոյատևումը, որոնց պահվածքը մոտ է շահույթի մաքսիմալացմանը: Այսպիսով, շահույթի մաքսիմալացման նախադրյալը կարող է համարվել իրատեսական, եթե նույնիսկ ժամանակի որոշակի հատվածում դա չի համապատասխանում իրականությանը: Այստեղից էլ այն հարցը, թե ինչ պետք է գա փոխարինելու ստատիկ հավասարակշռության մոտեցմանը: Վերը նշված դրույթներն իրենց զարգացումները ստացել են Մ.Ֆրիդմենի կողմից, որը ենթադրում է իրատեսական նախադրյալների ստուգումներից լրիվ հրաժարում: Սակայն, Ալչիյանի բերված փաստարկները համարվում են ավելի համոզիչ, դառնալով ժամանակակից «էվոլյուցիոն» տնտեսագիտության անկյունաքարերից մեկը:

Ա.Ալչիյանի և Հ.Դեմսեցի համատեղ հետազոտությունը կազմակերպության վերաբերյալ հիմնված է սեփականության իրավունքների կոնցեպցիայի վրա: Այս հեղինակների անվան հետ է կապվում սեփականության հարաբերությունների տնտեսական նշանակության համակարգված վերլուծության սկզբնավորումը: Սեփականությունը միատարր հասկացություն չէ, այն ներառում է իրավունքների որոշակի «փնջեր»՝ կապված այս կամ այն ռեսուրսի տնօրինման, օգտագործման, փոխանցման հետ և այլն: Դա նշանակում է, որ միևնույն ռեսուրսի նկատմամբ տարբեր իրավունքները կարող են բաշխվել տարբեր տնտեսական գործակալների միջև: Ըստ էության, այդ փնջերի իրավունքների փոխանակությունը կազմում է բոլոր տնտեսական գործառնությունների հիմքը: Այսինքն, ցանկացած

ապրանքի վաճառք կարող է դիտարկվել որպես տվյալ ապրանքի նկատմամբ որոշակի փնջերի վաճառք: Տնտեսական հաստատություններից յուրաքանչյուրը, որպես սեփականության որոշակի ձև, իրավունքի որոշակի խմբերի ամբողջությունն է: Հենց այս իմաստով էլ կատարվում է տարբեր տնտեսական կառուցվածքների համեմատական վերլուծություն: Գոյություն ունեն իրավունքի որոշակի տարրեր՝ գործակալներին ռեսուրսներ օգտագործելու հնարավորությունից բացառելու իրավունքը, ռեսուրսների օգտագործման իրավունքը, դրանից եկամուտ ստանալու իրավունքը, բոլոր նախորդ իրավասությունները մյուսին փոխանցելու իրավունքը: Փոխանակության և օգտագործման հարաբերությունները կարգավորվում են կոնտրակտի միջոցով:

Ա.Ալչիյանի «Տեղեկատվական ծախսեր, գործազրկություն և ռեսուրսների զբաղվածություն» ուսումնասիրությունն, ըստ էության, սկզբնավորում է հետագայում ի հայտ եկած գործազրկության վերաբերյալ բոլոր տեսությունները»: 1960-ական թվականներին նա ուշադրություն է դարձնում այն երևույթի վրա, որ գործազուրկները միանգամից չեն համաձայնվում առաջին իսկ առաջարկվող աշխատանքին, այլ փնտրում են առավել բարձր վարձատրվող և բարձր վարկ ունեցող աշխատանք, և որքան գործազրկության շրջանը երկարում է, այնքան սկսում են նվազել գործազուրկների պահանջները, այսինքն, երբ աշխատանքային տեղերի առաջարկը դառնում է ավելի սահմանափակ: Նման փաստարկի հետևանքներից մեկն էլ այն է, որ գործազրկության նպաստները բերում են գործազրկության աճին: Փաստորեն Ա.Ալչիյանի մոտ առկա է գործազրկության բնական մակարդակի գաղափարը:

1972-ին Արմեն Ալչիյանը և Հարոլդ Դեմսեցը հրատարակել են «Արտադրությունը, տեղեկատվական ծախքերը և տնտեսական կազմակերպությունը» հոդվածը, որը ներկայացնում էր ֆիրմայի գոյության պատճառների քոուզյան բացատրության այլընտրանքը: Հեղինակները

քննադատում են Քոուզից եկող և այն ժամանակ տարածում գտած այն պատկերացումը, թե ֆիրման տնտեսության ոլորտ է, որտեղ գերակայում է ձեռնարկատիրոջ իշխանությունը: Նրանք պնդում են, որ նրանում ոչ մի այդպիսի հատուկ իշխանություն գոյություն չունի. այնտեղ չի կարելի պատժել կամ հարկադրել կատարելու ցանկացած գործողություն: Գործատուն կարող է իր աշխատողին վարձել կամ ազատել այնպես, ինչպես որ մենք կարող ենք վարձել և ազատել հացավաճառին կամ նպարավաճառին այն խանութներում, որտեղից գնումներ ենք կատարում:

Կառավարումը ֆիրմայում դրված է ծառայություն ծառայության դիմաց սկզբունքի վրա: Կողմերից յուրաքանչյուրը վաճառում և գնում է: Վարձու աշխատողը «հրամայում է» սեփականատիրոջն իրեն փող վճարել, ճիշտ այնպես, ինչպես որ վարձակալը պահանջում է կոլեկտիվի անդամներին կատարել որոշակի գործողություններ: Իսկ կոնտրակտները մշտապես ենթակա են նորոգության:

Իսկ ինչում է կայանում մեր, հացավաճառի, նպարավաճառի և բանվորների միջև հարաբերությունների տարբերությունները, ինչպես նշվում է հոդվածում. «Կառավարումը կամ կոլեկտիվ արտադրության մեջ ռեսուրսների օգտագործման ուղիների ուսումնասիրությունը հանդիսանում է կոլեկտիվի թողարկման նկատմամբ առանձին ռեսուրսների սահմանային արտադրողականության չափակցման մեթոդ»: Սույն կոնցեպցիան հանգում է հետևյալին.

- գոյություն ունեն արտադրության շատ տեսակներ, որոնցում անհրաժեշտ է մի քանի մարդկանց կոոպերացիան, որն, ըստ էության, անհնար է դարձնում ընդհանուր արդյունքի մեջ յուրաքանչյուրի ներդրումը:
- այդպիսի արտադրության ժամանակ կոլեկտիվի առանձին անդամի մոտ առաջանում են խուսափողական հնարավորություն և խթան: Եթե յուրաքանչյուր մասնակցի աշխատավարձը որոշվում է որպես ընդհանուր Q ար-

դյունքի բաժանումով աշխատողների N թվի վրա, ապա առանձին աշխատողը նշանակալից չափով շահում է խուսափողականությունից, և բացակայում է խթանը աշխատելու ավելին, քան անհրաժեշտ է: Եթե, օրինակ, աշխատողը լարված աշխատանքի արդյունքում տալիս է 500.000 դրամի արտադրանք, ապա իբրև աշխատավարձ նա կստանա 500.000 : N-ի,

- այդ համակարգը արդյունավետ դարձնելու միակ եղանակը, այդ «թիմի» վրա հսկողություն սահմանելն է: Ընդ որում՝ այդ վերահսկողը չպետք է լինի վարձու աշխատող, այլապես, ինչ երաշխիք, որ նրա պահվածքը նույնպես չի լինելու խուսափողական: Իսկ այդ դեպքում «ով է վերահսկելու վերահսկողին»: Արդյունավետ վերահսկիչ կարող է լինել ֆիրմայի սեփականատերը և իրավունք ունենալ ամբողջ մնացորդային եկամտի նկատմամբ, որը ձևավորվել է բանվորների գործունեության արդյունքում: Այսինքն՝ նա խուսափողականության նկատմամբ արդյունավետ կհետևի այն ժամանակ, եթե տնտեսած գումարը պետք է մտնի իր գրպանը:

Այստեղից էլ ֆիրմայի ծագման մասին եզրակացությունը. ինստիտուցիոնալ եղանակով թիմային արտադրությունը դարձնել հնարավոր:

Ալչիյանը նոր խոսք է ասել օգտակարության չափման նշանակության, ծախսեր-թողարկում, արժեք և այլ հիմնահարցերի վերաբերյալ: Նա, Վ.Ալլենի հետ համահեղինակ է «Տնտեսագիտության տեսության համալսարանների» համար դասագրքի, որում տնտեսագիտական հասկացությունները շարադրված են ոչ ավանդական՝ զվարճալի ու հումորի ձևով: Նրանում պահանջները շատ բարձր են, և գործում են ուսանողների կողմից տնտեսական երևույթների ինտուիտիվ ճանաչողության չափանիշները: Այն որոշակի արժեք ունի նաև որպես գրական ստեղծագործություն:

1960-ական թվականներին Ալչիյանի առաջադրույթները «նախանշել են վերլուծությունների այն ուղղությունը-

ները», այն նոր մշակումները, որով պիտի ընթանար տնտեսագիտության տեսությունը: «Դժվար է փնտրել ավելի ուժեղ ներբող» (Մ.Բլաուգ):

Ա.Ալչիյանը 2000թ. արժանացել է Ա.Սմիթի անվան մրցանակի համաշխարհային տնտեսության առողջացման հիմնախնդրում ակնառու ավանդի համար: 1996-ին ընտրվել է Ամերիկյան տնտեսագիտական ասոցիացիայի պատվավոր անդամ: Նրա անունը ներառված է ԱՄՆ-ի անվանի տնտեսագետների փառքի պատկերասրահում:

Աշխ. Uncertainty Evolution and Economic Theory, 1950, JPE, The Rate of Interest, Fishers Rate of Return Over Cost and Keyness Internal Rate of Return, 1955, AER, Private Property and the Relative Cost of Tenure, 1958, in Bradley, editore, Public Stake in Union Power, Cots and Outputs, 1959, in Abramovitz, editor, Allocation of Economic Resources. The Meaning and Validiity of the Inflation – Induced Lag of Wages, with R.A.Kessel, 1960, AER, Competition Monopoly and the PURSUIT OF Pecuniary Gain, with R.A.Kessel, 1962, in Aspects of Labor Economics, The Effects of Inflation, with R.A.Kessel, 1962, JPE, Reliability of Progress Curves in Airfram Production, 1963, Econometrica. University Economics, with W.R. Allen, 1964, Exchange and Production, 1964, Some Economics of Property Rights, 1965, II Politico, Economoc Social Impact of Free Tuition, 1968, New Individualist Review, Cost, 1968, IESS, Information Coasts, Pricing and Resource Unemployment, 1969, Western EJ, Corporate Management and Property Rights, 1969, in Manne, editor, Economic, Policy and the Regulation of Corporate Securities, Production, Information Coasts and Economic Organization, with H.Demsetz, 1972, AER, On a Correct Measure of Inflatiion, with B.Klein, 1973 JMCB, Why Money, 1977, JMCB, Economic Forces at Work, 1978, Vertical Integration, Appropriable Rents and the Competitive Contracting, Process, with B.Klein and R.G.Crawford, 1978, J Law Econ.

ԱԽԻՆՈՎ (ԱԽԻՆՅԱՆ) ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՒՇԻ

(1959)

Ծնվել է Մոսկվայում: 1981-ին ավարտել է Մոսկվայի Գ.Վ.Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտը: 1990-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի, իսկ 1999-ին՝ «Պետության սոցիալական քաղաքականության տնտեսական հիմքերը Ռուսաստանի անցումային տնտեսության պայմաններում» հետազոտության համար տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանները: 1991-ից աշխատում է Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում: 2000-ից պրոֆեսոր է «Սոցիալական ոլորտի տնտեսագիտության» ամբիոնում:

Մասնակցում է Տարածաշրջանային քաղաքականություն: Ձեռնարկատիրական և ինվեստիցիոն գործունեությունը ՌԴ սոցիալական ոլորտի ճյուղերում նախագծերին:

Գ.Ախինովի «Экономические основы социальной политики государства в условиях переходной экономики России» աշխատության մեջ դիտարկվում է խնդրի տրանսֆորմացիայի և հետագա կատարելագործման, եկամուտների բաշխման քաղաքականության և պետության սոցիալական ֆունկցիաների իրացման հիմքերի և այլ կտրվածքներով: Նրանում հիմնավորվում է իրականացվող ռեֆորմների ընդհանուր կոնստրուկցիայում սոցիա-

լական զարգացումը որպես տնտեսական աճի գործոն համարելու հնարավորությունն ու անհրաժեշտությունը:

Պետության սոցիալական ֆունկցիաների ու քաղաքականության հարցերի հետազոտությամբ է նշանավորվել նրա հետագա գիտական գործունեությունը, դրանք դիտարկելով պետության սոցիալական քաղաքականության ծագման ու զարգացման, սոցիալական պետության ֆունկցիաների ձևավորման նախադրյալների ու պայմանների, Ռուսաստանում սոցիալական քաղաքականության կայացման (այդ թվում՝ իբրև սոցիալական պետության՝ ԽՍՀՄ-ի բնութագրության), բյուջետային ֆեդերալիզմի ռուսական մոդելի ձևավորման սոցիալական տեսանկյունների և այլ հարցեր: Նրա «Информационно-аналитический обзор «Трансатлантического Торговое и Инвестиционное партнерства (ТТИП/TTIP)». Европейской взгляд (по материалом Еврокомиссии)» աշխատությունն արծարծում է «Նոր տրանսատլանտյան քաղաքականության» ձևավորման վերաբերյալ դիրքորոշումները:

Գ.Ախինովը հեղինակ է մի շարք դասագրքերի և ուսումնական ձեռնարկների:

Աշխ. Социальные аспекты экономической реформы в России, М., 1998, Социальная функция государства в условиях рыночной экономики: Вопросы теории и практики, М., 2006 (соавтор Камилов Д.А.), Политика государства в сфере распределения доходов населения, М., 2006, Экономика общественного сектора (соавтор Жильцов Е.Н.), М., 2008 (учебное пособие), Управления реализацией национальных проектов в отраслях социальной сферы (соавтор Кульмухаметов Э.В.), М., 2007, Социальная политика. Теории и практики (соавтор Калашников С.В.), М., 2008, Социальные стандарты в системе межбюджетных отношений (соавтор Зарипова И.Р.), М., 2008, Экономика общественного сектора (соавтор Мысляева И.Н.), М., 2011 (учебник), Информационно-аналитический обзор «Трансатлантического Торговое и Инвестиционное партнерства (ТТИП/TTIP)». Европейской взгляд (по материалом Еврокомиссии), М., 2016.

ԱՂԱՆԲԵԳՅԱՆ ԱԲԵԼ ԳՅՈՔԻ

(1932)

Ծնվել է Թիֆլիսում: Ավարտել է Մոսկվայի պետական տնտեսագիտական ինստիտուտը (1955): 1963-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան, իսկ 1964-ին՝ պրոֆեսորի կոչում: 1964-ին ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, 1974-ին՝ ակադեմիկոս: 1955-61-ին աշխատել է ԽՍՀՄ մինիստրների խորհրդի աշխատանքի և աշխատավարձի պետական կոմիտեում, 1961-68-ին՝ ԽՍՀՄ ԳԱ Սիբիրի բաժանմունքի արդյունաբերության արտադրության էկոնոմիկայի և կազմակերպման ինստիտուտի (Նովոսիբիրսկ) լաբորատորիայի վարիչ, 1966-86-ին՝ տնօրեն, միաժամանակ ԽՍՀՄ ԳԱ Սիբիրի բաժանմունքի նախագահության անդամ: 1986-ից՝ ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար և ԽՍՀՄ ԳԱ նախագահության անդամ: 1975-ից՝ ԽՍՀՄ ԳԱ առընթեր ԲԱՄ-ի պրոբլեմների գիտխորհրդի նախագահ: 1970-ից՝ «Экономика и организация промышленного производства» ԷԿՕ ամսագրի հիմնադիր և գլխավոր խմբագիր: 1989-2002-ին՝ Ռուսաստանի կառավարությանն առընթեր ժողովրդական տնտեսության ակադեմիայի ռեկտոր:

Նրա գիտական աշխատանքների հիմնական ուղղություններն են արդյունաբերական արտադրության կազ-

մակերպման, աշխատանքի արտադրողականության, մակրոտնտեսագիտության, աշխատավարձի և կենսամակարդակի, էկոնոմետրիկայի, տեսական և կիրառական տնտեսագիտության, օպտիմալ հեռանկարային պլանավորման համար տնտեսության ճյուղային և շրջանային մոդելների մշակման, շուկայական տնտեսության հիմնահարցերը:

Աղանբեգյանը տաղանդավոր և մասշտաբային մտածող է: Սկսած 1950-ական թվականների վերջերից երևույթներն իրենց շարժման ընթացքի մեջ դիտելը և վերանայումների սկզբունքը եղել է նրա մտածողության պահվածքի բնորոշ գիծը: Ոչ պատահականորեն նա համարվում է հասարակության տնտեսական վերակառուցման կոնցեպցիայի հեղինակներից մեկը: Տվյալ դեպքում հնարավոր չէ անդրադառնալ նշված նախասիրությունների՝ նրա հետազոտական տարածքի բոլոր հրապարակումներին: Ուստի մի քանիսի անոնատիվ բնութագրություններն ու հղումները.

- «Заработная плата в СССР. (Некоторые вопросы теории и практики)» (Վ.Մայերի համահեղինակությամբ): 1930-ական թվականների տարիֆային ռեֆորմից հետո ԽՍՀՄ-ում աշխատավարձի ընդհանուր կարգավորման ուղղությամբ միջոցառումներ չէին իրականացվել: 1950-ական թվականների կեսերին խնդիր էր դրվել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աշխատավարձը ենթարկել ընդհանուր կարգավորման: Նշված աշխատությունը որոշակի ընդհանուր տեսական ու գործնական ելակետեր էր ենթադրում այդ բարդ ու բազմաշերտ խնդրի լուծման ուղղությամբ: Խոսքը վերաբերում է աշխատանքի արտադրողականության աճի և դրամական ու իրական աշխատավարձերի միջև հարաբերակցության, աշխատավարձի և ազգային եկամտի բաշխման, միջճյուղային և միջշրջանային աշխատավարձերի, տնտեսության առանձին ճյուղերի ու ոլորտների առանձնահատկությունների և աշխատավարձի կարգավորման հետ կապված բազմաթիվ այլ խնդիրների իրացման տեսական և գործ-

նական հիմնախնդիրներին:

- «Система моделей народно-хозяйственного планирования» (համահեղինակներ՝ Կ.Բրագինովսկի, Ա.Գրանբերգ): 1950-ական թվականների վերջերին տիրապետում էր այն պատկերացումը, թե ժողովրդատնտեսական պլանի հաշվարկների ավտոմատացումը կարող է իրականացվել միայն մեկ մանրամասնեցված մոդելի միջոցով: Իբրև այդպիսին համարվում էր միջճյուղային հաշվեկշիռը: Մաթեմատիկոս-տնտեսագետների գերակշիռ մասի կարծիքով ժողովրդատնտեսական պլանավորման գլխավոր ուղղությունը պետք է լինի այդ մոդելի զարգացումը և նրա լրացումը տարբեր կախվածություններով: Ամենատարբեր տնտեսական պրոցեսների միայն մեկ՝ թեկուզև շատ բարդ մոդելում ընդգրկման փորձը չէր կարող հանգեցնել դրա պրակտիկ կիրառությանը: Միաժամանակ միջճյուղային հաշվեկշռի կառուցումն ուղենշային դարձավ տնտեսագիտության և ժողովրդատնտեսական պլանավորման զարգացման համար: Նշված մենագրությունը նվիրված է ժողովրդական տնտեսության հեռանկարային պլանավորման մոդելների համակարգին: Նրանում՝ ա) զուգորդվում են ժողովրդատնտեսական պլանավորման երկու տեսանկյունները՝ արտադրական և տարածքային, բ) ներառված են մանրամասն մշակված և պլանավորման պրակտիկ խնդիրների լուծման ժամանակ փորձարկված մոդելները:

- «Управление социалистическими предприятиями: вопросы теории и практики» աշխատության գաղափարն է արտադրության կառավարման վերաբերյալ ժամանակակից գիտական պատկերացումները միավորել առաջավոր միավորումների և ձեռնարկությունների աշխատանքի հարուստ փորձի հետ: Հենց այդ գաղափարի վրա է գրքի կառուցվածքը, նյութի շարադրանքի հետևյալ հաջորդականության մեջ. երկրի տնտեսական զարգացման հրատապ հիմնահարցերը և տնտեսական կառավարման խնդիրները

ժամանակակից էտապում, կառավարման մեթոդաբանական հիմքերը, սոցիալիստական արտադրության կառավարման համակարգի կատարելագործման հիմնախնդիրները, կառավարման կազմակերպումն ու տեխնոլոգիան:

- «Сибирь на рубеже веков» (համահեղինակ՝ Զ.Իբրահիմով): Աշխատության ներածականում հեղինակները նշում են, թե այն գրվել է «Երկրի արևելյան շրջաններով էքսպեդիցիաների արանքներում, ինչպես նաև գնացքներում, հաճախ ամփոփելով բովանդակալից հանդիպումներով, վեճերով, ուրախություններով ու տագնապներով հարուստ օրվա տպավորությունները՝ փորձելով հասկանալ տեղի ունեցածը»: Այն բազմաթիվ տաղանդավոր, մտածող, անհանգիստ մարդկանց հետ հանդիպումների ամփոփումն է: Մենք միայն լսել ենք «ժամանակի ձայնը», փորձելով թափանցել իրականում կատարվող գործընթացներում ու երկրին հուզող հիմնահարցերում: Աղանբեգյանը կաբինետային մտածող չէր: Իսկ աշխատության ազատ շարադրանքում հեղինակների իրական հատվածից եկող մտորումներն են Սիբիրի հարստությունների յուրացման ծրագրային խնդիրների վերաբերյալ:
- «Экономико-математические методы и модели в перспективном отраслевом планировании. Вопросы методологии и методики» (կոլեկտիվ մենագրություն, հեղինակ և պատասխանատու խմբագիր): Գրքում փորձ է արվում համալիր ձևով, նոր որակական մակարդակով ընդհանրացնել ճյուղային պլանավորման մեթոդաբանական և մեթոդական մշակման բնագավառում տնտեսամաթեմատիկական մոդելների և մեթոդների օգտագործման հիմնահարցերը: Մեծ տեղ է հատկացվում անորոշության գործոնի հիմնահարցերի հաշվառման և մշակվող պլանների հուսալիության գնահատությանը:
- «Советская экономика – взгляд в будущее». տնտեսագետը, ի դեմս վերակառուցման, հնարավորու-

թյուն էր տեսնում անցնելու «նոր որակական վիճակի», որը ենթադրում էր նոր գիտատեխնիկական ինվեստիցիոն և կառուցվածքային քաղաքականություն, կառավարման համակարգում արմատական ռեֆորմի իրականացում, հասարակության սոցիալական կողմնորոշման ուժեղացում, տնտեսական ռեֆորմների արագ իրականացման համար քաղաքական համակարգի ռեֆորմի անհրաժեշտություն: Աղանբեգյանը Ռուսաստանի մի շարք տարածաշրջանների տնտեսական զարգացման ծրագրի հեղինակներից է: Հատկապես դա վերաբերում է Տյումենի մարզի, Խանտա-Մանսիյսկի և Յամալո-Նենցյան օկրուգների նավթաբազային սեկտորներին: Նա մի շարք երկրների հայտնի ընկերությունների հետ իրականացնում է համատեղ նախագծեր: Ղեկավարում է երկրի արդյունաբերության խոշորագույն ձեռնարկությունների տնօրենների ակումբը:

1990-ական թվականներին Աղանբեգյանի հետազոտությունների մատենագիտությունը համալրվում է շուկայական տնտեսության վերաբերյալ աշխատություններով: 2009-ին լույս է տեսնում նրա «Кризис: беда и шанс для России», իսկ 2010-ին՝ «Экономика России на распутье… Выбор посткризисного пространства» մենագրությունները: Դա ճգնաժամի սկիզբն էր, երբ հրապարակումներում ավելի շատ խոսք էր գնում նրա պատճառների, հետագա հնարավոր միտումների մասին: Ու թեև ընդլայնվել են պատկերացումները ֆինանսատնտեսական ճգնաժամի վերաբերյալ, այնուամենայնիվ նրա ելքի ու տևողության իմաստով շատ կողմերով մնում էին չգիտակցված: Աղանբեգյանն այն համարում է փորձություն, որի ընթացքում. «...կհարատևեն և կամրանան առավել ուժեղ, կենսակայուն բանկերն ու կազմակերպությունները, տեղի կունենա մի տեսակ բնական ընտրություն՝ որպես առաջընթացի հիմքի»: Ճգնաժամը կկոփի միլիոնավոր մարդկանց՝ դուրս գալու նրանից … Շատերին «խելքի կբերի», կխորտակի դոգմաներն ու պատրանքները, կստիպի վերահմաստավորել

հին պատկերացումները, կենսական կարևոր դասեր կմատուցի ապագայի համար: Պարզապես ճգնաժամը կմաքրի և ցույց կտա զարգացման ավելի արդյունավետ ուղի նրանց, ովքեր դրանից օգտակար դասեր կքաղեն»: Հենց այս համատեքստում էլ նա փորձում է պատասխանել «ինչ է մեզ սպասվում փոփոխություններից», «ինչպիսին պիտի լինի մեր պահվածքը» և «ինչի պատրաստվել» հարցերին: Եվ այսպես. Ռուսաստանի համար չի ավարտվել անցման շրջանը: Հասարակական հաստատությունների, տնտեսական ու սոցիալական կառույցների ներքին որոնումները դեռևս շարունակվում են, ինչն ավելի է բարդացնում կացությունը: Շուկայական տնտեսությանն անցնելու հարյուր քայլից հազիվ կատարված է քառասունը: Հատկապես կարևոր է երկու առաջնահերթ խնդիրների լուծում, առաջին՝ անհրաժեշտ է անցնել հավասարակշռված տնտեսության, որտեղ ապրանքների և ծառայությունների, կապիտալի և աշխատուժի առաջարկը բավարարում է համապատասխան վճարունակ պահանջարկը և երկրորդ՝ կենտրոնացված պլանի և վարչարարական հարկադրանքի մեխանիզմը փոխել տնտեսությունը շարժող շուկայական պայմաններով և խթաններով: Ֆինանսատնտեսական ճգնաժամի խորությունը նշանակալից չափով հետևանք է հենց շուկայի անզարգացածության. «...պետությունը վատ առևտրական է, և մասնավոր սեփականությունն ամենուր ցուցադրում է ռեսուրսների արդյունավետ օգտագործման ավելի բարձր արդյունքներ»: Շատ են տնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ Աղանբեգյանի աշխատության մեջ արված դիտողությունները, տեսակետներն ու առաջարկությունները: Իսկ ճգնաժամից ելքի դասեր ակնկալող նրա ընդհանրացումները հանգում են հետևյալին.

- առանց «երկար փողերի»՝ որպես ինվեստիցիաների ֆինանսական և բանկային համակարգի կայուն հիմքի, երկիրը չի կարող ունենալ բարեհաջող և արդյունավետ ապագա,

- հիմնավոր կրճատել ինֆլյացիան՝ վրա հասած ստագֆլյացիան հաղթահարելու համար,
- արտադրության իրական դիվերսիֆիկացիայի ռազմավարական պլանների մշակում և ճյուղերում հումքի վերամշակման ու պատրաստի արտադրանքի արտադրության իրականացում,
- արագ և համակողմանի բանկային համակարգի ամուր ծրագրի մշակում և իրականացում,
- զգուշանալ արտասահմանյան պարտքերի աճից, դրանք ավելի շահեկան պայմաններով փոխարինել սեփական փոխառու միջոցներով:

Նշված աշխատությունները պարունակում են Ռուսաստանի համար հետճգնաժամային տարածքի ընտրության խորհուրդը:

Աղանբեգյանը միջազգային տնտեսագիտական ասոցիացիայի պատվավոր նախագահն է, էկոնոմետրիկական միջազգային ընկերության հիմնադիր անդամ: Հանդիսանում է Բուլղարիայի և Հունգարիայի գիտությունների ակադեմիաների արտասահմանյան անդամ է, բրիտանական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, Ալիկատեի (Իսպանիա) և Լոձի (Լեհաստան), Բարսելոնայի, Սեուլի (Հարավային Կորեա), Կալիֆոռնիայի (Խեյվարդ, ԱՄՆ) և այլ համալսարանների պատվավոր դոկտոր:

Պարգևատրվել է Լենինի անվան (1967), Աշխատանքային կարմիր դրոշի (1974) և այլ շքանշաններով ու մեդալներով:

Նրա գիտական աշխատանքների մատենագիտական ցանկը հասնում է մի քանի հարյուրի, որոնց մի զգալի մասը թարգմանվել ու հրատարակվել է շուրջ 12 երկրներում:

Որոշակի է Աղանբեգյանի ավանդը հայ տնտեսագիտական կադրերի պատրաստման գործում: Նա պարբերաբար այցելում է Հայաստան՝ հանրապետության տնտե-

սության առջև ծառացած հիմնահարցերի լուծման վերաբերյալ խորհրդատվական առաքելությամբ:

Աշխ. Заработная плата в СССР, М., 1959, (соавтор), Вопросы теории монополии цены. На примере США, М., 1961, Применение математики и электронной техники в планировании, М., 1961 (соавтор), Экономико-математический анализ межотраслевого баланса в СССР, М., 1968, Основные положения оптимального развития и размещения производства, М., 1968, Основные положения оптимизации развития и размещения производства и отдельных звеньях народного хозяйства, М., 1969, Система моделей народнохозяйственного планирования, М., 1972(соавтор), Концепция предстоящего развития производительных сил региона и методические основы ее разработки, М., 1974, Управление социалистическими предприятиями: вопросы теории и практики, М.,1979, Адаптация АСУ производством (АСХ «СИГМА»), М, 1981, Управление и эффективность экономики СССР 1980-1981, М., 1981, Сибирь на рубеже веков, М., 1984, (соавтор), Западная Сибирь, Свердловск, 1984, Советская экономика-взгляд в будущее, М., 1988, Переход к рынку. Борьба мнений, М., 1993 (соавтор), Энергетический сектор в среднесрочной программе развития экономики России, М., 1997, (соавтор), Сибирь на пороге нового тысячалетия, М., 1999 (соавтор), Государственное регулирование региональных рыночных процессов, М., 2002, (соавтор), Социально-экономическое развитие России, М., 2003. Кризис: беда и шанс для России, М., 2009, Экономика России на распуть. Выбор посткризисного пространства, М., 2010.

ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՈՎՍԵՓ ԻՎԱՆԻ

(1958)

Ծնվել է Սյունիքի մարզի Դարբաս գյուղում: 1965-75-ին սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1975-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1980-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը և ստացել տնտեսագետ մաթեմատիկոսի որակավորում: Նույն թվականին ընդունվել է ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրան՝ քաղաքատնտեսություն (տնտեսագիտության տեսություն) մասնագիտությամբ: 1984-88-ին աշխատել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում՝ սկզբում ավագ տնտեսագետի, այնուհետև կրտսեր գիտաշխատողի և գիտաշխատողի պաշտոնում: 1988-ից աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնում՝ սկզբում ասիստենտի, այնուհետև դոցենտի, իսկ 2009-ից պրոֆեսորի պաշտոնում: 2006-ից եղել է տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, 2012-ից՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ: 2006-2012-ին եղել է «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագրի առաջին տեղակալ, իսկ 2012-2014-ին՝ գլխավոր խմբագիր:

1986-ին պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Անձնական տնտեսական շահը արտադրական հարաբերությունների համակարգում» թեմայով և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2004-ին՝ «Տնտեսության պետական կարգավորման արդի հիմնախնդիրները (տեսություն և պրակտիկա)» ատենախոսության համար տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

Դեռևս 1980-ական թվականներին նա իր հոդվածներում և հատկապես «Անձնական տնտեսական շահը արտադրական հարաբերությունների համակարգում» մենագրության մեջ անդրադարձել է տնտեսագիտական հետազոտական ցանկում չարծարծվող հոգեբանական բնույթի պահանջմունքների կարևորմանը, աշխատուժի ապրանքային բովանդակության հիմնավորմանը, տնտեսական շահերի բարդ փոխհարաբերության մեջ անձնական տնտեսական շահի՝ որպես գործունեության առաջին ազդակի, առաջնային լինելու հանգամանքի պարզաբանմանը: Հեղինակը միակողմանի է դիտում հասարակության էվոլյուցիան «միայն տնտեսական հիմքով բացատրելը», կարևորելով նրա «ծագման հոգեբանական պատճառները»: Աշխատության մեջ վերանայվում են ժամանակին տեղ գտած «շահը պահանջմունքի քանակական արտահայտությունն է», կամ որպես «օբյեկտիվ հարաբերությունների սուբյեկտիվ արտացոլումը» և այլ տեսակետները, այն ընդհանրապես դիտելով «հասարակական հարաբերությունների հիմքն ու բովանդակություն», որպես մարդկանց «գործունեության առաջին ելակետը»: Անդրադառնալով սոցիալիզմի ժամանակ ըստ աշխատանքի բաշխման տնտեսական օրենքի գործողությանն ու անձնական տնտեսական շահի իրացման ճեղքվածքներին, նա տնտեսական շահերի իրացման և դրա հիմքի վրա նյութական շահագրգռվածության ապահովման անհրաժեշտ պայմանը համարում է շուկայական տնտեսական համակարգին բնորոշ սկզբունքների և մեխանիզմների կիրառումը:

Անցյալ դարի 90-ական թվականներին տնտեսական

գիտության նախորդ բոլոր պոստուլատները ենթարկվում էին վերանայման: Հասարակությունը, որը տասնամյակներ շարունակ դաստիարակվել էր պատերնալիզմի ոգով, փորձում էր պարզել, թե ընդհանուր փոխակերպության մեջ որն է պետության ֆունկցիան: Ընդ որում՝ հարցը վերաբերում է ոչ միայն պետության դերի մասնավորեցմանը որևէ կոնկրետ ոլորտի առումով, ինչպես կարելի է հանդիպել ուսումնասիրություններում, այլև մի ավելի լայն խնդրի՝ տնտեսական ենթատեքստում պետության հասարակական ֆենոմենի բացահայտմանը, որը և՛ հասարակական ընտրության ֆենոմենն է, և՛ պետության որակի, և՛ նրա օպտիմալ շահերի սահմանների գնահատումները, և՛ տնտեսության ազգային մոդելի ընտրությունը և այլն: Այդ հակասական խնդրին է նվիրված Հ.Աղաջանյանի «Պետությունը և տնտեսությունը» մենագրությունը: Սովորաբար տնտեսագիտական ուսումնասիրություններում վերլուծությունը կատարվում է որպես շարժում տեսությունից դեպի կոնկրետը: Նշված աշխատության մեջ շարժումը կատարվում է տեսությունից դեպի տեսություն ընթացքով՝ տնտեսական երևույթներն առնչելով սոցիալական մյուս գիտությունների տիրույթներին, իսկ վերլուծության այլատար սկզբունքների չափանիշների մեթոդը հնարավորություն է տվել դրանցում գտնելու նոր իմաստավորումներ: Նրանում երևույթների մեկնակետը հոգևոր ազդակների գործոնն է, որպիսին է նաև պետության ֆենոմենը՝ որպես հոգևոր դրսևորման և հավաքական կամքի արտահայտություն: Անդրադառնալով հետքեյնսյան տնտեսագիտությանը, որը փորձում էր Քեյնսի տեսությանը տալ բանաձևային արտահայտություն, հեղինակը, հակառակ շուկայական տնտեսությանն անցնելու հեշտանվաճ կարծիքի, ցույց է տալիս «տնտեսական համակարգի վարքագիծը պայմանավորող պարամետրերի ներքին հակասականությունը, ինչը հնարավորություն չի տալիս ճշգրտորեն ներկայացնել դրանց միջև առկա ֆունկցիոնալ կախվածության բնույթը», որ շուկայական մոդելի «արդյունավետությունը մեծացնելու

նպատակով անհրաժեշտ է օգտագործել» բազմաթիվ լծակներ, ինչը տնտեսական համակարգի կարգավորումը դարձնում է անխուսափելի:

Տնտեսության պետական կարգավորման տեսական հիմքերի քննությունն է ենթադրում հասարակական ընտրության և տնտեսության պետական կարգավորման, տնտեսական և քաղաքական համակարգերի փոխհարաբերության, ինստիտուցիոնալ կերպափոխումների կարգավորումը:

Հասարակական ընտրության տեսությունը լայն հասկացություն է, որը ենթադրում է որոշակի պարադոքսների առկայություն, պարադոքսներ, որոնք իրենց ազդեցությունն ունեն տնտեսության վրա, ինչպես օրինակ, հոգեբանական գործոնը, որն իր հիմքում ունենալով հոգևոր պահանջմունքների փոփոխությունը, պատճառ է դառնում պատմության հակասական դրսևորումների, որտեղից են սկսվում և որտեղ են վերջանում ազատության սահմանները, ինչու բռնապետություն և ոչ ժողովրդավարություն, կամ «ճշմարտությունը ձայների մեծամասնությամբ չի որոշվում» և «ժողովրդավարությունն անկատարություն է, բայց մարդկությունն ավելի լավ համակարգ չի կարող ստեղծել» ճշմարտությունները, լուծում չունեցող հասկացությունը, կամ արդարության և հավասարության սահմանների չափորոշիչների պարադոքսը և այլն: Բարդ ու խճճված արժեչափերի այդպիսի պայմաններում հասարակարգի ինքնակարգավորման հիմնական միջոցը կապվում է օրենքների համակարգի հետ՝ որպես «հասարակական կապիտալ»:

Անդրադառնալով պետության գործունեության օպտիմալացման հարցերին, առանձնացվում են անցման շրջանի պետության կարգավորիչ պարամետրերը, որպես հիմնական գործառույթներ ունենալով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրները: Հանրապետության տնտեսական համակարգի ճկունությունն ու արդյունավետությունը կապվում է ազգային մոդելի ձևավորման հետ, որն իր հիմքում պետք է ունենա հայ ազգային պահվածքի քաղաքակրթական տրվածքը՝ նրա

տնտեսական, ռեսուրսային, սոցիալական, պատմական, աշխարհաքաղաքական, հոգեբանական, մշակութային և այլ գործոնների հաշվառումը: Հենց այս իմաստով էլ դրվում է «մեր պատմության փիլիսոփայության ձևավորման և ճշգրտման խնդիրը»:

Անցյալ դարի կեսերից տնտեսագիտության մեջ փոխվել է մարդկային պահվածքի տեսության ռելիեֆի ըմբռնումը: Տարբեր տեսությունների հետազոտական կողմնորոշումներում ընդլայնվել են այդ պահվածքի տնտեսական ճանաչողության սահմանները, սակայն մարդկային գործունեության ուղղությունն իր էությամբ ներհակ է, ապագա քաղաքակրթության հավասարության մեջ «ռացիոնալությունը մեծացնում է դրա կազմակերպման և ուղղվածության իռացիոնալիզմը»: Ռացիոնալի և իռացիոնալի հարցը նոր չէ Հ.Աղաջանյանի հետազոտական ոլորտում: Նոր ուսումնասիրություններում նա ընդլայնում է խնդրի հետազոտական սահմանները, փաստարկումները, և որում հասարակական առաջընթացի ռացիոնալիստական մեկնության վերաիմաստավորման պահանջը, ելակետ ունենալով ոչ թե բանականության, այլ բնազդների, սոցիալական, ազգային և կրոնական զգացմունքների վրա հիմնված սկիզբը: Հաճախ, շատ նշանավոր տնտեսագետների մոտ «փոփոխությունները սոցիալական կառուցվածքում տնտեսության և կուլտուրայի զարգացման մեջ» հայտնվում են «տեսության հնոտիքում» գտնելով, թե գործունեությունը, եթե նույնիսկ հակասում է ձգտումներին, այնուամենայնիվ ռացիոնալ է, դրանով իսկ իռացիոնալը տարրալուծելով ռացիոնալի մեջ, մարդու պահվածքը, նրա գործունեությունը, ամբողջապես համարելով ռացիոնալ: Մինչդեռ դա հայեցության մեթոդաբանական թերություններից մեկն է, անհրաժեշտ է ոչ թե ժխտել իռացիոնալության հանգամանքը, «այլ դրա ճանաչողության և համապատասխան մեխանիզմների կիրառման միջոցով մեծացնել ռացիոնալ ոլորտի գործունեության սահմանները», այսինքն՝ գտնել պատճառի և հետևանքի իրական սահմանը:

Ինչպես հայտնի է, տնտեսագիտական միտքն առաջադրել է արժեքի իրարամերժ հայեցություններ, առաջադրելով այն չափելու տարբեր գործոններ: Բայց արդյոք նշված գործոնները թույլ են տալիս խոսել գնի, աշխատավարձի, տոկոսի, շահույթի մասին՝ որպես հավասարակշռված արժեքային մեծությունների: Սա արդեն հիմնահարց է: Եվ այստեղ է, որ Հ.Աղաջանյանը փորձում է արժեքները վերարժևորել՝ ցույց տալու, թե ինչպես չպետք է ընկալել հավասարակշռություն ասածի և իրականության միջև գոյություն ունեցող հակասությունը: Նա դրա պատճառը կապում է չափման հստակ միավորի բացակայության հետ, որպես թե առկա են իռացիոնալության որոշակի սահմաններ, որոնք հաղթահարելի չեն չափման միավորի ընտրության անհատականության պատճառով: Այս առումով հատկապես առանցքային է դառնում փողի՝ որպես միասնական արժեչափի, իրական բնույթի պարզաբանումը: Այս համատեքստում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում տնտեսկան աճի որակի գնահատման վերաբերյալ մոտեցումները

Աշխ. Անձնական տնտեսական շահը արտադրական հարաբերությունների համակարգում, Եր., 1988, Պետությունը և տնտեսությունը, Եր., 2004, Հավասարակշռության տեսության պարադոքսները, «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի», 2005, թիվ 1, Ռացիոնալի և իռացիոնալի հարցի վերաբերյալ տե՛ս հետևյալ հոդվածաշարը. «Բանբեր …», 2006, թիվ 3, Հասարակական գործընթացների իռացիոնալության սահմանները, «Բանբեր …», 2006, թիվ 1, Ռացիոնալի և իռացիոնալի սահմանները տնտեսական հարաբերություններում, «Բանբեր …», 2006, թիվ 2, Տնտեսական համակարգը որպես ռացիոնալի և իռացիոնալի համադրություն, «Բանբեր …», 2006, թիվ 3, Մուտացիոն գործընթացների հարցի շուրջ, «Բանբեր …», 2007, թիվ 3, Տնտեսագիտության տեսություն. մաս 1 (2009), մաս 2 (2015), ուսումնական ձեռնարկ, Հասարակագիտություն. դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար (համահեղինակ), Եր., 2009: Ֆինանսական անկայունության հարցի շուրջ «Բանբեր...», 2012 թիվ 2, Տնտեսական աճի որակի հարցի շուրջ, «Բանբեր...», 2013 թիվ 4:

ԱՃԵՄՕՂԼՈՒ ՏԱՐՈՆ

(1967)

Ծնվել է Ստամբուլում: Դիպլոմավորվել է 1986-ին Գալաթասարայի վարժարանի կողմից: Բակալավրի աստիճան ստացել է 1989-ին Մեծ Բրիտանիայի Յորքի համալսարանում: 1990-92-ին Լոնդոնի տնտեսագիտական դպրոցում ստանում է մագիստրոսի և դոկտորի գիտական աստիճաններ էկոնոմետրիկայի և մաթեմատիկական տնտեսագիտության բնագավառներում: 2004-ից Մասաչուսեթսի համալսարանի տեխնոլոգիական ինստիտուտի Չ.Քինդլբերգերի անվան կիրառական տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր է:

1996-ին արժանացել է մրցանակի լավագույն զեկուցման համար՝ հրապարակված «Economic Journal»-ում: 2004-ին ստացել է Չիկագոյի համալսարանի «Շուլցի» մրցանակի, 2005-ին՝ Ջոն Բեյթս Կլարկի մեդալի, որը տրվում է մինչև 40 տարեկան ամենաանվանի ամերիկյան տնտեսագետին (այն իր վարկանիշով զիջում է միայն Նոբելյան մրցանակին), 2006-ին ընտրվել է Ամերիկյան արվեստների և գիտությունների ակադեմիայի անդամ, 2007-ին արժանացել է «Ջոն Նեյմանի» մրցանակի: Նա տեղ է զբաղեցրել ամերիկյան Foreign Policy պարբերականի կողմից հրապարակված «Համաշխարհային 100 ինտելեկտուալների» ցանկում:

Աճեմօղլու գիտական հետաքրքրությունների հիմնական ոլորտը համարվում է աշխատանքի շուկայի դինամիկ մոդելների հիմնախնդիրները: Սակայն նրան ավելի շատ համընդհանուր ճանաչում բերեցին Ջեյմս Ռոբինսոնի հետ համատեղ հետազոտությունները: Խոսքը, հատկապես վերաբերում է «Դիկտատուրայի և ժողովրդավարության տնտեսական ակունքները» և «Ինչու որոշ երկրներ հարուստ են, իսկ մյուսները՝ աղքատ» աշխատություններին: Հեղինակները «Դիկտատուրայի և ժողովրդավարության տնտեսական ակունքները» աշխատության գլխավոր ներդրումը համարում են «միասնական կոնցեպտուալ առաջարկը հասկանալու, թե ինչպես է ծագում և ամրապնդվում ժողովրդավարությունը»: Այն կառուցված է երեք հաստատուն հիմունքների վրա.

- մոտեցումը «տնտեսական» է, այն իմաստով, որ ընդգծվում է անհատական տնտեսական խթանների նշանակությունը, որպես քաղաքական կողմնորոշումների դետերմինանտ, և այն ենթադրությունից, որ մարդկանց պահվածքը համաձայն խաղերի տեսության, մի հայտնի չափով ստրատեգիական է,
- շեշտը դրվում է տարաձայնության հիմնարար կարևորության վրա: Տարբեր խմբեր, իսկ երբեմն նաև դասակարգեր, քաղաքականության արդյունքների նկատմամբ հակադիր շահեր ունեն, որոնք ենթարկվում են քաղաքականության արդյունքները որոշող քաղաքական ինստիտուտների ձևերի նկատմամբ հակադիր շահերի,
- քաղաքական ինստիտուտները խաղում են գլխավոր դերը պարտավորությունների հիմնահարցերի լուծման մեջ՝ ազդելով ապագա քաղաքական իշխանության դե յուրե բաշխման վրա:

Նշված դիտակետերից էլ աշխատության մեջ տարբեր երկրների օրինակով քննության են ենթարկվում ժողովրդավարության էության, քաղաքականության մոդելավորման, ժողովրդավարության ստեղծման ու համախմբման, միջին դասակարգի դերի, իշխանության բաշխման և այլ հարցեր:

Մեծ ընդունելության է արժանացել նաև նույն հեղինակների «Ինչու ուրիշ երկրները հարուստ են, իսկ մյուսները՝ աղքատ» տնտեսագիտական բեստսելերը: Իր նշանակությամբ այն հաճախ համեմատվում է Սեմյուել Հանտինգտոնի կամ Ֆրենսիս Ֆուկույամայի աշխատությունների հետ: Նրանք փորձում են պատասխանել մի հարցի, որը հարյուրամյակներ հուզել է պատմաբաններին, տնտեսագետներին և փիլիսոփաներին՝ ինչում է կայանում համաշխարհային անհավասարության ակունքները, ինչու է համաշխարհային հարստությունն այդքան անհավասար բաշխված աշխարհի տարբեր երկրների և տարածաշրջանների միջև: Հարցի պատասխանը հարկ է փնտրել հասարակական տարբեր գիտությունների շփման կետում: Հասարակագիտական միտքը հարուստ է հարցի պատասխանները որոնող տեսություններով, տեսություններ, «որոնք չեն աշխատում»: Վերջիններից աշխատության մեջ առանձնացվում են Դ.Դայմոնդի տեսությունը, համաձայն որի հարստության անհավասար բաշխումը հարկ է կապել աշխարհագրական գործոնների անհավասարության հետ (բնական ռեսուրսների անհավասար բաշխվածության), մի այլ տեսություն դրա հիմքում տեսնում է ազգային, մշակութային առանձնահատկությունները (օրինակ, համաձայն Վ.Վեբերի, բողոքական էթիկան՝ որպես վաղ շրջանի կապիտալիզմի շարժիչ ուժ), մի երրորդ մոդել աղքատ երկրներում խնդիրը կապում է դրանց առաջնորդների ոչ կոմպետենտության հետ, որոնք պարզապես չգիտեն, թե ինչպես բարձրացնեն տնտեսության արդյունավետությունը: Աճեմօղլին և Ռոբինսոնը բերում են բազմաթիվ հակափաստարկներ՝ ցույց տալով, որ այդ տեսություններից և ոչ մեկը «չի բացահայտում տնտեսական ստագնացիայի խորքային պատճառները»: Ստորև բերվող անոտատիվ շարադրանքը պատկերացում է տալիս աշխատության լուծումների վերաբերյալ: Նրանք առաջադրում են ազգային անհավասարության մի համապարփակ տեսություն հասկացությունների իր համակարգով:

Դրա հիմքում ընկած է «ինկլյուզիվություն-էքստրակտիվություն» կոնցեպցիան, որն օգտագործվում է ազգային բարեկեցության մակարդակը որոշող ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական գործոնների դասակարգման համար: Այն գործում է հետևյալ ձևով. ինկլյուզիվ տնտեսական ինստիտուտները նպաստում են բարգավաճմանը, բայց իրենց կայունության համար կարիք ունեն քաղաքական կառուցվածքի ինկլյուզիվ ձևերի, որոնք իրենց հերթին հենվում են ինկլյուզիվ տնտեսության վրա: էքստրակտիվ տնտեսական կառուցվածքները կարող են որոշ ժամանակով ապահովել ազգային արտադրության արագ աճ (այն էլ տնտեսության որոշակի ոլորտներում), սակայն երկարատև հեռանկարի համար դրանք անաշխատունակ են, կամ լավագույն դեպքում քիչ արդյունավետ: Դրանց սատարում են էքստրակտիվ քաղաքական ինստիտուտները, որոնք կարիք ունեն էքստրակտիվ տնտեսության և զորավիգ են դառնում իրենց իշխանությամբ և հեղինակությամբ:

Աշխատության մեջ տնտեսության և քաղաքականության միատիպ ինստիտուտների միջև այդ սիներգիզմը հաստատվում են տնտեսական պատմությունից վերցրած բազմաթիվ օրինակներով: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ինկլյուզիվ և էքստրակտիվ տնտեսական և քաղաքական ինստիտուտների հասկացությունների բովանդակային մեկնությունները: Ինկլյուզիվ են անվանվում տնտեսական կառուցվածքի այն ձևերը, որոնք ժամանակի ընթացքում բնակչության մեծ մասին ապահովում են մուտք (հնարավորություն) ազգային հարստության արտադրության համար: Դրանք պաշտպանում են սեփականության իրավունքը, տնտեսական գործունեության բոլոր մասնակիցների համար ստեղծում են հավասար պայմաններ, խթանում են տնտեսական փոխանակության ազատ խաղերը և խրախուսում տեխնոլոգիական նորամուծությունները: Ընդհակառակը, էքստրակտիվ ինստիտուտները կողմնորոշված են տնտեսական ռեսուրսները

հասարակության էլիտար խմբերի ձեռքում կենտրոնացնելու և բնակչության մնացած մասի աշխատանքը օտարելու նրանց օգտին: Հետևապես նրանք չեն պաշտպանում լայն զանգվածների սեփականության իրավունքը և չեն ստեղծում տնտեսական ակտիվության ազդակներ, ճնշում են արդյունավետ մրցակցությունը և արգելակում տնտեսությունը վարելու արդյունավետ ձևերի ներդրմանը:

Հեղինակների հայեցության մեջ նույն սկզբունքը գործում է նաև քաղաքական ոլորտի համար: Ինկլյուզիվ քաղաքական ինստիտուտները խոչընդոտում են քաղաքական իշխանության մոնոպոլացմանը և իդեալում նրա լծակները բաշխում լայնորեն (սփռում) և պլյուրալիզմի ոգով: Արդյունքում ունենում ենք արդյունավետ, բայց ոչ չափազանց կենտրոնացված իշխանություն, որը թույլ է տալիս պաշտպանել հասարակական կարգ ու կանոնը, օրինականությունը և սեփականության իրավունքը, միաժամանակ պետական վերահսկողության նեղ կապանքների փոխարեն ապահովելով տնտեսական ազատություն: Ընդհակառակը, էքստրակտիվ տիպի քաղաքական ինստիտուտներն իշխանությունը կենտրոնացնում են քչերի ձեռքում և մեխանիզմներ չեն ստեղծում իշխող էլիտայի ոչ բռնի միջոցներով փոխելու համար: Աշխատության մեջ առանձնակի շեշտվում է այն միտքը, որ էքստրակտիվ ինստիտուտները կենտրոնացվածության պայմաններում միանգամայն ընդունակ են մի որոշ ժամանակ ապահովելու տնտեսական աճ (ինչպես օրինակ՝ Ռուսաստանը պետրովյան ռեֆորմների ժամանակ և ԽՍՀՄ-ը (1930-60-ականներին, երբ տնտեսական ինստիտուտներն էքստրակտիվ էին, իսկ շուկայական հարաբերությունները բացակայում էին), սակայն այդ աճը չէին կարող դարձնել ինքնապահպան, հետևապես նաև կայուն՝ պայմանավորված որոշակի պատճառներով: Նախ, դա հնարավոր չէ առանց մշտական տեխնոլոգիական նորամուծությունների, որոնք պահանջում են հնացած արտադրության եղանակի ստեղծագործ ավերումներ: Այդպիսի քայքայումն անխու-

սափելիորեն վնասում է ունևորների իշխանությունների շահերը և պայթեցնում նրանց արտոնությունները: Ուստի երկրները, որոնցում տիրապետում են էքստրակտիվ ինստիտուտները, երկյուղում են ստեղծագործ ավերման պրոցեսներից, իսկ եթե նույնիսկ թույլատրում են, ապա միայն մասնակիորեն և որոշակի ժամանակով: Մյուս կողմից այդպիսի հասարակությունները հղի են քաղաքական անկայունությամբ, որը վտանգ է տնտեսական առաջընթացի համար: Այդ վտանգից խուսափելն անհնար է, հենց էքստրակտիվ իշխանության բնույթով պայմանավորված: Այն իր կրողներին ապահովում է եզակի արտոնություններ, հնարավորություններ՝ նրանց մղելով բռնի ուժով իշխանության լիազորությունները վերաբաշխելու սեփական օգտին:

Աճեմօղլու և Ռոբինսոնի գլխավոր եզրակացությունն է. այս կամ այն երկրի հարստության և աղքատության պատճառներն առաջին հերթին որոշվում են կոնկրետ դրանց քաղաքական և տնտեսական ինստիտուտներով, ընդ որում առաջինները խաղում են գերիշխող դեր. «...բարգավաճման բանալին ինստիտուցիոնալ կազմավորումների մեջ է, այլ ոչ թե մշակույթի կամ աշխարհագրության»: Ըստ էության աշխատության ամբողջ շարադրանքը աշխարհի ամենատարբեր տարածաշրջանների (Արևելյան և Արևմտյան Եվրոպա, Աֆրիկա, Լատինական Ամերիկա, Հնդկաստան, Չինաստան, Մերձավոր Արևելք, Ռուսաստան և այլն) երկրների տնտեսական պատմության հետագծից բերված վերլուծություններ են՝ կատարված իրենց առաջադրույթի՝ ինկլյուզիվ և էքսկլյուզիվ տնտեսական և քաղաքական ինստիտուտների փորձի դիտակետից: Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրների հետագիծը ներկայացնում է որպես ստեղծագործ ավերումների «պրոցես», որը ցույց է տալիս, թե դրանցում ինչպես են ձևավորվել այն իրավիճակները, որոնք Աճեմօղլին և Ռոբինսոնն անվանում են կրիտիկական ծայրակցումներ: Դրանք ստեղծում են այն բարենպաստ հավանականությունները, որոնք թույլ կտան

էքստրակտիվ ինստիտուտների աստիճանաբար դերի էքսկլյուզիվություն էվոլյուցիայի համար: Այդպիսի էվոլյուցիան նրանք կոչում են ինստիտուցիոնալ դրեյֆ (հասկացությունը փոխ է առնված պոպուլյացիոն գենետիկայից): Կրիտիկական ծայրակցումները, լինելով պատմության շրջադարձային պահերը, սակայն ոչ միշտ են երաշխավորում դեպի ինկլյուզիվության ինստիտուցիոնալ դրեյֆը: Աշխատության «Պատմության բեռը. ոչ մեծ տարբերություններ և բեկումնային կետեր» բաժինն այդպիսի պահերի մասին է: Հայտնի է, որ ժանտախտը միջին դարերում Եվրոպայում պատճառ դարձավ մեծաքանակ մարդկային ռեսուրսների կորստի: Բայց այն միաժամանակ հանգեցրեց նաև նշանակալից սոցիալական, տնտեսական և քաղաքական փոփոխությունների: Աշխատուժի հսկայական դեֆիցիտն Անգլիայում հանգեցրեց գյուղացիների ֆեոդալական կախվածության թուլացմանը և նրանց տնտեսական ազատությունների ընդլայնմանը: Եվ արդեն XVIII դարի սկզբներին երկրում առկա էին ֆեոդալական կապանքներից ազատ աշխատողներ, ձևավորվում էր աշխատանքի ինկլյուզիվ շուկան: Իսկ, օրինակ Գերմանիայում նույն աշխատուժի դեֆիցիտը նպաստեց ճորտատիրության ուժեղացմանը և էքստրակտիվ ինստիտուտների ամրապնդմանը:

Վերևում նշված նմանատիպ այլ օրինակներով հարուստ է Աճեմօղլու և Ռոբինսոնի աշխատությունը, որոնք նրանց կարծիքով թույլ են տալիս հասկանալու, որ պատմությունը և նրա բեկումնային կետերը հաճախ որոշում են տնտեսական և քաղաքական ինստիտուտների զարգացման հետագիծը և օգնում կառուցելու ժամանակակից հարստությունների և աղքատությունների ակունքները բացատրող առավել լրիվ և կատարյալ տեսություն, և պարզաբանելու, թե ինչու երկրների մի մասն անցում է կատարում ինկլյուզիվ քաղաքական և տնտեսական ինստիտուտներին, մյուսները՝ ոչ:

Կ.Աճեմօղլիին համարվում է աշխարհում քսան ամենաշատ վկայակոչվող տնտեսագետներից մեկը: Նաև շատ հրապարակվող: Ինչպես նկատել է համահեղինակներից մեկը. «Նա գրում է ավելի արագ, քան ես նրան կարող եմ կարդալ»: Նրա բազմաթիվ հոդվածները սփռված են ամենատարբեր հանդեսներում:

Աշխ. Economic origins of Dictatorship and Dtmocracy by Daron Acevoglu and James A.Robinson, 2006, Introduction to Modern Economic Growth by Daron Acevoglu June 2009, Why Nations Fail: Origins of Power, Poverty and Prosperity, Daron Acevoglu and James A.Robinson, forthcoming, March 2011.

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

(1934)

Ծնվել է Մոսկվայում: 1952-ին ոսկե մեդալով ավարտել է Մոսկվայի թիվ 186 դպրոցը, 1957-ին՝ Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: Մինչև 1969 թվականն աշխատել է ԽՍՀՄ Վ.Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտում, այնուհետև տեղափոխվել ՌԴ ԳԱ կենտրոնական տնտեսագիտական մաթեմատիկական ինստիտուտ (ЦЕМИ РАН), որտեղ էլ աշխատում է առ այսօր որպես փոխտնօրեն և կիրառական վիճակագրության և էկոնոմետրիկայի բաժանմունքի գիտական ղեկավար: Նա միաժամանակ ղեկավարում է տնտեսության մեջ հավանական-վիճակագրական մեթոդների և մոդելների լաբորատորիան: 1967-ին «Հավանականությունների տեսություն և վիճակագրական մաթեմատիկա» մասնագիտացմամբ պաշտպանել է թեկնածուական թեզը և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 1975թ. Այվազյանը պաշտպանել է դոկտորական թեզ՝ ստանալով ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան («Մաթեմատիկական կիբեռնետիկա» մասնագիտացման գծով): Նա Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական

համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի և տնտեսագիտության բարձրագույն դպրոցի պրոֆեսոր է, «Էկոնոմիկա և մաթեմատիկական մեթոդներ» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ, «Կիրառական էկոնոմետրիկա» ամսագրի գլխավոր խմբագիր, Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մոսկովյան դպրոցի էկոնոմետրիկայի և մաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, Մոսկվայի ֆինանսաարդյունաբերական ակադեմիայի էկոնոմետրիկայի ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների գծով թեկնածուի և դոկտորի գիտական աստիճանների հայցման համար ատենախոսությունների պաշտպանության Ժ 002.013.02 գիտական խորհրդի նախագահ: Պարգևատրվել է ֆրանսիական վիճակագիրների Ազգային կոնգրեսի և եվրոպական էկոնոմետրիկ կոնգրեսի պատվավոր շքանշանով (1986), Դիժոնի համալսարանի (Ֆրանսիա, 1980) տնտեսամաթեմատիկական ինստիտուտի և Լոնդոնի Հոլլոուեյ Թագավորական համալսարանի (1996-1998) հրավիրված պրոֆեսոր, ստացել է ՌԴ «Գիտության վաստակավոր գործիչ» կոչում (2002), Ն.Պ.Ֆեդորենկոյի անվան տնտեսագիտական հետազոտությունների միջազգային գիտական ֆոնդի մրցանակ՝ «Ռուսաստանի տնտեսական գիտության զարգացման մեջ ունեցած բացառիկ ներդրման համար» (2007) ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (արտասահմանյան անդամ) մաթեմատիկայի բաժանմունքի կողմից (2008): Համալսարանում կարդում է «Բազմաչափ վիճակագրական վերլուծություն», «Էկոնոմետրիկ վերլուծության մեջ Բայեսի մոտեցումը» և «Սոցիալական ինդիկատորներ» ուսումնական կուրսերը: Հեղինակ է մի շարք ուսումնական ձեռնարկների և դասագրքերի: Նրա գիտական հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է տեսական կիրառական էկոնոմետրիկայի, բազմաչափ վիճակագրական վերլուծության, սոցիալ-

տնտեսական գործընթացների և երևույթների մեխանիզմների հավանական-վիճակագրական մոդելավորման (բնակչության կյանքի որակի լատենտ սինթետիկ կատեգորիաների, հասարակության բաշխման հարաբերությունների վերլուծություն և չափակցում, միջճյուղային և միջռեգիոնալ վերլուծություն) հիմնախնդիրները: 1983, 1985 և 1989 թվականներին հաջորդաբար լույս են տեսնում «Կիրառական վիճակագրություն» եռահատոր աշխատության առաջին՝ մոդելավորման հիմունքները և տվյալների սկզբնական մշակումը, երկրորդ՝ կախվածությունների հետազոտությունը և երրորդ՝ դասակարգումը և չափականությունը, հատորները: Ս.Այվազյանի համահեղինակությամբ կիրառական վիճակագրությունը բնութագրվում է որպես հասկացությունները, եղանակները, մաթեմատիկական մեթոդները և մոդելները մշակող և համակարգող ինքնուրույն գիտական բնագավառ կոչված վիճակագրական տվյալների կազմակերպման և մշակման համար՝ նպատակ ունենալով դրանց հարմար ներկայացումը, մեկնությունների և գիտական ու պրակտիկ եզրակացությունների ստացումը: Որպես տեղեկատու, այն ոչ միայն վիճակագիրների, տնտեսագետների, սոցիոլոգների, բժիշկների համար է, այլև բազմաթիվ այլ ոլորտների մասնագետների: Իսկ ինչպես գրքի ներածականում կանխագուշակում էր Ս.Այվազյանը. «Կարճ ժամանակ անց անհատական համակարգչի, իսկ նրա հետ տվյալների վերլուծության լայն հնարավորությունները կդառնան ոչ միայն կազմակերպությունների, այլ նաև կյանքի տնային կացութաձևի անբաժան մասը: Հետևապես օրակարգում է կիրառական վիճակագրության մեթոդների և ծրագրերի նկատմամբ բուռն աճի դինամիկան»:

Նա իրականացրել է բաշխման տեսակի մասին վարկածի տարբերակման խնդրի մեջ Նյուման-Փիրսոնի դասական չափանիշի օպտիմալ հատկությունների և Վալդի

չափանիշի համեմատական վերլուծություն, ինչի արդյունքում դուրս են բերել հետազոտությունների միջին թվի համար ասիմպտոտիկ (վարկածին մոտ) ընդհանուր բանաձևեր, որոնք անհրաժեշտ են առաջին և երկրորդ կարգի տրված սխալներով վարկածների տարբերակման համար: «Многомерный статистический анализ в социально-экономических исследованиях» գրքում Այվազյանն ապացուցում է ռեգրեսիայի փոքրագույն քառակուսիներով գործակիցների մեթոդի գնահատման ասիմպտոտիկ արդյունավետությունը՝ ռեգրեսիոն մնացորդների փոխազդեցության բավականին ընդհանուր բնութագրի պայմաններում՝ առաջարկելով անհայտ նպատակային ֆունկցիայի կառուցման փորձարարավիճակագրական մեթոդը փորձարարական ինֆորմացիայի տարբեր տիպերի առկայության դեպքում: «Типология потребления» աշխատության մեջ, անդրադարձ կատարելով սպառողի վարքագծի վրա, հետազոտության է ենթարկվում սպառման տիպաբանությունը՝ առաջադրելով սպառողական վարքագծի հիմնական տիպերի էմպիրիկ բացահայտման և հիմնական տիպորոշիչ սոցիալ-ժողովրդագրական և տարածքային հիմհատկանիշների որոշման մեթոդներ: «Интегральные индикаторы качества жизни населения: их построение и использование в социально-экономическом управлении и межрегиональных сопоставлениях» գիրքը պարունակում է երկրի, տարածաշրջանի բնակչության կյանքի որակի ինտեգրալ ինդիկատորների կառուցման և գործնական կիրառման համար անհրաժեշտ հիմնարար դրույթներ, մեթոդաբանություն և ինֆորմացիոն ապահովման նկարագրություն: Առաջադրվում է միջերկրային և միջշրջանային հարթությունների վրա փորձարարական մեթոդաբանություն, որտեղ օգտագործվում են գործոնային վերլուծության գաղափարները և ռեգրեսիայի, այսպես կոչված,

«փորձարարավիճակագրական մոդելը»: Վերջինիս հաշվողական իրացումը և էկոնոմետրիկ վերլուծությունն իրականացվում են ինչպես դասական գծային սխեմաների շրջանակներում, այնպես էլ նեյրո-ցանցային մոտեցմամբ: Բնակչության կյանքի որակի վերլուծության ժամանակ հեղինակն առաջարկում է կիրառել Պարետո-դասակարգման սկզբունքը:

Աշխ. Сравнение оптимальных свойств критериев Неймана-Пирсона и Вальда. // Теория вероятностей и ее применения, 1959, том IV, N 1, Probabilistic – Statistical modelling of the Distributary Relations in Society – in “Private and Enlarged Consumption”, North-Holland Publishing Company, Amsderdam-New, York-Oxford, 1976, Прикладная статистика: основы моделирования и первичная обработка данных. -М.: Финансы и статистика, 1983 (соавтор), Прикладная статистика: исследование зависимостей, -М.: Финансы и статистика, 1985 (соавтор), Прикладная статистика и основы эконометрики, -М., 1998 (соавтор), Интегральные индикаторы качества жизни населения: их построение и использование в социально-экономическом управлении и межрегиональных сопоставлениях, М., 2005.

ԱՆԱՆՅԱՆ ԼԱՎՐԵՆՏԻ ԶԱՔԱՐԻ

(1940-2009)

Ծնվել է ՀՀ Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղում: 1946-1956-ին սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, 1956-1961-ին՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում: Համալսարանն ավարտելուց հետո աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարությունում՝ որպես տնտեսագետ: 1962-1965-ին սովորել է ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1966-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1967-1985-ին նույն ինստիտուտում եղել է ավագ գիտաշխատող, 1986-ից՝ բաժնի վարիչ: 1984-ին պաշտպանել է դոկտորական թեզը, իսկ 1990-ին ստացել է պրոֆեսորի կոչում: 1987-ից մինչև կյանքի վերջը աշխատել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (նախկին Ժողովրդական տնտեսության ինստիտուտ)՝ որպես տնտեսական պատմության և իրավագիտության ամբիոնի վարիչ:

Անանյանի աշխատանքներում քննության են ենթարկվել Հայաստանի տնտեսական պատմության, արդյունաբերության զարգացման, մրցության, արդյունավետության, որակի,

աշխատանքի արտադրողականության, ռեսուրսների օգտագործման և այլ հարցեր:

«Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում» գրքում վիճակագրական ու արխիվային նյութի հիման վրա տրվում է հանրապետության արդյունաբերության զարգացումը հասուն սոցիալիզմի կառուցման շրջանում, բնութագրվում են զարգացած սոցիալիզմի էկոնոմիկայի առանձնահատկությունները: Կարևորելով տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկի՝ արդյունաբերության կառավարման կատարելագործումը՝ նա հատուկ ուշադրություն է դարձնում Հայաստանի արդյունաբերության զարգացման հիմնական միտումներին ու առանձնահատկություններին, գիտատեխնիկական առաջընթացի ծավալմանը, ի վերջո տնտեսության ճյուղային կառուցվածքի առաջադիմական փոփոխություններին:

Տնտեսական ու սոցիալական զարգացման ընթացիկ խնդիրների լուծումը կապելով մրցության դերի ուժեղացման հետ՝ նա վերջինս դիտարկում է որպես արտադրական հարաբերությունների ու կառավարման օբյեկտ («Սոցիալիստական մրցությունը և արտադրության արդյունավետության բարձրացումը»): Առանձնակի ուշադրություն է դարձվում աշխատանքի արտադրողականության աճի ապահովման, ռեսուրսների խնայողաբար օգտագործման, աշխատանքի ու արտադրանքի որակի բարելավման վրա մրցության ունեցած ազդեցությունների բացահայտմանը:

Անանյանի «Տնտեսական պատմություն» ձեռնարկը (համահեղինակ՝ Լ.Պետրոսյան) առաջին փորձն է մայրենի լեզվով:

Անանյանը հարյուրից ավելի աշխատանքների հեղինակ է:

Եղել է ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ:

Աշխ. Տնտեսական հաշվարկը սովխոզներում, Եր., 1967, Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը, Եր., 1979, ՍՄԿԿ սոցիալ-տնտեսական քաղաքականությունը զարգացած սոցիալիզմի պայմաններում, Եր., 1979, Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Եր., 1982, Սոցիալիստական մրցությունը և արտադրության արդյունավետության բարձրացումը, Եր., 1986, Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր (ուսումնական ձեռնարկ), Եր., 2003, Տնտեսական պատմություն (ուսումնական ձեռնարկ), Եր., 2005 (Լ.Պետրոսյանի համահեղինակությամբ):

ԱՆԱՆՈՒՆ ԴԱՎԻԹ (ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆ)

(1879-1942)

Ծնվել է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մեծ Շեն գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Գանձակում, այնուհետև զբաղվել է ինքնակրթությամբ: Հարել է տարբեր կուսակցությունների: 1920-26-ին եղել է հեղափոխության թանգարանի տնօրեն: Հարել է Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությանը (սպեցիֆիներ): Մեղադրվել է հակախորհրդային խմբին պատկանելու մեջ և բռնադատվել: Մահացել է Աստրախանի կալանավայրում: Դավիթ Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» աշխատությունը հայ մտքի հետաքրքրական ու մնայուն արժեքներից է: Այն նպատակ ուներ. «...թափանցել հայ հասարակական կյանքի խորքը, հասկանալ ու լուսաբանել այն բոլոր երևույթները, որոնց պատմական դասավորումով կառուցվել է մեր ինքնօրինակ գոյության պատվանդանը:...դիտել մասսայական կյանքը, ըմբռնել հասարակական հաստատությունների իմաստը, հետևել նրանց ծագման, զարգացման ու անկման ընթացքին, խելամուտ լինել ժամանակի տիրող ու պայքարող գաղափարականությանը, առհասարակ ուսումնասիրել մեր քաղաքացիական զարգացման գործոնները»: Նա պատմաբան տնտեսագետ էր, որի աշխատություններն արժեքավոր նյութեր են պարունակում Հայաստանի տնտեսության

պատմության վերաբերյալ: Նա XIX դարի ռուսահայերի զարգացումը բաժանում է երկու փուլի՝ մինչև 70-ական և 70-90-ական թվականները: Սակայն, մինչև 70-ականները չի կարելի դիտել որպես հասարակական զարգացման մի հարթ հատված՝ առանց տնտեսական ու սոցիալական, գաղափարական ու քաղաքական առաջընթացի: Նա ցույց է տալիս, որ դա դեռևս ավանդականը պահպանող, բայց արտադրողական ուժերի ու հասարակական հարաբերությունների կառուցվածքը վերափոխող ու նախապատրաստող ներքին կատակլիզմների ժամանակաշրջան էր: Անդրադառնալով XIX դարի սկզբի Արևելյան Հայաստանի խանությունների վարչական և դատաստանական կառուցվածքի խնդիրներին՝ նա առանձնակի ուշադրություն է դարձնում Ղարաբաղի մելիքների կառավարման հարցերին, նշելով մի շատ կարևոր առանձնահատկություն, այն է՝ անկախ կառավարում իրականացնելու ձգտումը. «Նրանք՝ այդ երկրների (մելիքությունների – Ռ.Ս.) ժառանգական իշխաններ համարելով իրենց՝ միշտ պայքարում էին Ղարաբաղի խանի դեմ, չէին կամենում իրենց և պարսկական արքունիքի միջև տեսնել նրա իշխանական կապը: Նրանց մեջ այնքան էր արմատացած իրենց, եթե ոչ անկախության, գոնե կիսանկախության զգացումը, որը տասնյակ տարիներ չէին թողնում խաների գերիշխանության տապալման խորհուրդը»: Եվ ընդհանրապես, Ղարաբաղը «իր տնտեսական ինքնամփոփությունը պահել է միշտ թե՛ պարսկական և թե՛ ռուսական տիրապետության ժամանակ»:

Անանունը վերլուծության է ենթարկում ագրարային հարաբերությունները, նկարագրում հողատիրության մանրամասները, դասակարգում գյուղացիության զանգվածը՝ ըստ հողի նկատմամբ ունեցած հարաբերության, պարզում համփա-չարեքի, հարագաշության տնտեսական բովանդակությունը, մյուլքի ու թիուլի կառավարման լծակների էությունը՝ որպես եկամուտների յուրացման իրավունքի, միաժամանակ մերժում հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքը:

Արևելյան Հայաստանում ռուսական իշխանությունների կողմից կատարվող վերափոխումները պարտադրում էին հասարակական զարգացման որոշակի կողմնորոշում, իսկ ագրարային հարաբերությունները կարգավորող օրենքները հետամտում էին քաղաքական նկատառումներ. «և այնտեղ, ուր ո՛չ կայուն հողային մասնավոր սեփականությունը կար, ո՛չ ճորտություն, նա ստեղծեց և՛ մեկը, և՛ մյուսը»: Իսկ 1870թ. մայիսի 14-ի «Պոլոժենիան», որը գյուղական ռեֆորմ էր հռչակում Հայաստանի և Ադրբեջանի գյուղացիության համար, նույն հետևանքներն ունեցավ, ինչ 1861թ. ռեֆորմը Ռուսաստանի համար:

Դ.Անանունն անդրադառնում է ժամանակին հետազոտական շրջաններում և, ըստ էության, ռուսական կառավարության մտայնությունն արտահայտող այդ խնդրին, որ երկրամասի տնտեսական կյանքում հայկական տարրի աշխուժացումն ընդունելի է մինչև մի որոշակի սահման, որպես թե հայերը, լինելով տեղի բնակչությունից «ավելի զարգացած, եռանդուն ու ձեռներեց», օգտակար գործունեություն են ծավալել «առևտրի և արդյունաբերության բարգավաճմանը», ինչը բխում և համընկնում է կայսրության շահերին, սակայն որքանով կարող է «մերձավոր ապագայում իր ձեռքը կենտրոնացնել երկրի ողջ առևտուրն ու արդյունաբերությունը, ի վնաս բուն ռուս ազգաբնակչության շահերի» և դրանով իսկ ձեռք բերել տնտեսական անկախություն, հակամետ է, հետևապես այն սահմանափակման կարիք ունի: Այդ մտայնությունը կողմնորոշում ուներ խոչընդոտելու հայ ազգի «անջատողականության» ոգուն:

Ազգերի ինքնուրույնության խնդրի իմաստավորումը նա կապում է տնտեսական զարգացման փաստի հետ: Հայի ազգային ճակատագիրն ու նրա ինքնուրույնության տրոհումը հենց մի զգալի չափով հետևանք էր տնտեսական գործոնի: Դ.Անանունի հայեցողության մեջ, թեև չէր սահմանազատվում տնտեսական զարգացման վերաբերյալ հասարակական մտքի ուղղությունների տիրույթը, հաճախ տարրալուծելով դրանք, այնուհանդերձ նշմարվում են

կռվաններ, որոնց վրա «Պիտի ամրանար ու ծավալվեր հայության հավաքումը»: «Հայության ազգային կառուցվածքն այլանդակված դուրս եկավ թուրք-պարսկական տիրապետությունից»: Իսկ ի՞նչ արդյունք ունեցան հայահավաք գաղափարները ռուսահայերի հասարակական զարգացման արդյունքում. «Հայությունը չէր ապրում ինքնամփոփ տնտեսական կյանքով: Նրա տարբեր դասակարգերի շահերը բացասաբար չէին խաչաձևվում կամ անջատվում միևնույն տնտեսական պատվանդանի կամ երևույթի շուրջ: Հաշտությունն ու բախումը տեղի էին ունենում այնպիսի պայմաններում, որ ազգային հանգամանքը բռնում էր հետին տեղը: Անդրկովկասի խայտաբղետ ազգաբնակչության կազմը, հայկական դրամագլխի գաղութայնությունն ու թափառասիրությունը, պետականության ստեղծած հարստացման հնարավորություններն առանց հայկական տարրի որևէ մասնակցության: Հայաստանի անջատված լինելը մեծ ուղիներից ու զարգացած տնտեսական կենտրոններից՝ այս բոլորը չէին վկայում ու խոսում այն բանի մասին, թե հայությունը տնտեսապես ինքնամփոփ է և նրա դասակարգերը շահագրգռված են իրար գոյության այս կամ այն վիճակով: Այո՛ տնտեսական կապը հայերի, իբրև ազգության մեջ, չափազանց թույլ էր, և այդ պատճառով տկար էր ազգային մարմինը»: XIX դարի հայ մտքի բոլոր մեծերն էլ յուրովի արծարծել են «հայության հավաքական գաղափարը»: Այնուամենայնիվ, ազգության «ներքին ու արտաքին» խորհուրդը տնտեսական խնդիրն է, որի համար անհրաժեշտ է ստեղծել ընդհանուր տարածքային պատվանդան՝ որպես «ազգային բարոյական կապն ուժեղացնող» գործոն, որից դուրս մնացած հատվածներն իրենց «նյութական զորությամբ մասն են մնում ազգի կյանքին»: Նա հոկտեմբերյան հեղաշրջումից հետո զգուշացնում էր, որ երկրամասի վարչական բաժանումը չի կարելի իրականացնել տվյալ ազգային տարածքում «փոքրամասնություն ընդունելու» ու «փոքրամասնություն թողնելու» սկզբունքով (ինչպես դա կատարվել է մինչ այդ,

որի արդյունքում Ղարաբաղի երկու մասերը՝ լեռնաստանն ու տափաստանը, մնացին կղզիացած վիճակում), հակառակ դեպքում սկիզբ է դրվելու ազգային այնպիսի քաղաքականության, որը ենթադրում է փոխադարձ հսկողություն, որպեսզի «յուրայինը որևէ խնդրում չբռնադատվի օտար հորիզոնի տակ և միաժամանակ իբրև բռնադատող չդառնա իր սահմանների մեջ» և փոխադարձ անվստահություն ստեղծելով «թունավոր մթնոլորտ ազգերի համար և նրա զարգացումն ու միտքը հանապաղ բևեռած պահե ազգային հարցի սուր անկյունների վրա»: Ասված է այսօրվա համար: Ղարաբաղին վիճակված էր հենց այդ ճակատագիրը:

Վերլուծելով Հայաստանի ու Ղարաբաղի տնտեսական ամբողջության հիմքերը, Դ.Անանունը եզրակացնում է, թե. «Ղարաբաղը ամբողջական Հայաստանից դուրս դա խոց է... Եթե Ադրբեջանում խելքը գլխին քաղաքագետներ լինեին, նրանք ամենից առաջ պիտի հրաժարվեին Ղարաբաղից: Եթե Հայաստանում հայրենիքի հավաքման համոզված գործիչներ կան, նրանք օրն ի բուն պիտի խորհեն Ղարաբաղի մասին: Պայքարին է վերապահված լուծելու հարցը և հանելու Ղարաբաղի հայությունը...բաբելոնյան գերությունից»:

Դ.Անանունի հայեցության մեջ «հավաքական հայություն» գաղափարն ազգային միասնության գաղափարն է, որն իր մեջ սինթեզում է հայոց տնտեսական ու հոգևոր ուժը, գիրն ու լեզուն, Արցախն ու Սփյուռքը, ազգային ինքնագիտակցությունն ու մաքրությունը, եկեղեցին ու պատմությունը, որոնք իրենց հիմքում ունեն Հայոց ազգային անկախությունը:

Աշխ. Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, հ.1, Բաքու, 1916, հ.2, էջմիածին, 1922, հ.3, Երևան, 1926:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐԱՄ ՀՄԱՅԱԿԻ

(1945)

Ծնվել է Թբիլիսիում: 1963-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը, իսկ 1967-ին ուսումը շարունակելու համար գործուղվել Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգի) պետական համալսարան: Այն ավարտել է 1968-ին: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի և ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրա և նորից գործուղվել Լենինգրադի պետական համալսարան: 1971-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն (նվիրված տոպոլոգիական տարածություններում հարաբերությունների ուսումնասիրությանը) տեսական կիբեռնետիկա մասնագիտությամբ: Այդ բնագավառում ստացված արդյունքները նա կիրառել է խաղացողների ցանկացած հզորություն ունեցող կոոպերատիվ խաղերի ուսումնասիրության ժամանակ և ստացել է միջուկի հետ համընկնող Ֆոն Նեյմանի և Մորգենշտերնի միակ լուծման գոյության պայմանները: Այդ արդյունքն ապացուցվել է 1970թ. և մինչև օրս մնում է անփոփոխ:

Նրա հետագա ուսումնասիրությունները վերաբերել են երկխոսական համակարգերի օպտիմալացման հիմնախնդիրներին: Արդյունքում մշակվել են երկխոսական համակարգերի օպտիմալացման մեթոդներ՝ հիմնված գործույթների հետազոտման տեսության վրա, որոնք էլ հիմք

են ծառայել դոկտորական ատենախոսության համար, որը պաշտպանել է 1987-ին:

Առաքելյանի աշխատանքային ուղին. 1972-82-ին՝ միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական ինստիտուտ՝ տեղեկատվական համակարգերի լաբորատորիայի վարիչ, 1982-89-ին՝ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի ինֆորմատիկայի և ավտոմատացման ինստիտուտի բաժնի վարիչ, տնօրենի տեղակալ, 1989-03-ին՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, ամբիոնի վարիչ, 2003-ից՝ Երևանի պետական համալսարան, տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ:

Ա.Առաքելյանը.

- ուսումնասիրել է Բալասսա-Սամուելսոնի էֆեկտը և կիրառել է այն ՀՀ-ի տնտեսության համար: Տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման բնագավառում կիրառելով նախկինում մշակված հարաբերությունների տեսության և գործույթների հետազոտման տեսության բնագավառներում ստացված արդյունքները, դիտարկել է մարքեթինգի, մենեջմենթի, մատակարարման ցանցերի (Supply Chain) և գովազդի մոդելավորման հիմնախնդիրները և ստացել կազմակերպության գործունեության մոդելներ և արդյունավետության քանակական գնահատականներ, որոնք համընկել են գործնականում ստացված արժեքների հետ,
- ուսումնասիրել է նավթի համաշխարհային գների ցնցումների ազդեցությունները նավթ արտադրող և արտահանող զարգացող երկրների համար, մշակել է տնտեսագիտամաթեմատիկական մոդելներ և այդ մոդելները կիրառել Իրանի տնտեսության ուսումնասիրության համար՝ առաջարկելով հարկային դաշտի բարեփոխումների միջոցառումներ: Մոդելները հիմնված են վեկտորական ավտորեգրեսիայի համակարգի և հաշվարկելի ընդհանուր հավասարակշռության (Computational General Equilibrium, (GGE)) մոդելի վրա,

• առևտրային բանկի ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև իրացվելիության նորմի ուսումնասիրության համար առաջարկել է սպեկտրալ վերլուծության մոդելներ և կիրառել է այդ մոդելները ՀՀ-ի առևտրային բանկերի գործունեության քանակական գնահատման համար,

• առաջարկել է Հայաստանի և Գերմանիայի էներգետիկայի ոլորտի ռազմավարական կառավարման համակարգ՝ հիմնված հավասարակշռված ցուցանիշների համակարգի (Balanced Scorecard) վրա: Տնտեսագիտական կրթության ինստիտուտի կողմից (Institute of Economic Education, Carl von Osetski University, Germany), «Energy efficiency and saving in Armenia» SYNERGIA ծրագրի շրջանակներում Ա.Առաքելյանի և նրա ղեկավարած գիտնականների կողմից կատարվող հետազոտությունների շնորհիվ առաջարկվել են էներգակիրների ծախսի նվազեցման և օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիներ:

Ա.Առաքելյանի ծրագրային և գիտամեթոդական ղեկավարությամբ Արտաքին տնտեսական կապերի և կառավարման ինստիտուտը համապատասխան հեղինակային իրավունքի թույլատրությամբ կազմակերպել է անգլերենից մի շարք աշխատությունների թարգմանություններ, այդ թվում՝ Ն.Գրեգորի Մենքյուի «Մակրոէկոնոմիկա» (1997-ին՝ հայերեն), Դոմենիկ Սալվատորի «Միջազգային տնտեսագիտություն» (1998-ին՝ ռուսերեն), Նիքոլսոնի «Միկրոէկոնոմիկայի հիմունքներ» (1998-ին՝ հայերեն), Հոուքի «Միջազգային առևտրի էլեմենտներ» (1998-ին՝ ռուսերեն):

Ա.Առաքելյանը մի քանի գիտական կազմակերպությունների (այդ թվում՝ Հայաստանի և միջազգային ճարտարագիտական ակադեմիաների) և խմբագրական կոլեգիաների անդամ է, ստացել է մի շարք միջազգային դրամաշնորհներ, մասնակցել գիտաժողովների:

Աշխ. (նշվում են միայն վերջին տարիների աշխատությունները) Arakelyan A.H., Karsalary A.R., Behroznia A.A., Asymmetric Effects of Monetary Policy in Iran.// вестник инженерной академии Армении,

т.7, №4, 2010, стр. 601-612, Khachatryan G,N, Arakelyan A.H. Principia of Optimality in Competitive Markets: Game Theoretic Approach, 2009 Networking and Electronic Commerce Research Conference, (NAEC2009), Riva del Garda, Italy,October 8-1 1,2009, p. 205-208, Khachatryan H.N., Khachatryan G.N., Arakelyan A.H. Product's Price Justification and Selling Price Adjustment. Opportunities and Development, Proc, Of International Conferenct, April, 17, 2008, Rezekne's Augstskola, p, 207-212,Khachatryan G.N., Khachatryan H.N., Arakelyan A.H. Risk Management in Competitive Market. Proc. Second International Conference on Engineering Systems Management and its Applications, March 30 - April 1, 2010, American University of Shariah. UAE n.24, Melikbekyan L., Avetisyan S., Khachatryan G., Mkrtchyan N., Arakelyan A. Competitive Market and Product's Sale Adjustment. Opportunities and Challenges of National Economic Development. Proc. Of International Conference. April 17, 2008, Rezekne, Rezekne's Augstskola, 257-267, Seyedhossein Sajadidar, Aram Arakelyan The Linear Approximation of the CES Function to Parameter estimation in CGE Modeling, International Conference on Business and Economic Research, Proceedings, Publ. American Journal of Economics and Business Administration, 15-16 March, 2010, Kuching, Sarawak, Malaysia, W.Karapetyan Zh., Arakelyan A. Models of Advertisement and Clients Attendance of the Market Using a Fourier-Series Approximation, Latgale National Economy Research, Journal of Social Sciences, Nr. 1(4), Rezekne, 2012, pp. 170-178, Shakhparyan C., Arakelyan A. Advertising Modeling and Market Time Series Spectral Analysis, Proceedings of the 2012 Netwoking and Electronic Commerce Research Conference (NAEC 2012), Riva del Garda, Italy, pp. 10-16, Ckhachatryan H.N., Arakelyan A.H. Optimization of supply chain with uncertainties, Latgale National Economy Research, Journal of Social Sciences, Nr. 1(4), Rezekne, 2012, pp.179-187, Առաքելյան Ա.Հ., Մելքոնյան Ն., Ավտոմեքենաների ապահովագրավճարների և վթարներով պայմանավորված կորուստների փոխկախվածությունը, ԵՊՀ Տարեգիրք, 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 491-496, Առաքելյան Ա.Հ., Մխիթարյան Ժ., Հայաստանի Հանրապետությունում գնաճի ժամանակային շարքի վերլուծություն, ԵՊՀ Տարեգիրք, 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 437-442, Аракелян А.А., Малхасян Н.М. Флуктуация цен продажи российского фаза и ее экономические последствия, вестник инженерной академии Армении, т.12, №41, 2015, стр. 3-9, ՀՀ ուղարկվող դրամական փոխանցումների պարբերականության կապը ՌԴ չարտահանող սեկտորների հետ, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի Լրաբեր, հատոր12, թիվ 2, 2015, էջ 211-215:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԱՐՇԱԿԻ

(1909-1993)

Ծնվել է Շուշի քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Բաքվում: 1932-ին ավարտել է Բաքվի ժողովրդական տնտեսության ինստիտուտը և նշանակվել Լեռնային Ղարաբաղի մարզպլանի նախագահի տեղակալ: Այդ տարիներին էլ ի հայտ են գալիս նրա առաջին տպագիր աշխատանքները՝ նվիրված ԼՂՀ տնտեսության հիմնահարցերին, իսկ 1939-ին լույս է տեսնում «Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում» մենագրությունը:

1936-ին ավարտելով Մոսկվայի պլանային ինստիտուտի ասպիրանտուրան, աշխատանքի է անցնում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում՝ որպես ավագ գիտական աշխատող: 1941-ին մտնում է աշխարհազորի շարքերը և ծառայում մինչև Հայրենական պատերազմի ավարտը: Զորացրվելուց հետո շարունակում է աշխատել ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում: Տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան ստացել է 1954-ին, պրոֆեսորի կոչում՝ 1955-ին:

1960-ին նա ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, տեղափոխվում Հայաստան ու ստանձնում ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնը, ինչը դրական ազդեցություն ունեցավ ինստիտուտի հետազոտական գործունեության, նոր մշակումների և գիտական կադրերի պատրաստման առումով: Կազմակերպվում են տնտեսական համալիր պրոբլեմների և կապիտալ ներդրումների արդյունավետության ու արդյունաբերության տեղաբաշխման բաժինները, ինչպես նաև տնտեսագիտավիճակագրական լաբորատորիան: 1964-1965-ին ստեղծվում են տնտհաշվարկի և նյութական շահագրգռվածության, իսկ այնուհետև՝ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառման բաժինները: Վերափոխվեց բաժինների թեմատիկան:

Արդեն 1938-ին լույս է տեսնում նրա «ԽՍՀՄ արդյունաբերության հիմնական ֆոնդերը» աշխատությունը: Այդ թեմատիկան նրան ուղեկցեց հետագա ամբողջ գիտական գործունեության ընթացքում՝ իրացվելով նոր մշակումներում. «Հիմնական ֆոնդերի օգտագործումը», «Տնտհաշվարկը և հիմնական ֆոնդերի օգտագործումը», «Հիմնական ֆոնդերի վերարտադրությունը» (համահեղինակությամբ) և այլ ուսումնասիրություններ: Դրանցում հանգամանորեն վերլուծվում են հիմնական ֆոնդերի ձևերն ու զարգացման օրինաչափությունները, արդյունավետության բարձրացման ու օգտագործման ուղիները, արտադրական կարողությունների տարբեր բաղադրամասերի, օգտագործվող սարքավորումների տարբեր խմբերի միջև օպտիմալ համամասնությունների սահմանումը: Տեսական և փաստացի նյութերի ընդհանրացումով ցույց է տրվում հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետության մակարդակի կախվածությունը հիմնական ֆոնդերի առանձին մասերի

և տարրերի փոխադարձ ճիշտ կապերից, բացահայտվում են ֆոնդահատույցի և ձեռնարկությունների, ճյուղերի ու վերարտադրության մյուս օղակների կառուցվածքի միջև գոյություն ունեցող կապերը:

Որոշակի էր Առաքելյանի ներդրումը նաև կառավարման և տնտեսական հաշվարկի տեսական մշակման գործում, որի արդյունքներն ամփոփվել են «Սոցիալիստական արտադրության կառավարում», «Տնտհաշվարկը ԽՍՀՄ արդյունաբերության մեջ» աշխատություններում: Նրա գիտական ոլորտի մեջ էին նաև գիտատեխնիկական առաջընթացի և աշխատանքի արտադրողականության հարցերը: Նրա «Научно-технический прогресс в СССР», «Воспроизводство основных фондов в развытом социалистическом обществе» և այլ աշխատություններում դիտարկվում են գիտության՝ որպես արտադրության արդյունավետության բարձրացման առաջատար օղակի, աշխատանքի միջոցների որակական փոփոխությունների, արտադրության տեխնոլոգիաների բարելավման, նոր նյութերի և էներգիայի արտադրության նոր եղանակների, աշխատավորների որակավորման բարձրացման, գիտատեխնիկական առաջընթացի կառավարման կատարելագործման, սոցիալական նշանակության կենսոլորտի կապի հարցերը:

Առաքելյանը գիտական աշխատանքը զուգորդել է դասախոսական գործունեությանը, ստեղծել բուհական դասագրքեր: Նա դասավանդել է Մոսկվայի Գ.Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության, Միջազգային հարաբերությունների ինստիտուտներում, Երևանի պետական համալսարանում: Շուրջ տասը տարի նա եղել է ԽՍՀՄ ԲՈՀ-ի և նրա փորձագիտական հանձնաժողովի անդամ:

Առաքելյանը խորհրդային գիտությունը բազմիցս ներկայացրել է տարբեր երկրներում. 1951-ին խորհրդային

փորձագետների պատվիրակության կազմում մասնակցել է արտաքին առևտրի գծով ՄԱԿ-ի կազմակերպած միջազգային կոնգրեսի աշխատանքներին, 1963-ին՝ զարգացող երկրներում գիտության ու տեխնիկայի նվաճումները կիրառելու հարցերի գծով Ժնևի կոնֆերանսին, 1967-ին՝ ռեգիոնալ տնտեսական քաղաքականության հարցերին նվիրված Միջազգային ասոցիացիայի՝ Իտալիայում կայացած կոնֆերանսին և այլն: Նրա աշխատությունների մի մասը թարգմանվել է տարբեր լեզուներով:1970-ին արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Ա.Առաքելյանը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի առաջին և երկրորդ աստիճանի, Աշխատանքային կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամության շքանշաններով և մեդալներով:

Աշխ. Основные фонды промышленности СССР, М., 1938, Управление социалистической промышленностью, М., 1947, Использование основных средств в промышленности СССР, Ì., 1951, Աշխատանքի արտադրողականությունը սոցիալիստական հասարակության մեջ, Եր., 1955, Хозяйственный расчет в промышленности СССР, М., 1956, Экономика промышленности СССР, учебник М., 1956 (Соавтор), Սոցիալիզմի քաղաքատնտեսություն. ուսումնական ձեռնարկ, Եր., 1960, Воспроизводство основных фондов в СССР М., 1970, Սոցիալիստական վերարտադրության լենինյան ուսմունքը, Եր., 1970, Научно-технический прогресс в СССР, Ер., 1978, Проблемы воспроизводства в условиях научно-технического прогресса, Ер., 1985.

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ

(1958)

Ծնվել է Երևանում: 1975-ին ավարտել է Երևանի թիվ 83 միջնակարգ դպրոցը, իսկ 1979-ին՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ֆինանսահաշվային ֆակուլտետը: 1979-1983-ին սովորել է նույն ինստիտուտի ասպիրանտուրայում, 1983-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1983-ից աշխատանքի է անցնում Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի «ֆինանսներ և վարկ» ամբիոնում՝ որպես ասիստենտ, 1985-ից նույն ամբիոնում դոցենտ է: 2008-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 2011-ից եղել է ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ ամբիոնի պրոֆեսոր, 2013-ից բանկային գործի և ապահովագրության ամբիոնի վարիչն է:

Ա.Ասլանյանի աշխատանքների գլխավոր թեման կրթության, դրամավարկային և ֆինանսական հարցերն են: «Բարձրագույն կրթության ֆինանսավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» մենագրության

մեջ նկատում է, որ արդի աշխարհում երկրների վիճակը և դիրքը որոշվում են ոչ այնքան նրանց տնտեսական կամ բնական ռեսուրսներով ապահովվածությամբ, որքան մտավոր կարողությամբ: Պետությունների բարգավաճման հիմքը, համաշխարհային շուկայում նրանց դիրքերի ամրապնդումը պայմանավորված են կրթական համակարգի զարգացման աստիճանով: Ընդհանրացնելով տնտեսագիտական գրականության մեջ տեղ գտած տեսակետները՝ նա ուրվագծում է մարդկային կապիտալ հասկացության առանձնահատկությունները, ըստ որի այն արդի հասարակության հիմնական արժեքն է և տնտեսական աճի հիմնական գործոնը: Բացի այդ, պահանջում է զգալի ծախսեր, ինչպես առանձին անհատից, այնպես էլ հասարակությունից և կարող է կուտակվել. անհատը կարող է ձեռք բերել որոշակի հմտություններ, ունակություններ, գիտելիքներ, կարող է ոչ միայն կուտակվել, այլ նաև ենթարկվել բարոյական և ֆիզիկական մաշվածության: Հնանում են գիտելիքներն ու հմտությունները, այսինքն՝ փոփոխվում է մարդկային կապիտալի արժեքը՝ ենթարկվելով յուրահատուկ ամորտիզացիայի: Մարդկային կապիտալին հատկանշական է նաև այն, որ ներդրումների մեջ, որպես կանոն, ապագայում տալիս է ավելի բարձր և բնույթով՝ երկարաժամկետ ու ամբողջական տնտեսական և սոցիալական արդյունք: Իսկ ինչ վերաբերում է նրանում կուտակվող ներդրումներին, ապա դրանք, որպես կանոն, ունեն երկարաժամկետ բնույթ և գործնականում կարող են կատարվել ամբողջ կյանքի ընթացքում:

Շարունակելով քննարկել կրթական ոլորտի հիմնախնդիրները՝ Ասլանյանը նկատում է, որ այդ ոլորտի կարևոր հարցն ի վերջո նրա ֆինանսավորման խնդիրն է: Սա, ըստ էության, նշանակում է, որ շուկայական հարա-

բերություններն ակտիվորեն ներթափանցում են բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտ: Անդրադառնալով կրթության ֆինանսավորման աղբյուրներին՝ նա կատարում է մի շարք համեմատական վերլուծություններ, ներկայացնում աշխարհի տարբեր երկրների փորձը պետական և մասնավոր ֆինանսավորման սկզբունքների, հարկային խրախուսման, կրթական վարկի առանձնահատկությունների վերաբերյալ և այլն:

Աշխ. «Բարձրագույն կրթության ֆինանսավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Եր., 2004:

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՈՎ ՎԼԱՍԻԿ ՍԵԴՐԱԿԻ

(1924-1991)

Ծնվել է Ադրբեջանական ՍՍՀ Զաքաթալա քաղաքում: 1957-ին ավարտել է Բաքվի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: 1982-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, 1985-ին՝ պրոֆեսորի կոչում: 1975-ից աշխատել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի վիճակագրության ամբիոնում:

Նրա աշխատանքները վերաբերում են գյուղատնտեսական մթերումներին ԽՍՀՄ տարբեր էտապներում: Դիտարկվում են գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման, ապրանքայնության, պետական մթերումների համակարգի և դրա հետագա կատարելագործման հարցերը:

Աշխ. Գյուղատնտեսական մթերքների պետական մթերումները Հայաստանում, Եր., 1970, Статистика заготовок сельскохозяйственных продуктов на материале Армянской ССР, Ер. 1975, Реализация продукции сельского хозяйства Армянской ССР, Ер. 1983.

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՎԱԳ ԲԱԽՇԻԻ

(1930-1987)

Ծնվել է ՀԽՍՀ Սիսիանի շրջանի Աշոտավան գյուղում: Սովորել է տեղի յոթամյա և Սիսիանի շրջկենտրոնի միջնակարգ դպրոցում: 1952-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1956-ին ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան, 1960-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, 1966-69-ին համատեղությամբ աշխատել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող, 1969-ից՝ ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ճյուղային էկոնոմիկայի ամբիոնի վարիչ: 1971-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան, իսկ 1976-ին՝ պրոֆեսորի կոչում: 1975-ին տեղափոխվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ և զբաղեցրել արդյունաբերության պլանավորման ամբիոնի վարիչի պաշտոնը, իսկ 1984-1987-ին միաժամանակ եղել է գիտական գծով պրոռեկտոր: Նրա գիտական հետաքրքրությունների ոլորտը արդյունաբերության համակենտրոնացման և մասնագիտացման, տարածքային արտադրական համալիրների ու միավորումների ձևավորման հարցերն են: Նա առաջադրում

է արտադրության կազմակերպման ձևերի ու մեթոդների կատարելագործման անհրաժեշտության խնդիրը՝ աշխատանքի ռացիոնալացումը համարելով որպես աշխատանքի արտադրողականության երաշխիք, որը վերաբերում է ինչպես արտադրության կազմակերպման հասարակական ձևերին՝ համակենտրոնացմանը, մասնագիտացմանը, կոոպերացմանը, կոմբինավորմանը և արտադրողական ուժերի տեղաբաշխմանը, այնպես էլ արտադրության ու աշխատանքի կազմակերպման կոնկրետ մեթոդներին՝ անմիջապես ձեռնարկությունների ներսում (խմբային ու հոսքային մեթոդներ, աշխատանքի ռացիոնալ բաժանում և այլն):

Ավանեսյանն արտադրության կազմակերպման նշված երկու կողմերի զուգորդման մեջ էր տեսնում ընդհանուր ժողովրդատնտեսական օպտիմումը: Նա մշակել է տարածքային, արտադրական համալիրներում հիմնական արտադրությունների օպտիմալ չափերի տնտեսամաթեմատիկական մոդելներ:

Աշխ. Արտադրության և աշխատանքի կազմակերպման առաջավոր ձևերը Հայաստանի արդյունաբերության մեջ, Եր., 1965, Արդյունաբերական արտադրության համակենտրոնացումը, Եր., 1974:

ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1885-1937)

Ծնվել է Պարսկաստանի Մակու քաղաքում: Կրթությունը ստացել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որն ավարտել է 1907-ին և նվիրվել ուսուցչական աշխատանքի: 1921-ից հայ հասարակական մտքի և տնտեսական զարգացման պատմություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում: 1926-1930-ին աշխատել է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտում: Ընդարձակ են Ավդալբեգյանի գիտական հետաքրքրությունները, նշանակալից է նրա ավանդը տնտեսագիտության, պատմության, բանասիրության, բառարանագիտության մեջ: Իբրև տնտեսագետ՝ նրա հետազոտության ոլորտներն են Հայաստանի տնտեսական պատմության և հայ տնտեսագիտական մտքի պատմության հարցերը: Նա առաջադրել է Հայաստանի տնտեսական պատմության ստեղծման անհրաժեշտությունը՝ որպես «Հայագիտության ամենահիմնական առարկաներից մեկի»: Այս իմաստով միջին դարերի տնտեսական հարցերի վերաբերյալ նրա հայագիտական հետազոտություններն ուրվագծում են այդ ժամանակաշրջանի տնտեսական ամբողջական պատմության նշանաձողերը: Նրա դիտողություններն առանձին հասկացություն-

ների, հարկերի, աշխատավարձի և այլ կատեգորիաների վերաբերյալ պատկերացում են տալիս տնտեսական կյանքի էվոլյուցիայի մասին: Ինչպես հայ հասարակական հոսանքների պատմության, այնպես էլ ժամանակի սոցիալ-տնտեսական կացության բնութագրության առումով Ավդալ-բեգյանի գրական ժառանգության մեջ կարևոր տեղ ունեն նրա աշխատությունները Խաչատուր Աբովյանի, Մուրա-ցանի, Միքայել Նալբանդյանի, Արսեն Թոխմախյանի վե-րաբերյալ: Ուշագրավ դիտողություններ են արված նրա «Հայ ազատագրական շարժման երկու հոսանք 18-րդ դարի վերջում» և «Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայոց համայնական ինքնավարությունը 18-րդ դարում» ուսում-նասիրություններում:

1920-ական թվականներին խորհրդային տնտեսագի-տական միտքը բանավիճում էր արտադրության եղանակի մարքսյան տեսության շուրջ՝ նրանում հայտնաբերելով նաև ասիական արտադրության եղանակի առկայությունը: Ավդալբեգյանը հենց այդ դիտակետից «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան» ուսումնասիրու-թյան մեջ Մարքսի տարբեր աշխատություններում հարցի վերաբերյալ կատարված ընդհանուր դիտողությունների հենքի վրա առանձնացնում է վեց հասարակական տնտե-սաձևեր՝ նախնադարյան, կոմունիստական, ասիական, անտիկ, ֆեոդալական, կապիտալիստական և սոցիալիս-տական: Հարցի հետ առնչվող տարբեր ուղղությունների համառոտ քննական տեսության արդյունքում, ուրվագծե-լով ասիական արտադրաեղանակի առանձնահատկու-թյունները և խնդիրը մասնավորելով Հայաստանի տնտե-սական զարգացման մասին, նա ընդհանրացնում է, թե. «...մեր համոզումով ասիական տնտեսական գաղափարն այս ասպարեզում անգնահատելի ծառայություններ կարող է մատուցել և պիտի մատուցեն մեր ուսումնասիրողներին՝

սրանց զերծ պահելով ամենուրեք պարտադրաբար ստրուկ կամ ճորտ տեսնելու «արդիական» նախապաշարումից»:

Նա առանձին հետազոտությունների առարկա է դարձնում Մարքսի վերարտադրության սխեմաները՝ կազմելով նոր տարբերակներ, դրանցում դիտարկելով ոսկու շրջանառության, շրջանառության ծախքերի, կուտակման չափերի հետ կապված հարցերը:

1930-ական թվականներին Ավդալբեգյանը գերմաներենից թարգմանում է Մարքսի «Կապիտալի» երեք հատորները:

Հայ տնտեսագիտական և հասարակագիտական լեզվի զարգացման ասպարեզում կարևոր դեր է խաղացել Ավդալբեգյանի «Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարանը», որում, հանդես բերելով ստեղծագործական մոտեցում հայ տերմինաբանության և բառակազմության հարցերում, տնտեսագիտությունն առնչված է փիլիսոփայության, պատմագիտության, իրավագիտության և այլ հասարակագիտական տիրույթների հետ:

Ավդալբեգյանը բռնադատվել և գնդակահարվել է 1937-ին: Հետմահու արդարացվել է 1955-ին:

Աշխ. Խաչատուր Աբովյան-գրական պատմական վերլուծություն, Վաղարշապատ, 1910, Հողի վիշտը Մուրացանի երկերում - գրական պատմական վերլուծություն, Վաղարշապատ, 1912, Միքայել Նալբանդյան - գրական պատմական վերլուծություն, Վաղարշապատ, 1913, Արսեն Թոխմախյան, Եր., 1928, Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան, Եր., 1926, Золото в схеме простого воспроизводства, Е., 1929, Основные гипотетические схемы расширенного воспроизводства, Ер., 1931, Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան, Եր., 1964, նրա պատմաբանասիրական և պատմատնտեսագիտական աշխատություններն ամփոփվել և վերահրատարակվել են «Հայագիտական հետազոտություններ» խորագրով, Եր., 1969:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԻՇԽԱՆ ԱՐՏԱՇԻ

(1939)

Ծնվել է ՀՀ Արմավիրի մարզի Մարգարա գյուղում: Երևանի պետական համալսարանն ավարտել է 1962-ին: Տնտեսական գիտությունների դոկտորի աստիճան ստացել է 1982-ին, պրոֆեսորի կոչում՝ 1983-ին: 1979-91-ին եղել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի պրոռեկտոր: 1995-ից դասախոսում է Ռուսաստանի Դաշնության Վոլոգդայի պետական տեխնիկական համալսարանում: ՌԴ նախագահի հրամանագրով 2008-ին արժանացել է Բարձրագույն դպրոցի վաստակավոր աշխատողի կոչման:

Նրա գիտական հետաքրքրություններն ընդգրկում են ֆինանսների և տարածքային ֆինանսական պլանավորման տեսության, Հայաստանի ֆինանսական համակարգի զարգացման պատմության, ֆինանսական հաշվեկշռի, բյուջետային համակարգի զարգացման հարցերը:

Սկսած հատկապես 1960-ական թվականներից՝ խորհրդային տնտեսագիտական միտքը որոշակի փորձ է կուտակել, և հրատարակվել էին բազմաթիվ աշխատություններ ժողովրդական տնտեսության պլանային և հաշվետու հաշվեկշիռների, մասնավորապես հասարակական

ամբողջական արդյունքի միջճյուղային հաշվեկշռի ու ազգային եկամտի, աշխատանքային ռեսուրսների բաշխման և օգտագործման, բնակչության եկամուտների և ծախսերի և այլ հաշվեկշիռների տեսության մեթոդաբանական ու մեթոդական հիմնախնդիրների վերաբերյալ: Նույնը չի կարելի ասել ամփոփ ֆինանսական հաշվեկշռի մասին, առավել ևս միութենական հանրապետության կտրվածքով: Այս առումով Ավետիսյանն իր «Միութենական հանրապետության ամփոփ ֆինանսական հաշվեկշիռը» գրքում փորձում է ցույց տալ դրա տեղը ժողովրդական տնտեսության պլանավորման գործընթացում օգտագործվող արժեքային հաշվեկշիռների համակարգում և բնութագրել նրա տեսական ու գործնական նշանակությունն ամփոփ ֆինանսական պլանավորման գործում: Առանձնապես քննարկվում են ազգային եկամտի, ամփոփ ֆինանսական, բնակչության դրամական եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռների և հասարակական ամբողջական արդյունքի միջճյուղային հաշվեկշռի փոխադարձ կապի հարցերը, որը բխում է պլանավորման մեթոդների կատարելագործման շահերից:

«Вопросы территориального финансового планирования» մենագրությունում քննության առարկան ժամանակի տնտեսագիտական գրականության մեջ քիչ լուսաբանված՝ միութենական տարածքային ֆինանսավորման հիմնահարցերն են: Պլանավորման կատարելագործման նպատակով առաջարկվում է զուգակցել պլանավորման ճյուղային և տարածքային սկզբունքները, ինչն ի վերջո ենթադրում է ժողովրդական տնտեսության զարգացման հաշվեկշռվածություն և համամասնականություն: Ֆինանսական պլանավորման մեջ կարևորելով հաշվեկշռային մեթոդը և վերլուծելով ֆինանսների և դրամաշրջանառության միջև առկա կապը՝ ներկայացվում են ինտեգրացված

ֆինանսադրամական հարաբերությունների համակարգը և միութենական հանրապետության տարածքային ֆինանսական պլանավորման կատարելագործման հիմնահարցերը:

Առանձնապես կարևորվում են ազգային եկամտի, ամփոփ ֆինանսական, բնակչության դրամական եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռների և հասարակական ամբողջական արդյունքի միջճյուղային հաշվեկշռի փոխադարձ կապերի հարցերը: Կապված տնտեսական կյանքի արմատական վերակառուցման հետ, փորձ է արվում նորովի դիտարկել ու լուսաբանել տնտեսավարման բնագավառում ֆինանսավարկային համակարգի ունեցած դերն ու նշանակությունը («Տնտեսավարման ֆինանսավարկային համակարգը»): Հանգամանորեն շարադրելով փողի ծագումը, ֆունկցիաները, ֆինանսների և վարկի էությունը՝ տնտեսության բազմասեփականության ստեղծման ու շուկայական հարաբերությունների ձևավորման փուլում ներկայացվում են ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպությունների ֆինանսների, պետական բյուջեի, ֆինանսական հատուկ կենտրոնացված ֆոնդերի էության, կարգավիճակի փոփոխությունները, ՀՀ հարկային համակարգի ձևավորման ու կառուցվածքային սկզբունքների, բանկերի տեսակների ու նրանց ֆունկցիաների, ֆոնդային բորսաների, ինվեստիցիոն գործունեության էության և ֆինանսավորման ոլորտներին առնչվող խնդիրները: Նա անդրադարձել է նաև տնտեսության ինքնակառավարման բնագավառում տեղական ֆինանսական համակարգի էության ու նշանակության, ՀՀ տեղական բյուջեների տեղի ու դերի, շուկայական հարաբերությունների ձևավորման արդի պայմաններում՝ դրանց եկամուտների ու ծախսերի կառուցվածքային փոփոխությունների, տարբեր մակար-

դակների բյուջեների միջև եկամուտների ու ծախսերի բաշխման մեխանիզմների, տեղական բյուջեների գործընթացի ու տեղական բյուջետային օրենսդրության խնդիրներին առնչվող հիմնահարցերին:

Ա.Ավետիսյանի վերջին տարիների հետազոտական դաշտում տեղ են գտել ժամանակակից Ռուսաստանի եկամուտների բաշխման և օգտագործման պրոցեսների կարգավորման, բյուջետային ֆեդերալիզմի և միջբյուջետային հարաբերությունների, բյուջետային պրոցեսի՝ որպես պետական ու մունիցիպալ ֆինանսների կառավարման գործիքի, բարձրագույն դպրոցի ֆինանսավորման, պետական և մունիցիպալ ֆինանսական վերահսկողության արդյունավետության բարձրացման հարցերը:

Աշխ. Միութենական հանրապետության ամփոփ ֆինանսական հաշվեկշիռը, Եր., 1973, Պետական բյուջեն ֆինանսական պլանների համակարգում, Եր., 1975, Вопросы территориального финансового планирования, Ер., 1979, Տնտեսավարման ֆինանսավարկային համակարգը, Եր., 1993, Հայաստանի Հանրապետության տեղական բյուջեները տնտեսության ինքնակառավարման համակարգում, Եր., 1995, Основы финансового менеджмента на макроуровне, Вологда, 2007:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՍԵՐՅՈԺԱՅԻ

(1952)

Ծնվել է ՀՀ Ախուրյանի շրջանի Ախուրյան գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի թիվ 32 պրոֆտեխուսումնարանը, ստացել փականագործ-էլեկտրամոնտաժողի մասնագիտություն: 1978-ին գերազանցությամբ ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտի (ՀԳԻ) տնտեսագիտական ֆակուլտետը: Բարձր առաջադիմության համար 3-րդ կուրսից նրան շնորհվում է Լենինյան կրթաթոշակ: Բուհն ավարտելուց հետո աշխատանքի է անցնում Ախուրյանի շրջանի Կամո գյուղի կոլտնտեսությունում, այնուհետև դասախոսական աշխատանքի է հրավիրվում ՀԳԻ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ամբիոնում: Առանց արտադրությունից կտրվելու ավարտել է Գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան: Ս.Ավետիսյանը ՀԳԻ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման, այնուհետև Հայաստանի պետական ագրարային համալսարանի (ՀՊԱՀ) ագրոբիզնեսի կառավարման ամբիոնում աշխատել է անընդմեջ՝ զբաղեցնելով ասիստենտի, ավագ դասախոսի, դոցենտի, պրոֆեսորի, իսկ 1994-1998-ին՝ ամբիոնի վարիչի պաշտոնները:

1990-ին պաշտպանել է թեկնածուական թեզ, իսկ 2003-ին՝ «ՀՀ ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով ատենախոսություն, որի համար ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

1995-1999-ին աշխատել է որպես ՀՀ գյուղատնտեսության նախարարության գիտության, կրթության և խորհրդատվության գլխավոր վարչության պետ: 1999-ին Ս. Ավետիսյանը Շիրակի մարզից ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր՝ ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում իրականացնելով օրենսդրական գործունեություն:

2002-2011-ին Ս. Ավետիսյանը եղել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2011-ից աշխատել է ՀՍՍՀ-ի «Ագրոբիզնեսի կազմակերպում» և «Ագրարային քաղաքականություն» ամբիոնների պրոֆեսոր: 2003-2011-ին համատեղության կարգով աշխատել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: 2013-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, 2016-ից՝ կենտրոնի ավագ հետազոտող:

Նրա ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են գյուղատնտեսության ոլորտին, ագրոարդյունաբերական համալիրի և ագրարային շուկայի հիմնախնդիրներին:

«Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում» մենագրության մեջ նա փորձել է հիմնավորել ԱԱՀ-ի ոլորտների փոխկապակցված զարգացման և համամասնությունների ձևավորման համար ագրարային շուկայի՝ որպես առանցքային օղակի դերը, վերլուծել հանրապետությունում ագրարային բարեփոխումների ընթացքը և արդյունքները, և այդ տեսանկյունից բացահայտել ագրարային շուկայի ձևավորման առանցքային նշանակությունը: Ագրարային ոլորտում գիտատեխնիկական առաջընթացի զարգացման առումով բարձր

գնահատելով գիտական արտադրանքի շուկայի ձևավորումը, նա կարևորում է մասնագիտացված ինստիտուցիոնալ համակարգերի կայացումը, մասնավորապես ինովացիոն կենտրոնների և խորհրդատվական կազմակերպությունների՝ նպաստելով գիտատեխնիկական արտադրանքի բիզնեսի զարգացմանը և գիտական ապրանքների իրացմանը:

«Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը» աշխատության մեջ դիտարկվում են հանրապետության գյուղատնտեսության և ագրովերամշակման ոլորտների ներկա վիճակն ու զարգացման հնարավորությունները:

«Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրները» մենագրության մեջ կարևորվում է պարենային անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանության կատարելագործումը, Հայաստանի և ԼՂՀ պարենային հաշվեկշիռների մոտարկման խնդիրները, առաջարկվում է ագրարային ոլորտի նորամուծական զարգացման ուղիներ:

Ս.Ավետիսյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով: Նա 1996-ին ընտրվել է Հայաստանի գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

Աշխ. Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում, Եր., 2002, Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգի հիմնախնդիրները և զարգացման ռազմավարությունը, Եր., 2002 (համահեղինակ), Հայաստանի գյուղատնտեսությունը, Եր., 2008, Agriculture and Food Processing in Armenia, Yerevan, 2010, Տնտեսագիտության տեսություն (ուս.ձեռնարկ) Եր., 2010 (համահեղինակ), Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր., 2010, Գյուղատնտեսական կոոպերատիվներ, Եր., 2011 (համահեղինակ), Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրները, Եր. 2014, Պարենային և առաջին անհրաժեշտության ոչ պարենային ապրանքների շուկաների բնորոշ գծերը և կարգավորման կառուցակարգերը ՀՀ-ում, Եր. 2015, Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ, Եր. 2015

(համահեղինակ), Բնական պաշարների օգտագործման նորամուծական եղանակների միջազգային փորձը և Հայաստանում կիրառման հնարավորությունները, Եր. 2015, (համահեղինակ), Կլիմայի փոփոխության սոցիալ-տնտեսական հետևանքները և հարմարեցման միջոցառումները Հայաստանում, Եր. 2015 (համահեղինակ), Հայաստանի Հանրապետության արտահանման բազմազանեցման և աճի հնարավորությունները, Եր. 2016 (համահեղինակ), Земельные ресурсы и продовольственная безопасность Центральной Азии и Закавказья, Рим, ФАО, 2016 (соавтор).

ԱՐԱՍԽԱՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ ՄԿՐՏՈՒՄԻ

(1857-1912)

«Արասխանյանը մեր մեզ այն ինտեսագետն էր, որ գիտության աշխարհում ուշադրություն գրավեց և գնահատվեց ոչ թե իր և թե մեր ցեղի մտային կարողություններով, նա այն հրապարակախոսն էր, որ մեր մեզ առաջինը հիմք դրեց եվրոպական մտքով գիրական-հրապարակախոսական մի ամենագրի»:

Հովհաննես Թումանյան

Ծնվել է Նախիջևանի գավառի Վերին Ագուլիսում, առևտրականի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է մասնավոր վարժարաններում: 1876-ին ավարտել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը: Նույն թվականին մեկնել է արտասահման՝ «քաղաքատնտեսություն ուսանելու», սկզբից Լայպցիգի և Փարիզի, իսկ հետո Ստրասբուրգի համալսարաններում: 1882-ին «Ֆրանսիական առևտրի քաղաքականությունը մինչ 1789թ. կից Ֆրանսիայի գյուղական, քաղաքական և ֆինանսական տնտեսությունը» հետազոտության համար շնորհվում է իրավաբանական և քաղաքական գիտելիքների դոկտորի գիտական աստիճան: Առանձին գրքով այն լույս է տեսել Բեռլինում 1883-ին՝ արժանանալով եվրոպական գիտական շրջանների դրվատանքին: Ինչպես նշվում է Գերմանիայում լույս տեսած գրախոսություններից մեկում. «Հեղինակը տալիս է մեզ ոչ թե արտահանման և ներմուծման չոր ու ցամաք արձանա-

գրություն և ոչ ծանոթացնում է մեզ մաքսային տարիֆ-ների ծանոթացնող և ոչ մերձենում է աշխատության մի քանի պատրաստի հանրատեղերով (Gremeinglactre) ու ֆրազներով ամեն բան իր տիեզերական ռեցեպտներով և պրինցիպներով վճռելու համար: Ընդհակառակը նա աշ-խատում է ապացուցանել առևտրական քաղաքականու-թյան կարգադրությունների և ժամանակվա տնտեսական ու քաղաքական դրության մեջ եղած կապերը… … աշխա-տություն, որը հեղինակի ջանասիրության, սրամտության և պատմելու ընդունակության հատկապես պատիվ է բերում»: 1882-ին Արասխանյանը հրավեր է ստանում իր ուսուցիչ, նոր պատմական դպրոցի հայտնի տնտեսագետ Գուստավ Շմոլերից՝ աշխատելու իբրև «Սոցիալական գիտությունների» տարեգրքի խմբագրի օգնական, նրան միաժամանակ խոստանալով նաև «պրոֆեսորական աս-պարեզ» քաղաքատնտեսության ամբիոնում: Սակայն նա մերժում է այդ առաջարկը՝ նախընտրելով «հասարակա-կան ծառայությունը իր հայրենի երկրում»: Արդեն եվրո-պական ուսումնառության տարիներին նա թղթակցում էր «Մշակին», կարևորում ազգի տնտեսական ինքնաճանաչ-ման խնդիրը, նրա առաջադիմության նյութական ու բարո-յական խոչընդոտներն առնչում եվրոպական ուսմունքների առաջադրույթներին:

Նրա «տնտեսագիտական հարցասիրությունը» զուգորդ-վում էր երևույթների արժեքը գիտության փորձով հաստա-տելու ձգտումով, մի դեպքում հիմնավորում վիճակագրու-թյան գիտության անհրաժեշտությունը «ազգային ինքնա-ճանաչության», «Հայաստանի տնտեսական բարեկորո-գության...ավելի պատրաստի միջոցներ գտնելու համար, մի այլ ուսումնասիրության քննության առարկա դարձնելով Եվրոպայի տնտեսական փոխակերպությունների ու ազ-գերի հարստությունների վերաբերյալ տնտեսական ուս-մունքների հետագիծը, մի երրորդ դեպքում դիտարկում ձեռնարկության ձևերի ու առևտրական ընկերությունների կազմակերպական մեթոդների էվոլյուցիան՝ որպես ծուլ-ված տնտեսական և հոգևոր ազդակների ամբողջություն և

այլն: Արդեն ուսանողական տարիներին նա իր դիտարկումները միշտ առնչում էր ազգային ընդհանուր հիմնախնդիրներին: Մերժելով ցրված ազգի կարգավիճակը, նա «ծիծաղելի» էր համարում «ազգ՝ առանց հայրենիքի և հայրենիք առանց ազգի» գաղափարները, ազգության գաղափարը կապելով հողի գաղափարի հետ: Նա ազգային վերածնությունը կապում էր կրթության, տնտեսական «քաղաքական ինքնահայտնաբերման» գործոնների հետ: Նրա հայեցության մեջ հայ ազգային պահվածքն աղարտող «կորպորատիվ ոգու» բացակայության եսայական բնազդի փոխարեն ազգային միասնության դաստիարակության դրույթը բարձրացվում է ծրագրային աստիճանի:

1882-ին վերադառնալով հայրենիք՝ Արասխանյանը հասարակական ու հրապարակախոսական եռանդուն գործունեություն է ծավալում «Մշակ», «Արծագանք», «Աղբյուր», «Кавказ», «Новое обозрение» պարբերականներում՝ հանդես գալով հոդվածներով ու ուսումնասիրություններով բազմաթիվ կենսական խնդիրների շուրջ:

1883-85-ին Արասխանյանն ուսուցչի պաշտոն է ստանձնում Թիֆլիսի Ներսիսյան և Գայանյան դպրոցներում՝ դասավանդելով պատմություն: Այդ տարիներին նա գրում է «Արևելյան ազգերի հին պատմությունը» աշխատությունը, որը մի հատվածն էր իր մտահղացած «Համաշխարհային պատմության» ուսումնասիրության: 1883-ին լույս է տեսնում նրա «Ազգաբնակչությունը և ազգաբնակչության շարժումները» հետազոտությունը, որտեղ վերլուծության է ենթարկվում Մալթուսի տեսություն, և խնդիրը քննարկվում է ազգի «տնտեսական, բարոյական և քաղաքական կյանքի» առնչություններում: «Հողի արդյունաբերությունը և հասարակությունը» աշխատության առարկան ազգային հարստության ստեղծման հարցն է եվրոպական տնտեսական ուսմունքների ներքո: 1885-ին, որպես Կովկասի պետական կալվածքների նախարարության կողմից կազմակերպված խմբի անդամ լինելով Նուխվա և Արեշի գավառների ավելի քան երկու հարյուր գյուղերում, Արասխանյանը կատարում է հետազոտություններ, որի արդյունքները հրապա-

ռակվում են «Материалы для изучения экономического быта государственных крестьян» ժողովածուի 6-րդ և 7-րդ հատորներում (1887թ.), որոնք հարուստ նյութ են տալիս XIX դարի վերջի Հայաստանի գյուղատնտեսության վիճակի և տիրող հողային հարաբերությունների վերաբերյալ: Նրա մի այլ աշխատություն՝ «Закавказская хлебная торговля в связи с развитием сельского хозяйства» վերլուծություն է այդ ոլորտի տնտեսական հեռանկարների վերաբերյալ: Շրջելով Նուխիում և Ղարաբաղում՝ Արասխանյանը գրում է «Закавказские шелкомотальные заводы» հետազոտությունը՝ ցույց տալով, թե ինչպես է անդրկովկասյան մետաքսագործությունը ստանում ապրանքակապիտալիստական բնույթ՝ խոշոր մեքենայական արտադրության, կապիտալի և վարձու աշխատանքի գործակցությամբ:

Ա.Արասխանյանը հիմնում և շուրջ տասը տարի (1889-1900) խմբագրում է «Մուրճ» ամսագիրը, որը եզակի երևույթ էր հայ մտավոր պատմության մեջ: Այն, ինչպես ինքն էր ասում, նպատակ ուներ «մշակելու որոշ սկզբունքներ, մտածելու որոշ եղանակ, վերաբերմունքի որոշ ձև, մի խոսքով շկոլա»: Եվ իրավամբ, իր ընդգրկումներով լինելով համապարփակ, ամսագիրն իր էջերում համակողմանիորեն անդրադառնում էր հասարակական կյանքի, գիտության բոլոր բնագավառներին, տպագրում բանասիրական, տնտեսագիտական, հասարակական-քաղաքական, սոցիալական և այլ բնույթի հոդվածներ, լայն տեղ տալիս գեղարվեստական գրականությանը: «Մուրճը» ուներ ընդգծված տնտեսագիտական ուղղվածություն՝ հայ միտքը հարստացնելով նոր հասկացություններով ու երևույթների վերլուծական նոր չափումներով: Ասպարեզ գալով մի ժամանակաշրջանում, երբ հայ իրականությունը ոտք էր դրել արդյունաբերական կապիտալիզմի զարգացման ուղին, Արասխանյանն իր բազում տնտեսագիտական ուսումնասիրություններում տվեց Անդրկովկասի հասարակական նոր հարաբերությունների տնտեսական կառուցվածքի ուրույն վերլուծությունը և եվրոպական երկրների ու Ռուսաստանի հասարակական զարգացման տնտեսագիտա-

կան մտքի փորձով լուսաբանեց երկրամասի սոցիալ-տնտեսական առաջընթացի պատմական օրինաչափությունները:

Նա կշտամբում էր պահպանողական մամուլին, որը մոլորության մեջ կարծում է, թե «իբր հայկական կյանքը ինքն իր մեջ բոլոր տարրերը բավականաչափ ունի անկախ զարգանալու համար»:

Արասխանյանն անդրկովկասյան առաջընթացը սերտորեն կապում է նոր տնտեսաձևերի զարգացման հետ, և դա կյանքի պատմական թելադրանքն է, ուստի հասարակական բոլոր ուժերն ու խավերն իրենց գործունեությամբ պետք է ուղղված լինեն այդ նպատակի իրագործմանը: Արտասահմանյան կապիտալի մուտքը նա, դիտելով օգտակար երկրամասի առաջընթացի համար, միաժամանակ խոչընդոտ է համարում տեղական կապիտալի տնտեսական ինքնուրույն գործունեությանը: Ինչ վերաբերում է տեղական կապիտալի հնարավորություններին, ապա Արասխանյանը հակված էր մեծ նշանակություն տալու հայ բուրժուազիայի տնտեսական ուժին: Իսկ որքանով երկրամասում դեռևս բացակայում էին խոշոր չափերի հասնող անհատական կապիտալները, ուստի վերջիններիս և արտադրության արագ զարգացման հակասությունն առաջարկում էր լուծել անհատական կապիտալների համակենտրոնացումով բաժնետիրական ընկերությունների ձևով: Դա հնարավորություն կտա մրցակցության համար, որն իր մեջ թաքցնում է տնտեսական առաջադիմության խթանը: Ցույց տալով առևտրական բուրժուազիայի անցած պատմական ուղին, Արասխանյանն ընդգծում է առևտրական կապիտալն արդյունաբերականի փոխակերպելու անհրաժեշտությունը: Հայրենական խոշոր արդյունաբերության զարգացումը նա հանգեցնում է տնտեսական մի քաղաքականության, որը կապահովեր ազգի «ինքնապաշտպանությունն» ու ինքնուրույնությունը և ուղի կհարթեր ազգային բուրժուազիայի տնտեսական ու քաղաքական տիրապետության համար:

XIX դարի վերջին Անդրկովկասում գոյություն ունեցող վարչատարածքային բաժանումը, հայկական դրամատի-

րական խավի գործունեությունը բուն Հայաստանի սահմաններից դուրս լուրջ խոչընդոտներ էին հարուցում ազգային միասնական տնտեսական քաղաքականության համար: Այնուամենայնիվ, Արասխանյանի կարծիքով հայ ազգի գոյության և նրա ապագա ինքնուրույնության երաշխիքի. «Հայոց նման մի ազգ, որն ունի իր կուլտուրան առհասարակ, պետք է ունենա նաև իր տնտեսական քաղաքականությունը: Ոչ մի ազգ չի կարող հարատև գոյություն ունենալ, և՛ կուլտուրական, և՛ քաղաքական դերերի ձեռնամուխ լինել, առանց ամուր տնտեսական հիմքի: Նայած, թե մի ազգի տնտեսական կյանքը ինչ ուղղություն է ստանում, դրանով շատ զգալի կերպով որոշվում է նորա ոգու ուղղությունը առհասարակ, այդ ոգու ուղղությունն ապա իր դրոշմն է դնում այդ ազգի կյանքի և ձգտումների վրա և ոչ միայն տնտեսական, այլ հոգեկան, բարոյական ու քաղաքական կյանքի ու ձգտումների վրա»: «Մտցնել մի ժողովրդի տնտեսական գործունեության մեջ գաղափարական տարր, այդ գաղափարը հիմնել ազգային ընդհանուր կուլտուրական շահերի վրա, ահա թե ինչ պիտի լինի ազգային տնտեսության քաղաքականությունը»: Ակներև է, Արասխանյանը տնտեսական գաղափարաբանությունը դիտում է ազգային զարթոնքի, նրա ինքնագիտակցության ազգային գաղափարաբանության կարևոր հատկանիշը: Նրա դիտողությունները համաշխարհային փորձից քաղված դասեր են ազգային տնտեսության վերաբերյալ, արված այսօրվա համար, որոնք կատարվող հասարակական վերափոխությունների ու ծառայությունների բովանդակության ու կառավարման մեջ հայտաբերում են արդիական նշանակություն:

Արասխանյանը հողային խնդիրը համարում է քաղաքական, սոցիալական և տնտեսական դժվար լուծելի հանգույցներից ամենակարևորը: Արևելյան Հայաստանի հողային խնդրի կարգավորման ուղղությամբ ռուսական կառավարության կողմից իրականացվող ռեֆորմները «հասարակական կարծիքի» արդյունք չէին, ինչպես եվրոպական երկրներում էր: Նա ճորտատիրական կարգերի վերացումը

Ռուսաստանի տնտեսական կյանքում համարում էր ուշացած երևույթ: Եվ, եթե մի կողմից ռեֆորմը համարում էր շրջադարձային Ռուսաստանի տնտեսության հետագա կապիտալիստական զարգացման համար, ապա մյուս կողմից սխալ է դիտում այն պատկերացումը, թե ռեֆորմից հետո հողային հարցն իր լուծումը ստացավ, և առաջարկում է հայկական իրականության համար «բացել հողային խնդրի ուսումնասիրության էրան»: Արասխանյանը գտնում էր, որ ռուսական ռեֆորմները ագրարային հարաբերությունները մի որոշ կայուն օրենքների ենթարկելով հանդերձ, պարունակում էին նաև ներքին հակասություններ ու կիսակատար կողմեր, որոնք հողային հարաբերությունների մեջ ստեղծում էին խայտաբղետություն: Նա խորապես ըմբռնում էր ռեֆորմների տնտեսական ու քաղաքական նկատառումները, որոնք չէին տանում «դեպի քաղաքացիական բարձր զարգացումը և տնտեսական ու սոցիալական բարգավաճումը», որ «կառավարությունը խրախուսելով ազնվական կալվածատեր դասակարգը, ուզեցել է մեր երկրի մեջ ունենալ քաղաքական հուսալի դասակարգ, որը երախտագիտական զգացմունքներով կապված լիներ կառավարության հետ» և ավելի ուժեղացրեց գյուղացիության տնտեսական կախվածությունը և այլն:

Երկրամասի տնտեսական փոխակերպությունը հայ հասարակական մտքի առաջ ամբողջ սրությամբ դրեց սոցիալական կամ, ինչպես ժամանակի գրականության մեջ հաճախ ընդունված էր անվանել՝ բանվորական խնդիրը: «Մուրճը» քննության էր առնում այդ խավի պայմանների, տնտեսական դրության, կյանքի ու կենցաղի շատ հարցեր, ելքեր առաջարկում մեղմելու սոցիալական հակասությունները: Վերջիններիս են վերաբերում կոոպերատիվների և ինքնօգնության տարբեր կազմակերպությունների ստեղծումը, կառավարության կողմից սոցիալական տարբեր ռեֆորմների իրականացումը՝ բացելով աղքատանոցներ, հիվանդանոցներ, բանվորների երեխաների համար դպրոցներ, սոցիալական ապահովագրության օրենքների

ընդունումը և այլ բարեփոխումներ տանում էին խնդրի աստիճանական լուծմանը:

Արասխանյանի և «Մուրճի» հայեցությունը համահունչ է. մարդկությունը չի կարող միանգամից վերածվել նոր հասարակության: Սոցիալական առաջընթացը ենթակա է մարդու բնության փոփոխության դանդաղ պրոցեսի բնական սահմանափակիչների գործողությանը: Այլ ուսմունքները կտանեն հասարակական առաջընթացի համաչափության խախտմանը:

Գրեթե նույնատիպ ծրագրեր էր առաջարկում նաև գյուղի վերաշինության համար. էժանագին վարկը վաշխառությունը կանխելու, ինքնօգնության սկզբունքով հասարակական գանձարանների ստեղծումը, տարագնացության դրդապատճառը վերացնելու նպատակով նոր հողերի բաժանումը, ֆերմերական տնտեսությունների և զեմստվոների ստեղծումը, գյուղատնտեսական մտավորականության ուժը և առաջադրվող այլ միջոցները եվրոպական երկրների և Ռուսաստանի զարգացման փորձից քաղված հասարակական առաջադիմությանն ուղղված միջոցառումներ էին, որոնք կնպաստեին գյուղի սոցիալական դիմափոխությանը և նոր տնտեսաձևին բնորոշ հաստատությունների թափանցմանը գյուղ:

«Մուրճ» ամսագիրն իր տնտեսական բովանդակության մեջ ամբողջանում է բազմաթիվ տնտեսագետների հայացքներում, որոնք իրենց «սկզբունքների» մեջ ներկայացնում է մի ուղղություն, մտածողության և ձգտումների այն միությունը, «միացած որոշ աշխարհայացքով», որի գլխավոր տեսաբանն Արասխանյանն էր: Ազատամտական հայեցությունն այն ընդհանուր գաղափարական ուղղությունն էր, որտեղ ամսագրի տեսաբանների «մտավոր թելերը հանգուցվում են»: Հենց այդ դիտակետերից են կատարված Գրիգոր Վարդանյանի երկրամասի արդյունագործության, Ռուսաստանի տնտեսական դրության վերաբերյալ վերլուծությունները, Ֆրիդոն Մարգանյանի և Հակոբ Անագչյանի՝ նավթարդյունաբերության վիճակի և տնտեսական զարգացման հարցերի քննությունը, Գևորգ

Ղարաջյանի և Հակոբ Հակոբյանի՝ բանվորների «ապահովագրական գործի» մասին մտորումները, Հովհաննես Սաղաթելյանի և Գրիգոր Վանցյանի՝ համայնքի և համայնակեցության ուսումնասիրությունը, Ավետիք Արասխանյանի «ամբոխի խորշերը մտնելու» և հասարակության զարգացման դրդապատճառներն ուսումնասիրելու նարոդնիկության առաքելության համակրությունները, Միքայել Հովհաննիսյանի (Վարանդյանի)՝ կապիտալիզմի զարգացման ու սոցիալական հարաբերությունների հետագծի և այլ հեղինակների դիտողությունները:

1900 թվականին լույս են տեսնում Ավետիք Արասխանյանի խմբագրած «Մուրճի» վերջին համարները:

1905-1907-ին Արասխանյանը ձեռնարկում է Կ.Մարքսի «Կապիտալի» թարգմանությունը, որը, սակայն, մնում է անավարտ:

1909-1911-ին նա քաղաքատնտեսություն և ընդհանուր պատմություն է դասավանդում էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա տեղափոխվում է Ախալքալաք՝ տեղի հայկական դպրոցում աշխատելով որպես տեսուչ: Նա, ով անտեսեց գիտնականի փայլուն ապագան Եվրոպայում և անձնուրաց ծառայեց հայ մտքի մշակությանը, մահացավ հասարակության կողմից գրեթե մոռացված, մենության և ծայրահեղ աղքատության մեջ, իբրև սեփական հուշարձան՝ ապագա սերունդներին թողնելով հայ մտքի քաղաքակրթական դրվածքի այդ փայլուն էջը՝ «Մուրճ» ամսագիրը:

Աշխ. A.Araskhanjian, die franzasischie Gefredenhandelspolitik in inzem Zusammenhanye mit Land-Finanz und Volkeswiztschaft Frankreichs seit Mittelalter bis zum J. 1789, Berlin, 1883, Ազգաբնակչությունը և ազգաբնակչական շարժումները, Թիֆլիս, 1883, Հողի արդյունաբերությունը և հասարակությունը, Թիֆլիս, 1884, Արևելյան ազգերի հին պատմությունը, Թիֆլիս, 1891, Ինքնակենսագրություն, Թիֆլիս, 1912, Закавказская хлебная торговля в связи с развитием сельского хозяйства, Тифлис, 1887, Закавказские шелкомотальные заводы, Тифлис, 1887.

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՂԱՖՈՆԻ

(1904-1965)

Ծնվել է ՀԽՍՀ Ղափանի շրջանի Կավարտ գյուղում (այժմ՝ Կապան քաղաքի շրջագծում): Տեղի դպրոցում երկու տարի սովորելուց հետո 1912-18-ին ուսումը շարունակում է Շուշիի ռեալական դպրոցում: 1928-29-ին սովորել է Մոսկվայի Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտում: 1936-ին ավարտել է Կարմիր պրոֆեսուրայի ագրարային ինստիտուտը: 1920-30-ական թվականներին կատարել է կուսակցական տարբեր աշխատանքներ: 1937-ին եղել է Երևանի պետական համալսարանի ռեկտորը, նույն թվականին բռնադատվել է, ապա արդարացվել: 1941-ին կամավոր մեկնել է ռազմաճակատ: 1946-52-ին եղել է Բաքվի Ս.Մ.Կիրովի անվան պետական համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը: Այնուհետև ԽՍՀՄ Կենտկոմի որոշմամբ փոխադրվել է Մոսկվա ու աշխատել իբրև ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի իմպերիալիզմի ընդհանուր պրոբլեմների սեկտորի վարիչ և տնօրենի տեղակալ:

1956-ին նրան հանձնարարվում է ԽՍՀՄ ԳԱ համաշխարհային էկոնոմիկայի ու միջազգային հարաբերու-

թյունների ինստիտուտի կազմակերպումը, որի անփոփոխ տնօրենն էր մինչև իր կյանքի վերջը:

1958-ին Արզումանյանն ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1963-ին՝ ակադեմիկոս, էկոնոմիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և ԳԱ նախագահության անդամ:

«Экономические проблемы общественного развития» և «Տնտեսագիտական ընտիր երկեր» ժողովածուներն ընդհանուր առմամբ ուրվագծում են նրա հետազոտական ոլորտները: Վերջիններս վերաբերում են տնտեսական պատմության և աշխարհակարգի նոր շրջանի հարցերին:

XIX դ. 80-90-ական թվականներին Ռուսաստանում ագրարային ճգնաժամի վերաբերյալ հետազոտության մեջ համապատասխան փաստական տվյալների հիման վրա անդրադարձ է կատարվում 1861թ. գյուղացիական ռեֆորմի բնույթի և գյուղատնտեսության մեջ արտադրողական ուժերի զարգացման վրա ունեցած հետագա ազդեցության, մեքենայական արտադրության, գյուղացիության շերտավորման, ապրանքային արտադրության աճի և այլ հարցերի: Սակայն նրա գիտական շուրջ 100 անուն ժառանգության մեջ, որոնց մի մասը թարգմանված է տարբեր լեզուներով, առավել մեծ բաժինը պատկանում է պետական մոնոպոլիստական կապիտալիզմի, կապիտալիստական երկրների ինտեգրացիայի, կապիտալիստական հասարակարգի կառուցվածքի, շուկայական տնտեսության պետական կարգավորման պրակտիկայի, արտադրության կառուցվածքի վրա գիտատեխնիկական առաջընթացի ազդեցության, զբաղվածության, հասարակական-քաղաքական երկու համակարգերի տնտեսական մրցակցության և այլ խնդիրներին: Նրա մի հատվածը վերաբերում է տնտեսագիտության տեսության և տնտեսագիտական կրթության հիմնախնդիրներին:

Արզումանյանը պարգևատրվել է Լենինի շքանշանով և այլ մեդալներով:

Աշխ. К вопросу о классовой сущности и методе теории стоимости английской классической политической экономии, М., 1940, Обнищание рабочего класса в капиталистическом обществе, М., 1958, Кризис мирового капитализма на современном этапе, М., 1962, Проблемы современного капитализма, М., 1963, Борьба двух систем и мировое развитие, М., 1964, Экономические проблемы общественного развития. Избранные труды, М., 1968, Տնտեսագիտության ընտիր երկեր, Եր., 1971:

ԱՐԾՐՈՒՆԻ ԳՐԻԳՈՐ ԵՐԵՄԻԱՅԻ

(1845-1892)

Ծնվել է Մոսկվայում, ազնվականի ընտանիքում: 1850-ականների վերջերին ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս: 1863-ին ավարտելով գիմնազիան՝ մեկնում է Մոսկվա և ընդունվում համալսարանի բնագիտական ֆակուլտետը: Մեկ տարի անց տեղափոխվում է Պետերբուրգի համալսարան: 1867-ին նա դասախոսություններ է լսում Ցյուրիխում և Ժնևում, ապա նույն թվականին ընդունվում է Գերմանիայի Հեյդելբերգի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը: 1869-ին ստանում է քաղաքատնտեսության և փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Հեյդելբերգից անցնելով Փարիզ՝ նա քաղաքատնտեսության դասընթացներ է լսում Փարիզի համալսարանում, ապա Վիեննայում և Վենետիկում, մի քանի ամիս հայերենի և հայագիտության դասեր առնելուց հետո՝ 1970-ին վերադառնում է Թիֆլիս: 1872-ին հիմնադրում է «Մշակ» թերթը, որի առաջին համարի առաջնորդող հոդվածում աշխատանքն իր ամենաընդհանուր հասկացությամբ բնութագրվում է որպես լուսավորության և առաջադիմության հիմք. «Երեկ մենք կտակարանային ազգ էինք, այսօր մենք

ազգասերներ ենք, էգուց մենք պետք է աշխատողներ դառնանք»:

Աշխատանքի, որպես «ժամանակակից քաղաքակրթության ամենազորեղ, հիմնական, կենդանացնող», Գ.Արծրունու դրվատանքը միանգամայն համահունչ էր երկրամասում կապիտալիստական հարաբերությունների զարգացման վերելքին և բխում էր այդ զարգացման պահանջներից: Իսկ սա թելադրում էր «ինքնաճանաչում» և «ինքնաքննություն», հասարակական երևույթները «տնտեսական կետից» վերլուծելու անհրաժեշտություն: «Քարոզիչների դարն անցավ, կյանքը գործնականություն է պահանջում, խարսխված ժամանակակից հասարակական կազմակերպության հիմնական սկզբունքների՝ անհատական զարգացման, աշխատանքի և հավասարության վրա»: Հասարակական առաջադիմությունն Արծրունու հայացքներում ենթարկված էր «XIX դարի լուսավորության գլխավոր գործչին»՝ աշխատանքին, իբրև հարստության աղբյուրի: Արծրունին գտնում էր, որ հասարակության հարստության և բաշխման հարցերը կարգավորվում են մարդկային բնությունից բխող օրենքներով: Փոխանակությունը հասարակության գլխավոր հատկությունն է, որի զարգացման աստիճաններն էլ պայմանավորում են քաղաքակրթության առաջընթացի աստիճանները: Անձնական շահը հասարակության շարժիչ ուժն է, որն իրացվելով «ծառայություն ծառայության դիմաց» սկզբունքով, պայմանավորում է տնտեսական ներդաշնակությունը: Դրվատելով աշխատանքի բաժանման բերած առավելությունները՝ նա «ամբողջի անբաժանելիության» դիտակետից առաջարկում էր այն դնել որոշակի չափի մեջ: Նա հարում էր տարբեր ժողովուրդների սոցիալ-տնտեսական ուղիների կրկնության անհնարինության տեսությանը: Իբրև օրգանական դպրոցի

հետևորդ՝ Արծրունին մարդկային հասարակության պատմությունը դիտում էր որպես ոչ միայն գոյության պայքարի, այլև այդ պայքարի համար անհրաժեշտ միջոցների կատարելագործման պատմություն: Հասարակական անհատի և ազգի հարատևությունը պայմանավորված է այն բանով, թե դրանք որքանով են լավ հարմարված շրջապատող պայմաններին: Իսկ դրա համար նա անհրաժեշտ էր համարում քաղաքակրթվել, «լուսավորության որքան կարելի է մեծ պաշար ձեռք բերել», որպեսզի «շրջապատողների հետ հավասար զենքով պատերազմել իր գոյությունը պահպանելու համար»: Գ.Արծրունու հայեցության հիմնական նստվածքը ենթադրում է ազգի ընդհանուր հարմարվողականությունը համաշխարհային աստիճանի բարձրացնելը, նրա ադապտացիան աշխատանքի համաշխարհային բաժանման և առաջընթացի ընդհանուր հոսքում: «Մշակի» 1878 թվականի 186-191-րդ համարներում «տպագրվում է հայ անվանի գրող Ռաֆֆու «Մարդը գոյության կռվի մեջ» հոդվածաշարը: Հոդվածում մեջբերումներ կատարելով ամենատարբեր հեղինակներից (Դարվին, Սպենսեր, Վագներ, Մեշնիկով, Շմոլլեր, Լանգե, Շեֆլե, Մաուրեր, Սմիթ, Մաքիավելլի և ուրիշներ)՝ Ռաֆֆին, ըստ էության, հանգում է Գ.Արծրունու վերը հիշատակած եզրակացությանը, ըստ որի պետք է «գործունեության ձևերը փոխել ժամանակի և հանգամանքների համեմատ», իսկ դա պահանջում է ժամանակի պահանջների ճանաչում, որոնք հարմարվելու համար անհրաժեշտ է «ժամանակի քաղաքականության համեմատ զարգացած լինել»:

Գ.Արծրունու աշխատանքի փիլիսոփայությունն ակնկալում է ինչպես նյութական, այնպես էլ մտավոր առաջադիմություն, մի կողմից՝ հասարակական հարցերի քննության ժամանակ ուշադրություն սևեռելով «տնտեսական

կետին», մի այլ դեպքում՝ պատմական զարգացման վճռական գործոն դիտելով հասարակության ինտելեկտուալ զարգացման աստիճանը: Մտավոր աշխատանքի նրա ըմբռնումն իր հիմքում ուներ գիտության ուժի սուբստանցը, որին մեծ տեղ է հատկացվում հասարակության զարգացման գործում: Ճանաչողության հարցում Արծրունին ընդունում էր փորձի նշանակությունը, բայց և միաժամանակ գիտության խնդիրը համարում էր «Այդ զանազան փորձերի մեջ պատճառական կապի» հայտնաբերումը: Հատկապես կարևորվում են բնական գիտությունները, որպես հասարակական առաջընթացի կարևորագույն գործոն, ինչը միանգամայն համապատասխանում էր նոր հարաբերությունների զարգացման դարաշրջանի ոգուն: Գիտության վերափոխիչ ուժը նա համարում էր մեծ տնտեսական ուժ. «Հասկանանք վերջապես, որ մենք աշխատասիրության և գիտության միջոցով հարստանալու ենք միայն մեր բնության հարստություններից օգուտ քաղելով»:

Առաջնություն տալով կապիտալի օգտագործման արտադրողական ձևին՝ որպես առավել ռացիոնալ կիրառության ձև, նա արտադրության պրոցեսի աշխատանքը բաժանում է երեք տեսակի. ա) գիտական հետազոտություն, բ) հետազոտության արդյունքների իրականացում, գ) աշխատուժի անմիջական կիրառում: Սրանցից յուրաքանչյուրը կապված է սոցիալական որոշակի շերտի հետ: Մտավորականությունը և, իհարկե, տեխնիկական մտավորականությունն իրականացնում է տեխնիկական կատարելագործությունները, արդյունաբերող ձեռնարկատերը՝ գործնականորեն կազմակերպում ու իրականացնում է դրանց ներդրումը, բանվորներն՝ իրականացնում են անմիջական արտադրության պրոցեսը: Այսինքն՝ առաջադրվում է տնտեսության վարման եղանակի, հետևապես

նրա կառավարման ռացիոնալացում: Նա կատարելագործվելու ուժը բնութագրում է իբրև զարգացման զսպանակ: Սրանում դրսևորվում է Գ.Արծրունու սոցիալական օպտիմիզմը:

Լինելով հայ ազատամտական հոսանքի ամենանշանավոր դեմքը՝ Արծրունին ու իր«Մշակը» մտրակող ուղղությամբ պատերազմ հայտարարեցին հին կարգ ու կանոնների, հասարակության հին հաստատությունների դեմ՝ ընդառաջ գնալով երկրամասի կապիտալիստական վերածնությանը, օգտագործելով արևմտյան ուղու դասերը, հորդորելով առևտրական կապիտալի փոխակերպությունը արդյունաբերականի, ընկերական ոգու դաստիարակությունը, վարկի զորավոր ուժի կիրառումը, փոխադարձ ինքնօգնության ընկերությունների ստեղծումը, մրցակցությունը, կարևորելով տեղական հումքի սեփական ուժերով մշակությունը և այլն: Մի փուլում, երբ երկրամասում ո՛չ կապիտալ կա, ո՛չ էլ «ձեռնարկող ոգի», Գ.Արծրունին գտնում էր, որ երկրամասի նոր տնտեսական պահվածքի համար անհրաժեշտ է որոշակի «սիստեմական դպրոց», որը պիտի սովորեցներ կիրառել արտադրության նոր ձևեր, իրացնել արդյունաբերության նոր և կատարելագործված եղանակներ, «պատրաստվելով ապագայում ընդունակ լինելու անկախ և ինքնուրույն գործունեության»: Տնտեսական առաքելության այդ ֆունկցիան նա կապում էր օտար կապիտալների հետ:

Գ.Արծրունու հասարակահայեցության նեցուկը «միջին դասակարգն» էր, որը կարող էր ապահովել ազգի առաջադիմությունը:

«Մշակը» հողային խնդրի կարգավորումը համարում էր կարևոր դիտում ազգի տնտեսական առաջընթացի համար: Այս առումով պատահական չէր «Մշակի» վրա «հողի

փիլիսոփայության» ազդեցությունը: «Ամեն ազգի գոյության հիմքը հողն է,- նկատում է Գ.Արծրունին,- ուրեմն ամեն ազգի հասարակական գլխավոր ուժը երկրագործությունն է: Մի ազգ, որ հետզհետե կորցնում է իր երկրագործական դասը, նա անհետանալու է որպես ազգություն աշխարհի երեսից»: Այս իմաստով էլ նա առաջարկում էր խափանել գյուղից քաղաք բնակչության հոսքը, որը նշանակում էր «ընտանիքի և հայրենիքի հավիտենական կորուստը»: Արևելյան Հայաստանում հողատիրության և հողօգտագործման կարգավորման ռուսական կառավարության նկրտումները, հասարակական հերթափոխության բեկումնային շրջանում համայնքի տնտեսական դերի, գյուղի սոցիալական բարեկարգման և այլ հարցեր դարձել էին արծրունիական «Մշակի» տեսաբանների (Գ.Արծրունի, Հ.Առաքելյան, Ա.Քալանթար, Ս.Ղորջանյան, Ն.Աբելյան և ուրիշներ) քննության առարկան:

Որպես հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոս՝ Արծրունին Արևմտյան Հայաստանի ազատագրությունը թուրքական լծից համարում էր համազգային պահանջ: Նա երազում էր Ռուսաստանի հովանու ներքո միասնական հայկական պետության ստեղծման մասին:

Աշխ. Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, Գրիգոր Արծրունու աշխատությունները, հ.1, Թիֆլիս, 1904, Восточный вопрос, Тифлис, 1876.

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԼԲԵՐՏ ՀԱՅԿԻ

(1945-2012)

Ծնվել է Կոտայքի մարզի Վերին Ախտա (այժմ՝ Լեռնանիստ) գյուղում: 1970-ին ավարտելով Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը՝ աշխատանքի է անցել «Ճյուղային էկոնոմիկա» ամբիոնում՝ որպես ասիստենտ: 1974-ին պաշտպանել է թեկնածուական թեզը, իսկ 1993-ին «Տիպային տեխնոլոգիական գործընթացների օպտիմալացումը արդյունաբերությունում» թեմայով ատենախոսության համար ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան, նույն թվականին՝ պրոֆեսորի կոչում:

1975-ին տեղափոխվել է Երևանի նորաստեղծ ժողովրդական տնտեսության ինստիտուտ: 1988-ից եղել է արդյունաբերական արտադրության կազմակերպման և պլանավորման ամբիոնի վարիչ, 1991-ից մինչև 2010-ը ղեկավարել է «Մակրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում» ամբիոնը:

Աշխատանքները վերաբերում են միկրոէկոնոմիկայի կարգավորման, շուկայական տնտեսության կառավարման հարցերին:

«Экономические проблемы оптимальной организации типовых производственных процессов» գրքում ներկայացվում են տիպային գործընթացների կազմակերպման և օպտիմալ նախագծման տնտեսական հիմնահարցերի լուծման հետ կապված հասկացություններն ու մեթոդները: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է անցյալ դարի երկրորդ կեսին արդյունաբերական արտադրության աճի ապահովմանը ինչպես ինտենսիվ, այնպես էլ էքստենսիվ գործոնների հաշվին: Վերջինս ենթադրում էր գործող տեխնոլոգիական գործընթացների կատարելագործում, ներարտադրական ռեզերվների փնտրտուք՝ ժամանակակից տնտեսամաթեմատիկական մեթոդների, ԷՀՄ-ների լայնամասշտաբ կիրառման ուղիով: Տեխնոլոգիական գործընթացներին բնորոշ է այն, որ դրանք ունեն համապատասխան ապարատուրային ձևակերպում մեքենաների, սարքավորումների, տեխնոլոգիական և էներգետիկ կոմունիկացիաների համակարգի ձևով, ինչի պատճառով արտադրական գործընթացների օպտիմալ կազմակերպման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել ինչպես նախագծման, այնպես էլ շահագործման փուլերում: Այս առումով հեղինակը ցույց է տալիս, որ տիպային տեխնոլոգիական գործընթացների տնտեսական օպտիմալացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց տեխնոլոգիական, տեխնիկատնտեսական և տնտեսական ցուցանիշների միջև առկա բոլոր կապերն ու կախվածությունները: Օպտիմալացման հիմնահարցերի վերաբերյալ հետազոտական արդյունքները ներկայացվել են ԱՊՀ և այլ երկրներում տեղի ունեցած գիտաժողովներում:

Արշակյանի ուսումնասիրություններում հատկապես առանձնանում են ներդրումներին, ներդրումային ռիսկերին վերաբերող հարցերը («Ներդրումները և ներդրումային

ռիսկը, դրանց գնահատման և կանխատեսման հիմնահարցերը»): Ներդրումային գործունեության և ռիսկերի ուսումնասիրությունը ներկայումս տնտեսական հետազոտությունների գերակայող ուղղություններից մեկն է, քանի որ այն նշանակալի նախադրյալներ է ենթադրում ապահով ներդրումների և տնտեսական աճի համար: Յուրաքանչյուր երկրում իրականացվող բարեփոխումների փուլում կարևոր են ներդրումային միջավայրի բարելավմանն ու ներդրումային ռիսկի նվազեցմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը, քանի որ ռիսկայնության մակարդակը խնդիրներ է ստեղծում ինչպես ազգային, այնպես էլ օտարերկրյա ներդրողների համար: Թերևս սա է պատճառը, որ վերջին տարիների տնտեսագիտական վերլուծություններում առաջին հորիզոնականը պատկանում է այս հիմնահարցին: Սովորաբար ռիսկից խուսափելու կամ ռիսկի դիմելու պատրաստվածությունը պայմանավորված է ներդրողների սուբյեկտիվ վարքագծով, ընդ որում որոշ ներդրողներ ռիսկը համարում են բնական երևույթ և ազատ դիմում դրան: Նրանց ռիսկի գնալու փաստը բացատրվում է նրանով, որ նրանք շատ գոհունակություն են ստանում շահելիս, քան հուսախաբություն՝ կորուստներ կրելիս, մանավանդ որ վերջիններիս ի հայտ գալու հավանականությունները գրեթե հավասար են: Այս առումով Արշակյանը հանգամանորեն ներկայացնում է շուկայական տնտեսության առանձնահատկությունները և կարգավորման մեխանիզմները, ներդրումային ռիսկերի տեսակները, դրանց փոխադարձ կապվածությունը և եկամտաբերության ուղիները: Առանձին քննարկման առարկա է դարձրել օպտիմալ ներդրումային փաթեթների կազմման, ռիսկերի կառավարման և ռիսկայնության մեթոդները, սկզբունքները, ռիսկերի ճանաչման, բացահայտման, չափ-

ման և գնահատման ժամանակակից մեթոդները, դրանց կիրառական հիմնական առանձնահատկությունները և այդ համատեքստում ապահովագրական հարաբերությունների դերը: Մենագրության մեջ հեղինակը վերլուծության է ենթարկում նաև երկրի ներդրումային միջավայրի ռիսկայնության բաղադրիչները, ֆինանսական հոսքերի վրա շուկայական միջավայրի ռիսկերի ազդեցության գնահատումը, ինչպես նաև ֆինանսական հաստատությունների ռիսկայնության նվազեցման քաղաքականությունը և ուղղությունները:

Արշակյանը հեղինակ է «Պահանջարկը և առաջարկը շուկայական հարաբերությունների համակարգում», «Միկրոէկոնոմիկա» և այլ ուսումնական ձեռնարկների:

Աշխ. Экономические проблемы оптимальной организации типовых производственных процессов, Ер., 1986, Տնտեսական մրցակցությունը շուկայական էկոնոմիկայի համակարգում, Եր., 1998, Պահանջարկը և առաջարկը շուկայական հարաբերությունների համակարգում (ուսումնական ձեռնարկ), Եր., 2000, Միկրոէկոնոմիկա, Եր., 2003, Արդյունաբերական քաղաքականություն (կայացումը և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Դասախոսություններ, համահեղինակ), Եր., 2003, Ներդրումները և ներդրումային ռիսկը, դրանց գնահատման և կանխատեսման հիմնահարցերը, Եր., 2009 (համահեղինակ):

ԲԱԳՐԱՏՅԱՆ ՀՐԱՆՏ ԱՐԱՐԱՏԻ

(1958)

Ծնվել է Երևանում: 1975-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, 1979-ին՝ ավարտել Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: 1982-ին ընդունվել է ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրան, 1986-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2005-ին և 2007-ին՝ համապատասխանաբար Ռուսաստանի Ֆեդերացիայի և Ուկրաինայի բարձրագույն որակավորման հանձնաժողովների կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 1990-1993-ին եղել է ՀՀ կառավարության նախագահի առաջին տեղակալ, էկոնոմիկայի նախարար, 1991, 1993-1996-ին՝ ՀՀ վարչապետ, 1996-1997-ին՝ Արժույթի միջազգային հիմնադրամում խորհրդական, 1998-2006-ին աշխատել է Երևանի կոնյակի գործարանում՝ որպես փոխնախագահ, տնօրեն: 2007-ից Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի, Կիևի միջազգային համալսարանի պրոֆեսոր, 1997-ին արժանացել է միջազգային վալյուտային ֆոնդի պատվավոր դոկտորի կոչման: 2005-ից տնտեսագիտական համալսարանի պատվավոր դոկտոր է, 2015-ից ստացել է

պրոֆեսորի կոչում, 2016-ից Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի պատվավոր պրոֆեսոր է: 2012-ից՝ Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր:

Բագրատյանի հետազոտությունների շրջանակներն են՝ գիտատեխնիկական առաջընթաց, նյութական խրախուսման կատարելագործում, ձեռնարկությունների և միությունների գործունեության արժեքային գնահատում, հասարակություն և պետություն, ԱՊՀ երկրների հողային հարաբերությունների բարեփոխման հարցեր, գույքային հարաբերությունների պետական կարգավորում, ինովացիայի մակրոտնտեսական արդյունավետության և միկրոմակարդակում տնտեսական աճի հաշվառում, բանկային գործի, մարդկային ռեսուրսների կառավարման և այլ հարցեր:

1980-ական թվականներին նրա գիտական դիտարկումները վերաբերում էին գիտատեխնիկական զարգացման պայմաններում նյութական շահերի և տնտեսական օղակների խթանման կազմակերպմանը, մասնավորապես գիտատեխնիկական առաջընթացի և տնտեսական հարաբերությունների գործողության առանձնահատկությունների, ճյուղային ԳՀԻ և ԿԲ նյութական խթանման համակարգի և նոր տեխնիկայի ներդրման նյութական խրախուսման համակարգի կատարելագործմանը: Հ.Բագրատյանի «Պետությունը և հասարակությունը» մենագրության մեջ հիմնականը հասարակության զարգացման ցիկլային բնույթի գաղափարն է՝ պետական կառավարման կենտրոնացման և ապակենտրոնացման միտումների հերթագայությամբ: Վերջինս բխում է տնտեսական զարգացման հիմքը կազմող գիտատեխնիկական գործունեության առանձնահատկություններից: Հեղինակը համապատասխան վերլուծությունների արդյունքում ձևակերպում է պատմականության այն վեց սկզբունքները, որով ընթացել է հասարակության ընդհանուր էվոլյուցիան:

«Սկզբունք 1. Հասարակության զարգացման ցիկլային բնույթը և դրա հետ կապված ռեսուրսների պարբերական

կենտրոնացման ու ապակենտրոնացման օբյեկտիվ անհրաժեշտությունը ենթադրում են պետական կառավարման ձևերի ու մեթոդների այնպիսի հերթագայություն, որն իր ուղղվածությամբ պետք է համընկնի ցիկլի տվյալ ժամանակաշրջանին համապատասխան տատանումներին և լիովին բավարարի դրանից բխող պահանջները հասարակական-տնտեսական կյանքի կազմակերպման ասպարեզում:

Սկզբունք 2. Տվյալ հասարակության առաջադիմությունը և դինամիզմը կախված են ոչ միայն տիրապետող կառավարման ձևերի ու մեթոդների զարգացման ցիկլային միտումների հետ առկա ներդաշնակությունից, այլև հարակից հասարակության (հարևան պետության) մեջ առկա իրավիճակից (նկատի ունենք այս երկրորդ հասարակությունում այդ ներդաշնակության առկայությունը) և կախված վերջինիս ազդեցության չափերից (մեծությունից), ենթակա են կոռեկցիայի (սրբագրման)՝ նկատի ունենալով ընդհանուր օրինաչափությունների պահպանման անհրաժեշտությունը:

Սկզբունք 3. Պատմականության առաջին երկու սկզբունքների անխուսափելի բախման և անլուծելի հակասության առկայության պայմաններում հասարակության մեջ բովանդակային-օրինական պետական կառավարման ձևերն ու մեթոդները փոխարինում են ձևական ոչ օրինական ինստիտուտներով՝ կապված նոր գաղափարախոսության ձևավորման և երրորդ ուժի (կամ շարժման) վրա հասարակության զարգացման խնդիրների տեղափոխման հետ:

Սկզբունք 4. Սոցիալ-տնտեսական կյանքի պետականացումը, հասարակության մեջ մտնելով տվյալ հասարակության հիմքը կազմող մասնավոր սեփականության ինստիտուտի հետ, ի վերջո հանգեցնում է տվյալ քաղաքակրթության, հասարակության կամ պետության կորստին, եթե հասարակությունը չի կարողանում կազմակերպված

անցում կատարել դեպի մասնավոր սեփականության ինստիտուտի նոր կառուցվածքը:

Սկզբունք 5. Վերընթաց շարժի արդյունքում հասարակության մեջ ընդլայնված վերարտադրության ֆինանսավորման կուտակման աղբյուրը մակրոմակարդակից տեղափոխվում է միկրոմակարդակ և դրանով իսկ պայմանավորում հասարակության կազմակերպման մի տիպի հերթագայությունը մյուսով:

Սկզբունք 6. Հասարակության կազմակերպման ինստիտուտներին բնորոշ է էվոլյուցիայի այնպիսի ուղի, երբ իշխանության և սեփականության, մի կողմից, և պետական կառավարման ու տնտեսավարման, մյուս կողմից, ֆունկցիաներն իրարից տարանջատվելու, հեռանալու բացարձակ միտվածություն ունեն»:

«Հասարակությունը և պետությունը» մենագրության առաջին գիրքն իր շարունակությունը պիտի ստանար երկրորդ գրքում, որը պիտի լիներ առաջինում շարադրված տեսության կիրարկումը հայ ժողովրդի պատմության նկատմամբ, «թե որքանով են սոցիալ-տնտեսական կյանքի հիմնական ինստիտուտների էվոլյուցիայի օրինաչափություններն իրենց համարժեք փոփոխությունները գտել հայկական հասարակության զարգացման պատմության մեջ»: Այս իմաստով «Հայաստանը դարերի սահմանագծին» ուսումնասիրությունը միջանկյալ հրատարակություն է: Նրա քննության առարկան XX դարի 90-ական թվականների առաջին կեսին Հայաստանում իրականացված ռեֆորմների և դրանց հետագա ընթացքի հարցերն են:

«Հայաստանը դարերի սահմանագծին» աշխատության մեջ փորձում է վերլուծել հայոց ազգի քաղաքակրթական հետամնացության հիմնական պատմական պատճառները, ցույց տալ, թե որքանով են սոցիալ-տնտեսական կյանքի հիմնական հաստատությունների էվոլյուցիայի օրինաչափություններն իրենց համարժեք փոփոխությունները գտել հայ հասարակության զարգացման պատմության մեջ:

Նրանում քննարկվում են շուկայական տնտեսակարգի, տնտեսության պետական կարգավորման, համընդհանուր զարգացման միտումներ՝ Հայաստանի կապերը, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման, տնտեսական քաղաքականության և այլ հարցեր: Իսկ «Земельная реформа: вопросы теории и практики» մենագրության մեջ, ուրվագծելով աշխարհի բազմաթիվ երկրներում հողի նկատմամբ մասնավոր սեփականության տնտեսական էվոլյուցիայի պատմությունը, վերլուծության է ենթարկում Հայաստանում 1990-ականների սկզբների հողային ռեֆորմը և նրա ընթացքը: Ցույց է տրվում, որ հողի նկատմամբ մասնավոր սեփականությունը գյուղատնտեսության զարգացման միակ ձևն է: Իսկ պետական, եկեղեցական, համայնական սեփականության հանդիպող ձևերն արդյունավետ են միայն այն դեպքում, երբ դրանց հենքի վրա երկարատև պատմական հատվածում հիմք է նախապատրաստվում մասնավոր հողային սեփականության նոր էքսպանսիայի համար: Այսինքն՝ հողի սեփականության ոչ մասնավոր ձևերի դերը կայանում է հողի մասնավոր սեփականության զարգացման մեջ: Այդ գործընթացների անգիտությունը հանգեցնում է ոչ միայն ոչ ճիշտ որոշումների կայացման, այլև հղի է կորցնելու պետականությունը: Մասնավորապես հողային ռեսուրսների կենտրոնացումը պետության, եկեղեցու և խոշոր նախարարների ձեռքում պարբերաբար հանգեցրել է հայկական պետականությունը կորցնելուն:

Հ.Բագրատյանի «Интеграция Украіни на Россиі в еврапейськиі трудовоі просторі» մենագրությունը վերաբերում է Ուկրաինայի և Ռուսաստանի աշխատանքային շուկաների ինտեգրմանը եվրոպական աշխատանքային տարածքին:

Բագրատյանի գիտական հետաքրքրությունների բաղադրիչներից են ժամանակակից համաշխարհային (ֆինանսական) ճգնաժամի սկզբնապատճառները: Մասնա-

վորապես, որպես այդ ճգնաժամի հիմնական պատճառ, նա դիտարկում է կոմերցիոն բանկերի տնտեսության իրական հատվածում (արժեթղթերում) ներդրումների իրավունքը՝ առաջարկելով ՀՆԱ-ի հաշվարկման, տնտեսության ֆինանսական հատվածի մակրոմակարդակում ներդրման գնահատման մի մոտեցում, համաձայն որի անհրաժեշտ է համախառն ներքին արդյունքը ճշգրտել՝ հաշվի առնելով հասարակության կենտրոնացվածության մակարդակը, տնտեսության արտահանման ունակության ցուցանիշով, տնտեսության կառուցվածքի որակով, տարբեր տնտեսությունների փոխկապվածությամբ: Այդ առումով նշանակալի է «Введение в мегаэкономику: теория, методология, практика: монография» (К.: УБД НБУ, 2012, 158с.) աշխատությունը: Հեղինակները ցույց են տալիս, որ տնտեսագիտության մեջ առաջացել է նոր տեսության անհրաժեշտություն: երկու բազային տնտեսագիտական դիսցիպլինաների կողքին (միկրոէկոնոմիկա և մակրոէկոնոմիկա) ժամանակն է ճանաչել երրորդը՝ մեգաէկոնոմիկան: Այն մակրոէկոնոմիկայի միջազգային տնտեսագիտության բաժինը չէ: Մեգաէկոնոմիկան առաջացել է 20 դարի վերջերին, երբ ԱՀԿ վերջնական ձևավորմամբ ստեղծվել ապրանքների ու ծառայությունների միասնական, գլոբալ շուկա: Միևնույն ժամանակ ռեսուրսների (հանքահումքային, ֆինանսական) շուկան ապագլոբալացվել է, ինչն էլ առաջ է բերել ապահավասարակշռվածություն (դիսբալանս): 2008-2009թթ տնտեսական ճգնաժամը այդ դիսբալանսի դրսևորման մասնավոր ձև է: Մակրոտնտեսական հիմնական հասկացությունները մեգաէկոնոմիկայում այլ կերպ են ձևավորվում: Այսպես, մեգատնտեսական սպառման կորը ոչ թե գոգավոր է, այլ ուռուցիկ է: Մեգատնտեսության մեջ, հաճախ, ապրանքի գնի բարձրացումը հանգեցնում է դրա նկատմամբ սպառման աճի, իսկ մակրոտնտեսական առաջարկի կորը չունի ուղղահայաց տեղամաս (մեգատնտեսության մեջ արտադրական հզորու-

թյունների սահմանափակում չի կարող լինել): Մեգա-տնտեսության մեջ վարկավորման աղբյուրը ոչ թե ֆինան-սական միջոցների ավելցուկն է, այլ ապագա սերնդներից վերցրած պարտքը: Այստեղ չկա ու չի կարող լինել ազ-գային արժույթի լողացող փոխարժեք ավանդական առու-մով, քանզի խարսխային արժույթները (դոլար, եվրո, իեն և այլն) ենթակա են կամայական փոփոխության: Մեգա-տնտեսության մեջ խարսխային արժույթ ունեցող երկիրը հեշտությամբ կարող է իր երկրի ներքին պարտքը փո-խարկել այլ երկրի արտաքին պարտքի:

Աշխ. Материальное стимулирование научно-технического прогресса в промышленности, Ер., 1989, Հասարակությունը և պե-տությունը, Եր., 1999 (ռուսաց լեզվով այն լույս է տեսել Մոսկվայում 2000-ին), Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսա-կան իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Եր., 2000, Земельная реформа: вопросы теории и практики, Ер., 2003, Հա-յաստանը դարերի սահմանագծին, Եր., 2003, Макроэкономика, курс лекции, Киев, 2009 (համահեղինակ, ուկրաիներեն), Экономический кризис 2008-2009гг. и Армения, Е., 2010 Ղարաբաղ ինքնիշխանություն №36, 37, 38, 39, Введение в мегаэкономику: теория, методология, практика, К., 2012 (համահեղինակ), Мегаэкономика и глобальные экономические проблемы. Учебное пособие, Е., 2013, Megaeconomics and global macroeconomic problems: tutorial. K., 2013 (in English) (գիրքը 2013թ. Ուկրաինայում ճանաչվել է դասագիրք):

ԲԱԴԱԼՅԱՆ ՍՄԲԱՏ ԱՂԱԼՈՅԻ

(1907-1986)

Ծնվել է ՀԽՍՀ Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրի տարրական դպրոցում, ապա ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը, իսկ 1934-ին՝ Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի պատմագրական ֆակուլտետը: Սիսիանի դպրոցներում աշխատել է որպես ուսուցիչ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1943-47-ին սովորել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում: Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1963-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան, իսկ 1964-ին՝ պրոֆեսորի կոչում: 1971-78-ին եղել է ԵՊՀ-ի քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ: Նրա առաջին աշխատությունները վերաբերում էին մտավոր և ֆիզիկական աշխատանքների հակադրությունների և նրանց էական տարբերությունների վերացման, սոցիալիստական սեփականության ձևերի, սոցիալիզմի ժամանակ արտադրության ու սպառման և այլ հարցերին:

1962-ին լույս է տեսնում «Проблема преодоления существенного различия между городом и деревней в период строительства коммунизма» մենագրությունը (դոկտորական ատենախոսությունը): Նրանում քաղաքի և

գյուղի միջև էական տարբերությունների վերացման համար վճռական նախադրյալներ են կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, տնտեսական կապերի ձևերի կատարելագործումը, քաղաքի և գյուղի միջև նյութական և կուլտուր-կենցաղային պայմանների մերձեցումը:

Սոցիալիստական սեփականության ձևերի զարգացման, բաշխման հարաբերությունների կատարելագործման, էկոնոմիկայի գիտական կառավարման, սոցիալիզմի տնտեսական օրենքների և կատեգորիաների օգտագործման հարցերն են քննարկվում նրա «Զարգացած սոցիալիզմի էկոնոմիկայի հիմնական գծերի մասին» աշխատության մեջ, իսկ «Սոցիալիզմի տնտեսական օրենքների օգտագործումը տնտեսավարման պրակտիկայում» մենագրության առարկան սոցիալիզմի տնտեսական օրենքների օբյեկտիվ բնույթի, տնտեսական զարգացման մեջ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների փոխադարձ կապի, սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի, ժողովրդական տնտեսության պլանաչափ, համամասնական զարգացման օրենքի, ըստ աշխատանքի բաշխման, հասարակական աշխատանքի արտադրողականության անշեղ աճի օրենքի, սոցիալիստական կուտակման օրենքի և արժեքի օրենքի գործողության խնդիրներն են:

Ս.Բաղալյանը 1967-ին արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Աշխ. Մտավոր և ֆիզիկական աշխատանքների միջև եղած հակադրության ոչնչացման և նրանց միջև եղած էական տարբերությունների վերացման մասին, Եր., 1959,Սոցիալիստական սեփականության ձևերի մասին, Եր., 1960, Проблема преодоления существенного различия между городом и деревней в период строительства коммунизма, Ер., 1961, Զարգացած սոցիալիզմի էկոնոմիկայի հիմնական գծերի մասին, Եր., 1975, Սոցիալիզմի տնտեսական օրենքների օգտագործումը տնտեսավարման պրակտիկայում, Եր., 1982:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԵՎՈՒՇ ՎԱՀԱՆԻ

(1939)

Ծնվել է Աշտարակի շրջանի Կարբի գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1959-ին ավարտել է Երևանի գյուղատնտեսական տեխնիկումը, իսկ 1967-ին՝ գերազանցությամբ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Ժողովրդական տնտեսության պլանավորում» մասնագիտության բաժինը: Նույն տարում ընդունվել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Ժողովրդական տնտեսության պլանավորում» մասնագիտության ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցնում սկզբում որպես ասիստենտ, հետո՝ ավագ դասախոս: 1975-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան՝ շարունակելով աշխատել Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի նույն ամբիոնում, 1980-ին ստացել է դոցենտի կոչում: 2001-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, ստացել դոկտորի գիտական աստիճան, 2005-ին՝ պրոֆեսորի կոչում: Աշխատում է ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնում:

Գ.Բաղդասարյանի աշխատանքները հիմնականում վերաբերում են գնագոյացման, պահանջարկի ու առա-

ջարկի, հարկաբյուջետային քաղաքականության և ֆինանսական կարգավորման հարցերին:

Գ.Բաղդասարյանը մի շարք ուսումնական ձեռնարկների հեղինակ է, որոնցում փորձ է արվել ամբողջական ձևով ներկայացնել գնագոյացման հիմնախնդիրները տնտեսավարման նոր պայմաններում և նրա առանձնահատկությունները միջազգային առևտրում:

Աշխ. Գնագոյացումը շուկայական տնտեսությունում (ուսումնական ձեռնարկ), Եր.,1998: Պահանջարկը և առաջարկը, դրանց ճկունությունը, Եր., 1999 (համահեղինակ), Գնագոյացման տեսական հիմունքները, Եր., 2000, Մակրոտնտեսական կարգավորում, թեստերի և խնդիրների ժողովածու, Եր., 2003, (համահեղինակ), Գնագոյացումը միջազգային առևտրում (ուսումնական ձեռնարկ), Եր., 2005, Գնագոյացումը շուկայական տնտեսության պայմաններում, Եր., 2012, Տնտեսության պետական կարգավորում Եր., 2015, (համահեղինակ):

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ ՎԱՂԻՆԱԿԻ

(1961)

Ծնվել է Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: 1978-ին ավարտել է Վանաձորի թիվ 19 միջնակարգ դպրոցը: 1979-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի «Մաթեմատիկա» բաժինը, որն ավարտել է 1984-ին: Հաջորդ չորս տարիներին աշխատել է Վանաձորի «Արդավտոմատիկա» ԳԱՄ-ում՝ որպես գիտաշխատող: 1988-ին ընդունվել է ՀՀ ԳԱԱ հաշվողական կենտրոնի ասպիրանտուրան, 1992-ին պաշտպանել է թեկնածուական թեզը և ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1991-ին դասավանդել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ամբիոնում, 1992-1993-ին աշխատել է Վանաձորի կահույքի արտադրական միավորումում՝ սկզբում որպես փոխտնօրեն, հետո՝ տնօրեն: 1998-ին ավարտել է Երևանի արտաքին տնտեսական կապերի և կառավարման ինստիտուտի տնտեսահիրավագիտության ֆակուլտետը: Որպես ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր եղել է. 1995-99-ին «Բարեփոխումներ» պատգամավորական խմբի անդամ, 1999-03-ին՝ ֆինանսավար-

կային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, 2003-07-ին՝ նույն հանձնաժողովի փոխնախագահ, 2012-ից՝ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի Եվրամիություն-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովների անդամ: 2003-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, 2006-ին ստացել է պրոֆեսորի կոչում: 1986-ից դասախոսում է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում, իսկ 1994-ից նույն ինստիտուտի «Ինֆորմատիկայի և տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների և մոդելավորման» ամբիոնի վարիչն է:

Բաղդասարյանի ուսումնասիրության ոլորտը հիմնականում ընդգրկում են արտագաղթի և նրա սոցիալ-տնտեսական հետևանքների, միգրացիոն հոսքերի կարգավորման հարցերը:

Վ.Բաղդասարյանը «Արտագաղթը և նրա սոցիալ-տնտեսական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում» մենագրության մեջ վերլուծության է ենթարկում Հայաստանի բնակչության արտագաղթի օրինաչափությունները, աշխատանքի տեղաշարժերը, ինչպես նաև իրականացնում է արտագաղթի սոցիալական ու տնտեսական հետևանքների հետազոտություն: Ելնելով երկրի զարգացման առանձնահատկություններից՝ նա փորձում է վերլուծել արտագաղթի՝ Հայաստանի տնտեսության վրա ունեցած ազդեցությունը: Իր հետագա աշխատանքներում Վ.Բաղդասարյանը քննության է ենթարկում միգրացիոն հոսքերը՝ փորձելով մաթեմատիկայի լեզվով մոդելավորել միգրացիոն հիմնախնդիրները, հիմնավորել տնտեսական աճին նպաստող միգրացիոն հոսքերի կարգավորման իրավական հիմքերը («Հայաստանի Հանրապետությունից միգրացիոն հոսքերի

կարգավորման մի քանի դրույթներ»), ինչպես նաև վերլուծել Հայաստանի Հանրապետության տնտեսական և ազգագրական գործընթացները, տալով դրանց բնութագրող մոդելները և քաղաքական գնահատականները, միգրացիոն հոսքերի մոնիթորինգի և մենեջմենթի ընդունման դինամիկ մոդելը, որի լուծման համար մշակվել են ալգորիթմ և լավարկման չափանիշ:

Աշխ. Հայաստանի միգրացիայի մենեջմենտի և ռազմավարության վերլուծության հարցեր, Եր., 1996 (համահեղինակ), Մակրոէկոնոմիկա (մակրոտնտեսական կամ ընդհանուր տնտեսական հավասարակշռություն, մաս I), (ուսումնական ձեռնարկ) Եր., 2006 (Վ.Հարությունյանի համահեղինակությամբ), Մակրոէկոնոմիկա (Պետական բյուջե. եկամուտներ և ծախսեր, մաս II), (ուսումնական ձեռնարկ) Եր., 2006 (Վ.Հարությունյանի համահեղինակությամբ), Արտագաղթը և նրա սոցիալ-տնտեսական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2003, Анализ экономических и демографических процессов в Армении в переходный период, Е., 2006 (в соавторстве):

ԲԱՅԱԴՅԱՆ ԱՇՈՏ ՀԱԿՈԲԻ

(1946)

Ծնվել է ՀԽՍՀ Սպիտակի շրջանի Մեծ Պարնի գյուղում: 1965-ին ավարտել է տեղի դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Տնտեսագիտական կիբեռնետիկա» բաժինը և այն ավարտել 1970-ին: 1985-ին ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հեռակա ասպիրանտուրայի «Վիճակագրություն» բաժինը, որտեղ էլ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: Նրա հետագա գործունեությունը նշանավորվել է տեսականի և կիրառականի զուգորդման արգասաբեր ճանապարհով. 1970-75-ին՝ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես տնտեսագետ-ինժեներ, 1975-84-ին՝ Հայաստանի գյուղատնտեսական նախարարության հաշվողական կենտրոնում բաժնի վարիչ, 1993-96-ին՝ վարչությունների պետ ՀՀ նյութական ռեսուրսների նախարարությունում, ՀՀ կենտրոնական բանկում և Հայագրոբանկում, 1996-98-ին՝ ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Հայկական գյուղատնտեսական ակադեմիայում: 1998-ից՝ նույն ակադեմիայի նորաստեղծ «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի վարիչ, 2013-ից՝ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում

որպես բաժնի վարիչ՝ համատեղելով «Ֆինանսներ և էկոնոմիկա» ամենամսյա հանդեսի գլխավոր խմբագրի պարտականությունները: Ա.Բայադյանը ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից 2014 և 2016 թվականներին գիտատեխնիկական և գիտական թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների համար հայտարարված հանրապետական մրցույթի հաղթող է:

2002-ին «Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության գնահատման մեթոդաբանական հարցերը» հետազոտության համար ստանում է տնտեսագիտության դոկտորի աստիճան, իսկ 2004-ին՝ պրոֆեսորի կոչում: Նշված հետազոտության հիմնական դրույթներն արտացոլվել են «Ձեռնարկությունների ֆինանսական դրության գնահատումը» մենագրության մեջ: Նրանում առաջին անգամ ամբողջական տեսքով վերլուծվում և գնահատվում են ՀՀ-ում ձեռնարկությունների (տնտեսավարող սուբյեկտների) ֆինանսական դրությունը, լուսաբանվում են մեթոդաբանական հարցեր՝ կապված ֆինանսական հաշվետվությունների փոխկապվածության, հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների վերլուծության, ֆինանսական կայունության, գործարար ակտիվության և իրացվելիության (վճարունակության), սնանկացման ու ռիսկի գնահատման հետ:

Տնտեսության արմատական փոփոխությունները ծայր են տվել բազմաթիվ գործընթացների և կառուցվածքների, որոնք պահանջում են միանգամայն նոր մոտեցումներ: Բնականաբար, առաջացել է այդ երևույթները նկարագրող համապատասխան հասկացությունների անհրաժեշտություն: Ա.Բայադյանի «Ֆինանսավիճակագրական» և երկրորդ լրամշակված «Տնտեսագիտական բառարանները» ունեն որոշակի ուղղվածություն և կոչված են տնտեսության որոշակի ոլորտներին առնչվող, հաճախակի օգտագործվող հասկացությունների բացատրությանը և ներառում են ֆինանսների ընդհանուր տեսության, տնտեսվարող սուբ-

յեկտների ֆինանսների և վարկավորման գործընթացների, դրամաշրջանառության, բանկային և հարկային համակարգերի, ապահովագրական գործի, հաշվապահական հաշվառման և արժեթղթերի շուկային բնորոշ կատեգորիաների ու հասկացությունների իմացությունը:

Տերմինաբանությունը բարդ գործընթաց է և երկարատև ժամանակ է պահանջում գտնելու ազգային լեզվին համահունչ համարժեքները: Ժամանակը հաճախ որոշակի իմաստ է դնում այս կամ այն հասկացության մեջ, քան նրա զուտ բառակապակցային արտահայտությունն է: Այս իմաստով նշված բառարանները կազմված են աննախապաշար ազատությամբ, սակայն առանց ծայրահեղությունների՝ ուղեցույց ունենալով հայ տնտեսագիտության բառապաշարը հարստացնելու արդի հասկացություններով: Եվ, որ շատ կարևոր է, հասկացությունների բացատրությունը կատարված է գործող նորմատիվային-իրավական ակտերին համապատասխան: Նա մի շարք ուսումնական ձեռնարկների, ֆինանսական, ֆինանսավիճակագրական բառարանների և մեթոդական ցուցումների հեղինակ է, որոնք, զուտ բացատրական լինելուց բացի, ներառում են նաև այնպիսի ցուցանիշների համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու տնտեսվարող սուբյեկտի ֆինանսատնտեսական դրությունը: Նրա հեղինակած «Գյուղատնտեսական էկոնոմիկայի հասկացությունների և սահմանումների բացատրական բառարանը (գերմաներեն, անգլերեն, ռուսերեն, հայերեն լեզուներով) ներկայացնում է հատկապես գյուղատնտեսական արտադրական գործընթացների գնահատման, տնտեսվարող սուբյեկտների գործունեության, արտադրական պլանավորման, ֆինանսավորման և ներդրումների ոլորտի առավել կիրառական բացատրությունները:

«ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» մենագրության քննության առարկան պարենային ապահովվածության մակարդակի բարձրացման, սննդամթերքի անվտան-

գության և հիմնական մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովման հարցերն են: «ՀՀ ագրարային ոլորտի ֆինանսական միջոցների կազմավորմանը, օգտագործմանն ու բարելավման ուղիների» հիմնախնդիրներին է նվիրված մի այլ մենագրություն: Խոսքը վերաբերում է ագրարային ոլորտի ֆինանսատնտեսական գործունեության և ենթակառուցվածքների, ֆինանսական միջոցների կազմավորման և օգտագործման, գործունեության բարելավման հեռանկարներին և ուղիներին:

Հանրապետությունում պետական պարտքի անմիջական կառավարումը սկսվել է իրականացվել 2000-ից: Սույն հարցի քննությունն է ակնկալում Ա.Բայադյանի «Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» մենագրությունը (համահեղինակ՝ Հ.Մարկոսյան): Նրանում միջազգային փորձի պատկերի վրա վերլուծություններ է պարունակում պետական պարտքի կառավարման նպատակների, մեթոդների, պարտքային բեռի գնահատման, ռիսկերի վերաբերյալ՝ դրանք կոնկրետացնելով հանրապետության տնտեսական վերափոխումների ընթացքին համապատասխան, առաջադրում առաջարկություններ իրավական հիմքերի կատարելագործման և ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ. ինչպես օրինակ՝ այն անհարթությունների և անորոշությունների առումով, որոնք առկա են պետական պարտքի նպատակների, թափանցիկության, տեղեկատվության հետ կապված, կամ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունից բացի, դիտարկելու պետական պարտքի այլ բնութագրիչների սահմանային մեծությունների օրենսդրորեն ամրագրման անհրաժեշտությունը, որոնցից են՝ պետական պարտքի արտարժութային և արտոնյալության կառուցվածքը, ինչպես նաև արտաքին պարտքերին պարտք հարաբերակցությունը: Աշխատության մեջ տրվում է պետական պարտքի ժամանակագրական վերլուծությունը 2000-2014թթ. համար, ինչպես նաև կանխատեսումներ են արվում սպասվող մի-

տումների մասին, որը ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման խորհուրդ ունի:

Աշխ. Տնտեսվարող սուբյեկտների գործունեության ֆինանսական վերլուծության անհրաժեշտությունը, Եր., 1999, Տնտեսվարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծությունը, Եր., 2000, Ֆինանսական հաշվառումը ագրոբիզնեսում, Եր., 2000 (համահեղինակ): Ֆինանսական կայունության, գործարար ակտիվության և իրացվելիության գնահատման ցուցանիշներն ու դրանց հաշվարկման մեթոդիկան, Եր., 2001, Տնտեսվարող սուբյեկտների սնանկացման և ռիսկերի գնահատման մեթոդիկան, Եր., 2001, Ձեռնարկությունների ֆինանսական դրության գնահատումը, Եր., 2002, 2006, Ֆինանսական բացատրական բառարան, Եր., 2004, Ֆինանսական վերլուծություն, Եր., 2008, Ֆինանսա-վիճակագրական բացատրական բառարան, Եր., 2008: Բիզնես (գործարարության) պլան (ուսումնամեթոդական ձեռնարկ), Եր., 2010 (համահեղինակ՝ Ա.Ա.Բայադյան), Բյուջետային կազմակերպությունների ֆինանսներ (ուս. համառոտ դասընթաց), Եր., 2010 (համահեղինակ՝ Վ.Մ.Կարճիկյան), Գյուղատնտեսական էկոնոմիկայի հասկացությունների և սահմանումների բացատրական բառարան, Եր., 2010 (համահեղինակ), ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, Եր., 2013, Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2015 (համահեղինակ), Տնտեսագիտական բառարան, Եր., 2014, Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում, Եր., 2016, Ֆինանսների ընդհանուր տեսություն. համառոտ ուսումնական ձեռնարկ (համահեղինակներ՝ Ա.Բայադյան, Ս.Մկրտչյան), Եր., 2016:

ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ՋԱՔԱՐԵ ԳԵՎՈՐԳԻ

(1895-1971)

Ծնվել է Թիֆլիսում, գեղանկարիչ Գևորգ Բաշինջաղյանի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա մեկնել Ռուսաստան, սովորել Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1917-ին ավարտել է համալսարանը, վերադարձել Թիֆլիս, աշխատել դատական մարմիններում, 1921-ին նշանակվել է կարևորագույն գործերի քննիչ, այնուհետև՝ ՎԽՍՀ Գերագույն հեղափոխական տրիբունալի հետաքննչական բաժնի պետ:

1923-ին ավարտել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակական գիտությունների, 1933-ին՝ Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետը: Մինչև 1936-ը աշխատել է Անդրկովկասի երկրամասային ժողովրդական կոմիսարների խորհրդում: 1936-ին տեղափոխվել է Հայաստան, աշխատանքի անցել ՀԿԿ Կենտկոմում, ՀԽՍՀ արդարադատության ժողովրդական կոմիսարիատում: Շուրջ 45 տարի Թիֆլիսի, Մոսկվայի և Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդել է քաղաքատնտեսություն: 1936-ից մինչև կյանքի վերջը գլխավորել է Երևանի պետական համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնը:1937-ին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Միաժամանակ 1947-1949-ին եղել է Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր գիտական աշխատանքների գծով, իսկ 1956-1957-ին՝ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան: 1937-ին նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

Բաշինջաղյանի գիտական և գիտահանրամատչելի գրքերը, գրքույկներն ու հոդվածները վերաբերում են տնտեսագիտության, գրականության, արվեստի և մշակույթի տարբեր ոլորտներին:

1945-48-ին խմբագրել է Արտասահմանի հետ կուլտուրական կապի հայկական ընկերության օրգան «Սովետական Հայաստան» ամսագիրը: Առանձին գրքերով լույս են տեսել «Կարլ Մարքս. կյանքը և գործը» և «Ֆրիդրիխ Էնգելս. կյանքը և գործը» մենագրությունները, որոնցում ուրվագծվում են սոցիալիստական մտքի երկու հայտնի ներկայացուցիչների գործունեությունն ու հայացքները: Նա եղել է «Քաղաքատնտեսության ձեռնարկի» համահեղինակներից:

Զ.Բաշինջաղյանը 1958-ին արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Աշխ. Կարլ Մարքս. կյանքը և գործը, Եր., 1968,Ֆ.Էնգելս. կյանքը և գործը, Եր., 1971, Քաղաքատնտեսության ձեռնարկ, Եր., 1971 (համահեղինակներ՝ Վ.Գաբուջյան, Գ.Ղարիբյան, Վ.Աղուզումցյան, Ս.Զուրաբյան):

ԲԵՆՈՒՆԻ ՀՄԱՅԱԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ

(1897-1983)

Ծնվել է Կարսում: 1923-ին ավարտել է Դնեպրոպետրովսկի լեռնային ինստիտուտը: 1929-31-ին աշխատել է Կարաբաշի պղնձաձուլական կոմբինատում՝ որպես գլխավոր ինժեներ, իսկ 1932-37-ին՝ «Ունիպրոմեդ» (ք.Սվերդլովսկ) ինստիտուտի գլխավոր ինժեներ: 1938-ից աշխատել է Գունավոր մետալուրգիայի արդյունաբերության համամիութենական ակադեմիայում՝ որպես ամբիոնի վարիչ և ապա ֆակուլտետի դեկան: Պրոֆեսորի կոչում ստացել է 1939-ին, տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան՝ 1941-ին: 1941-ից, շուրջ քառասուն տարի, ղեկավարել է Ուրալի (Սվերդլովսկ) պոլիտեխնիկական ինստիտուտի ինժեներատնտեսագիտության ֆակուլտետի գունավոր մետալուրգիական ձեռնարկությունների էկոնոմիկայի և կազմակերպման ամբիոնը:

Աշխատությունները նվիրված են մետալուրգիական ձեռնարկությունների էկոնոմիկայի և կազմակերպման հարցերին:

Նրա բազմաթիվ աշխատությունների քննության առարկան եղել են նոր ձեռնարկությունների նախագծման, տեխնիկական լուծումների տնտեսական նպատակահարմարության, հումքային բազայի ընտրության, արտադրական և տնտեսական գործունեության, աշխատանքի արտադ-

ողողականության, ներարտադրական ռեզերվների օգտագործման, արտադրանքի թողարկման ու իրացման, ինքնարժեքի, շահութաբերության ու ֆինանսների և շատ այլ հարցեր: Իսկ «Математические методы в планировании и управлении цветной металлургии» աշխատությունն առաջին փորձն էր, որում համակարգված շարադրվել են գունավոր մետալուրգիայում տնտեսամաթեմատիկական մեթոդների և էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգտագործման նշանակությունն ու հիմնական ուղղությունները:

Նշանակալից է Ա.Բենունու դերը ԽՍՀՄ բուհերի համար գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների կազմակերպման և պլանավորման վերաբերյալ դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման գործում:

Նա եղել է ՌՍՖՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ:

Աշխ. Скоростные методы проведения горизонтальных выработок, Свердловск - Москва, 1946, Методы работы новаторов – проходчиков Урала, Свердловск - Москва, 1951, Выявление и использование производственных резервов цветной металлургии, Свердловск, 1962, Технический прогресс и повышение производительности труда в цветной металлургии СССР, М., 1963 (в соавторстве), Технико-экономические расчеты в цветной металлургии (учебное пособие), М., 1964, Организация и планирование предприятий цветной металлургии (учебник), М., 1971, (в соавторстве), Рост производительности труда – важнейшая задача предприятий цветной металлургии, М., 1973, Математические методы в планировании цветной металлургии, М., 1974, (в соавторстве), Анализ производственной и хозяйственной деятельности горнообогатительных предприятий, М., 1976, (в соавторстве), Экономическое обоснование технических решений в цветной металлургии, М., 1976, Организация, планирование и управление на предприятиях цветной металлургии (учебник), М., 1986 (в соавторстве).

ԲՈՍՏԱՆՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ

(1949)

Ծնվել է Երևանում: 1966-ին Մ.Աբեղյանի անվան մաթեմատիկական թեքումով միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետ, որն ավարտել է 1971-ին: Նույն տարում որպես ավագ ինժեներ աշխատանքի է անցել Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, որտեղ մասնակցել է էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ստեղծմանն ու կատարելագործմանն ուղղված աշխատանքներին: Այդ ընթացքում հրապարակվել է նրա առաջին գիտական աշխատանքը՝ հաշվիչ տեխնիկայի հիշող սարքերում նուրբ մասնագիտական թաղանթների օգտագործման հետ կապված խնդիրների վերաբերյալ:

1974-ին ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ սիբիրյան բաժանմունքի տնտեսագիտական ինստիտուտի ասպիրանտուրան, 1979-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1978 թվականից Վ.Բոստանջյանն իր աշխատանքային գործունեությունը շարունակել է Հայաստանի պետպլանի Տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտում, որտեղ 15 տարիների ընթացքում անցել է ավագ գիտաշխատող-սեկտորի

վարիչ-գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն աշխատանքային ուղին: Այդ ընթացքում իրականացված հետազոտությունների հիման վրա 1993-ին «Экономические основы формирования структурной политики в материальном производстве Республики Армении» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

Վ.Բոստանջյանի գիտական կենսագրության մուտքի առումով հատկապես նշանակալից էին 1970-ական թվականների վերջերը: Հայտնի է, որ 1960-ական թվականներին արևմուտքում սկսեցին արագորեն զարգանալ համակարգային վերլուծության մեթոդները՝ ուղղված բարդ և ռեսուրսատար ծրագրերի մշակման և իրականացման հիմնախնդիրների լուծմանը: Հայ տնտեսագետներից այդ ուղղությամբ ուսումնասիրություններն իրականացրել են Վ.Բոստանջյանն ու Վ.Թորոյանը: Միութենական և հանրապետական գիտական մամուլում հրապարակվեցին Բոստանջյանի հետազոտությունները, ուսումնասիրության առարկա դարձնելով համալիր տնտեսական ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ նպատակային համակարգերի ձևավորման, դրանց մոդելավորման տարածաշրջանային զարգացման ծրագրերում ճյուղային փոխգործակցության, ինչպես նաև այդ առումով ժողովրդատնտեսական զարգացման տեսանկյունների հարցերը: Նշված ուղղություններով կատարված հետազոտությունների համար Վ.Բոստանջյանը 1981-ին արժանացել է տնտեսագիտության գծով Համամիութենական մրցույթի դափնեկրի կոչման:

Համակարգային վերլուծության, տարածաշրջանային նպատակային ծրագրերի մշակման և այդ գործընթացներում տնտեսաչափական մոդելների ներդրման ուղղություններով ստացված արդյունքների համար 1978 թվականին Վ.Բոստանջյանն ընդգրկվեց ԽՍՀՄ ԳԱ սիբիրյան բաժանմունքի Տնտեսագիտության ինստիտուտի կողմից ակադեմիկոս Ա.Գ.Աղանբեգյանի ղեկավարությամբ իրականացվող Արևմտյան Սիբիրի նավթագազատար տարածաշրջանի

և Կուբայի Հանրապետության Պինոս կղզու տնտեսական յուրացման համար համալիր ծրագրերի մշակման նպատակով ստեղծված աշխատանքային գիտական խմբի կազմում, որտեղ Վ.Կրյուչկովի հետ միասին մշակեցին հիշյալ ծրագրերի հիմքում դրված բազմամակարդակային տնտեսաչափական մոդելների համակարգը: Վերջինիս կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ ըստ դրանում տնտեսական գործընթացների նկարագրման նպատակով առաջարկված մոտեցման, ի տարբերություն այդ ուղղությամբ նախկինում իրականացված աշխատանքների, հեղինակները լայնորեն օգտագործեցին ցանցային և դիսկրետ մոդելավորման սկզբունքներն ու մեթոդները, որոնք ապահովում էին իրականում ընթացող պրոցեսների բնութագրման առավելագույն համարժեքություն: Նշված հարցերի վերաբերյալ ԽՍՀՄ ԳԱ կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտի կողմից կազմակերպված «Համամիութենական կոնֆերանսին» Բոստանջյանի կարդացած զեկուցման մեջ բարձրացրած հարցերը և հետագա ուսումնասիրություններն իրենց արտացոլումն են գտել 1989թ. հրապարակված կոլեկտիվ մենագրությունում, որտեղ հետազոտության առարկան տարածաշրջանային հեռանկարային պլանավորման և կանխատեսման մեթոդաբանության ձևավորման հարցերն էին: Աշխատանքում համակողմանիորեն ուսումնասիրվել են խոշոր տարածքային ծրագրերի մշակման, ինչպես նաև տարածքային և ճյուղային որոշումների համաձայնեցման հիմնախնդիրները: Դրանում հատուկ ուշադրության են արժանացել միութենական հանրապետությունների տնտեսությունների զարգացման համակարգային մոդելավորման և տարածքային համամասնությունների օպտիմալացման հարցերը:

Միութենական հանրապետությունների ժողովրդական տնտեսության զարգացման երկարաժամկետ ծրագրերի ձևավորման և դրանցով ենթադրվող գործընթացների համակարգային մոդելավորման ուղղությամբ Վ.Բոստանջյանի

կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները զեկուցվել և հրապարակվել են Կիևում, Տալլինում, Իրկուտսկում և այլն:

Բոստանջյանը 1993-ին հրավիրվել է աշխատանքի ՀՀ Գերագույն խորհրդի, իսկ հետո Ազգային ժողովի տնտեսագիտական վերլուծության վարչություն՝ որպես վարչության պետ: Օրենսդիր մարմնում ակտիվ մասնակցություն է ունեցել կարևորագույն օրենքների նախագծերի մշակմանը, իրականացրել է մասնագիտական խորհրդատվություն, օրինագծերի համակողմանի փորձաքննություն, սոցիալ-տնտեսական քաղաքականության վերաբերյալ համալիր վերլուծություններ: 1994-ին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության կողմից ընտրվել է ՀՀ կենտրոնական բանկի վարչության անդամ՝ մասնակցելով հանրապետության դրամավարկային քաղաքականության մշակմանն ու ֆինանսաբանկային համակարգի զարգացման օրենսդրահիրավական դաշտի ձևավորմանն ուղղված աշխատանքներին: 1998-2000-ին հանդիսացել է ՀՀ առևտրի և արդյունաբերության նախարարության կոլեգիայի անդամ: Հանրապետության էներգետիկ համակարգի զարգացմանը, ինչպես նաև դրա անվտանգությանը նվիրված գիտական հետազոտությունների համար 1997-ին ընտրվել է ՌԴ Բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, 2007-ին ընտրվել է ՀՀ ինժեներական ակադեմիայի, իսկ 2010-ին Միջազգային ինժեներական ակադեմիայի անդամ: 1999-ից անընդմեջ ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, եղել է տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ: Նա հեղինակ և համահեղինակ է մի քանի տասնյակ օրենսդրական նախաձեռնությունների, որոնցից հատկանշական են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Աղետի գոտու վերականգնման մասին», «Սահմանամերձ տարածքների մասին», «Աշխատանքի վարձատրության մասին» և այլ օրենքներ: Հետազոտական աշխատանքներին զուգահեռ

զբաղվել է գիտամանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով հանրապետության տարբեր բուհերում, իսկ 2003-07-ին՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսահաշվային» ամբիոնի վարիչ: Նա եղել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի (2006-2020թթ.) տնտեսական հայեցակարգի ղեկավար, «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» ՀՀ հողերի միավորման և այլ ծրագրերի ղեկավար: 2012-ից՝ ԵՊՀ պրոֆեսոր:

Բոստանջյանը տնտեսական վերափոխումների կարևոր ուղղություններից մեկը համարում է հարկաբյուջետային և դրամավարկային ոլորտների բարեփոխումները, մասնավորապես հարկային և բյուջետային քաղաքականությունների արդյունավետության բարձրացումը, պետական ֆինանսների համակարգի կատարելագործումը, պետական պարտքի նպատակամետ կառավարումը և այլն: Վ. Բոստանջյանի «Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» աշխատանքում ցույց է տրվում, որ չնայած տնտեսական վերափոխումների անցած փուլում այդ ոլորտում իրականացված խոշորամասշտաբ միջոցառումներին, ըստ էության որպես ուղղակի արդյունք պետք է համարել հանրապետության հարկաբյուջետային համակարգի կայացումը: Դրանով հանդերձ, համակարգը դեռևս չի կարողանում ապահովել տնտեսության բնականոն գործունեությունը՝ նպաստելով երկրում տնտեսական աճի կայուն և բարձր տեմպերի ապահովմանը: Գրքում վերլուծության են ենթարկվում տնտեսության զարգացման գործում հարկաբյուջետային համակարգի, հարկերի էության ու դերի, բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների, հարկաբյուջետային համակարգի օրենսդրահիրավական և կազմակերպական հիմնահարցերը ՀՀ-ում:

Նրա համահեղինակությամբ է մշակվել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, այն կար-

գավորող հարաբերությունների վերաբերյալ հրապարակել մի շարք հետազոտություններ:

Բոստանջյանի հետազոտական շրջանակներին են վերաբերում տեղական ինքնակառավարման, տնտեսական ոլորտների իրավահարաբերությունների կարգավորման, տնտեսական մրցակցության, տնտեսական անվտանգության, ֆինանսական կայունության, հարկային և բյուջետային քաղաքականության, էներգո համակարգերի արդիականացման, փոքր և միջին ձեռներեցության զարգացման և այլ հարցեր՝ ուղղված նոր պայմաններում զարգացման արդյունավետ ուղիների բացահայտմանը և տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորմանը, որոնց արդյունքները տպագրվել են բազմաթիվ հոդվածներում:

Աշխ. Вопросы формирования целереализующих систем для комплексных экономических программ. “Известия СО АН СССР”, сер. овщ.наук, вып.3, N 11, 1978г., Системное моделирование процесса реализации программы развития региона. “Известия, СО АН СССР” сер. общ. наук, вып. 1, 1979г.,Свзаимодействие моделей отраслевых программ с моделью формирования инфраструктуры в регионе. Коллективная монография. Программно-целевой подход в планировании развития отраслевых комплексов. Новосибирск, “Наука”, 1979г., Учет народнохозяйственных аспектов при оптимизации отраслевых программ В кн.: Вопросы оптимизации отраслевых систем в районах нового освоения. Новосибирск, “Наука”, 1979г.,Многоуровневая система оптимизации долгосрочной программы развития народного хозяйства экономического региона. Всесоюзная конкурсная работа. “Вопросы экономики”, N 5. Москва 1981 г., Взаимодействие отраслевых систем в составе региональных программ (районы со сложившейся струкурой производства). Коллективная монография. Экономико-математические методы и модели в перспективном планировании (вопросы методологии и методики). Под рук. академика А.Г.Аганбекяна. Новосибирск, “Наука”, 1982г., Оптимизация отраслевых систем в составе экономических программ, Новосибирск, “Наука”, 1982г., Системы моделей программно-целевого направления народного хозяйства союзной республики. В кн. Проблемы социально-экономического прогнозирования и планирования, М., 1989, Системное моделирование

процесса реализации долговременной программы развития экономического региона. Материалы совещания стран-членов СЭВ по экономическому развитию. Иркутск, 1980г., Оптимальное управление экономическим уровнем производства и его влияние на эффективность использования природных ресурсов. Проблемы повышения эффективности использования природных ресурсов. ЭНИИ Госплана УССР. Киев, 1985г.. Некоторые вопросы разработки и реализации республиканских целевых программ научно-технического прогресса, Международный симпозиум стран-членов СЭВ по проблемам прогнозирования НТП. Сборник докладов, Москва, 1986г.. Взаимодействие межрегиональных связей на формирование отраслевой структуры производства союзной республики. Всесоюзная конференция “Вопросы комплексного планирования и управления союзных республик и экономических районов”. “Валгус”, Таллин, 1988г., Комплексное региональное планирование и прогнозирование. Коллективная монография (отв, ред, академик Н.П.Федеренко), М. «Экономика», 1989, Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարման տնտեսական հիմնախնդիրները, Եր., 2003, Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2004 (համահեղինակներ՝ Գ.Կիրակոսյան, Ա.Սաֆարյան), Հանրային կառավարում: «Պետական ծառայություն», Եր., 2008:

ԲՈՒԳԱՅԱՆ ԻԼՅԱ ՌՈՒԲԵՆԻ

(1943)

Ծնվել է Ռոստովում: 1965-ին ավարտել է Ռոստովի պետական տեխնիկական համալսարանը, իսկ 1974-ին՝ Ռոստովի պետական շինարարական համալսարանի ասպիրանտուրան «Քաղաքատնտեսություն» մասնագիտությամբ: 1973-ից անցել է դասախոսական աշխատանքի: 1989-96-ին եղել է պետական ծառայության, Հյուսիս-Կովկասյան ակադեմիայի «Քաղաքատնտեսության» և «Տնտեսագիտության տեսության և ձեռնարկատիրության» ամբիոնների վարիչ: 1996-ից՝ Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի «Տնտեսության փիլիսոփայության» ամբիոնի վարիչ, Տեղեկատվություն և կառավարում ֆակուլտետի դեկան: Նրա «Социалистическое накопление и воспроизводство» (Проблемы взаимодействия в условях НТП) աշխատության մեջ փորձ է արվում ցույց տալ զարգացած սոցիալիստական հասարակարգին հավասարազոր վերարտադրության ձևավորման տիպը, դիտարկել գիտատեխնիկական առաջընթացի հիմքի վրա զարգացած տնտեսության մակրոտնտեսական վերլուծության մեթոդաբանական հիմնահարցերը: Նրանում մշակվել է սոցիալիստական վերարտադրության տեմպերի մաքսիմալացման տնտեսա-մաթեմատիկական մոդել, շրջանառության մեջ է դրվել ամբողջական ցիկլի «հետազո-

տություն-արտադրություն» հասկացությունը, և ցույց են տրվել նրա կառուցվածքի օպտիմալացման հիմնական ուղղությունները՝ որպես գիտատեխնիկական առաջընթացի արագացման միջոց: Նշված հարցերն իրենց հետագա շարունակությունն են ստացել «Социалистическое производственное накопление» մենագրությունում: Մասնավորապես հետազոտվում են սոցիալիստական արտադրական կուտակման ընթացքում ծագող արտադրական հարաբերությունները: Հասարակական արտադրության ստորաբաժանումներում օրգանական կազմի մակարդակների նպատակաուղղված կարգավորման առաջարկվող համակարգը, սահմանված կախվածություններն արտադրական ֆոնդերի արդյունավետության դինամիկայի և աշխատանքի արտադրողականության աճի ինդեքսների ու արտադրության օրգանական կազմի միջև հարաբերակցությունը թույլ են տվել հիմնական ուշադրությունը սևեռել արտադրական կուտակման որակական չափորոշիչների վրա:

Ի.Բուգայանի հետազոտական ոլորտներից են տնտեսության և էկոնոմիկայի հարաբերակցության հարցերը, որոնք դիտարկում է այսպես կոչված տնտեսության փիլիսոփայության հարթությունում: Տնտեսությունը ծագել է շատ ավելի վաղ, քան էկոնոմիկան, թեկուզ այն պատճառով, որ փողը քաղաքակրթության պատմության համեմատ ի հայտ է եկել համեմատաբար ոչ վաղ անցյալում: Երբ փողի ֆունկցիան անցնում է ոսկուն և արծաթին՝ իբրև համընդհանուր փողի, սկիզբ է առնում որպես ամբողջի տնտեսությանը զուգահեռ, էկոնոմիկայի զարգացումը՝ որպես նրա մասի: Էկոնոմիկան, ամենից առաջ կապված է տնտեսության այն մասի հետ, որն ընդունված է անվանել փողայնացված տնտեսություն: Արտադրության չորս գործոններից երկուսն ունեն տրանստենդենց ծագում՝ ձեռնարկատիրությունը և հողը, իսկ երկուսը՝ մարդկային՝ աշխատանքը և կապիտալը: Քանի որ կապիտալը և մարդկանց որակավորումը զարգացման միտում ունեն, ուստի

տնտեսության մեջ էկոնոմիկայի տեսակարար կշիռը նույնպես աճում է: Իսկ թե ինչու է մի երկրում տնտեսության մեջ էկոնոմիկայի տեսակարար կշիռը մեծ, մյուսում՝ ցածր, Բուգայանի կարծիքով կախված է այն բանից, թե որքան են զարգացած մարդկային ծագման արտադրության գործոնները: ԽՍՀՄ-ի լճացման հիմնական պատճառն այն է, որ արգելված էր հենց այն գործոնը, որ ԳՏՀ-ի ազդեցության տակ ձեռք է բերվել էկոնոմիկայի և ամբողջ տնտեսության վրա գերակշռող ազդեցություն: Մինչև 2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամը, ժամանակակից Ռուսաստանի տնտեսական աշխուժացումը հիմնված էր հողի ռեսուրսների վրա, երկիրն ապրում էր տնտեսության հաշվին՝ ձևացնելով, թե նվաճումներ ունենք տնտեսական գործունեությունից՝ մարդկային ծագման արտադրության գործոնները՝ կապիտալը և աշխատանքը փոխարինել հողով, այսինքն՝ չվերականգնվող գործոնով: Երկրորդ հիմնախնդիրը, որի վրա ուշադրություն է սևեռում Բուգայանը, այն է, որ մշտապես փորձում ենք փոխառնել օտար գաղափարներ, թե հայտնի տեսություններից, որն է «սազում» Ռուսաստանին: Այդ կույր ընդօրինակումը հղի է հասարակական ցնցումներով: Իսկ ինչ անել, երբ Ռուսաստանն արդեն դարձել է համաշխարհային էկոնոմիկայի մաս: Աշխարհում էկոնոմիկայի և տնտեսության միջև մի հարաբերակցություն է, Ռուսաստանում՝ այլ: Բուգայանի կարծիքով պատասխանը մեկն է՝ կառչել ձեռնարկատիրությունից, այն, ինչը ԽՍՀՄ-ում եղել է արգելված: Պետության և ձեռնարկատիրության հարաբերակցության առումով պետությունը գտնվում է ոչ տնտեսական հատվածում և պատասխանատու է տարածքային անձեռնմխելիության, սոցիալական պաշտպանվածության և երկրի ռազմավարական ուղղությունների զարգացման համար: Մինչդեռ մարդու պահանջները բավարարող «ժողովրդական ձեռնարկատիրության» առումով երկիրը հետ է մնացել:

Այդպիսին է երկրի տնտեսական մոդելը Բուգայանի հայեցությամբ: Նրա նորագույն շրջանի հետազոտությունը-

ների շառավիղների մեջ են զբաղվածության, ձեռնարկությունների ֆինանսական կայունության, տեղեկատվական տեխնոլոգիաների, հասարակական վերարտադրության և «հետազոտություն-արտադրություն» ամբողջական ցիկլի օպտիմալացման մոդելների կառուցման և մակրո ու միկրո հարթությունների այլ հարցերի:

Նա մի շարք միջազգային և ռուսական ակադեմիաների անդամ է: Արտադրության գործոնների և ապրանքի վերաբերյալ կոնցեպցիայի մշակման համար, որը թույլ է տալիս բացահայտել շուկայական հարաբերությունների զարգացման պարբերացման օրինաչափությունն արժանացել է միջազգային պարգևի և ոսկե մեդալի (2003):

Աշխ. Социалистическое накопление в производстве (проблемы взаимодействия в условиях НТП), Ростов на Дону, 1988, Социалистическое производственное накопление, Ростов на Дону, 1988, Микроэкономика, учебник, Ростов на Дону, 2000, Новые и информационные технологии как современный доминантный товар, РГУ, 2000, Накопление: Эволюция под влиянием кругооборота доминантных свойств факторов производства, РГУ, (в соавторстве), Закономерности и модели развития самозанятости, Ростов, 2001, О закономерностях развития и характере хозяйства. Философия хозяйства. Альманах Центра общественных наук экономического факультета МГУ им.Ломоносова, 2006, Современная микроэкономика, Ростов на Дону, 2009 (в соавторстве).

ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՄԵՆՏՈՐ ԱԲՐԱՀԱՄԻ

(1877-1969)

Ծնվել է Նախիջևանի Ցղնա գյուղում: Մայրը Ավետիք Արասխանյանի քույրն էր: 1895-ին ավարտել է Թիֆլիսի գիմնազիան և մեկնել Գերմանիա՝ գյուղատնտեսություն ուսանելու, սակայն փոխել է մտադրությունը և սկսել է ուսումնասիրել տնտեսական գիտություններ: Նա սովորել է Լայպցիգի, Բեռլինի, Պետերբուրգի և Մյունխենի համալսարաններում: Ապա Լոնդոնի Բրիտանական թանգարանի գրադարանում երկու տարի աշխատել է «Անգլիայի տնտեսական ճգնաժամերի պատմությունը» աշխատության վրա, որի համար 1903-ին Մյունխենի համալսարանը նրան շնորհել է տնտեսագիտության դոկտորի աստիճան: Վերադառնալով Ռուսաստան՝ պրոֆեսորի պաշտոն է զբաղեցրել Մոսկվայի և Թիֆլիսի համալսարաններում, դասավանդելով մինչև 1917 թվականը: 1920-ին նա բնակություն է հաստատում Փարիզում: Ռուսական ակադեմիական խմբի հիմնադիրներից մեկն էր: 1925-40-ին եղել է Փարիզի համալսարանի պրոֆեսոր:

Հայ տնտեսագիտական միտքը XIX դարի վերջի և XX դարի սկզբին տնտեսական ճգնաժամերի հարցը քննության է ենթարկել ընդհանուր դիտողությունների մակարդակով: Ու թեև կատարվել են արժեքավոր վերլուծություններ, այնուամենայնիվ դրանք մի հայտնի մասով մնում էին

մտքի նույն տիրույթում: Այս իմաստով առանձին տեղ է պատկանում Մենտոր Բունիաթյանին, որի աշխատությունները հայ տնտեսագիտության մեջ ճգնաժամերի տեսության պատմությունը շարադրող առաջին լիարժեք ուսումնասիրություններն են: Դրանք արժանացել են համաշխարհային մեծության այնպիսի մտածողների ուշադրությանը, ինչպիսիք են Ջ.Քեյնսը, է.Հանսենը, Ա.Աֆտալիոնը, Ու.Միտչելը, Մ.Տուգան-Բարանովսկին, Ն.Կոնդրատևը և ուրիշներ:

Ճգնաժամերը համարելով ժողովուրդների տնտեսական կյանքի համար ամենամեծ աղետը, որի հիմնապատճառների իմացությունը հսկայական նշանակություն կարող է ունենալ տնտեսական ներհակությունները մեղմելու և բազմաթիվ հարցերի լուծման առումներով, նա, շրջանառության մեջ դնելով և արժևորելով տնտեսական ճգնաժամերի քննությունն ակնկալող եվրոպական և ռուս բազմաթիվ հեղինակների աշխատությունները, փորձում է բացահայտել տնտեսագիտական ուսմունքներից յուրաքանչյուրի առաջադրած մեթոդաբանական սկզբունքներն ու դիտակետերը:

Տնտեսական ճգնաժամերը «կապիտալիստական տնտեսության ցիկլային զարգացման շրջադարձային կետերն են»: Ճգնաժամը նոր երևույթ չէ, և երբ «տնտեսական օրգանիզմը խախտվել է մասնավոր սեփականության ու աշխատանքի բաժանման վրա, այն ներփակել է կապիտալի ճգնաժամի նախնական պայմանները, ինչպես օրինակ՝ ստրկատիրական Հռոմում, որը հիմնված էր «փողային տնտեսության» սկզբունքի վրա: Մ.Բունիաթյանը գտնում է, որ եթե վաղ ժամանակներում ճգնաժամերն ընդգրկում էին XVIII դարի վերջերից սկսած, կապված տնտեսական կյանքի զարգացման, մասնավոր կապիտալիստական ձեռներեցության ուժեղացման ու կապիտալի արտադրողական կիրառման հետ, բնորոշ են դառնում արդյունաբերական ճգնաժամերը, որոնք իրենց ազդեցությունն ունենալով նաև մյուս բնագավառների վրա, հանդես են գալիս որպես «ընդհանուր տնտեսական ճգնաժամեր»: Դրանք կազմա-

լուծում են վերարտադրության բոլոր պրոցեսները, իրենց դրսևորումներն ունենալով տնտեսական կյանքի ամենատարբեր բնագավառներում: Այս իմաստով, նա, տալով ճգնաժամերի «մորֆոլոգիան», հետաքրքրական դիտողություններ է անում դրամական, վարկային, ապրանքային, բորսային և սպեկուլյատիվ, արդյունաբերական ու ագրարային ճգնաժամերից յուրաքանչյուրի առանձնահատկությունների, ծագման ու ընթացքի վերաբերյալ: Դրանք, լինելով հասարակական Դրանք, լինելով հասարակական վերարտադրության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասերը, «տնտեսական երևույթներից կտրած աբստրակցիաներ» են, որոնք իրականում գտնվում են փոխադարձ կապի մեջ: Արդյունաբերական ճգնաժամերն ավելի «բարդ երևույթներ» են, որոնք «երկրի տնտեսական բարեկեցության» վրա ավելի խոր ու բացասական հետևանքներ են ունենում: Աշխատանքի հասարակական բաժանումը ժողովրդական տնտեսության ճյուղերը դնում է փոխադարձ կախվածության մեջ, և այս կամ այն օղակում խախտումը «անբնական» վիճակ է ստեղծում նաև մյուս ճյուղերի համար:

Կապիտալիստական վերարտադրության բոլոր ներհակությունները դրսևորվում են արդյունաբերական ցիկլի ճգնաժամի փուլում: Թեև անկումը դեռևս բնորոշվում է արտադրության լճացումով, ապրանքների գների ցածր մակարդակով ու շահույթի ցածր նորմայով, այնուամենայնիվ, արտադրության չափերի կրճատման հետևանքով որոշ հավասարակշռվածություն է ստեղծվում առաջարկի ու պահանջարկի միջև, և աշխուժացման ու վերելքի փուլին անցնելու պայմաններ են առաջանում: Մ. Բունիաթյանը հատկապես կարևոր է համարում հիմնական կապիտալի նորացման հարցը՝ հանգելով այն հետևությանը, թե տեխնիկական վերազինումները հնարավորություն են տալիս «արդյունքներն էժանացնելով, սպառումն ընդլայնելով և նոր պահանջմունքներ ծնելով, դնելու նոր շրջանի վերելքի հիմքը»: Արտադրության ընդլայնման

ժամանակ անբարենպաստ է անդրադառնում գյուղական սեփականատերերի վրա և նվազեցնում է դրանց բաժինը հասարակական արդյունքում»:

Տնտեսագետը ժողովրդական տնտեսության պարբերական ցնցումների պատճառը մի մասով էլ պայմանավորում է տնտեսական կյանքի կազմակերպական տեխնիկական թերություններով: «Ժամանակակից տնտեսական կազմակերպությունը հեռու է այնպիսին լինելուց, որ երաշխավորի տնտեսական կյանքի կատարյալ և ներդաշնակ զարգացումը: Ընդհակառակը, այն իր մեջ ամփոփում է նրա ներդաշնակ զարգացմանը և տնտեսական խանգարմանը հեշտ առիթ տվող մի շարք մոմենտներ»: Մասնավորապես խոսքը վերաբերում է մասնավոր սեփականության և աշխատանքի բաժանման սկզբունքների առկայությանը: Ինչպես արդեն նկատել ենք, Մ.Բունիաթյանը տնտեսական ճգնաժամեր էր փնտրում այն բոլոր տնտեսաճներում, որոնցում առկա են այդ երկու սկզբունքները: Սակայն աշխատանքի բաժանման խորացումը կապիտալիզմի պայմաններում «օրգանական կապ» ու «կախվածություն» է ստեղծում ձեռնարկությունների միջև, որոնք, իրենց «տնտեսական ինքնորոշման մեջ մնալով իրարից անկախ», միաժամանակ հանդես են գալիս որպես «հասարակական տնտեսության անբաժանելի մասեր»: Հասարակական արտադրության ղեկավար սկզբունքը դառնում է ոչ թե ապրանքի, այլ «արժեքի» արտադրությունը, իսկ որքանով այն իրականացվում է տարերային ձևով՝ առաջ է գալիս հակասություն, մի կողմից՝ մասնավոր տնտեսական շահերի, մյուս կողմից՝ դրանց և հասարակական շահերի միջև, որը դրսևորվում է հասարակական արտադրության և պահանջմունքների ու սպառման միջև գոյություն ունեցող հակասության ձևով: Իսկ քանի որ բացակայում է «ժողովրդա-տնտեսական օրգանիզմի առանձին անդամների տնտեսական գործունեությունը կարգավորող մարմինը», ուստի և տնտեսական կյանքը չի կարող զերծ լինել խափանումներից:

Հայտնի է, որ արդեն XIX դարի երկրորդ կեսին և հատկապես XX դարի սկզբներին փորձառական և դիֆերենցիալ հոգեբանության ձեռքբերումները սկսում են օգտագործել էկոնոմիկայում և արդյունաբերության մեջ: Այս առումով էլ Մ.Բունիաթյանը շեշտում է, որ «նոր տեսությունը», իր տարողունակությամբ հանդերձ, թեև չի ընդգրկում տնտեսական բոլոր երևույթների բացատրությունը, ու, թեև «այդ ճիշտ ճանապարհը որոշված է ընդհանուր գծերով», այնուամենայնիվ միակն է, որը հնարավորություն է տալիս տեսականորեն հիմնավորել բարիքների համընդհանուր արժեզրկման, հետևապես նաև «համընդհանուր գերարտադրության» հասկացությունները, ինչպես նաև բացատրել գների կազմավորումն ու շարժումը և վերջինիս հետ կապված բաշխման շարժման հետևանքները, իբրև «կոնյուկտուրայի տեսության անհրաժեշտ հիմքի»:

Միանգամայն որոշակի է տնտեսագետի գլխավոր տեսական ելակետը: Մ.Բունիաթյանն ապրանքի արժեքի հարցը դիտարկում է սուբյեկտիվ արժեքի և օբյեկտիվ արժեքի տեսանկյուններից: Նա տարբերակում է բացարձակ սուբյեկտիվ արժեք և հարաբերական սուբյեկտիվ արժեք հասկացությունները: Առաջինը տվյալ անհատի համար որոշակի բարիքի նշանակությունն է, կախված պահանջմունքի կարևորության աստիճանից և տվյալ ժամանակում այդ բարիքի առկա քանակի և պետքականության մեծության հարաբերակցությունից, որը՝ որպես արժեք, տվյալ սուբյեկտի համար ներկայացնում է հայտնի բացարձակ մեծություն: Իսկ հարաբերական սուբյեկտիվ արժեքն այդ բարիքի (մյուսների հետ համեմատած) այն նշանակությունն է սուբյեկտի համար, որը կապված է դրա օգտակարության և հազվագյուտության հետ:

Մ.Բունիաթյանը սուբյեկտիվ արժեքի տեսությունից անցնում է օբյեկտիվ արժեքի տեսությանը, այսինքն՝ բարիքների հասարակական արժեքի կազմավորման բացատրությանը: Նա գտնում է, որ ճիշտ կլիներ սուբյեկտիվ դպրոցի տեսությունը համալրել «բարիքների բացարձակ

հասարակական արժեք» հասկացությամբ, որն իր բովանդակությամբ համապատասխանում է սուբյեկտիվ բացարձակ արժեք հասկացությանը, և որը որոշվում է սահմանային հասարակական օգտակարությամբ ճիշտ այնպես, ինչպես բացարձակ սուբյեկտիվ արժեքը որոշվում է սուբյեկտիվ սահմանային օգտակարությամբ: Օբյեկտիվ արժեքը ոչ այլ ինչ է, քան «սուբյեկտիվ արժեքների» բախումից առաջացած արժեք, որի հիմքում ընկած է բարիքների հասարակական սահմանային օգտակարությունը:

Փողի արժեքի ու ապրանքների գների շարժումները ենթակա են սահմանային օգտակարության չափանիշներին: Այստեղից էլ գների շարժման այն բացատրությունը, թե «բարիքների քանակի սաստիկ ավելացման ժամանակ դրանց սահմանային օգտակարությունն առանձին տնտեսություններում պետք է իջնի, քանի որ այդ բարիքների վերջին քանակությունները համապատասխանելու են դրանց նկատմամբ նվազ ինտենսիվություն ունեցող անհրաժեշտությանը: Հետևաբար՝ պետք է իջնի և բարիքների հասարակական սահմանային օգտակարությունը: Վերջինս, ընդհակառակը, բարիքների քչացման կամ նույնիսկ սպառման նորմալ աճին չհամապատասխանող արտադրության աճի նշանակալից դանդաղեցման ժամանակ պետք է բարձրանա: Բարիքների հասարակական արժեքի այդ տատանումներն էլ իրենց արտահայտությունն են գտնում դրանց գների պարբերական տատանումներում»: Ստացվում է, որ ապրանքների հասարակական արժեքը որոշվում է դրանց սահմանային օգտակարությամբ, իսկ դա էլ պայմանավորում է «գների պարբերական շարժման» պրոցեսը:

Մ.Բունիաթյանը նյութական բարիքները բաժանում է անմիջական սպառման և արտադրական սպառման առարկաների: Վերջիններս, այսպես կոչված, «բարձրագույն կարգի բարիքներ» են, որոնց միջոցով իրականացվում է սպառման առարկաների արտադրությունը: «Բարձրագույն կարգի բարիքները» ածանցյալ արժեք ունեն և կախված

են դրանց միջոցով արտադրվող սպառողական բարիքների արժեքից: Նրա կարծիքով, տեխնիկայի վրա հիմնված «արտադրության եղանակը», դրական կողմերի հետ միասին, ունի նաև իր թերությունները: Այն մեծապես նպաստում է «արտադրության աճին», բայց պահանջում է «նախնական... նշանակալից ծախսեր», որոնք հետագայում թեև արագացնում են «վերջնական արդյունքների արտադրությունը, բայց իրենք իրենց իրագործման համար պահանջում են ժամանակ և հաճախ բավական երկարատև», հանգամանք, որը հանգեցնում է վերջնական արդյունքների արտադրության և «արտադրության պրոցեսի ծագման մոմենտի» միջև գոյություն ունեցող ժամանակի տարածքի մեծացմանը: Արտադրության պրոցեսը երկարում է, քանի որ այն հաճախ տրոհվում է մի շարք միջանկյալ փուլերի, որոնց միջոցով արտադրողական ուժերը «բյուրեղանում են վերջնական արդյունքներում»: Մինչդեռ «փոխանակային տնտեսության համար արտադրության պրոցեսի այդպիսի երկարումն ունի այն մեծ անհարմարությունը, որ սպառողական և արտադրական բարիքների արժեքների կազմավորման գործոնների փոխադարձ կապը կտրվում է և արտադրությանը զրկում է նրա ամբողջ ընթացքում արժեքի սկզբունքը խիստ վերահսկողության ենթարկելուց»: Այսպիսով, ըստ Մ.Բունիաթյանի, արտադրության սկիզբը խարսխվում է բարիքների քանակի և դրանց անհրաժեշտության միջև որոշակի հարաբերակցությունից բխող, սպառման բարիքների արժեքի ու արտադրության վերջում ենթադրվող արժեքի վրա, որոնք հաճախ իրար չեն համապատասխանում: Բանն այն է, որ արտադրության և սպառման հավասարակշռվածության խախտման հետևանքով սպառողական բարիքների գների բարձրացումը, ինչպես դա տեղի է ունենում ճգնաժամի վերջում, ձեռնարկատերերին դրդում է ավելացնել այդ բարիքների արտադրությունը, որը ենթադրում է նոր գործարանների ու ֆաբրիկաների շինարարություն, արտադրության տեխնիկական վերազինում: Սակայն

վերելքի ժամանակ նախորդ տարիների արտադրական հզորությունների շահագործման հետևանքով խիստ ավելանում է սպառման առարկաների արտադրությունը՝ հանգեցնելով դրանց սահմանային օգտակարության իջեցմանը: Իսկ, քանի որ բարձրագույն կարգի բարիքների արժեքը» որոշվում է «առաջին կարգի» բարիքների արժեքով, իջնում է նաև առաջինների հասարակական արժեքը: Սպառման առարկաների արտադրամիջոցների արտադրության պրոցեսի երկարությունը (Մ.Բունիաթյանն այս հարցում զուգահեռ է անցկացնում գյուղատնտեսական արտադրության հետ) հնարավորություն չի տալիս ժամանակին հարմարվել հասարակական պահանջներին, խախտվում է արտադրության և սպառման համամասնական զարգացումը, ապագա պահանջների հաշվառումը, որը հանգեցնում է գերարտադրության: Նա եթե, մի կողմից, ճգնաժամից դուրս գալու ելքն աղերսում էր հիմնական կապիտալի նորացման հետ, ապա, մյուս կողմից, սերտ կապ էր տեսնում «ճգնաժամերի և տեխնիկական կատարելագործությունների միջև: Այդ պատճառով էլ, եթե, մի կողմից, նա տնտեսական ճգնաժամերը դիտում էր որպես կապիտալիզմին իմանենտ երևույթ, ապա, մյուս կողմից՝ որպես ընդհանրական: Եվ այսպես, «անսահմանափակ կապիտալացման ենթակայության տակ գտնվող արտադրողական ուժերին ներհատուկ զարգացման ձգտումը մի կողմից և քիչ էքսպանսիվ սպառմանը համապատասխան արտադրության կրճատման անհրաժեշտությունը մյուս կողմից, դժվարացնում են տնտեսական կյանքի հավասարակշռվածության պահպանումը և առաջ բերում դրա պարբերական վերելքներն ու վայրէջքները»: Քեյնսը, խոսելով իր և Բունիաթյանի տեսությունների առնչությունների շուրջ, հենց սպառման՝ որպես արտադրության շարժիչ ուժի ֆունկցիայի մեջ է տեսնում ընդհանրություններն իրենց հայեցությունների միջև:

Տնտեսական ճգնաժամերի հարցը մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում ստանում է նոր մեկ-

նաբանություն: Մ.Բունիաթյանը նկատում է, թե մոնոպոլիստական միավորումները, ինչպես և ազատ մրցակցության պայմաններում մանր արտադրողները, նույնպես ենթակա են կոնյուկտուրայի օրենքներին, որ դրանք չեն կարող վերացնել մրցակցությունն ու անարխիան, արմատական փոփոխություններ մտցնել «տնտեսական կյանքի էվոլյուցիայում» կամ խոչընդոտել գերարտադրության ճգնաժամերի առաջացմանը և կանխել «տնտեսության ցիկլային զարգացումը»:

Ուշագրավ է, որ դեռևս անցյալ դարի սկզբին Բունիաթյանը նշում է այն երևույթի մասին, որը տասնամյակներ անց տնտեսագիտության մեջ ստացել է «աքսելերատորի էֆեկտ» անվանումը, որով տնտեսագետները փորձում են բացատրել տնտեսության ցիկլային բնույթը:

1949-ին Բունիաթյանն ընտրվել է Տնտեսական գիտությունների ամերիկյան ակադեմիայի լիիրավ անդամ:

Երկար տարիներ նա գլխավորել է Հայկական ծառայությունը Փարիզում՝ պաշտպանելով հայ փախստականների շահերը Ֆրանսիայում:

Աշխ. M.Bouniatian, Wirtshaftskisen and Ueberkapitation, Munchen, 1908, Экономические кризисы, M., 1915, Les crises economiqus, Paris, 1922, Les crisec economiques periodiques, Paris, 1930 Les fluctuations economiques, Paris, 1959, Les theories economiques et Albert Aftalion, P., 1960.

ԳԱԼՈՅԱՆ ԴԻԱՆԱ ՌՈԲԵՐՏԻ

(1980)

Ծնվել է Երևանում: 1996-ին գերազանց առաջադիմությամբ ավարտել է թիվ 76 միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի «Համաշխարհային տնտեսագիտություն» բաժինը, որն ավարտել է 2001-ին՝ ստանալով գերազանցության դիպլոմ: 2002-ին ընդունվել է նույն մասնագիտությամբ հեռակա ուսուցման ասպիրանտուրա և 2004-ին պաշտպանել թեկնածուական թեզը: 2005-ից աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսագիտություն» ամբիոնում՝ որպես դոցենտ: 2008-2012-ին համատեղությամբ աշխատել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում՝ որպես գիտական աշխատող: 2014-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի հիմնախնդիրները և հեռանկարները» թեմայով և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Ինչպես ակներև է, Դ.Գալոյանի հետազոտական ոլորտը միջազգային տնտեսական հարաբերություններն են: Նրա ուսումնասիրությունները նյութի ընդգրկումների առումով հանգում են՝ աշխատանքի միջազգային բաժանման խորացման հետ կապված ազգային տնտեսությունների փոխկախվածության ուժեղացման և դրա կարգավորման, Հայաստանի և Եվրամիության միջև

առևտրատնտեսական կապերի կատարելագործման, տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի գործընթացներում Հայաստանի, Թուրքիայի և այլ երկրների հետ կապերի, մաքսային միությանն անդամակցության հեռանկարների և դրանցով պայմանավորված այլևայլ հարցերի քննությանը: Դ.Գալոյանը հատկապես կարևորում է տարածաշրջանային ինտեգրացիան: Տնտեսության բացությունը դիտելով որպես ինտեգրալ ցուցանիշ, նա այդպիսին համարում է արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասի ցուցանիշը, որը թույլ է տվել ճշգրտել և գնահատել տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հավանականությունը և գործնական արդյունքները: «Ինտեգրման նախադրյալների և ռազմավարական փուլերի աստիճանականության» հանգամանքի անտեսումը կարող է շատ ծրագրերի իրականացման համար դառնալ փակուղի: Փուլային սկզբունքը վերաբերում է նաև ՄՄ-ին անդամակցությանը: Ինչ վերաբերում է տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիային հարևան երկրների հետ, հիմնավորվում է հատկապես Վրաստանի հետ «միջճյուղային մասնագիտացման խորացման» ուղին: Եվ ընդհանրապես, ինչպես տվյալ դեպքում, այնպես էլ Իրանի և Թուրքիայի հետ «արդեն ձևավորված տնտեսական կապերը», «համակարգման և ուղղորդման կարիք ունեն փոխշահավետության առումով»:

Աշխ. Միջազգային տնտեսական ինտեգրացիա, Եր., 2006 (համահեղինակ), Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը, Եր., 2010 (համահեղինակ), Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում, Եր., 2012 (համահեղինակ), Հայաստան-ԵՄ տնտեսական հարաբերություններ. ԽՀԱԱՀ ազդեցությունը երկկողմանի առևտրային կապերի վրա, Եր., 2012 (համահեղինակ), Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ասպեկտները, Եր., 2014, Աշխատուժի արտագնա միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր. 2014 (համահեղինակ), Միջազգային տնտեսագիտություն. տեսություն և քաղաքականություն (ուսումնական ձեռնարկ), Եր., 2015 (համահեղինակ):

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ՌՈՒԲԵՆԻ

(1940-2012)

Ծնվել է Երևանում: 1963-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1967-70-ին սովորել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1971-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի, իսկ 1988-ին՝ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանները: Պրոֆեսորի կոչում ստացել է 1999-ին:

1971-72-ին եղել է Երևանի պետական համալսարանի ժողովրդական տնտեսության պլանավորման ամբիոնի ավագ դասախոս, 1972-80-ին՝ ԽՍՀՄ պետպլանին կից պլանավորման և նորմավորման գիտահետազոտական ինստիտուտի հայկական բաժանմունքում սեկտորի վարիչ, 1980-93-ին՝ Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտի դոցենտ: 1993-97-ին՝ ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամասի Օտրադնենի հումանիտար ինստիտուտի ամբիոնի վարիչ, 1997-ից՝ Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային առևտրի և մաքսային գործի ամբիոնի պրոֆեսոր:

Գիտական հետաքրքրությունները վերաբերում են ժողովրդական տնտեսության էկոնոմիկայի կառավարման ու կազմակերպման, համաշխարհային տնտեսության (մաք-

սային գործ, ազատ տնտեսական գոտիներ), տարածաշրջանային տնտեսագիտության, մենեջմենթի հիմնահարցերին:

Աշխ. Նոր տեխնիկայի ստեղծման և ներդրման կառավարումը, Եր., 1986, Формирование и функционирование межрегиональных экономических связей в современных условиях, Ростов-на-Дону, 2001, Система оценки факторов потребительского поведения и использования при формировании управленческого решения, Ростов-на-Дону, 2004, Управление персоналом: 100 экзаменационных вопросов (соавтор), Учебное пособие, М., 2004, Проблемы разработки организационно-экономического механизма управления проектами на промышленных предприятиях, Ростов-на-Дону, 2006, Свободные экономические зоны, (учебно-методическое пособие), Ростов-на-Дону, 2006, Менеджмент, Теоретические основы формирования и становления самостоятельной науки (соавтор), г.Армавир, 2006, Формирование организационно-экономического механизма активизации инвестиционной деятельности в аграрной сфере экономики, Ростов-на-Дону, 2009.

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՇՈՏ ՄՈՒՇԵՂԻ

(1914 -)

Ծնվել է ՀՀ Տավուշի մարզի Սևքար գյուղում: Ավարտել է ՄԲՏՈՒ-ն 1938-ին, Պաշտպանության արդյունաբերական ակադեմիան՝ 1950-ին: 1974-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, 1976-ին՝ պրոֆեսորի կոչում: 1960-84-ին եղել է Մոսկվայի ավիացիոն տեխնոլոգիական ինստիտուտի արտադրության կազմակերպման և պլանավորման ամբիոնի վարիչ: Աշխատանքները վերաբերում են ավիացիոն արդյունաբերության կառավարման համակարգի կատարելագործման խնդիրներին:

Գիտատեխնիկական առաջընթացի արագացման պայմաններում բարդացել է խոշոր տեխնիկական համակարգերի ստեղծման գործընթացը նրա կենսացիկլի բոլոր փուլերում, ներառյալ նաև փորձարարական արտադրությունը: Այս իմաստով խորհրդային շրջանում մասնագիտական գրականության մեջ ոչ բավարար ուշադրություն է դարձվել փորձարարական արտադրության կառավարման մեջ մաթեմատիկական մեթոդների և մոդելների կիրառմանը: Մ.Գևորգյանի «Методы и модели в управлении опытным производством» մենագրությունը որոշ չափով արտադրության կառավարման վերաբերյալ գիտության մեջ լրացնում է այդ բացը՝ հիմնական ուշադրությունը

դարձնելով մեքենաշինության մեջ փորձարարական արտադրության կազմակերպման և կառավարման մակարդակի բարձրացման հարցերին: Այս տեսանկյունից գրքում հիմնական քննության առարկան այնպիսի ֆունկցիոնալ խնդիրների վերաբերյալ մեթոդների, մոդելների և ալգորիթմների ստեղծումն է, ինչպիսիք են փորձարարական արտադրության օպերատիվ պլանավորումը, նյութական ռեսուրսների նորմատիվային պաշարների մշակումը, փորձարարական արտադրությունը գործիքներով ապահովելու ռացիոնալ կառուցվածքով համակարգի ընտրությունը, նյութական պաշարների վերաբաշխումը և դրանց փոխադրումների կազմակերպումը, կառավարման ավտոմատացման ընթացքում տվյալների մշակման համակարգը:

1984-ին Ա.Գևորգյանն արժանացել է ՌԽՖՍՀ վաստակավոր տնտեսագետի կոչման:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԻՀՐԱՆ ԱՐԱՄԻ

(1932-1999)

Ծնվել է Ախալցխայում: Տնտեսագիտության դոկտոր է 1982-ից, պրոֆեսոր՝ 1985-ից: 1967-ից եղել է ՀՍՍՀ պետպլանի տնտեսագիտության և պլանավորման ԳՀԻ սեկտորի վարիչ, 1984-ից՝ գիտության գծով տնօրենի տեղակալ, 1989-ից՝ տնօրեն:

Նրա ղեկավարությամբ և մասնակցությամբ հանրապետությունում առաջին անգամ կազմվել են ժողտնտեսության պլանավորման երկարաժամկետ միջճյուղային հաշվեկշիռները, ՀՍՍՀ արտադրաուժերի զարգացման և տեղաբաշխման (1986-2000 և 1997-2005) սխեմաները:

Աշխատանքները վերաբերում են սոցիալիզմի քաղաքատնտեսության, ժողտնտեսության, հատկապես տարածքային պլանավորման, սոցիալիստական հասարակարգի տնտեսական մեխանիզմի կատարելագործման, իսկ 1990-ական թվականներից անցումային տնտեսության հարցերին: «ՀՀ տնտեսական քաղաքականությունը և էկոնոմիկայի վրա դրա ազդեցության վերլուծությունը» գրքում քննության է ենթարկվում հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման իրավիճակը՝ առանձնապես ուշադրություն դարձնելով մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապակցվածության հարցերին: Կատարելով պատմական էքսկուրս՝ նրանում ցույց է տրվում, որ անցյալ դարի 70-80-ականներին նախկին ԽՍՀՄ-ում ուժգնորեն զգալ տվե-

ցին ոչ միայն ռազմական ծախսերի ծանր բեռը, բարձրորակ ու մատչելի բնական ռեսուրսների սպառման հետ կապված դրանց անընդհատ թանկացումը, այլ նաև կենտրոնացված կառավարման ու պլանավորման մեխանիզմի անարդյունավետությունը: Այս իմաստով հատուկ ուշադրություն է դարձվել այն միջոցառումների իրականացմանը, որոնք անհրաժեշտ են՝ առաջիկա տարիներին հանրապետության տնտեսությունը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու համար, ֆինանսավարկային քաղաքականությանը, ձեռնարկատիրական գործունեության անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցառումներին, վարվելիք կառուցվածքային-ինվեստիցիոն քաղաքականության վերլուծությանը: 1980-ական թվականների կեսերից ձեռնարկված տնտեսական բարեփոխումները թելադրված էին կենսական անհրաժեշտությամբ և նպատակ էին հետապնդում կառավարման վարչական մեթոդներից տեսականին անցնելու՝ ձեռնարկությունների իրավունքների ընդլայնման, անհատական և կոոպերատիվ աշխատանքային գործունեությունը խրախուսելու, առաջատար ճյուղերում զանգվածային ներդրումների շնորհիվ արտադրական ներուժն էապես ընդլայնելու, գնագոյացման արտաքին տնտեսական հարաբերություններն ազատականացնելու և այլնի միջոցով հասնելու կառուցվածքային լուրջ տեղաշարժերի ու ապահովելու տնտեսության ինտենսիվ զարգացումը:

Շուկայական տնտեսությանն անցման շրջանի տեսական, մեթոդական և գործնական հիմնախնդիրներն են դիտարկվում «Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում. տեսություն և արդյունքներ» աշխատության մեջ (համահեղինակ): Մ.Գևորգյանը ոչ այնքան հիմնավոր է դիտում արտադրության հինգ ձևերի դասական առանձնացումը, որը չունի համընդհանուր բնույթ և գործում է միայն Արևմտյան Եվրոպայի համար: Այսինքն՝ համաշխարհային զարգացման գործընթացների ֆորմացիոն տեսքով և արտադրության ձևերի մակարդակով վերլուծությունն իր տեսական ու պատմական նշանակությամբ

չի արտացոլում աշխարհում կատարվող բոլոր իրողությունները: Հարցը դիտելով այլևայլ տեսությունների կտրվածքով՝ նա գտնում է, թե՝ ա) համաշխարհային տնտեսության ներկայիս վիճակը մարդկային հնարավորությունների բնականոն զարգացման արդյունք է և չի կարելի դիտարկել որպես սոցիալիզմի կառուցման անհաջող փորձի արդյունք, բ) շուկայական տնտեսությանն անցումը ոչ թե մտացածին է, այլ պայմանավորված է ինդուստրիալ համակարգից (կամ քաղաքակրթությունից) հետինդուստրիալ համակարգին անցման օբյեկտիվ անհրաժեշտությամբ, գ) անցումային շրջանի տևողությունը, եթե այն դիտարկենք որպես ճգնաժամի փուլ ու նորի ծնունդ, ապա Հայաստանը կանցնի նոր քաղաքակրթության 2016-ին:

Անցումային շրջանը նա դիտարկում է որպես համակարգ՝ իր օրինաչափություններով, առանձնահատկություններով: Այս վերջին կտրվածքով առանձնացվում են անցումային տնտեսության վերարտադրության գործընթացի իներցիոնալությունը և այդ գործընթացում տնտեսվարման նոր ձևերի ու հարաբերությունների զարգացման ինտենսիվությունը:

Ազգային տնտեսությունը բարդ համակարգ է՝ բաղկացած իրար հետ փոխկապակցված բազմաթիվ մակրոտնտեսական տարրերից, որոնք իրենց ամբողջության մեջ արտահայտում են տնտեսության կառուցվածքի բովանդակությունը: Խոսքը վերաբերում է տնտեսության սոցիալական, ճյուղային, վերարտադրական, տարածաշրջանային, արտաքին առևտրի կառուցվածքներին: Թե ինչ հարաբերակցություն է առկա նշված տարրերի միջև, մեծապես կախված է ազգային տնտեսության հավասարակշռվածությունից ու զարգացումից, առավել ևս շուկային անցնելու պայմաններում:

Մ.Գևորգյանի «Տնտեսագիտության տեսություն» ուսումնական ձեռնարկն, առաջին փորձն է հայոց լեզվով ներկայացնելու տնտեսագիտության տեսության ընդհանուր՝ միկրո և մակրոտնտեսագիտության, համաշխարհային

տնտեսության, շուկային անցման շրջանի տնտեսության տեսություններն ու հիմնադրույթները: Նրանում շարադրված են նաև անցումային տնտեսության էությունը, հետսոցիալիստական երկրների շուկային անցման տեսական հիմնավորումները, առանձնահատկություններն ու սկզբունքները, կառուցվածքային վերափոխումների անհրաժեշտության տեսական և գործնական կողմերը, Հայաստանում այս կամ այն մոդելի կիրառման հնարավորությունները, արդյունաբերության իրավիճակի համառոտ վերլուծությունը:

Աշխ. Темпы, пропорции и факторы воспроизводства в союзной республике, М., 1981, ՀՀ տնտեսական քաղաքականությունը և էկոնոմիկայի վրա դրա ազդեցության վերլուծությունը, Եր., 1994 (համահեղինակ՝ Հ.Մանասյան), Экономическая политика переходного периода, М., 1995 (соавтор), Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), Եր., 1997, Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում. տեսություն և արդյունքներ, Եր., 1999 (համահեղինակ և խմբագիր):

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱԼԲԵՐՏԻ

(1966)

Ծնվել է Երևանում: 1983-ին ավարտել է Երևանի թիվ 25 դպրոցը, 1990-ին՝ Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: 1997-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել ֆիզմաթ գիտությունների թեկնածուի աստիճան, 2013-ին՝ դոկտորական ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 2007-ին շնորհվել է դոցենտի կոչում:

Աշխատանքային գործունեությունը. 1990-97-ին՝ ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ, 1997-98-ին՝ սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարություն՝ գլխավոր մասնագետ, 1998-1999-ին՝ Հայկական զարգացման բանկ՝ դիլինգային գործառույթների բաժնի վարիչ, 1999-2001-ին և 2002-2004-ին՝ ԱՄՆ-ի ՄԶԳ-ի կապիտալի շուկաների զարգացման ծրագրում՝ ֆինանսական վերլուծաբան, 2001-2002-ին՝ ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովի գլխավոր տնտեսագետի գրասենյակի ղեկավար: 2004-07-ին՝ Կասկադ ինվեստմենտս ընկերություն՝ տնօրենի տեղակալ, 2008-2012-ին՝ Ամերիաբանկ՝ հավատարմագրային կառավարման բաժնի ղեկավար: 2007-ից ԵՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետի Տնտեսության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ:

Ռ.Գևորգյանի գիտական հետազոտությունները նվիրված են ստոխաստիկ մեթոդներով կառուցվածքային տեղաշարժերի նկարագրությանը:

Մասնավորապես, նրա դոկտորական ատենախոսությունում ներկայացված են կառուցվածքային փոփոխությունների հետազոտման ստոխաստիկ մոդելներ: Վերջիններս բաժանվում են երկու խմբի. տնտեսական կառուցվածքների փոփոխությունների հետազոտման ընդհանուր մոդելներ և հատուկ մոդելներ, որոնք հաշվի են առնում տնտեսության տարաբնույթ կառուցվածքների առանձնահատկությունները: Մոդելները մշակվում և կիրառվում են Հայաստանի, Ռուսաստանի և Հարավային Կովկասի տարածաշրջանի իրական տվյալների վրա: Փորձ է կատարվել գտնել կառուցվածքային քաղաքականության առավել արդյունավետ մեխանիզմները, որոնք անցումային տնտեսություններով երկրների համար հանդիսանում են տնտեսական, սոցիալական և այլ խնդիրների լուծման կարևորագույն գործիքներ:

Նրա հետազոտական հիմնական գիտական արդյունքները հանգում են հետևյալին. ա) բացահայտվել է, որ գոյություն ունի երեք ժամանակահատված, որոնց ընթացքում տեղի են ունեցել կառուցվածքային կտրուկ փոփոխություններ: Համաշխարհային տնտեսությունում կառուցվածքային փոփոխությունները դիտարկվել են 1973թ., 1978–1980թթ., 2006–2008թթ., բ)1987թ. և 1997–1998թթ. ֆինանսական ճգնաժամերը համաշխարհային տնտեսության կառուցվածքներում նշանակալից փոփոխությունների չհանգեցրին: Միաժամանակ 2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը համաշխարհային տնտեսությունում կառուցվածքային փոփոխությունների հետևանք է, գ) Հայաստանի տնտեսական ցուցանիշների կառուցվածքը, դրանց տարբերություններն այլ երկրների և տարածաշրջանների հետ համեմատած շատ դեպքերում վճռորոշ դերակատարում են ունենում՝ հավելյալ տնտեսական աճի ապահովման և առանձին արտաքին ցնցում-

ներին դիմակայելու համար, դ) երկարաժամկետ կայուն տնտեսական աճի գլխավոր արգելքը պայմանավորված է տնտեսության առանձնահատկություններով: Դրանց հաղթահարման համար անհրաժեշտ են զարգացման նոր աղբյուրների որոնում, տնտեսական կառուցվածքների փոփոխություն, ներքին ռեսուրսների ստեղծում և օգտագործում, ե) աշխատաշուկայի կառուցվածքի վրա փոքր ազդեցության դեպքում, ապագա ժամանակահատվածներում կտրուկ աճում է անորոշությունը, ինչը նվազեցնում է կառուցվածքափոխակերպման իրագործման հնարավորությունը, զ) տոկոսադրույքի կառուցվածքի հետազոտման նպատակով կառուցվել է եկամտաբերության եռաչափ կոր՝ երկու մեթոդների հիման վրա. Կրիգինգի մեթոդով և Կալմանի ֆիլտրով: Կորերի ընտանիքից cross-validation ընթացակարգի օգնությամբ, ընտրվել է ամենալավ բնութագրերով կորը, որի միջոցով ստուգվել է մաքուր սպասումների վարկածը: Պարզվել է, որ Հայաստանում այդ վարկածը մասամբ է տեղի ունենում, է) կորպորատիվ կապիտալի կենտրոնացումը Հայաստանի բաժնետիրական ընկերությունների կառուցվածքում, բավարար չէ բաժնետերերի կողմից ղեկավարների գործունեության արդյունավետ վերահսկողության համար, ինչը առաջին հերթին պայմանավորված է կորպորատիվ կառավարման ցածր արդյունավետությամբ, ը)առաջարկվել է ֆինանսական շուկաների վրա տեղեկատվության կառուցվածքների ազդեցության գնահատման մոդել, որը անորոշության տարբեր մակարդակների դեպքում բացատրում է տեղեկատվության ազդեցության առանձնահատկությունները տարբեր մակարդակի ընկալունակություն և տեղեկատվություն վերլուծելու հնարավորություն ունեցող գործակալների համար, թ) տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի հաշվարկման, ներազդեցության գործիքակազմի ընտրության, ինչպես նաև կարգավորման մեխանիզմների մշակման հիմնախնդիրները լուսաբանվել են, և լուծումներ են առաջարկվել՝ լայնորեն կիրառելով ստոխաստիկ մեթոդներ

(թաքնված մարկովյան շղթաներ, էկոնոմետրիկ մեթոդներ և այլն): Ատենախոսությունում ստացված արդյունքներն ունեն ինչպես մեթոդաբանական, այնպես էլ գիտագործնական նշանակություն և կարող են օգտագործվել երկրում կառուցվածքային քաղաքականություն մշակելիս:

Ռ.Գևորգյանը հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների (աշխատությունների ցանկում նշվում են դրանցից մի քանիսը):

Աշխ. Пропущенные данные и анализ эмпирической кривой доходности на примере рынка ГКО Армении, «Консорциум экономических исследований и образования», Серия «Научные доклады» №04/03, М., 2004 (համահեղինակ՝ Ն.Մելիքյան), The effect of Ownership Type and Concentration on Performance of Joint Stock Companies in Armtnia, «Armenian International Policy Research Group», WorkingPaper №04/06, Washington, 2004, Воздействие информации на принятие решений в условиях неопределенности, «Управление финансовыми рисками», №04, М., 2010, Использование энтропии и информации связи в построении инвестиционных портфелей, «Управление финансовыми рисками», №03, М., 2012, Конституционная диагностика на основе сравнительного анализа характеристик демократического развития стран с переходной экономико, Актуальные проблемы экономической теории и практики. Сборник научных трудов, Выпуск 20. Краснодар, 2016. (Համահեղինակներ Հ.Սարգսյան, Ն Քոչինյան), Конституционная диагностика и мониторинг: инструментарий и метод реализации, Конституционное правосудие (Համահեղինակներ Հ.Սարգսյան, Ն Քոչինյան), Выпуск 4(74), 2016, Ереван Модели бинарного и множественного выборов в SPSS Е., 2010 (пособие).

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶԻ

(1952)

Ծնվել է Երևանում, 1969-ին ավարտել է Երևանի Ե.Չարենցի անվան միջնակարգ դպրոցը, ընդունվել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Վիճակագրություն» բաժինը, որն ավարտել է 1973-ին: 1973-1975-ին աշխատել է Գյուղատնտեսության էկոնոմիկայի և կազմակերպման ինստիտուտի ինքնարժեքի և գնի բաժնում՝ որպես տնտեսագետ: 1976-ին ընդունվել է նույն ինստիտուտի ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի ագրարային հարաբերությունների բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող: 1986-ին պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1989-1997-ին աշխատել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի մակրոէկոնոմիկայի ամբիոնում դոցենտի պաշտոնում: 1997-ին նշանակվել և հետո ընտրվել է նորաստեղծ «Բնօգտագործման տնտեսագիտություն» ամբիոնի վարիչի պաշտոնում, որը ղեկավարում է մինչ օրս: 2006-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան, իսկ 2007-ին՝ պրոֆեսորի կոչում:

Գևորգյանի հետազոտության ոլորտը հիմնականում ընդգրկում է ագրարային քաղաքականության, գյուղմթերքների որակի բարձրացման տնտեսական արդյունավետության, գյուղատնտեսական կոոպերացիայի, բնապահպանության և բնօգտագործման, էկոլոգիական հարցերը:

«Գյուղատնտեսական մթերքների որակի բարձրացման տնտեսական խնդիրները» մենագրության մեջ նա անդրադառնում է ագրոպարենային համակարգի կարևորագույն խնդիրներից մեկին՝ արտադրանքի որակին: Վերլուծելով որակի կատեգորիայի տնտեսական կողմը՝ կարևոր տեղ է հատկացվում տնտեսական խթանների, ստանդարտների, կառավարման նյութական խթանների կատարելագործման հարցերին, առաջարկություններ են արվում գյուղատնտեսական մթերքների որակի բարձրացման ուղղությամբ:

Կարևորելով ագրարային ճգնաժամի հաղթահարման և հանրապետության գյուղատնտեսության հետագա զարգացման հիմնախնդիրները՝ Ս.Գևորգյանը քննության է ենթարկում գյուղատնտեսական կոոպերացիայի դերը («Գյուղատնտեսական կոոպերացիա. անցյալը և ներկան»): Նա գյուղատնտեսական կոոպերացիան համարում է այն առանցքային ուղիներից մեկը, որը կարող է նպաստել մեր հանրապետության գյուղատնտեսական արտադրության ապրանքայնության բարձրացմանը, գյուղացիական տնտեսությունների ամրապնդմանն ու խոշորացմանը: Նրանում փորձ է արվել ներկայացնել գյուղատնտեսական կոոպերացիայի ավելի քան հարյուրամյա պատմության հետագիծը, զարգացման փուլերը, վերլուծել ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների փորձը:

Միջազգային ձեռքբերումները կոոպերացիայի ոլորտում նրա կարծիքով լուրջ կողմնորոշումներ են տալիս ՀՀ գյուղատնտեսական կոոպերացիայի վերականգնման,

կոոպերատիվների, միավորումների, միությունների կազմակերպատնտեսական տարբեր ձևերի և գործունեության մեխանիզմների որոշման ուղղությամբ:

«Ներգնա զբոսաշրջության արդյունավետության բարձրացման հիմնահարցերը Հայաստանում» հետազոտության նպատակը զբոսաշրջության արդի իրավիճակի և հիմնահարցերի համակողմանի վերլուծությունն է: Ելակետ ունենալով միջազգային փորձը, նրանում քննարկվում են շուկայական հարաբերությունների խորացման և կատարյալ մրցակցության ապահովման, զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող, արդյունավետության բարձրացման հնարավորությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, բնապահպանության մի շարք խնդիրների և զբոսաշրջային գործարարության առնչությունների հարցերը:

Աշխ. Գյուղատնտեսական մթերքների որակի բարձրացման տնտեսական խնդիրները, Եր.,1986: Գյուղատնտեսական կոոպերացիա, անցյալը և ներկան, Եր., 2002: Միջազգային բնապահպանական ռազմավարություն (ուսումնական ձեռնարկ), Եր.,2004, Կլիմայի փոփոխության տնտեսական հիմնահարցերը (ուսումնական ձեռնարկ), Եր., 2008, Շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիական փորձաքննության հիմունքները (ուսումնական ձեռնարկ), Եր., 2011 (համահեղինակ), Ներգնա զբոսաշրջության արդյունավետության բարձրացման հիմնահարցերը Հայաստանում, Եր., 2011 (համահեղինակ), Բնապահպանության ոլորտի քաղաքացիական հանրային ծառայողների վերապատրաստման ուսումնամեթոդական ուղեցույց-ձեռնարկ, Եր., 2013 (համահեղինակ), Հողագույքային հարաբերությունների հիմունքներ (ուսումնական ձեռնարկ), Եր., 2013 (համահեղինակ), էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2014 (համահեղինակ), Բնապահպանական և բնօգտագործման վճարմեչօ ոչոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2014 (համահեղինակ), Маркетинг образовательных услуг, монография, Республика Польша, 2015:



ԳՅՈՒՐՋՅԱՆ ԱՐԱ ՍՄԲԱՏԻ

(1949)

Ծնվել է Երևանում: 1966-ին ոսկե մեդալով ավարտել է Երևանի թիվ 42 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Տեխնիկական կիբեռնետիկա» ֆակուլտետը, որն ավարտել է 1971-ին գերազանցության դիպլոմով: 1972-76-ին սովորել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի էկոնոմիկայի և մաթեմատիկայի կենտրոնական ինստիտուտի ասպիրանտուրայում, որտեղ էլ 1976-ին պաշտպանել է թեկնածուական թեզ: Աշխատանքային գործունեության հետագիծը՝ 1989-90-ին՝ ՀԽՍՀ պետպլանի հաշվողական կենտրոնի տնօրեն, 1990-95-ին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պլանավորման և կառավարման գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, 1995-96-ին՝ էներգետիկայի էկոլոգիական խնդիրների ԳՀԻ-ի փոխտնօրեն գիտական գծով, 1996-2000-ին՝ Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի փոխպրեզիդենտ, գլխավոր գիտական քարտուղար, 2000-01-ին՝ ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարությունում փոխնախարար, 2001-2012-ին՝ ՀՀ նախագահի աշխատակազմում՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, առաջին դասի պետական

խորհրդական, 2012-ից՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ, 2013-ից՝ Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի փոխնախագահ:

Վերջին տասնամյակների ընթացքում կուտակվել է հսկայական գրականություն, ձևավորվել է որոշակի հետազոտական ոլորտ, որտեղ փորձ է արվում մարդկային կապիտալի բնութագրերի մեջ խնդիրը լուսաբանել տարբեր կապակցություններում: Դրան է նվիրված նաև Ա.Գյուրջյանի «Մարդկային կապիտալը հասարակության զարգացման հիմնական գործոն» մենագրությունը (համահեղինակներ՝ Բ.Եղիազարյան, Ն.Եղիազարյան): Հեղինակները նկատում են, թե տեսության այդ էվոլյուցիան բերել է տնտեսության զարգացման այժմյան պարադիգմի ձևավորմանը, որի հիմքում գիտելիքի գերակայությունը հավաստող դրույթ է: Այն ելնում է գիտելիքի վրա հիմնված տնտեսության գաղափարից և պայմանավորում է այդպիսին ձևավորելու նպատակին ուղղված գործողությունների մշակման և իրականացման անհրաժեշտությունը: Եվ քանի որ գիտելիք ստեղծողը, կրողը և կիրառողը մարդն է, ապա մարդու մեջ գիտակցված գործելու կարողության ձևավորումն ու արդյունավետ օգտագործումը դառնում են տնտեսության և հասարակության զարգացման, հետևաբար՝ նաև տնտեսագիտության և սոցիալական գիտությունների հետազոտությունների առաջնային ուղղությունները: Աշխատության մեջ տրվում է մարդկային կապիտալի հասկացության հետևյալ ընդհանրական սահմանումը. «Մարդկային կապիտալը մարդ-անհատի կամ մարդկանց որոշակի խմբի այն հնարավորությունների (կարողությունների) հանրագումարն է, որոնք առանձին-առանձին կամ դրանց որևէ համալիրի ձևով կարող են կիրառվել բազմակի անգամ՝ յուրաքանչյուրում ապահովելով պահանջմունք բավարարող արդյունք կամ օժանդակելով այդպիսի արդյունքի ստացմանը»:

Աշխատության մեջ քննարկված հարցերի մասին պատկերացում են տալիս նրանում կատարված արծարծումների շրջանակները՝ մարդկային կապիտալի տնտեսագիտական էությունն ու սահմանումը, համակարգային բնութագրման հիմնախնդիրներն ու մեթոդական մոտեցումը, բնութագրիչ առանձնահատկությունները, հասարակական էությունը, մարդկային կապիտալի և գիտակցված գործելու կարողության ձևակերպումը, մարդկային կապիտալի լիարժեք օգտագործումը՝ հասարակության զարգացման կարևորագույն գործոն, մարդկային զարգացում հասկացությունը, բնութագրերը, գնահատումը և այլն: Նշված հարցերն իրենց «հիերարխիկ տրոհման և մանրամասնեցման» մեջ վկայում են աշխատության վերլուծական տարողության մասին:

Ա.Գյուրջյանը դոկտորական թեզը պաշտպանել է 2009-ին «Տնտեսության զարգացման գիտելիքահենք կառավարման հիմնախնդիրները» թեմայով: Ինչպես համանուն մենագրության, այնպես էլ բազմաթիվ այլ աշխատություններում, նա հետազոտել է մարդկության հետագա զարգացման կարևորագույն նպատակադրում համարվող գիտելիքի հասարակության ձևավորմանն առնչվող մի ամբողջ շարք հարցեր և խնդիրներ: Հեղինակն իր նպատակադրումը փորձում է իրացնել գրքի հետևյալ գլուխներում՝ «Գիտակցված գործունեությունը մարդու ապրելակերպ և նպատակների իրագործման ուղի», «Մարդկային կապիտալը՝ գիտակցված գործունեության հիմնական մասնակից և միջոց», «Մարդկային գիտելիքահենք գործունեության կառավարման սկզբունքային ապահովման համակարգը. էությունը և կառուցվածքը», «Սկզբունքագիտություն. առանձնացումը, որպես գիտության ճյուղ, հետազոտությունների հիմնական ուղղությունները», «Կառավարման ընդհանրական գործառույթները և իրականացման տեխնոլոգիական ապահովումը», «Համակարգային կառավարում. էությունը և գործոնները», «Նպատակային ծրագրերի

իրականացման ընթացիկ պլանավորում և կազմակերպում»: Նշված վերնագրերում արտահայտված է մարդկային գիտակցված գործունեության հիմնարար պարադիգմը: Նա հետամուտ է «ոչ թե մասնակի նպատակների միավորման և փոխհամաձայնեցման (այսինքն՝ նպատակների սինթեզի կամ ներքևից վերև համատեղման) եղանակով, այլ մարդակերպի առանձնահատկություններից մարդկային առավել ընդհանրական նպատակների, հնարավոր բազմությունից տրամաբանական ընտրություն կատարելով: Հետևաբար, այս ընտրությունը հիմք կարող է դառնալ պատասխանելու այն հարցին, թե ինչպես ձևավորել մարդկային հասարակություն, այդ թվում նաև ողջ մարդկության համար, նպատակների համակարգը, համակարգել մարդկության իր հատվածների բազմաթիվ և տարաբնույթ նպատակները՝ ձևավորելով դրանց հիերարխիկ պատկերը, որպես համակարգ: …Վերջինիս ձևավորումն ընթանալու է դրանց հիերարխիկ կառուցքավորման միջոցով, ըստ հաջորդական մակարդակների աստիճանական մանրամասնեցման և կոնկրետացման եղանակով, յուրաքանչյուր մակարդակին հավելելով նաև այդ մակարդակին հատուկ սեփական նպատակները»: Այդպիսին է մարդկության գոյության և զարգացման գործընթացների ճանաչողությունը Ա.Գյուրջյանի վերլուծական սխեմայում:

Նրա կողմից մշակված տնտեսության տարբեր ոլորտների համար նախատեսված կառավարման հիմնադրույթները, մասնավորապես կապված սոցիալ-տնտեսական նպատակային ծրագրերի իրականացման ընթացակարգի, արդյունքների գնահատման և վերլուծության, մոնիթորինգի հետ և այլն, ստացել են իրենց իրացումները տարբեր նպատակային ծրագրերի մշակման ու իրականացման ընթացքում:

Պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով (2008):

Աշխ. Методические рекомендации по разработке комплексных народно-хозяйственных программ, т.1, т.2, М., УЭМИ АН СССР, 1976 (в соавторстве), Методические рекомендации по программно-целевому управлению решением проблем науки и техники, М., УЭМИ АН СССР, 1981 (в соавторстве), Программно-целевой метод в планировании, М., “Наука”, 1982 (в соавторстве), Մարդկային կապիտալը հասարակության զարգացման հիմնական գործոն (ուսումնական ձեռնարկ), Եր., 2007 (համահեղինակներ՝ Բ.Եղիազարյան, Ն.Եղիազարյան), Լինսի հիմնադրամը Հայաստանում, Եր., 2008, Տնտեսության զարգացման գիտելիքահենք կառավարման հիմնախնդիրները, Եր., 2008, Կորպորատիվ կուլտուրայի կառավարման հիմնախնդիրները հանրապետության կազմակերպություններում (ուսումնական ձեռնարկ), Եր., 2009 (համահեղինակ):

ԳՈՄՑՅԱՆ ԱՐԱՐԱՏ ԴՎԻՆԻ

(1948)

Ծնվել է Լենինականում (ներկայումս՝ Գյումրի): 1971-ին ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1982-86-ին աշխատել է ՀԿԿ մարմիններում, 86-90-ին եղել է Աշոցքի (նախկին՝ Ղուկասյան) կուսշրջկոմի 1-ին քարտուղար: 1990-96-ին՝ ՀՀ կառավարությանն առընթեր բնակարանային կոմունալ տնտեսության հանրապետական միավորման նախագահ, 1996-99-ին՝ ՀՀ Շիրակի մարզպետ, 1999-2002-ին՝ ՀՀ վարչապետի խորհրդական, 2002-ից՝ ՌԴ Հարավային Դաշնային օկրուգում ՀՀ գլխավոր հյուպատոս: Միաժամանակ 1985-ից դասախոսել է ՀՊՄՀ-ում, ԵՊՏԻ-ում: 2005-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Ազատ տնտեսական գոտիների ստեղծման տեսամեթոդական և կազմակերպատնտեսական հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով:

Ա.Գոմցյանի աշխատանքները վերաբերում են ՀՀ արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացմանը, միջազգային կապերի բնագավառում կառավարման նոր ձևերի և Հայաստանում դրանց կիրառման հնարավորությանը, գիտատեխնիկական առաջընթացի արդյունավետության բարձրացման, ընդհանրապես կառավարման ռազմավարության, ազատ տնտեսական գոտիների ստեղծման հայեցակարգային հիմունքներին, ՀՀ ռեգիոնալ ոլորտի զարգացման արդի հիմնախնդիրներին:

Գոմցյանի «Совершенствование управления внедрением новой техники (по материалам предприятий станкоинструментальной промышленности Арм. ССР)» մենագրության մեջ քննության առարկան խորհրդային տարիներին հանրապետության արդյունաբերության դիմագիծը պայմանավորող ճյուղերից մեկի՝ հաստոցաշինական արդյունաբերության մեջ նոր տեխնիկայի յուրացման ու ներդրման արդյունավետության բարձրացման հարցերն են: Նրանում դիտարկելով ճյուղում գիտատեխնիկական առաջընթացի զարգացման միտումներն ու հիմնական ուղղությունները՝ մշակվել են նոր տեխնիկայի պլանավորման ցուցանիշների համակարգ և փաստացի տնտեսական արդյունավետության որոշման առանձին դրույթներ՝ միաժամանակ հիմնավորելով նոր տեխնիկայի ներդրման գործընթացների խթանների և տնտեսական լծակների համալիր օգտագործման անհրաժեշտությունը:

Գոմցյանը կարևոր տեղ է հատկացնում ՀՀ ագրարային ոլորտին. վերլուծության է ենթարկում հանրապետության գյուղատնտեսական ներուժը, արդի վիճակը, գյուղատնտեսության զարգացման բնական նախադրյալներն ու ուղիները («ՀՀ ագրարային ոլորտի զարգացման արդի հիմնախնդիրները»)՝ ցույց տալով, որ հողի սեփականաշնորհման լայնամասշտաբ ծրագիրն իր թերություններով հանդերձ, նպաստեց գյուղատնտեսական ոլորտի որոշ ակտիվացմանը և նրանում զբաղվածների թվի աճին, թեպետ գյուղատնտեսությամբ զբաղվող աշխատուժը դեռևս լիարժեք չի օգտագործվում: Արտագաղթը, բնակչության իրական եկամուտների կրճատումն անցած տասը տարիներին բացասաբար են ազդել գյուղատնտեսության զարգացման, մասնավորապես սննդամթերքի ներքին պահանջարկի վրա: Նա ներքին պահանջարկի ցածր մակարդակի պայմաններում արտահանման շուկաների ընդլայնումը դիտում է որպես գյուղատնտեսական ոլորտի զարգացման խթանման ուղղություն: Մյուս կողմից էլ գտնում է, որ ներկայումս արտահանման շուկաները չեն կարող փոխ-

հատուցել այն բացը, որը գոյություն ունի ներքին պահանջարկի ցածր մակարդակի և տեղական շուկայի տարողունակության թերի օգտագործման պայմաններում: Հաշվի առնելով, որ գյուղմթերքների գներն արտադրողների մակարդակում բավականին ցածր են և պատշաճ եկամուտ չեն ապահովում տնտեսությունների համար, առաջարկվում է գյուղմթերքների և սննդամթերքների վերամշակման ու իրացման մեխանիզմների բարելավում վերամշակողների և իրացնողների միջև մրցակցության խրախուսման և արտադրանքի որակի բարձրացման միջոցով:

Գոմցյանն անդրադարձել է ՀՀ տնտեսության միջազգային համակարգին ինտեգրման, ազատ տնտեսական գոտիների ստեղծման և զարգացման խնդիրների ուսումնասիրությանը: Հաշվի առնելով հանրապետության և նրա առանձին տարածաշրջանների կոնկրետ աշխարհագրական, երկրաքաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ պայմանները, նա ազատ տնտեսական գոտիներ ստեղծելու հնարավորությունները դիտում է որպես տարածքային տնտեսության զարգացման, արտասահմանյան ներդրումների ներգրավման հրապուրիչ դաշտ ստեղծելու պայման, միաժամանակ փորձում հիմնավորել ազատ տնտեսական գոտիների տարբերակումները:

1990-95-ին՝ ՀՀ ԳԽ և 1995-99-ին ԱԺ պատգամավոր է:

Աշխ. Совершенствование управления внедрением новой техники (по материалам предприятий станкоинструментальной промышленности Арм.ССР), Ер., 1982, Теоретико-методологические проблемы формирования свободных экономических зон в мирохозяйственной системе, Ростов-на-Дону, 2004, ՀՀ ագրարային ոլորտի զարգացման արդի հիմնախնդիրները, Եր., 2005 (համահեղինակ):

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԻ

(1925)

Ծնվել է Չանախչի գյուղում (այժմ՝ Զանգակատուն՝ ՀՀ Արարատի մարզում):1943-85-ին ծառայել է խորհրդային բանակում: 1957-ին ավարտել է Լենինգրադի բարձրագույն ռազմամանկավարժական ինստիտուտը: Դասախոսել է բանակի տարբեր բուհերում: Ունեցել է գնդապետի կոչում: 1983-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, 1984-ին՝ պրոֆեսորի կոչում: 1986-ից դասախոսել է Խարկովի (Ուկրաինա) ազգային տնտեսագիտական համալսարանում:

Գիտական հետաքրքրությունները վերաբերում են տնտեսական օրենքների գործողության մեխանիզմի, սեփականատիրական հարաբերությունների տեսության այլևայլ հարցերին: Քանի որ տնտեսական օրենքների օգտագործման ձևերն ու մեթոդները հիմնականում հանդիսանում են իրենց՝ այդ օրենքների էության, բնույթի և օբյեկտիվ գործողության եղանակների արտահայտությունը, դրանց արդյունավետ օգտագործման մեթոդների մշակումը, տնտեսական մեխանիզմի հիմնավոր բարելավումը անիմաստ են առանց տնտեսական օրենքների փոխադարձ կապերի, ենթակարգության և գործողության եղանակների

խոր բացահայտման: Հենց այդ տեսանկյունն է դարձել «Механизм действия экономического закона социализма» մենագրության քննության առարկա: Տնտեսական օրենքը նա դիտում է որպես համակարգային որակ և զարգացող օրենք, որոնք, բնորոշ տնտեսական օրենքի պլանաչափ բնույթի և գործողության մեխանիզմի տարրերի համակարգին, սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքին՝ որպես կապերի կենտրոնական օղակի, և մյուս օրենքներին:1990-ական թվականներից նրա հետազոտական թեմատիկան կապված էր քաղաքատնտեսության սկզբունքների վերանայման, սեփականատիրական հարաբերությունների պատմության ու արդի հարցերին:

Աշխ. Механизм действия экономического закона социализма. Харков, 1979, Производительность труда промышленности, Киев, 1989 (համահեղինակ), Политическая экономика: принципы обновления и развития, Харков, 2000, Собственность: история и современность, Харков, 2002.

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԻԱՆԱ ՀԱՅԿԱՋԻ

(1968)

Ծնվել է Երևանում:1985-ին ոսկե մեդալով ավարտել է թիվ 77 միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ և այն գերազանցության դիպլոմով ավարտել 1989-ին: Սովորել է նույն բուհի ասպիրանտուրայում: 2001-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2003-ին՝ դոցենտի կոչում: «Ներդրումային գործունեության ռիսկերի վերլուծության և կառավարման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» ատենախոսության համար 2015-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 1994-ից դասավանդում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, 2011-ից՝ որպես «Կառավարչական հաշվառում ու աուդիտ» ամբիոնի վարիչ: Ամեն մի գործունեություն ենթակա է ռիսկի սկզբունքին, այդ թվում՝ տնտեսական: Ռիսկը շուկայական տնտեսության ուղեկիցն է: Թեև հարկ է նկատել, որ բոլոր տնտեսական համակարգերում էլ առա է եղել ռիսկի գործոնը: Այն ենթադրում է որոշակի իրավիճակ և ծագում է՝ կապված անորոշության հետ, երբ անհրաժեշտություն է առաջանում գնահատելու որոշակի արդյունքի հասնելու հավանականությունը և պարզելու այդ ճանապարհին առաջացող անհաջողության հնարավորությունը: Այսինքն՝ ամեն մի գործողություն՝ կապված ապագայի հետ՝ ունի անորոշ

ելք, հետևաբար նաև ռիսկի առկայություն: Իսկ տնտեսական համակարգերի փոխակերպության ժամանակ ռիսկի գործոնն ավելի է մեծանում:

Լ.Գրիգորյանի հետազոտական թեմատիկան տնտեսական գործունեության ռիսկերի վերլուծությունն է: Համանուն վերնագրով նրա աշխատության մեջ ռիսկի՝ «որպես ֆինանսական վիճակի որոշման կարևորագույն տարրի», դիտակետից համակարգված ձևով կապերի որոշակի հաջորդականության մեջ դիտարկվում են ռիսկերը՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի, կազմակերպության ռիսկի գործոնների և դրա առաջացմանը նպաստող պայմանների, տնտեսական գործունեության ռիսկի վիճակագրական վերլուծության մեթոդաբանության, չպահանջարկված արտադրանքի ռիսկի, պահանջարկի պարադիգմայի հարցերը:

Լ.Գրիգորյանի հրապարակումներում հանգամանալից քննության են ենթարկվել առևտրային կազմակերպություններում գոյություն ունեցող ներդրումային ռիսկերի կառավարման համակարգերի անարդյունավետությունը պայմանավորող պատճառները: Նրա կողմից մշակվել է ներդրումային ռիսկերի կառավարման մեթոդ, որն ի տարբերություն գոյություն ունեցող մոտեցումների, հենվում է ներդրումների ռիսկի կառավարման համակարգի որոշակի սկզբունքների վրա, հիմնվում է ներդրումային ռիսկի կառավարման արդյունավետության առաջադրած ֆինանսական չափանիշների օգտագործման վրա, հիմք է ընդունում ներդրումային ռիսկի կառավարման փաթեթային-նախագծային միասնացման և արժեքային մոտեցումները: Մշակվել են ներդրումային ռիսկի կառավարման գործառութային-ալգորիթմիկ և կազմակերպական սխեմաներ, ինչպես նաև ֆինանսական վերլուծության մեթոդ, որը հաշվի է առնում ներդրումների ռիսկի հիմնական գործոնների նպատակային արդյունքի վրա ազդեցությունը:

Աշխ. Տնտեսական գործունեության ռիսկերի վերլուծությունը, Եր., 2006:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ԱՇՈՏԻ

(1937)

Ծնվել է Սպիտակի շրջանի (այժմ՝ Լոռու մարզի) Գոգարան գյուղում: 1957-ին ավարտել է Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) գյուղատնտեսական տեխնիկումը, իսկ 1962-ին՝ Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը և աշխատանքի անցել «Սոյուզսելխոզտեխնիկա» համամիութենական միավորման Հայաստանի պետական մեքենափորձարկման կայանի փորձնական տնտեսությունում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ վերջում կառավարիչ: 1965-68-ին սովորել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի գյուղատնտեսության էկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտուրայում և նույն ամբիոնում անցել աշխատանքի՝ 1968-76-ին՝ որպես ասիստենտ, 1976-ից՝ դոցենտ: 1982-2005-ին եղել է նույն ամբիոնի վարիչ, 2008-2009-ին՝ «Ագրոբիզնես և շուկայաբանություն» ֆակուլտետի դեկան, 2010-ից՝ «Ապրանքագիտության և մարքեթինգի» ամբիոնի վարիչն է:

Կ.Գրիգորյանը 1971-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 1980-ին՝ դոցենտի կոչում: «Պարենային անվտանգության ապահովման և աղքատու-

թյան նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում» հետազոտության համար 2011-ին նրան շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

Համանուն վերնագրով նրա մենագրության հետազոտական ընդգրկումներն են՝ անվտանգության սոցիալ-տնտեսական էությունը, նրա համաշխարհային և ազգային ընդհանրությունների և առանձնահատկությունների, պարենային անվտանգության տեսական հիմունքների, պարենային ապահովվածության՝ որպես աղքատության հաղթահարման ռազմավարություն և այդ ուղղությամբ ագրարային քաղաքականության հարցերը:

Կ.Գրիգորյանը մի շարք գիտահանրամատչելի աշխատանքների հեղինակ է, որոնք վերաբերում են գյուղատնտեսական մթերքների արտադրությանն ու մարքեթինգին:

Աշխ. Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում, Եր., 2011, Գյուղատնտեսության էկոնոմիկա, գործնական աշխատանքների ուսումնական ձեռնարկ, Եր., 2013:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԻՀՐԱՆ ԱՎԵՏԻՍԻ

(1928-1993)

Ծնվել է ՀԽՍՀ Կամոյի շրջանի (այժմ՝ Գեղարքունիքի մարզ) Այրիվան գյուղում: 1960-ին ավարտել է Հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտը, իսկ 1965-ին՝ ՍՄԿԿ ԿԿ բարձրագույն կուսակցական դպրոցը: 1980-ին ստացել է տնտեսական գիտությունների դոկտորի աստիճան, իսկ 1982-ին՝ պրոֆեսորի կոչում: Դասախոսական աշխատանք է կատարել 1972-ից, նախ՝ ԵՊՀ-ում, ապա՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնում:

Աշխատանքները վերաբերում են հայ տնտեսագիտական մտքի պատմությանը և սոցիալիզմի քաղաքատնտեսության առանձին խնդիրներին: Նրա «Քաղաքատնտեսության հարցերը Ստ.Շահումյանի աշխատություններում» մենագրությունը բովանդակում է քաղաքատնտեսության առարկայի և մեթոդի, հասարակական-տնտեսական արտադրաեղանակների ծագման ու հերթափոխության, ագրարային հարցի տեսության, սոցիալիստական տնտեսաձևի տեսական և գործնական խնդիրների վերաբերյալ հայ մարքսիստական մտքի ներկայացուցիչներից մեկի՝

Ստ.Շահումյանի հայացքների վերլուծությունը: Այդ թեմատիկան նրան ուղեկցեց նաև հետագայում: Համակարգելով և ընդհանրացնելով քաղաքատնտեսության տարբեր հիմնահարցերի վերաբերյալ հայ առաջին մարքսիստ տնտեսագետների (Ս.Կասյան, Բ.Կնունյանց, Գ.Ղարաջյան, Ա.Մյասնիկյան, Ս.Սպանդարյան և ուրիշներ) հայացքները՝ նա Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունը բաժանում է երեք ժամանակաշրջանների՝ մարքսիզմի տարերային քարոզչության ժամանակաշրջան (XIX դարի վերջին քառորդ), սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծման ու ձևավորման ժամանակաշրջան (XX դարի սկիզբ), խորհրդային իշխանության հաստատումից հետո ընկած ժամանակաշրջան: Այս վերջին շրջանի հայ տնտեսագիտական մտքի պատմությանն է նվիրված «Հայ սովետական տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր» աշխատությունը (համահեղինակ), որտեղ նրա քննության առարկան հայ մարքսիստական մտքի ներկայացուցիչներ Ալեքսանդր Մյասնիկյանի և Սարգիս Կասյանի տնտեսագիտական ժառանգությունն է:

Նրա հրապարակումներում արծարծվել են նաև տնտեսական արդյունավետության հարցերը: Հեղինակ է մի շարք գիտամեթոդական աշխատանքների:

Աշխ. Քաղաքատնտեսության հարցերը Ստեփան Շահումյանի աշխատություններում, Եր., 1972, Հայաստանում մարքսիստական քաղաքատնտեսության տարածման պատմությունից (XIX դարի 80-ական թվականներից XX դարի 30-ական թվականները), Եր., 1976, Հայ սովետական տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, Եր., 1976 (համահեղինակ), Արդի հակամարքսիստական տնտեսագիտական տեսությունների քննադատություն, Եր., 1981, Արդյունավետության գումարելիները, Եր., 1986:

ԳՈՒԼԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԳՐԻԳՈՐԻ

(1901-1975)

Ծնվել է Արգավա գյուղում (այժմ՝ Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի շրջանում): 1931-ին ավարտել է Անդրկովկասյան կոմունիստական համալսարանը: 1949-ին ստացել է տնտեսական գիտությունների դոկտորի աստիճան, իսկ 1950-ին՝ պրոֆեսորի կոչում: Գիտամանկավարժական գործունեությունը սկսել է 1931-ից: Դասավանդել է Անդրկովկասյան կոմունիստական համալսարանում: 1931-1975-ին եղել է Թբիլիսիի և Մոսկվայի երկաթուղային տրանսպորտի բուհերում մարքսիզմ-լենինիզմի, քաղաքատնտեսության ամբիոնների վարիչ:

Աշխատանքները վերաբերում են հայ տնտեսագիտական մտքի պատմության, տնտեսական պատմության և սոցիալիզմի քաղաքատնտեսության հարցերին:

Խ.Գուլանյանի «Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության» աշխատությունն առաջիններից էր, որտեղ XVIII դարի վերջերից մինչև XIX դարի 90-ական թվականներն ընկած ժամանակաշրջանը հայ տնտեսա-

գիտական միտքը ենթարկում է որոշակի համակարգման: Նրանում Հայաստանի XIX դարի սոցիալ-տնտեսական պայմանների և համքարական տնտեսածևի պատմությանը հաջորդում է հայ տնտեսագիտական մտքի վերլուծություն՝ ըստ հետևյալ պարբերացման՝ XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի առաջին կեսի ժամանակաշրջան (Սիմեոն Երևանցի, Մխիթարյան միաբանություն, Շահամիրյանների խմբակ, Նիկողայոս Զորայան, Խաչատուր Աբովյան), XIX դարի կեսեր և 60-ական թվականներ («Հյուսիսափայլ» ամսագիրը, Ստեփանոս Նազարյան, Միքայել Նալբանդյան), XIX դարի 70-90-ական թվականներ («Մշակ» թերթը, Գրիգոր Արծրունի, «Մուրճ» ամսագիրը, Ավետիք Արասխանյան): Առանձնացվում են տնտեսագիտական մտքի երեք հիմնական հոսանքներ՝ ֆեոդալակղերական, հեղափոխական-դեմոկրատական և լիբերալ-բուրժուական: «Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ» մենագրությունը նշված աշխատության շարունակությունն է, որն ընդգրկում է XIX դարի 90-ական թվականներից մինչև 1920թ. ընկած ժամանակաշրջանը: Ուսումնասիրությունը վերաբերում է հայ իրականության մեջ մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածման գործում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հայ մարքսիստների ունեցած դերին, հնչակյանների, դաշնակցության տնտեսական ծրագրերի և Մ.Բունիաթյանի ու Վ.Տոտոմյանցի հայացքների վերլուծությանը: Մարքսիստական գաղափարախոսության տարածման տնտեսական և քաղաքական նախադրյալների, բանվորական շարժման բնույթի, քաղաքական կազմակերպությունների դերի, բուրժուադեմոկրատական և սոցիալիստական հեղափոխությունների բնույթի, շարժիչ ուժերի և այլ հարցեր են քննարկվում «Марксистская мысль в Армении» աշխատության մեջ:

Գուլանյանի մի քանի ուսումնասիրություններ վերաբերում են սոցիալիստական տնտեսաձևի տեսության հարցերին: «Технический прогресс и организация труда» աշխատության նպատակն էր ցույց տալ աշխատանքի կազմակերպման որոշ հիմնահարցերի կարևորությունը, դրանց փոխադարձ կապը տեխնիկական առաջընթացի հետ և դրանց տնտեսական արդյունավետությունը: Նրա այլ աշխատությունների քննարկման նյութ են դարձել ժողովրդական տնտեսության կառավարման սկզբունքների ու մեթոդների, արտադրության կառավարման կատարելագործման, կառավարման դերն արտադրական ֆոնդերի և ամբողջական աշխատանքային ժամանակի օգտագործման բարելավման մեջ, արտադրության և սպառման, սոցիալիստական ընդլայնված վերարտադրության և այլ հարցեր:

Աշխ. Հայաստանի տնտեսական վիճակը XIX դարի առաջին կեսում և Խաչատուր Աբովյանի տնտեսագիտական հայացքները, Եր., 1954, Микаел Налбандян, М., 1955, Производство и потребление при социализме, М., 1957, Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության (XVIII դարի վերջերից մինչև XIX դարի 90-ական թվականները), Եր., 1959, Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ (1890-1920), Եր., 1961, Технический прогресс и организация труда (в соавторстве), М., 1964, Расширенное социалистическое воспроизводство в период развернутого строительства коммунизма в СССР, М., 1964, Марксистская мысль в Армении, Е., 1967, Управление социалистической промышленностью в современных условиях, М., 1970.

ԳՈՒԼԻՇԱՄԲԱՐՈՎ ՍՏԵՓԱՆ ԻՈՍԻՖԻ

(1849-1915)

Ծնվել է Թիֆլիսի նահանգի Գորի քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում: 1862-ին ընդունվել է Թիֆլիսի գիմնազիան: 1869-ին ավարտում է Քութայիսիի գիմնազիան և նույն թվականին ընդունվում Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը՝ այն ավարտելով 1874-ին: Արդեն 1870-ական թվականներին սկսում են լույս տեսնել նրա առաջին հոդվածներն ու աշխատությունները: 1875-79-ին եղել է «Бакинская известия» թերթի խմբագիրը: Որոշ ժամանակ պետական պալատում (Թիֆլիս) աշխատելուց հետո՝ 1891-ին, փոխադրվում է Պետերբուրգ՝ տարբեր պաշտոններ զբաղեցնելով հաղորդակցության միջոցների, առևտրի, արդյունաբերության դեպարտամենտներում: Գուլիշամբարովը սերտ ծանոթության մեջ էր ռուսական շատ հայտնի տնտեսագետների (Մենդելեև, Կարիշև, Նեբոլսին, Կովալևսկի և ուրիշներ) հետ, մասնակցել է տարիֆների մշակման աշխատանքներին, բազմիցս գործուղվել է արտասահման՝ Եվրոպա ու Ամերիկա, որոնց արդյունքների վերաբերյալ համատեղ գիտական հաշվետվություններն ու աշխատություններն օգտակար են եղել Ռուսաստանի արտադրողական ուժերի զարգացման գործում: Նրա գիտական

ժառանգության մեջ նշանակալից տեղ են գրավում Անդրկովկասի և Միջին Ասիայի տնտեսական պատկերն ուրվագծող վիճակագրական տեսություններն, ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության վերաբերյալ:

Նա իր ապրած ժամանակաշրջանի տնտեսական զարգացման պատմաբանն էր: Այդ հարցերն արտահայտվել են շուրջ հարյուրից ավելի մենագրություններում, ուսումնասիրություններում ու հոդվածներում, որոնց զգալի մասը թարգմանվել է անգլերեն, ֆրանսերեն ու գերմաներեն: Դրանք հարուստ նյութ են պարունակում ոչ միայն Ռուսաստանի ու Կովկասի, այլ նաև համաշխարհային տնտեսության պատմության վերաբերյալ: Նավթարդյունաբերության հարցերը միշտ եղել են նրա գիտական նախասիրության թեման, հանդես է եկել նրա տեխնիկական կատարելագործման բազմաթիվ առաջարկություններով, միաժամանակ դիտողություններ արել նաև այլ ճյուղերի վերաբերյալ:

Լինելով լավատեղյակ եվրոպական ու ռուսական տնտեսական ու սոցիալական ուսմունքներին՝ տնտեսական կյանքի ճանաչողության հարցերում նա ավելի շատ պրակտիկ էր, քան տեսաբան:

Տնտեսական զարգացման ընթացքի հետազոտությունը տնտեսագետի աշխատություններում կատարվում է պատմականության սկզբունքով: Այն թույլ է տալիս ոչ միայն կոնկրետ պատմական պայմաններում դիտել երևույթների ծագման ու զարգացման ընթացքը, այլև բացահայտել ապագա միտումները: Իհարկե, թիվը, փաստը ինքնին կարևոր են տնտեսական զարգացման ընթացքի լուսաբանման համար: Սակայն դրանք առավել ստույգ են արտացոլում այդ զարգացման ընթացքը, եթե հաշվի են առնվում պատմական կոնկրետ իրադրությունն ու պատմության փորձը: Հենց այս իմաստով էլ Ս. Գուլիշամբարովը նկատում է, թե տնտեսական պրոցեսների քննությունը պատմական զուգահեռներում պետք է իրականացնել «ոչ միայն

թվերով, այլ նաև լրացնելով պատմական տեղեկություններով, քանի որ անցյալի իմացությունն օգնում է հեշտ հասկանալ ներկան և կանխատեսել ապագան»

Նրա տնտեսագիտական ժառանգության մեջ զգալի տեղ է գրավում շրջանառության ոլորտի հարցերի քննությունը: Այս զուգահեռներում էլ նա տարբեր առիթներով անդրադարձել է տնտեսագիտության տարբեր դպրոցների գնահատմանը: Տեղին է նրա այն նկատումը, որ չնայած Կոլբեռի հովանավորչական քաղաքականությունը նպաստեց արդյունաբերության, նավագնացության ու ապրանքաշրջանառության զարգացմանը, սակայն ի վերջո հանգեցրեց գյուղատնտեսության քայքայմանը, ինչը պայմանավորեց «երկրի բարեկեցության աղբյուրների վերաբերյալ հայացքների արմատական փոփոխությունը» և տնտեսագիտական նոր դպրոցի ֆիզիոկրատների ի հայտ գալը:

Ֆիզիոկրատների տնտեսական ուսմունքը չմնաց մեկուսացված միայն Ֆրանսիայում: Արտադրողական ուժերի զարգացումը եվրոպական երկրներում և հատկապես մանուֆակտուրային արտադրության զարգացումն Անգլիայում ընդլայնեցին նյութական արտադրության ճյուղերի և երկրի հարստության ստեղծման վերաբերյալ ֆիզիոկրատների պատկերացումները. «Այդ ուսմունքի ազդեցության տակ XVIII հարյուրամյակի վերջին ձևավորվեց եվրոպական գլխավոր երկրների ժողովրդական տնտեսության բնույթը»:

Ս.Գուլիշամբարովը լուսավորիչների և ֆիզիոկրատների ուսմունքների միջև իրավամբ ինչ-որ աղերսներ էր տեսնում: Վերջին հաշվով, լուսավորիչների «բնական կարգի» տեսությունը բխում էր հենց ֆիզիոկրատների մերկանտիլիզմի քննադատության կոնցեպցիայից՝ այն համարելով անբնական և մարդու բնությանն անհամապատասխան ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականորեն:

Եթե Ֆրանսիան XVIII դարի երկրորդ կեսին հանդիսանում էր ամբողջ «աշխարհի մտավոր կենտրոնը», ապա

նույնը չի կարելի ասել տնտեսական զարգացման տեսակետից: Անգլիան միջազգային ասպարեզում ձեռք էր բերել գերիշխող դիրք: Նա փաստական տվյալներով ցույց է տալիս, թե ինչպես են ուժեղանում առևտրական կապերը հին ու նոր աշխարհների միջև, թե ինչպես էին գրեթե բոլոր երկրները ներգրավվում համաշխարհային ապրանքաշրջանառության ընդհանուր ոլորապտույտի մեջ: Դրանում դրսևորվում էր կապիտալիստական տնտեսածևի օրինաչափություններից մեկը՝ որպես դրա զարգացման նախապայման:

Աշխարհի քարտեզն անընդհատ վերածևվում էր զարգացած երկրների միջև: Ինչպես նկատում է Ս.Գուլիշամբարովը, եվրոպական երկրների արդյունաբերության արագ զարգացումը փոխում է գաղութների տնտեսական նշանակությունը՝ առաջ բերելով փոփոխություններ ինչպես մայր երկրների, այնպես էլ գաղութների տնտեսության ճյուղային կառուցվածքում, իսկ սա էլ իր հերթին՝ միջազգային ապրանքափոխանակության մեջ: Գաղութները դառնում էին գաղութատեր երկրների արդյունաբերության հումքի մատակարարներ և ապրանքների իրացման շուկաներ: Մայր երկրներում արագորեն զարգանում էր մշակող արդյունաբերությունը, իսկ գաղութներում՝ արդյունահանող արդյունաբերությունը: Գաղութների շահագործումը, նկատում է տնտեսագետը, իրականացվում էր նախ՝ որպես էժան աշխատուժ և հումքի աղբյուր և, ապա՝ որպես ապրանքների իրացման շուկաներ, որտեղ մայր երկրներում գաղութների էժան հումքից պատրաստված արդյունքները վաճառվում էին նույն երկրներում անհամեմատ բարձր գներով:

Մինչ Ֆրանսիայում հեղափոխությունը ցնցեց ամբողջ աշխարհը, Անգլիայում աստիճանաբար հասունանում էր մի այլ հեղափոխություն՝ արդյունաբերական հեղաշրջումը, որը Ս.Գուլիշամբարովի կարծիքով ունեցավ ոչ պակաս նշանակություն տնտեսական կյանքի հետագա զարգաց-

ման համար՝ ընդգրկելով դրա բոլոր կողմերն ինչպես Անգլիայում, այնպես էլ մյուս երկրներում:

Արդյունաբերական հեղաշրջումը Եվրոպայում նույն արագությամբ չկատարվեց, ինչպես Անգլիայում, որի պատճառը հիմնականում Նապոլեոնի մայրցամաքային շրջափակումն էր: Ընդհակառակը, այն է՛լ ավելի նպաստեց Անգլիայի արագ զարգացմանը: Անգլիայի տեխնիկական նորամուծությունները չէին ներդրվում այլ երկրներում, իսկ մայրցամաքային համակարգի վերացումից հետո երկիրն այնքան էր զարգացել, որ դարասկզբին արդեն գտնվում էր «ամեն մի մրցակցությունից դուրս»՝ ինչպես համաշխարհային տնտեսության, այնպես էլ միջազգային քաղաքականության ասպարեզում: Բրիտանական էժանագին ապրանքները սկսեցին ողողել ամբողջ միջազգային շուկան, և արդյունաբերական պրոտեկցիոնիզմը փոխարինվեց ազատ առևտրի կամ ֆրիտրեդերականության քաղաքականությամբ: Նրա առևտրական էքսպանսիան պատճառ դարձավ մյուս երկրներում հակառակ քաղաքականության՝ հովանավորական միջոցառումներին՝ նպատակ հետամտելով պաշտպանել ու խրախուսել ներքին արդյունաբերության զարգացումը:

Միջազգային ապրանքաշրջանառության հարցերի քննարկումը եղել է Ս.Գուլիշամբարովի գիտական հետազոտությունների հիմնական օբյեկտներից մեկը: Ապրանքաշրջանառությունը երբեք այնպիսի ծավալներ չէր ընդունել, ինչպես XIX դարում: Տնտեսագետն այն կապում էր արտադրության նյութական հիմքի՝ արտադրողական ուժերի զարգացման և աշխատանքի հասարակական բաժանման խորացման հետ: Նա իր բազմաթիվ աշխատություններում մանրամասն տվյալներ է բերում եվրոպական գլխավոր երկրների նյութական արտադրության ճյուղերի զարգացման, ապրանքաշրջանառության վերաբերյալ, ցույց տալիս Ռուսաստանի մասնակցությունը դրանում: Ռուսաստանի տնտեսական զարգացման և միջազգային ասպա-

ռեզում նրա դերի բարձրացման գործում շրջադարձային էր համարում 1861թ. գյուղացիական ռեֆորմը: Դա «մեծ ռեֆորմների պատմաշրջան էր Ռուսաստանի արդյունաբերական զարգացման պատմության մեջ»:

Գյուղացիության ազատագրման հետ միասին արագորեն վերանում էին «Ռուսաստանի արդյունաբերական գործունեության նահապետական ձևերը»: «Մասնավոր նախաձեռնությունը» լայն թափ ստացավ, ազատ կապիտալները գործնական կիրառում գտան, կառուցվեցին հազարավոր գործարաններ ու ֆաբրիկաներ, լայն ծավալ ընդունեց երկաթուղային շինարարությունը՝ ծայրամասային ժողովուրդներին ներքաշելով այդ ընդհանուր զարգացման ոլորտը:

Գուլիշամբարովն անխուսափելի էր համարում կապիտալիզմի զարգացումը: Նա տեսնում էր այդ պրոցեսը և պաշտպանում այն, որովհետև դրա հետ էր կապում երկրի արտադրողական ուժերի զարգացումը:

Տնտեսական քաղաքականության հարցերում Ս.Գուլիշամբարովը պրոտեկցիոնիստ էր, նրա կարծիքով, հայրենական խոշոր արդյունաբերության զարգացումը մի մեծ մասով էլ կախված է այն հովանավորող տարիֆամաքսային քաղաքականությունից:

Նրա հետազոտությունների մի զգալի մասը վերաբերում է համաշխարհային տնտեսության, հատկապես միջազգային առևտրի հարցերին: Իսկ Գուլիշամբարովի «Всемирная торговля в XIX в. и участия в ней России» աշխատանքն արժանացել է ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության ոսկե մեդալին, որում «XIX դարի վերջի համաշխարհային առևտուրը հայտարարի բերելու միտքը չափազանց օրիգինալ է» (Յանժուլ): Նա գտնում է, որ արտադրողական ուժերի զարգացումը և դրա հետ կապված աշխատանքի հասարակական բաժանման խորացումը՝ մարդկության «կուլտուր-պատմական առումով» առաջընթացը, դարձել է համաշխարհային

տնտեսության կազմավորման պատճառ, որ տարբեր երկրների աշխարհագրական-տնտեսական ինքնուրույնություն հասկացությունը ստացել է հարաբերական իմաստ, և, որ մերձեցումն օբյեկտիվ և անխուսափելի է, որ այն, էլ ավելի ուժեղանալով՝ հանգեցնելու է ժողովուրդների տնտեսական միավորմանը, իսկ այդ ընդհանուր միության մեջ յուրաքանչյուր ժողովրդի ազգային քաղաքական դերն ուղիղ համեմատական կլինի համաշխարհային ընդհանուր տնտեսության մեջ նրա մասնակցությանը: Միաժամանակ նա այն կարծիքին էր, որ Ռուսաստանը հայրենական արդյունաբերության զարգացման համար պետք է վարի հովանավորչական քաղաքականություն:

Գուլիշամբարովն ակտիվ մասնակցություն է ունեցել «Ռուսական գյուղատնտեսական լիակատար հանրագիտարանի» (1900-12) ստեղծմանը, աշխատակցել է Բրոկհաուզի և Եֆրոնի հանրագիտական բառարանին:

Աշխ. Обзор фабрик и заводов Закавказского края, Тифлис, 1894, Призводительные силы России (вместе с В.Ковальским), СПб, 1896, Всемирная торговля в XIX в., и участие в ней России, СПб., 1898, Историко-статистический обзор промышленности и торговли России, СПб, 1899, Россия в конце XIX в. (вместе с В.Ковалевским), СПб, 1900, Мировое хозяйство, как единое целое, СПб, 1903, Сравнительная статистика России в мировом хозяйстве, СПб, 1907, Экономический обзор Туркестанского района, Ашхабад, 1913.

ԴԱԴԱՅԱՆ ՎԼԱԴԻՍԼԱՎ ՍՈՒՐԵՆԻ

(1933-1994)

1958-ին ավարտել է Մոսկվայի պետական տնտեսագիտական ինստիտուտի «Արդյունաբերության էկոնոմիկա» բաժինը: 1966-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 1958-ից աշխատել է Գիտությունների ակադեմիայի համակարգում: 1963-1967-ին աշխատել է Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում՝ սկզբում որպես դոցենտ, այնուհետև՝ պրոֆեսոր և էկոնոմիկայի վերլուծության մաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի տեղակալ: Այնուհետև տեղափոխվում է աշխատանքի Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի տնտեսամաթեմատիկական հետազոտությունների կենտրոն՝ որպես լաբորատորիայի վարիչ: Նա ընդլայնված վերարտադրության սխեմաներում միջճյուղային հաշվեկշռի տրանսֆորմացիայի ալգորիթմի հեղինակն է (Վ.Ս.Նեմչինովի հետ): Դադայանը եղել է տնտեսամաթեմատիկական հետազոտությունների կենտրոնի գիտխորհրդի անդամ, ատենախոսությունների խորհրդի անդամ, «Ռուսական տնտեսագիտական ամսագրի» խմբկոլի անդամ, «Տարածաշրջանային հետազոտությունների միջազգային ասոցիացիայի» անդամ, Ռուսաստանի ԳԱ (1993-ին) Վ.Ս.Նեմչինովի անվան մրցանակի դափնեկիր:

Դադայանի գիտական հետաքրքրությունների ոլորտը մակրոտնտեսական, մասնավորապես ընդլայնված վերարտադրության գործընթացների վերլուծությունն ու մոդելավորումն է: Նյութական աշխարհի բարդ երևույթների ուսումնասիրության ժամանակ գիտությունը հաճախ է դիմում մոդելավորման օգնությանը: Այն թույլատրում է առավել խորությամբ բացահայտել ներքին կապերի բնույթը, քանի որ, նկատում է Դադայանը, հնարավորություն է ընձեռվում աշխատել ոչ թե տվյալ նյութի, այլ վերջինիս մոդելի հետ («Баланс экономического района как средство плановых расчетов»): Կիրառելով մոդելավորման տարրերը՝ նա կազմում է արդյունքի արտադրության և բաշխման միջճյուղային հաշվեկշիռ, որն ըստ էության ոչ այլ ինչ էր, քան տնտեսական մոդել:

«Экономико-математическое моделирование социалистического воспроизводства» աշխատության մեջ Դադայանը հասարակական արդյունքի կազմում առանձնացնում է, հինգ ինքնուրույն մասեր, որոնք տարբեր դեր են խաղում ընդլայնված վերարտադրության պրոցեսում՝ աշխատանքի միջոցներ և գործիքներ, աշխատանքի առարկաներ և արտադրական ծառայություններ, սպառման առարկաներ, հիմնական ոչ արտադրական ֆոնդերի տարրեր և պաշտպանական արդյունաբերության արտադրանք: Հնգաճյուղ մոդելը ներառում է հիմնական ֆոնդերի փոխհատուցման և ամորտիզացիայի, ներմուծման և արտահանման, բնակչության դրամական հարկերի և խնայողությունների ցուցանիշները: Դադայանն առաջարկում է գործակիցների համակարգ, որը թույլ է տալիս չափակցել հասարակական ամբողջական արդյունքի նյութա-իրային և արժեքային կազմը: Աշխատանքում հետազոտվում են վերարտադրության քանակական կախվածություններ, որոնք թույլ են տալիս իրականացնել հեռանկարային զարգացման տարբերակների օպտիմալ ընտրություն: Ինչպես դասական, այնպես էլ առավել բարդ սխեմաներում վերարտադրության կախվածությունների հետազոտության

ժամանակ օգտագործվում է վերարտադրության հիմնական դինամիկ կախվածությունների տնտեսա-մաթեմատիկական մեկնությունների օրիգինալ և բավական պարզ եղանակ: Դա կայանում է ընդլայնված վերարտադրության առկա ռեսուրսների, սպառման ֆոնդի և կուտակման ֆոնդի հնարավոր աճի հետ չափակցման մեջ:

Դադայանի մոդելը կազմված էր չորս բաժիններից. առաջինը ներկայացնում էր առանձին արտադրանք, արտադրություն, արդյունքների կամ արտադրությունների խումբ, առանձին ճյուղ կամ ճյուղային խմբերի ագրեգատներ: Առաջին բաժնի կառուցվածքի առանձնահատկությունն այն էր, որ վերջինս պայմանավորող անալիտիկ և հաշվարկային հնարավորությունները ունեն ենթակայի և ստորոգյալի դասավորություններին բնորոշ փոխադարձ ամբողջական համապատասխանություն կամ համաձայնեցվածություն: Սա նշանակում է, որ առաջին բաժնի ստորոգյալը ճշգրտորեն կրկնում է ենթակայի դասավորությունների թվարկումները, այլ խոսքով, ստացվում է այնպես, որ տողերի երկայնությամբ կարդալիս այս բաժնի ցուցանիշները բնութագրում են արտադրանքի բաշխումը արտադրական սպառողների միջև, իսկ սյուներով ներքև կարդալիս՝ դրանց ծախքերի կազմը: Նորույթն այստեղ այն էր, որ անմիջապես ցույց էր տրվում արդյունքի տնտեսական նշանակությունը, այսինքն՝ այս մասում ցույց էր տրվում միայն այն արդյունքների շարժը, որոնք սպառվում են ժամանակի դիտարկվող միջակայքում՝ արտադրության ոլորտի ներսում: Երկրորդ և երրորդ բաժինները առաջինի բնական շարունակությունն են կազմում, դրանք լրացնում են բաշխվող արդյունքների ծավալները մինչև նրանց համախառն թողարկումը: Այլ խոսքով, ցույց են տալիս, թե ինչպես է օգտագործվում արտադրված յուրաքանչյուր արդյունք ոչ արտադրական սպառման կամ կուտակման ֆոնդերի կազմում, ինչպես նաև արդյունքի արտահանումը դիտարկվող տնտեսական համակարգից դուրս: Չորրորդ բաժինը բովանդակում է նոր ստեղծված

արդյունքի վերաբաշխման ցուցանիշները: Դադայանը, խորացնելով այս ոլորտի հետազոտությունները, իրականացնում է ժողովրդատնտեսական գործընթացների առավել ընդգրկուն մոդելավորում՝ միաժամանակ վերլուծության ենթարկելով վերարտադրության դասական մոդելները, անդրադառնալով Քենեի «Տնտեսական աղյուսակին», Մարքսի՝ ընդլայնված վերարտադրության սխեմաներին, միջճյուղային հաշվեկշիռների գծային մոդելներին, գործակցային համակարգերին, դինամիկ մոդելներին և վերջում ներկայացնում մակրոտնտեսական մոդելների դինամիկան: Դադայանն իր հետագա աշխատանքներում անդրադարձ է կատարում արտադրական գործունեության էկոլոգիական հետևանքներին, կառուցելով գլոբալ տնտեսական մոդելներ: Իր «Глобальные экономические модели» գրքում հեղինակը, դուրս չգալով «մաքուր» տնտեսական հարաբերությունների սահմաններից, փորձում է կառուցել մոդելների ամբողջություն՝ դրանում ինտեգրելով գլոբալ տնտեսական համակարգերի հիմնական կոմպոնենտները և կանխատեսումային վերլուծական իմիտացիոն փորձարկումները:

Աշխատության ի հայտ գալը պայմանավորված էր մարդկության մոլորակային գոյության տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրների սրման և արևմտյան երկրներում գլոբալ դինամիկայի մոդելների արագ զարգացման հետ: Ժամանակակից մարդկության քայքայիչ ուժերի զարգացման մակարդակը գերազանցում է նոր արտադրողական ուժերի զարգացման մակարդակը: Ինչպես նշում է հեղինակը ՝ աշխատության խնդիրն է մի կողմից գլոբալ տնտեսական համակարգի հիմնական բաղադրամասերի ժամանակակից զարգացման, մյուս կողմից՝ ներկա պայմաններում մշակված դրանց մոդելավորման լաբորատորիայի վերլուծության միջոցով կառուցել մոդելների ամբողջություն, որոնց ինտեգրացիան համակարգում թույլ կտա իրականացնել կանխատեսումների անալիտիկ բնույթի սիստեմատիկ իմիտացիոն փորձեր: Այստեղից էլ բխում է

գրքի կառուցվածքը՝ համաշխարհային տնտեսական համակարգի մոդելավորումը՝ որպես ամբողջություն, առանձին երկրների ու տարածաշրջանների փոխադարձ կապերի համակարգ, ոչ սոցիալիստական երկրների ռազմական ծախսերի կանխատեսա-անալիտիկ բլոկի տնտեսաստրատեգիական ֆունկցիայի կառուցում:

Վ.Դադայանի հեղինակությամբ և ղեկավարությամբ ստեղծված «Моделирование народнохозяйственных процессов» ձեռնարկը համարվում էր լավագույններից, իսկ նրա «Макроэкономика для всех» գիրքը՝ գրված ընթերցողների լայն շրջանների համար, շարադրանքն է այլն բանի, թե ինչպես են գործում շուկայական պետությունը և համաշխարհային տնտեսությունն ամբողջությամբ իրենց բոլոր որոշիչներով՝ դրամաշրջանառություն, բանկային համակարգ, կապիտալի շրջապտույտ, ապրանքային արտադրություն, ինչպես նաև դրա հետ կապված աշխատանքային գործունեության մեջ ներգրավված հասարակության յուրաքանչյուր անդամին վերաբերող աշխատավարձի, գնի, զբաղվածության հարցերը:

Դադայանը հեղինակ է մեկ տասնյակից ավելի մենագրությունների: Նրա աշխատանքների մի մասը թարգմանվել է արտասահմանում (ԳԴՀ, Հունգարիա, Լեհաստան, Ռումինիա, ԱՄՆ, ԳՖՀ, Ճապոնիա):

Աշխ. Баланс экономического района как средство плановых расчетов, М., 1962 (соавтор), Экономико-математическое моделирование социалистического воспроизводства, М., 1963, Экономические расчеты по модели расширенного воспроизводства. М., 1966, Экономические законы социализма и оптимальные решения. М., 1970, Моделирование народнохозяйственных процессов. М., 1973, (учебное пособия) Глобальные экономические модели. М., 1981, Макроэкономические модели. М., 1981. Моделирование глобальных экономических процессов. М., 1984, Орбиты планетарной экономики М., 1989, Системология экономических категорий М., «Наука», 1992, (Ա.Թավադյանի համահեղինակությամբ), Макроэкономика для всех, Дубна, (1996 посмертно).

ԴԱՆԻԼՈՎ-ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ ԻՎԱՆԻ

(1938)

Ծնվել է Մոսկվայում: 1960-ին ավարտել է Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը, տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան ստացել է 1975-ին, պրոֆեսորի կոչում՝ 1979-ին: 1964-1976-ին աշխատել է ԽՍՀՄ ԳԱ-ի կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտում, 1976-1980-ին՝ ԽՍՀՄ ԳԱ-ի համակարգային վերլուծության ինստիտուտում, 1981-90-ին՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից ժողովրդական տնտեսության ակադեմիայում, 1978-1990-ին՝ համատեղությամբ Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում՝ որպես պրոֆեսոր: 2003-ից՝ ՌԴ ԳԱ-ի ջրային պրոբլեմների ինստիտուտի տնօրեն, 2008-ից՝ Մոսկվայի պետական համալսարանի պետական կառավարման ֆակուլտետի և բնական ռեսուրսների կառավարման ամբիոնի վարիչ: 2007-ից՝ «Հանրագիտարան» հրատարակչության գլխավոր խմբագիր: 2009-ից՝ «Ջրային ռեսուրսներ» ամսագրի խմբագիր (տարեկան 6 համար հրատարակվում է ռուսերեն և 7 համար՝ անգլերեն լեզուներով), 2003-ին ընտրվել է ՌԴ ԳԱ-ի թղթակից անդամ: 1991-ից զբաղեցրել է նաև պետական պաշտոններ, 1991-96-ին՝ ՌԴ բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի պաշտպանության նա-

խարար, 1996-2000-ին՝ ՌԴ շրջակա միջավայրի պաշտպանության պետական կոմիտեի նախագահ, 1994-95-ին՝ Պետական դումայի պատգամավոր, 1992-94-ին՝ կառավարական հակահորդացման հանձնաժողովի նախագահ, 1993-2000-ին՝ Բայկալի գծով կառավարական հանձնաժողովի նախագահ, 1994-2000-ին՝ Կասպից ծովի կառավարական հանձնաժողովի նախագահ:

Դանիլով-Դանիելյանի հետաքրքրություններն ընդգրկում են բնօգտագործման, տնտեսամաթեմատիկական մոդելավորման կայուն զարգացման ոլորտների, շուկայական հարաբերությունների հարցերը:

Նրա կիրառական աշխատանքների մեջ կարևորագույններից մեկը շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության, այդ թվում՝ կեղտաջրերի արտանետման համար վճարովիության համակարգի ստեղծումն է, որը 1991-ին ներդրվել է Ռուսաստանում:

Դանիլով-Դանիելյանի «Бегство к рынку» գիրքը ստորագրված էր հրատարակության 1991-ի օգոստոսի 22-ին՝ ԽՍՀՄ հայտնի հեղաշրջման անմիջապես հաջորդ օրը: Թերևս, սա այն պատահական զուգադիպություններից էր, որոնց մեջ կա որոշակի խորհուրդ: Ինչպես հեղինակն է գրում, այս ոչ երկար գիրքն ունեցել է երկար պատմություն: Գրքում ներկայացված կոնցեպցիան ձևավորվել է դեռևս 1970-ականների վերջերին: ԽՍՀՄ տնտեսության, հատկապես քաղաքականության մեջ դեպքերն ու իրադարձությունները զարգանում էին այնքան սրընթաց, քաղաքական, տնտեսագիտական, սոցիոլոգիական տեքստերը հնանում էին այն նույն արագությամբ, ինչպես որ ստեղծվել էին: Այնուամենայնիվ, հեղինակը ոչ մի հրատարակչությունում չի ստանում իրեն անհրաժեշտ ժամկետում տպագրման համաձայնություն: Ինչ-ինչ պատճառներով հետաձգվում էր գրքի տպագրությունը, և ստացվում է այնպես, որ գիրքը տպագրության համար ստորագրվում է «պուտչի» տապալման հաջորդ օրը: Գրքում քննության է ենթարկվել ոչ միայն խորհրդային տնտե-

սության զարգացման 70-ամյա ժամանակաշրջանը, այլ նաև վերակառուցման մի քանի տարիները, որոնց ընթացքում, չնայած տնտեսական գիտակցության սրընթաց աճին, տնտեսական ոլորտում ոչ մի դրական բան գրեթե տեղի չունեցավ: Այնուամենայնիվ նա չի բավարարվում միայն տնտեսության մեջ հանրագումարներ անելով, այլ փորձում է քննարկել տնտեսության հետագա զարգացման հնարավորությունները: Նա ցույց է տալիս, թե ինչ ազդեցություն է ունեցել աշխատավարձի քաղաքականությունը տնտեսական աճի վրա, որ անհրաժեշտ է կրճատել հումքային համալիրի ունեցած նշանակությունը երկրի տնտեսության վրա՝ միաժամանակ քննարկելով հումքային կողմնորոշման փակուղուց դուրս գալու հարցը: Գրքում անդրադարձ է կատարվել նաև էկոլոգիայի հարցերին:

Արդեն 1980-ական թվականների վերջերին սկսեցին լույս տեսնել բազմաթիվ հոդվածներ, շուկայական հարաբերությունների տեսության և պատմության, արտասահմանյան տարբեր երկրներում այս կամ այն փորձի և այս կամ այն տարրերի հնարավոր օգտագործման, իրականացվող ռեֆորմների տնտեսական ու սոցիալական հետևանքների և շատ այլ հարցերի վերաբերյալ: Տեսակետների երկփեղկումը առաջին հերթին շուկայական տնտեսությանն անցնելու եղանակների մեջ է: Գիտական կանխատեսման սահմաններից դուրս, ինչպես էլ վերաբերվենք նրա ապագային, նկատում է Դանիլով-Դանիելյանը, շուկայական տնտեսաձևը, լինելով առաջադիմական տնտեսաձև, բարերար ֆունկցիա ունի կատարելու և՛ սոցիալական պրոցեսների, և՛ իրավական պետության կազմավորման գործում, այսինքն՝ քաղաքացիական հասարակության ստեղծման ճանապարհին. «Մեզ պետք է զարգացնել շուկան», -հարցադրում է Դանիլով-Դանիելյանը: Եվ պատասխանում. «Միայն թե չարատավորենք շուկայի գաղափարը՝ հատկապես հաշվի առնելով նրա՝ այնքան շատ թաքնված և բացահայտ հակամարտությունները: Շատ կարևոր է հասկանալ, որ դեկրետով շուկա մտնել չի

կարելի, այն ինքն իրեն ի հայտ չի գա կախարդական փայտիկի շարժումով:

Արևմուտքում շուկան ձևավորվել է ոչ մեկ հարյուրամյակի ընթացքում (եթե նույնիսկ սահմանափակվենք կապիտալիզմով), այն դարձել է հասարակության մշակույթի տարր՝ զարգանալով համապատասխան սոցիալական միջավայրում, և, իհարկե, ներգործելով այդ միջավայրի էվոլյուցիայի վրա: Եթե շուկան մշակույթի տարր է, ապա դա և՛ պատմություն է, և՛ ավանդույթ, և՛ արարողություն, չգրված և գրված օրենքներ: Այդ բոլորը ոչ միայն երկու տարում, երկու հնգամյակում էլ չի ձևավորվի»: Այս ընդհանրացումը, որ կատարել է Դանիլով-Դանիելյանը 1990 թվականին «Новый мир» ամսագրում տպագրված «Новые опасности экономического романтизма» հոդվածում, շուկայական տնտեսության մուտքի, ընթացքի, ապագայի և ընդհանրապես երևույթների իր ընկալումներով և խորությամբ առանձնանում է ժամանակի տնտեսագետների հայեցության մեջ «տնտեսական ռոմանտիզմի» տեսակետներից:

Ահա թե ինչու տասը տարի հետո գրքի վերահրատարակված տարբերակում, ուրվագծելով անցած ուղին, Ռուսաստանում գործող օրենսդրությունում կատարված փոփոխությունները, նա նկատում է, որ ինչպես և նախկին տարիներին. «այն, ինչ գրված է օրենքում, բնավ բոլորը չէ, որ իրականում կատարվում է, այդ թվում նաև նրանց կողմից, ովքեր պետք է վերահսկեն օրենքների կատարմանը», և որ «ոչ այնքան նշանակալից են նաև փոփոխությունները, Ռուսաստանի բնակչության մենթալիտետը, որը շատ բանով որոշվում է տնտեսության կառուցվածքով», կամ, եթե շուկայական տնտեսություն մուտքի տարիներին աստիճանական անցումը համարվում էր ավելի իրատեսական, ապա այժմ արդեն «ռեֆորմների դանդաղումը կարող է մահացու դառնալ և ոչ շատ երկար ժամանակ անց կամ ոչինչ չի լինելու բարեփոխելու, կամ էլ բարեփոխումներ չեն լինելու» և այլն: Նշված «ոչ այն-

քան լավատեսական գնահատականները» տնտեսական իրականությամբ պայմանավորված դժվարությունների և հնարավոր բարդացումների նախազգուշական դիտողություններ են:

«Перед главным вызовом цивилизации. Взгляд из России» գրքում ներկայացվում է ժամանակակից քաղաքակրթության ճգնաժամային վիճակի կոնցեպցիան, որին տրված է էկոլոգիական մոտեցում: Նման դիրքորոշումն ունի այն առավելությունը, որ թույլատրում է մարդկությանը դիտել որպես կենսոլորտ համակարգային տարր, որի օրենքներն ու սահմանափակումները մարդկությունն իրավունք չունի խախտելու, քանի որ հետևանքները պարզապես կլինեն աղետալի: Բնությունը միլիոնավոր անգամներ կատարյալ և «խելացի» է մարդկային ցանկացած տեխնոլոգիայից, հետևաբար՝ այդ փոթորկահույզ աղետից խուսափելու միակ եղանակը սահմանային մարդածին մամլիչի թուլացումն է, որից ամբողջ Երկիր մոլորակի վրա տուժում են բոլոր կենդանի օրգանիզմները, ինչպես նաև «օրենքով» բնությանը պատկանող տեղն «ազատելը»: Թերևս, բնական էկոհամակարգերի թեկուզ և առանձին մասնիկների աստիճանական վերածննդի մեջ է ստրատեգիական նյարդն այն երևույթի, որն անվանում ենք կայուն զարգացում: Աշխատության «Քաղաքակրթությունը ճգնաժամի անդունդի եզրին է», «Համաշխարհային հանրություն. քաղաքագետները և գիտնականները ելքի որոնումներում», «Կայուն զարգացում. ինքնահրապուրանքի և իրականության միջև», «Գիտական մոտեցման կշեռքի վրա», «բավակա՞ն են ընդհանրության, պատասխանատվության, կարգապահության և սիրո զգացմունքները» գլուխներում հաջորդաբար բացվում են մարդու տնտեսական գործունեությամբ պայմանավորված շրջակա միջավայրի քայքայման, այլև պրոցեսները, որոնք հասել են սահմանային աստիճանի, որի կործանարար հետևանքներից կարելի է խուսափել միայն ամբողջ համաշխարհային քաղաքակրթության միջոցով՝ որպես մի ամբողջու-

թյուն: Եվ, քանի որ մոլորակի էկոլոգիական ամբողջությունը՝ երկրագունդը և երկրների համաշխարհային հանրության աճող տնտեսական փոխկախվածությունները անհնարին են դարձնում կայուն զարգացումն առանձին վերցրած երկրներում կամ տարածաշրջաններում, ուստի կայուն զարգացման բնագավառի գաղափարների իրականացման միջազգային գործունեության տեսանկյունները մղվում են առաջին գիծ: Ռուսաստանի համար դա առավելապես հրատապ խնդիր է, քանի որ երկիրը տնօրինում է տնտեսական գործունեության քիչ ենթարկված կամ չենթարկված տարածքների՝ որպես էկոլոգիական պոտենցիալի, որը պաշար է կայուն զարգացման համար, և որից փաստորեն օգտվում է ամբողջ աշխարհը: Ինչպես վկայում է բերված աշխատությունների ցանկը, Դանիլով-Դանիելյանի հետազոտական գործունեության նշանակալից շերտը վերաբերում է հենց այդ խնդիրներին:

Դանիլով-Դանիելյանը հեղինակ և համահեղինակ է ավելի քան 500 գիտական աշխատանքների, այդ թվում՝ 30 մենագրությունների: Նա «Բնապահպանական համալիրի, ներառյալ ջրային միջավայրի և նավարկման (судоносителъ) էկոլոգիական վիճակի ստուգման մասնագիտացված համալիրը, ստեղծման և մշակման համար» մրցանակի դափնեկիր է (1996):

Աշխ. Модели и алгоритмы оптимального планирования (1966, в соавтростве с В.А.Волконским и В.Г.Медницким), Проблемы оптимального функционирования экономического комплекса (1967, в соавтростве с И.Л.Лахманом, А.А.Рубиным и др.), Проблемы разработки системы оптимального планирования народного хозяйства (1970, в соавтростве с Э.Ф.Барановым и М.Г.Завельским), Проблемы оптимального функционирования социалистической экономики (1971, в соавторстве с Н.П.Федоренко, Б.Н. Михалевским и др.), Автоматиризованые системы планирования и управления в народном хозяйстве (1973, в соавторстве с А.И.Чухновым), Система оптимального перспективного планирования народного хозяйства (проблемы теории и методологии), (1975 в соавторстве с М.Г.Завельским), Природные ресурсы в условиях перестройки экономики СССР (1989, Проблемы экологии

России (1993, в соавторстве с К.С.Лосевым, В.Г.Горшковым, К.Я.Кондратьевым и др.). Бегство к рынку (1991). Окружающая среда между прошлым и будущем: мир и Россия (1994, в соавторстве с В.Г.Горшковым, Ю.М.Арским и К.С.Лосевым). Экологические проблемы на пути интеграции России и Европы 1997 (в соавторстве с Ю.М.Арским), Экологические проблемы: что происходит, кто виноват и что делать? (1997, в соавторстве с Ю.М.Арским, М.Ч.Залихановым и др.). Безопасность России: правовые, социально-экономические и научно-технические аспекты (1999, в соавторстве с В.И.Осиновым, Н.А.Махутовым и др.). Экологический вызов и устойчивое развитие (1999, в соавторстве с К.С.Лосевым), Экологическая безопасность. Общие принципы и российский аспект (2001, в соавторстве с М.Ч.Залихановым и К.С.Лосевым). Бегство к рынку: десять лет спустя (2001). Стратегия и проблемы устойчивого развития России в XXI веке (2002, в соавторстве с А.Г.Гранбергом, М.М.Цикановым и др.). Россия в окружающем мире 2002: аналитический ежегодник (2002, в соавторстве с С.А.Степановым и др.). Климатические изменения: взгляд из России (2003, в соавторстве с С.Л.Авалиани, С.Н.Бобылевым, А.А.Голубом и др.). Перед главным вызовом цивилизации: взгляд из России (2005, в соавторстве с К.С.Лосевым и И.Е.Рейфом). Потребление воды: экологический, экономический, социальный и политический аспекты (2006, в соавторстве с К.С.Лосевым). Բոլոր նշված աշխատությունները հրատարակվել են Մոսկվայում:

ԴԱՎՈՅԱՆ ՍԱՄՍՈՆ ԱՇՈՏԻ

(1948)

Ծնվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան գյուղում: 1965-ին ընդունվել է ԵՊՀ «Տնտեսագիտական կիբեռնետիկայի» բաժինը, որտեղից 1967-ին գործուղվել է Նովոսիբիրսկի պետական համալսարան՝ անհատական ծրագրով ուսումը շարունակելու համար, որը գերազանցության դիպլոմով ավարտել է 1970-ին և ընդունվել ՀԽՍՀ ԳԱ կենտրոնական տնտեսա-մաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրան: 1976-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1976-88-ին դասախոսել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, ապա՝ ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում և Սլավոնական համալսարանում: 1991-94-ին եղել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի տնօրինման և ապապետականացման կոմիտեի փոխնախագահ, 2000-ին՝ ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ: 1997-2006-ին՝ Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտի տնօրենն էր: 1997-ից միաժամանակ Երևանի պետական համալսարանի Գյումրու մասնաճյուղի տնօրեն: 2003-ին «Պետական սեփականության կառավարում. մեթոդաբանական և ինստիտուցիոնալ հիմքերը» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախո-

սություն և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, նույն թվականին՝ պրոֆեսորի կոչում:

2000թ. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի տնօրենն է: 1989-ից ԵՊՀ-ի, 2003-ից Հայ-ռուսական (Սլավոնական) համալսրանի տնտեսագիտության ֆակուլտետների պրոֆեսոր է:

Շուկայական տնտեսության արդյունավետ ձևավորումը պահանջում է համապատասխան ինստիտուցիոնալ համակարգի կառավարում, որտեղ հստակորեն սահմանվում են տարբեր տնտեսավարող սուբյեկտների միջև «խաղի կանոնները»: Անցումային տնտեսությամբ երկրներում (Հայաստանի Հանրապետության օրինակով) նշված հիմնախնդրի լուծմանն է նվիրված նրա «Պետական սեփականության կառավարում. մեթոդաբանական և ինստիտուցիոնալ հիմքեր» մենագրությունը, որտեղ որպես հիմնական հաստատություն դիտարկվում է պետական սեփականությունը: Նրանում տարբեր միջազգային կազմակերպությունների և ՀՀ ընդգրկուն և ամբողջական վիճակագրական տվյալների հիման վրա վերլուծվում ու գնահատվում է պետական սեփականության կառավարման հայեցակարգային և ծրագրային ապահովումը, իրականացվում է սեփականության իրավունքների գործնական կիրառման համեմատական վերլուծություն, ուսումնասիրվում ու վերլուծվում են անշարժ գույքի, բնական պաշարների, մենաշնորհների և պետական սեփականության այլ օբյեկտների կառավարման հիմնախնդիրները: Աշխատության մեջ առաջադրվում են սոցիալական զարգացման համաթվի հաշվարկման, բնական պաշարների գնահատման, լուծարվող գույքի օտարումից ակնկալվող առավելագույն հասույթի ստացման և այլ հարցերի վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումներ:

Աշխատության մեջ առաջադրված դրույթների և առաջադրվող լուծումների առումով հատկապես առանձնացվում է՝ «ա) պետական սեփականության օգտագործման և տնօրինման իրավունքների արդյունավետության որո-

շումների համակարգը՝ կապված գույքի և նրա տարրերի մասնավորեցման հետ, բ) բնական ռեսուրսների գնահատման նոր մեթոդը՝ հիմնված Նոբելյան մրցանակի դափնեկիր Վ.Լեոնտևի միջճյուղային հաշվեկշռի մոդելի մաթեմատիկական կախվածությունների վրա, գ) անվճարունակության ընթացակարգում տնտեսվարող սուբյեկտների լուծարման դեպքում գույքի աճուրդային կամ մրցութային վաճառքից առավելագույն հասույթի ապահովման մոդելը» և այլն:

Շուկայական համակարգին անցման հիմնախնդիրներն են քննարկվում Ս.Դավոյանի «Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում» աշխատանքում (համահեղինակներ՝ Աշոտ Մարկոսյան, Հայկ Սարգսյան): Ինչ խոսք, «բազմաթիվ ու բազմաբնույթ» են անցման շրջանում գտնվող երկրների տնտեսություններում իրականացվող վերափոխումները: Աշխատության հեղինակներն առանձնացրել են համակարգային և ինստիտուցիոնալ հայեցակարգային հիմնադրույթներին առնչվող առավել «առանցքային հիմնահարցերը»՝ փորձելով գնահատել անցած տասը տարիների հետագիծը և նախանշելով ապագայի ուղեգծերը: Դրանք վերաբերում են՝ անցումային երկրների սոցիալ-տնտեսական վերափոխումների, հանրապետության տնտեսական գործառույթների և տնտեսական քաղաքականության, սեփականության ինստիտուտի կայացման, բնական պաշարների կառավարման, պետական գույքի հաշվառման, օգտագործման, կառավարման, գույքի գնահատման, բնական մենաշնորհների կարգավորման, անվճարունակության հիմնախնդիրներին:

Աշխ. Գործարարության պլան. մեթոդական ձեռնարկ, Եր., 1999 (հեղինակային կոլեկտիվի ղեկավար, համահեղինակ), Պետական սեփականության կառավարում. մեթոդաբանական և ինստիտուցիոնալ հիմքեր, Եր., 2003, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Եր., 2003 (համահեղինակներ՝ Ա.Մարկոսյան, Հ.Սարգսյան), Բիզնեսի կառավարում, Եր., 2006:

ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՌԱՋՄԻԿԻ

(1965)

Ծնվել է Գյումրի քաղաքում: 1986-ին ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը, որտեղ 1989-ին պաշտպանել է «Աշխատանքի վարձատրության համակարգի կատարելագործումը տնտհաշվարկի պայմաններում» թեմայով թեկնածուական թեզը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1989-1992-ին եղել է Մոսկվայի ՀՀ մշտական ներկայացուցչությունում տնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, տնտեսական քաղաքականության բաժնի վարիչ, 1992-1994-ին՝ «Արմենինտորգ» պետական արտաքին տնտեսական միավորման գլխավոր տնօրեն, 1994-1997-ին՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի առաջին տեղակալ, 1997-1998-ին՝ ՀՀ ֆինանսների նախարար, 1998-99-ին՝ ՀՀ վարչապետ, 1999-2000՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար, 2000-ից՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ, 2001-ից մինչև այժմ՝ Հայ-ռուսական (Սլավոնական) պետական համալսարանի ռեկտոր, հոգաբարձուների խորհրդի համանախագահ: 2002-ին ընտրվել է ՌԴ բնագիտական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, նույն թվականին դարձել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի պրոֆեսոր, 2005-ին պարգևատրվել է Ֆ.Նանսենի անվան

մեդալով, 2007-ին՝ Սոկրատի անվան միջազգային մրցանակով՝ արդի հասարակական ինտելեկտուալ զարգացման մեջ ներդրում ունենալու համար (Օքսֆորդ), 2006-ին ընտրվել է ՀՀ ԳԱ թղթակից անդամ: 2006-ին պաշտպանել է «Տնտեսական զարգացման մոդել. Հայաստանի ընտրությունը» թեմայով դոկտորական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության դոկտորի աստիճան: Բնական գիտությունների եվրոպական ակադեմիայի Ալբերտ Շվեյցերի անվան մեդալ (2006), Պետրոս Մեծի առաջին աստիճանի շքանշան՝ ռուս և հայ ազգերի միջև ընկերության և համագործակցության մեջ անձնական ավանդի համար (2007), «Մովսես Խորենացի» մեդալով (2009), Ռուսաստանի Ֆեդերացիայի բարեկամության շքանշանով (2010): Նրա աշխատությունները հիմնականում վերաբերում են տնտեսական զարգացման մոդելների, անցումային շրջանի տնտեսության, պետության տնտեսական քաղաքականության և բարեփոխումների հիմնախնդիրներին:

Ա.Դարբինյանի «Неполитические откровения» մենագրությունը հրապարակախոսական հոդվածների ժողովածու է, որտեղ շարադրված են հեղինակի հասարակական ամենատարբեր հարցերի շուրջ հայացքները ոչ այնքան որպես «քաղաքագետի», այլ մարդու, որն ընտրել է ազատ մտածողությունը՝ որպես ստեղծագործական ինքնարտահայտության առանձնաշնորհ:

Աշխ. Экономика Армении: предусловия, направления, перспективы, Ер., 1998, Экономика: количественная и качественная характеристика, Ер., 1998, Теоретические основы модели экономического развития зарубежных стран, М., 2003, К вопросу о концепции, стратегии и модели экономического развития Армении в современных условиях, М., 2004, Неполитические откровения. М., 2011.

ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ

(1961)

Ծնվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում: 1976-ին գերազանցությամբ ավարտելով Երևանի թիվ 5 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել և 1980-ին կարմիր դիպլոմով ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: 1980-1991-ին աշխատել է ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում՝ նախ որպես տնտեսագետ, ապա՝ գիտաշխատող: 1989-ին պաշտպանել է գիտական թեզ և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1991-ից աշխատանքի է անցել Հայաստանի արտաքին տնտեսական կապերի նախարարությունում, սկզբում որպես բաժնի վարիչ, ապա՝ առաջին փոխնախարար: Ակտիվորեն մասնակցել է Խորհրդային Միության արտաքին պարտքի իրավահաջորդության կարգավորման, նախկին հանրապետությունների միջև արտաքին տնտեսական կապերի կարգավորման և զարգացման խնդիրների շուրջ ընթացող բանակցություններին՝ ներկայացնելով Հայաստանի շահերը և դիրքորոշումները: 1992-1997-ին փոխնախարարի պաշտոն է զբաղեցրել Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունում՝ վարելով արտաքին առևտրի, արտասահմանյան օգնության և օտարերկրյա ներդրումների ոլորտների կոորդինացման աշխատանքները: Նրա ղեկա-

վարությամբ են ընթացել և ավարտվել Եվրամիության հետ առաջին քաղաքական և տնտեսական փաստաթղթի՝ «Գործընկերության և համագործակցության համաձայնագրի» շուրջ բանակցությունները:

1998-2000-ին եղել է ՀՀ ՖԷՆ տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտում՝ որպես հետազոտական խմբի ղեկավար, իսկ 2000-2007-ին՝ ինստիտուտի տնօրեն: 1999-ին Վաշինգտոնի «Ջորջ Մեյսոնի» համալսարանում կատարած հետազոտությունների արդյունքում, 2000թ. հրատարակել է «Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում» մենագրությունը, իսկ 2001-ին «Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական ինտեգրման ռազմավարությունը գլոբալացման պայմաններում» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

2007-2010-ին նա ղեկավարել է «Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ» ՍՊԸ-ը, իսկ 2010-ի վերջերից ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ է:

Գիտական գործունեության սկզբում նրա հետազոտությունները հիմնականում վերաբերում էին նյութական ռեսուրսների, դրանց տնտեսական էության և օգտագործման հարցերին: «Նյութական ռեսուրսների օգտագործման կառավարումը» գրքում քննության են ենթարկվել ՀՀ արդյունաբերությունն ու նրա առանձին ճյուղերը, նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության հարցերը, ուշադրություն է դարձվել ինչպես տարբեր գործոնների՝ նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության վրա ունեցած ազդեցության, այնպես էլ տնտեսության վերակառուցման պայմաններում նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման կառավարման հիմնական սկզբունքներին:

Սկսած 1990-ական թվականներից Դարբինյանի գիտական աշխատանքները վերաբերում են արտաքին առևտրի և օտարերկրյա ներդրումների, գլոբալացման, եվրոպական ինտեգրացման, տնտեսական աճի, աղքատության, տեղական ինքնակառավարման հարցերին:

Միջազգային տնտեսական ինտեգրացման տեսությունը ծագել է շատ ավելի վաղ, քան հաճախ այն վերագրվում է XX դարի կեսերին: Եթե ազգը տնտեսական կարողություններով մտնում է համաշխարհային ասպարեզ, ապա ինքնին ենթադրվում է նաև նրա հետաքրքրություններն ու մերձեցումը նաև այլ ոլորտների նկատմամբ: Հետևապես ամեն մի ինտեգրացիա նաև գլոբալացում է: Գրականության մեջ զուգահեռներ են գծվում ինտեգրացման և գլոբալացման միջև, տարբերակվում դրանց միացնող և բաժանող տիրույթները, սակայն, ինչպես նկատում է Ա.Դարբինյանը, այդ «երկու երևույթները փոխադարձաբար սերտ կապված են, պայմանավորում են միմյանց զարգացումը»: Եվ այս իմաստով, հազիվ թե կարելի է հստակ սահմաններ գծել այդ երևույթները պայմանավորող գործոնների միջև: Գլոբալացման ներկայիս դրսևորումները լինելով նոր երևույթ հասարակության զարգացման մեջ, միաժամանակ դրանք գերազանցապես նույնություն են ենթադրում: Նա տնտեսական գլոբալացումը դիտում է որպես ապրանքների, ծառայությունների, կապիտալի, գաղափարների և տեխնոլոգիաների գլոբալ շուկաների ձևավորման, ինչպես նաև պետությունների, դրանցում գոյություն ունեցող ինստիտուտների, ազգային մշակույթների և այլ սուբյեկտների փոխկապվածության և փոխազդեցության ուժեղացման գործընթաց: Հետազոտելով տնտեսական ինտեգրացման աստիճանի և արդյունավետության գնահատման խնդիրները, տնտեսական ինտեգրացումը նա դիտում է որպես աշխատանքի միջազգային բաժանման վրա հիմնված տնտեսությունների միավորման գործընթաց,

որը զարգանում է տնտեսությունների բացության պայմաններում:

Սակայն բացությունը չի հանգում միայն առևտրային արգելքների հաղթահարմանը: Նա այն բաժանում է յոթ խմբերի, որոնք ընդգրկում են առևտրային քաղաքականությամբ, արտադրական գործոնների շարժը պայմանավորող, վարչական, կորպորատիվ, տնտեսության զարգացվածության մակարդակներով, աշխարհագրական և մշակութային արգելքներ: Եթե առաջին չորս արգելքները «համեմատաբար արագ հաղթահարելի են», ապա աշխարհագրական, ազգային-մշակութային և տնտեսական զարգացման մակարդակների տարբերության հաղթահարումը պահանջում է տևական հատված:

Այն, որ ինտեգրացիան անխուսափելի է, այդ մասին է վկայում իրերի համաշխարհային ընթացքը: Սակայն, ո՞րն է այդ բացության սահմանը: Որո՞նք են համաշխարհային առևտրական ու ֆինանսական կազմակերպությունների կողմից թույլ զարգացած երկրների ազգային շուկաների պաշտպանության համար մշակված չափանիշները: Այս իմաստով գլոբալացումը բարդ խնդիրներ է առաջադրում հատկապես զարգացող և անցումային երկրներին: Գլոբալացման ազդեցությունը երկակի է. եթե մի կողմից այն նպաստում է արդի տեխնոլոգիաների, տեխնիկայի, արտադրության կազմակերպման, կառավարման և շուկայագիտության համակարգերից օգտվելու հնարավորություններին, սակայն նույն այդ «գլոբալացման հետևանքով համաշխարհային շուկաներում ուժգնացող մրցակցությունը բարդացնում է տնտեսության կառուցվածքային ճգնաժամը դեռ չհաղթահարած անցումային երկրների մուտքն այդ շուկաներ, ուստի գլոբալացման վերը նշված դրական ազդեցությունները անցումային շրջանում գտնվող շատ երկրների համար փաստորեն դառնում են միայն պոտենցիալ հնարավորություններ»:

Ամեն ինչ չէ, որ հնարավոր է ենթարկել քանակական չափակցման. «Ինտեգրացման գործընթացի ինտենսիվացման կարևորագույն գործոնը համաշխարհային տարածում և ընդգրկում ունեցող այժմյան գլոբալացման գործընթացն է, ինչը հուշում է, որ ինտեգրացման երևույթը կամ դրա ընթացքը գնահատելու և վերլուծելու, ինչպես և դրանց ցանկալի ուղղություն տալու համար անհրաժեշտ է ունենալ նաև գլոբալացման երևույթի գնահատականները, ըստ որում, ինչպես գլոբալ, այնպես նաև տարածաշրջանային կտրվածքով, ինչպես իր ամբողջության մեջ, այնպես և դրա առանձին բաղադրիչների համար: Ցավոք, հիմնախնդրի այս ասպեկտը առայժմ համարյա ուսումնասիրված չէ, բացակայում է նույնիսկ խնդրի դրվածքը, էլ չենք խոսում դրա լուծման մոտեցումների մշակման մասին»: Այստեղից էլ՝ հետագա հետազոտությունների անհրաժեշտությունը կապված «գլոբալացման քանակական խնդրի» գնահատման հետ:

Աշխ. Նյութական ռեսուրսների օգտագործման կառավարումը, Եր., 1989 (համահեղինակ՝ Ս.Բ.Սելվինազյան), Ինվեստիցիոն հիմնադրամներ. ստեղծումը, գործունեությունը, կառավարումը, Եր., 1995 (հեղինակային կոլեկտիվ), Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում, Եր., 2000, Համայնքների դերը հանրային և կոմունալ ծառայությունների և ոռոգման կարգավորման գործում, Եր., 2004 (համահեղինակ), Պետական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. քաղաքականության տարբերակներ և ուղիներ, Եր., 2004 (համահեղինակ), Առևտրի համաշխարհային կազմակերպություն. Ուղեցույց գործարարների համար, Եր., 2004 (համահեղինակ), Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքները: Տեղեկատվական ապահովում, վերլուծություններ և տիպաբանություններ, Եր., 2007 (հեղինակային կոլեկտիվ):

ԴԱՐԲԻՆՅԱՆ ԳՐԻՇԱ ՍԱՐԻԲԵԿԻ

(1923-2005)

Ծնվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում: 1951-ին ավարտել է ԵԱԱԻ-ը, իսկ 1959-ին՝ Երևանի պետական համալսարանը: 1986-93-ին եղել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության հանրապետական բարձրագույն դպրոցի կառավարման ամբիոնի վարիչ: Աշխատանքները վերաբերում են գյուղատնտեսության մեջ աշխատանքի նորմավորման, վարձատրության և նյութական խրախուսման հարցերին:

Գ.Դարբինյանը, ելակետ ունենալով այն իրողությունը, որ առկա էր սովխոզային արտադրության մեջ անմիջական արտադրողների անձնական շահագրգռվածության և գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացման միջև, «Աշխատանքի կազմակերպումը և նյութական խրախուսումը սովխոզներում» մենագրության մեջ դիտարկում է նշված կողմերի փոխադարձ կապի, աշխատանքի նորմավորման, աշխատանքային ռեսուրսների օգտագործման հարցերը: Դրանց հեղինակն անդրադարձել է նաև այլ արծարծումներում, սակայն առանձին քննության առարկա դարձնելով «Աշխատանքի նորմա-

վորման կատարելագործման պրոբլեմները գյուղատնտեսության մեջ» նույնանուն մենագրության մեջ: Ուրվագծելով աշխատանքի նորմավորման խնդիրներն ու մեթոդները, գրքում անդրադարձ է կատարվում գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ու աշխատանքային ծախսումների նորմագոյացման առանձնահատկությունների, մեքենայացված, ձեռքով, անասնապահական տրանսպորտային և այլ աշխատանքների նորմավորման հարցերին:

Աշխ. Աշխատանքի նորմավորումը գյուղատնտեսության մեջ, Եր., 1972, Շիրակի տեքստիլագործները 1924-1974. Լենինականի տեքստիլ կոմբինատի հիսնամյակի առթիվ, Եր. 1974, Աշխատանքի կազմակերպումը և նյութական խրախուսումը սովխոզներում, Եր., 1976, Աշխատանքի նորմավորման կատարելագործման պրոբլեմները գյուղատնտեսության մեջ, Եր., 1984, Կոլեկտիվ կապիտալի կազմակերպման հիմունքները, Եր., 1985, Արագացման ուղիով, Եր., 1987:

ԵԳԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՆԻԿՈԼԱՅԻ

(1903-1978)

Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տող գյուղում: 1931-ին ավարտել է Մոսկվայի կոմունիստական դաստիարակության ակադեմիան: 1963-65-ին եղել է Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր, այնուհետև ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում՝ ավագ գիտաշխատող, իսկ 1976-78-ին՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր: Տնտեսագիտության դոկտոր է 1968-ից, պրոֆեսոր՝ 1972-ից:

Աշխատանքները վերաբերում են Հայաստանում նախառեֆորմյան և հետռեֆորմյան շրջանի ագրարային հարաբերությունների և սոցիալիզմի քաղաքատնտեսության տեսության հարցերին:

1967-ին «Аграрные отношения в Армении до и после ее присоединения к России» հետազոտության համար Մ.Եգանյանին շնորհվում է տնտեսական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Այն ընդգրկում է ագրարային հարաբերությունները Հայաստանում՝ սկսած մինչ նրա՝ Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանից մինչև գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների ծագման ու զարգացման շրջանը ներառյալ: Նա վերանայում է ոչ թե փաստական նյութերի, այլ «զուգահեռների և նմանօրինակման վրա» հիմնված հարցի վերաբերյալ գոյություն ունեցող հայացքները, երբ արևել-

յան (ասիական) ֆեոդալիզմի երևույթներին մոտենում էին Եվրոպայի ժողովուրդների զարգացման պատմության բանաձևումների դիտակետից: Ժխտելով Հայաստանում հողի նկատմամբ մասնավոր սեփականությունը, նա ընդհանրապես չէր ժխտում հողային սեփականության ֆեոդալական ձևը: Նրա կարծիքով Հայաստանում հողը իշխող ֆեոդալական դասակարգի մոնոպոլ սեփականությունն էր, որի հիմնական մասը մասնավոր տիրապետության իրավունքով տրվում էր այդ դասակարգի ներկայացուցիչներին: Այս առումով քննության ենթարկելով հողատիրության կոնկրետ ձևերի՝ մյուլքի ու թիուլի բովանդակությունը, ցույց է տրվում, որ եվրոպական ֆեոդալիզմի դասական երկրներում սեփականության իրավունքը և տիրապետության իրավունքը անջատված չէին իրարից, մինչդեռ արևելյան երկրներում ֆեոդալիզմի ծագման հենց սկզբից դրանք անջատված էին իրարից:

Մ.Եգանյանի «Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները» աշխատությունը ժամանակագրական առումով ընդգրկում է կապիտալիզմի ձևավորման ու զարգացման շրջանը: Նա գտնում է, որ ցարիզմը շահագրգռված չէր որևէ չափով թեթևացնելու աշխատավոր գյուղացիության դրությունը և զարգացնելու կապիտալիստական հարաբերությունները Հայաստանում: Ուստի նա մի կողմից ձգտում էր գյուղացիական ռեֆորմի անցկացմանը, մյուս կողմից ռեֆորմի պատրվակի տակ ավելի էր ուժեղացնում իր քաղաքական տիրապետությունը: Հետևապես Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների առաջացումը և զարգացումը պետք է դիտել ոչ թե իբրև կատարված ռեֆորմի արդյունք, այլ, ամենից առաջ, որպես կայսրության մյուս մարզերում ու երկրամասերում իրոք կենսագործված ռեֆորմի հետևանք, և այդ պատճառով արագորեն զարգացող ռուսական արդյունաբերական կապիտալիզմի հետևանք: Աշխատության մեջ ցույց է տրվում, որ կապիտալիստական հարաբերությունների առաջացումը և զարգացումը հնարավոր է նաև ֆեոդալական հարաբերությունների պահպանման դեպքում:

Սակայն այդ պայմաններում կապիտալիստական հարաբերությունների զարգացման վճռական գործոնը ոչ այնքան ներքին ազդակներն են, որքան արտաքին ազդեցությունը: Կապիտալիստորեն զարգացող գաղութարարական տերության առաջընթաց շարժումը կերպափոխում է նաև կախյալ երկրներին:

Սոցիալիստական հասարակարգի պայմաններում նյութական բարիքների արտադրության ու բաշխման հիմնախնդիրներն են քննարկվում «Սոցիալիզմի տնտեսական զարգացման տեսության հարցերի շուրջ» աշխատության մեջ: Մասնավորապես՝ հասարակական հարստության աճման ընդհանրական օրենքի, աշխատանքի արդյունքի և նրա ապրանքային ձևի, արժեքի օրենքի գործողության, բաշխման հարաբերությունների, տնտեսության պլանավորման հիմունքների և այլ հարցեր: Իսկ «Расширенное воспроизводство национального багатства СССР» հետազոտությունը վերաբերում է ազգային հարստություն կատեգորիայի, դրա քանակական և որակական ցուցանիշների, կառուցվածքի փոփոխության, հասարակական արտադրության երկու ստորաբաժանումների հարաբերակցության վերլուծությանը:

Մ.Եգանյանի մտավոր պահվածքին բնորոշ էր երևույթները դնել քննական հայացքի տակ՝ առաջադրելով դրանք վերստուգելու խորհուրդը:

Աշխ. О мульке и мулькадарском праве в армении («Известия АН Арм. ССР», №11, 1958), Об особенностях развития капитализма в Армении («Народная хозяйства Армении», №6, 1964), Феодалные формы эксплуатации в Армении («Сборник научных трудов», Армпединститут, №9, 1964), Возникновские и характер общинного строя В Армении («Сборник научных трудов», серия общественных наук Армпединститут, 1965), Характер феодальной земельной собственности в Армении, («Народная хозяйства Армении», №11, 1965), Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները, Եր., 1964, Սոցիալիզմի տնտեսական զարգացման տեսության հարցերի շուրջ, Եր., 1969, Расширенное воспроизводство национального богатства ССР, Ер. 1975.

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ ՀՈՎՍԵՓԻ

(1926)

Ծնվել է Երևանում: 1948-ին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1956-ին ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի, իսկ 1967-ին ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, պրոֆեսորի կոչում՝ 1974-ին: 1952-64-ին եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Արդյունաբերության էկոնոմիկայի և էներգետիկայի ամբիոնի ասիստենտ և ապա դոցենտ: 1964-73-ին եղել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, միաժամանակ 1968-72-ին՝ փոխտնօրեն: 1973-75-ին աշխատել է ԵՊՀ, 1975-79-ին՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի տնտեսագիտական կիբեռնետիկայի ամբիոնի վարիչ: 1979-ից աշխատել է ՀՀ պետպլանին (ՀՀ էկոնոմիկայի նախարարության) առընթեր տնտեսագիտական հիմնահարցերի գիտահետազոտական ինստիտուտի փոխտնօրեն, 2008-2013-ին՝ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում բաժնի վարիչ:

Նրա հիմնական գիտական հետաքրքրությունների ոլորտներն են՝ տնտեսական զարգացում, ինվեստիցիաներ, տնտեսական արդյունավետություն, գիտատեխնիկական առաջընթաց, մակրոտնտեսական ծրագրավորում և կան-

խատեսում: Լրացուցիչ հետաքրքրությունները՝ կրթության, գիտության, ինովացիաների, կառավարման, հարկային տնտեսագիտության խնդիրները:

Անցյալ դարի 40-ական թվականներից սկսած՝ ԽՍՀՄ-ում սկսում է ինտենսիվ կերպով զարգանալ կապիտալ ներդրումների արդյունավետության մասին գիտությունը, որը բնականաբար իր արձագանքն է գտնում նաև հայրենական տնտեսագիտության մեջ: Անհրաժեշտություն էր դարձել կապիտալ ներդրումների առավել նպատակահարմար ուղղությունների ընտրության և դրանց արդյունավետության գնահատման հարցը: Եղիազարյանի «Оценка экономической эффективности капитальных вложений в промышленности» մենագրության քննության առարկան կապիտալ ներդրումների հիմնախնդրի մի շարք մեթոդոլոգիական և մեթոդական հարցերն են: Առաջարկվում է կապիտալ ներդրումների այլընտրանքների համեմատական արդյունավետության ճշգրիտ գնահատում, ապա կապիտալ ներդրումների օպտիմալ տարբերակի ընտրության չափանիշի և արդյունավետության ցուցանիշի հիմնավորում: Կապիտալ ներդրումների օբյեկտի տարբերակները նա դիտարկում է երկարաժամկետ շահագործման նպատակով, որի ընթացքում նախատեսում է նաև կապներդրումների արդյունավետությունը պայմանավորող մեծությունների հնարավոր փոփոխություններ: Այս առումով, տնտեսապես նպատակահարմար տարբերակի ճշգրիտ ընտրության համար անհրաժեշտություն է դառնում արդյունավետությունը հաշվարկելիս նկատի ունենալ նաև աշխատանքի արտադրողականության աճով պայմանավորված փոփոխությունները, կապներդրումների սառեցումը, ծախքերի տարաժամկետ լինելը, ինչպես նաև արդյունքի ստացման տարաժամկետայնությունը: Աշխատանքում ցույց է տրվում, որ այդ ժամանակաշրջանում օպտիմալ տարբերակի ընտրության չափանիշներում դիտարկվում են հավասարամեծ կապներդրումներն ըստ տարբերակների,

ինչի հետևանքով ծախքերի տարաժամկետայնության հաշվառման անհրաժեշտություն չի առաջանում: Մինչդեռ դրանց հաշվառումը արդյունքի ստացման տեսանկյունից շատ կարևոր է: Եղիազարյանը նաև ցույց է տալիս, որ կապիտալդրումների սառեցման հաշվառման համար անհրաժեշտ է միջինացնել արդյունավետությունը համեմատման հաշվարկային ժամանակաշրջանում: Բացի այդ, տրվում է նաև ժամանակի լագի հաշվառման եղանակ՝ հաշվի առնելով ժամանակի գործոնը տեխնիկատնտեսական հաշվարկների տարբեր խմբերի համար:

Վերակառուցումը սոցիալիստական ընդլայնված վերարտադրության ուղղություններից է, մինչդեռ հիմնահարցը իր շատ կողմերով մնում էր բանավեճի առարկա: Բ.Եղիազարյանի «Экономические проблемы оценки эффективности и обоснования варианта реконструкции предприятий» (теоретический очерк) աշխատության մեջ դիտարկվում են վերակառուցման արդյունավետության մեթոդիկայի, մեթոդոլոգիայի և հիմնավորման հարցերը:

1990-ական թվականներից Բ.Եղիազարյանի գիտական հետաքրքրություններում տնտեսության նոր լինելիության հիմնախնդիրներն են:

Տնտեսությունն ինքը միատարր օբյեկտների մեխանիկական գումար չէ, այլ բաղադրիչների մի ամբողջություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, գործունեության իր ուղղություններով և օրինաչափություններով, որոնք պահանջում են մեկնաբանության իրենց տեսանկյունները: Հետևապես, ինչպես նկատում է Բ.Եղիազարյանը, «տնտեսագիտություն» միասնական գիտության կազմում օրինաչափ են դառնում տարբեր մտավոր շառավիղների՝ տարբեր «տնտեսագիտությունների» առանձնացման նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի տնտեսագիտության դասակարգման ուրվագիծն ըստ տնտեսության ընդգրկումների՝ համաշխարհային

(գլոբալ), միջազգային (արտաքին տարածաշրջանային), համերկրային (մակրոտնտեսական), ռեգիոնալ (վարչական, տարածքային) և ընտանեկան տնտեսությունների ու ըստ գործունեության ուղղվածության՝ արտադրության, սոցիալական ոլորտի ու ծառայությունների, արտաքին տնտեսական գործունեության, քաղաքական գործունեության, գիտության և նորամուծությունների, պաշտպանունակության, բնապահպանության, ֆինանսական գործունեության, կառավարման և այլ ուղղությունների: Եթե մի կողմից այս առանձնացված տնտեսագիտությունների համար ընդհանրական են տեսական տնտեսագիտության ընդհանրական դրույթները, ապա մյուս կողմից՝ այդ տնտեսագիտություններից յուրաքանչյուրն ունի իր տեսական մասը, այստեղից էլ տնտեսագետի կարծիքով «միասնական տեսական տնտեսագիտության գոյության նպատակահարմարությունը, որը կամփոփի մոտեցումների այն ամեն ընդհանրականը, որը հիմք պետք է դառնա տնտեսության տարբեր ընդգրկումների և գործունեության տարբեր մասնագիտացումներ ներկայացնող տնտեսագիտություններում գործնական խնդիրների լուծումներ ստանալու համար»: Տնտեսական երևույթների իմացաբանական գործակիցների հայտնաբերման ժամանակ կարևոր տեղ հատկացնելով տեսական տնտեսագիտությանը, ընդգծվում է վերջինիս շրջանակների առումով վերը նշված ագրեգատիվ ուղղությունների ունեցած նշանակությունը: Տեսական տնտեսագիտության և ագրեգատիվ տնտեսագիտությունների (ու նաև վերջինիս բաղադրիչների) հիերարխիայում փոխադարձ թափանցումների սահմանների և նրա կիրառական իրացվելիության հարցը բարդ խնդիր է ու, թերևս, վերաբերում է «գիտության մասին գիտությանը»:

Բնականաբար, ագրեգատիվ տնտեսագիտություններից յուրաքանչյուրը բաղկացած է գումարելիների որոշակի ամբողջությունից, ինչպիսիք կարելի է բերել նաև «Հարկային տնտեսագիտության» իրավունքի օգտին:

Բ.Եղիազարյանի կարծիքով տնտեսագիտությունը դեռևս չի տվել այն հարցերի պատասխանները, թե «ո՞րն է հարկի տնտեսագիտական հիմքը, ինչ և ինչու պետք է հարկվի»: Տնտեսագետի համար գիտական հետաքրքիր ասպարեզ են ներկայացնում վերոհիշյալ հարցերի պա տասխանների լուծումներն իր կողմից առաջադրվող որոշակի դրույթների հիման վրա: Խոսքը վերաբերում է հարկման մեթոդոլոգիային, որպես հասարակական անհրաժեշտ երևույթի՝ հարկի էության հիմքի սահմանմանը, որը հնարավորություն կտա հավասարակշռելու հասարակական պահանջմունքներ-ռեսուրսներ կապը, հասնելու բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, ազդելու ապրանքների և ծառայությունների արտադրության վրա, լուծելու սոցիալական և բազմաթիվ այլ հիմնահարցեր:

Բ.Եղիազարյանն առանձնացնում է հարկային համակարգերի գնահատման հետևյալ հիմնական ուղղությունները. հարկային եկամուտների բավարարության մակարդակ, ֆիսկալ համակարգի կայունության աստիճան, հարկային եկամուտների ճկունություն, հարկային համակարգի համացիկլայնություն, հարկման կայունություն, հարկային համակարգի ազդեցությամբ պայմանավորված տնտեսական ձևափոխումներ, տնտեսական աճի վրա հարկային համակարգի ազդեցություն, հարկային բեռի բաշխման հորիզոնական և ուղղահայաց արդարության գնահատում, հարկային համակարգի վարչարարության գնահատում:

Ընդհանրապես, Բ.Եղիազարյանը երևույթների վերլուծության ժամանակ առանձին ուշադրություն է դարձնում մեթոդաբանական հարցերին, որոնք, կարելի է ասել, վերաճում են հետազոտության կարևոր ոլորտի: Իսկ դա տնտեսագիտական միտքը մղում է նոր եղանակների որոնման:

Եղիազարյանի «Մարդկային կապիտալը հասարակության զարգացման գործում» աշխատության (համահեղինակներ Ն.Եղիազարյան, Ա.Գյուրջյան) արծարծումների

մասին տե՛ս «Արա Գյուրջյան» դիմանկարը: Նա գիտելիքահենք տնտեսության հետ է կապում հասարակության կնճիռների ապագա լուծումները:

Մարդու զարգացման պատմությունը, ըստ էության, ճանաչողության զարգացման պատմություն է, որի ընթացքում «բնական ու գործնական հետաքրքրությունները ծնել են գիտությունը»: Վերջինիս բազմաթիվ ճյուղավորումների միջոցով մարդը փորձում է իր պահվածքը կառուցել գիտելիքի հենքի վրա: Եվ, կարծես, մարդկությունը հասել է մի սահմանի, որից սկիզբ է առնում «գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու ժամանակաշրջանը»: «Գիտելիքահենք տնտեսություն» հասկացության, ձևավորման միջոցների, նպատակահարմարության, նախապայմանների, ենթադրվող նպատակային բնութագրերի և այլ կողմերի հետ կապված շատ հարցեր դեռևս գտնվում են մշակության աստիճանում: Այնուամենայնիվ, Բ.Եղիազարյանի ֆրագմենտար բնույթի հայեցողական եզրակացությունները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և հանգում են հետևյալին.

- գիտելիքահենք է այն տնտեսությունը, որում ցանկացած գիտակցված գործունեություն (գործողություն), անկախ սուբյեկտիվ բնույթից և մասշտաբից, իրականացվում է գիտելիքի հիմքի վրա, գիտելիքի օգտագործմամբ,
- գիտելիքահենք տնտեսություն հասկացությանը զուգահեռ կարող են շրջանառության մեջ դրվել՝ գիտելիքահենք գործունեություն, գիտելիքահենք գործելակերպի դարաշրջան, գիտելիքահենք հասարակություն, գիտելիքահենք զարգացում, իսկ ճյուղային, ժամանակային, տարածքային և այլ տեսանկյուններից այդ հասկացությունների այլ բաղադրիչներ՝ գիտելիքահենք կառավարում, գիտելիքահենք տնտեսվարում, գիտելիքահենք կենսակերպ, գիտելիքահենք անվտանգություն և այլ հասկացություններ,

- մարդկային հասարակության գիտելիքային հենքի համակարգի ձևավորումն անցումն իրականացնելու կարևոր նախադրյալներից է, որը ներառում է հետևյալ ենթահամակարգերը.
- գիտելիքի ստեղծում (գիտություն և նորամուծություններ), զարգացում, համակարգում, գնահատում, գիտական տեղեկատվության բանկերի ձևավորում և սպասարկում,
- գիտելիքի հաղորդում, փոխանակում, տարածում, ընտրելու և փնտրելու խորհրդատվություն,
- գիտելիքի յուրացում, ձևավորում և փորձարկում, շեմի նորմավորում,
- գիտելիքի կիրառություն՝ պահանջի առկայություն և դաշտի ձևավորում, հնարավորություն,
- գիտելիքի կիրառման և դրան ուղղված աշխատանք կատարելու մոտիվացիայի և ցանկության խթանում,
- գիտելիքային անվտանգության ապահովում,
- գիտելիքահենք հասարակության ձևավորումն անցում է որակային նոր մակարդակ ունեցող հասարակարգին: Դա նոր անցում է, որն ընդգրկելու է բոլոր երկրներն ու գործունեության բոլոր ոլորտները: Այն ենթադրում է անցման երկարատև շրջան, նախապայմանների խիստ տարբերություններով՝ բարդ ու հակասական: Բարձր արդյունավետություն և կարճ ժամանակահատված ապահովելու համար անհրաժեշտ կլինի միջազգային կազմակերպությունների կողմից ընդհանրական դրույթների մշակումը, որոնք տարբեր երկրների կողմից առանձնահատկությունների հաշվառման արդյունքում կկոնկրետացնեն ըստ իրագործման և հեռանկարային պայմանների,
- Հայաստանի Հանրապետության գիտելիքահենք հասարակության անցումը պայմանավորող գործոններն են՝ հանրապետության փոքր տարածքը և արդյունավետ գյուղարտադրության համար պիտանի հողատարածքների ոչ

մեծ տեսակարար կշիռը, բնակչության բարձր խտությունը, հարևան ոչ բոլոր երկրների հետ տնտեսական սերտ հարաբերությունները, էներգետիկ ռեսուրսների սահմանափակությունը և այլ երկրներից էներգետիկ կախվածության բարձր աստիճանը, զբաղվածության ցածր մակարդակը, կրթություն ստանալու և ստեղծագործական աշխատանքի նկատմամբ ազգային հակվածությունը, մեծաթիվ սփյուռքի առկայությունը և օժանդակությունը հայրենիքի զարգացմանը և այլն: Այստեղ, եթե կարելի է ասել, երևույթները քննության են ենթարկվում փիլիսոփայական հարթության մեջ: Հարցը բարձրացվում է քաղաքակրթական զարգացման մակարդակի, գիտելիքահենք տնտեսության ստեղծմանը ոչ թե լոկ ազգային տնտեսության, այլև գլոբալ մակարդակի:

Աշխ. Оценка экономической эффективности капитальных вложений в промышленности, Ер.,1968, Капитальные вложения и основные фонды в народном хозяйстве Армянской ССР на перспективу, Ер., 1971, Экономические проблемы оценки эффективности и обоснования варианта реконструкции предприятий (теоретический очерк), Ер., 1983 (соавтор), Эффективность научно-технического прогресса: вопросы оценки и планирования, Ер., 1988 (соавтор), Արտադրության արդյունավետության գործոնները և բարձրացման ուղիները, Եր., 1994 (համահեղինակ), Հայաստանի Հանրապետությունում սերտիֆիկատային սեփականաշնորհման հիմնախնդիրների փորձագիտական հետազոտություն, Եր., 1997 (համահեղինակ), Экономические преобразования в переходном периоде: теория и результаты, Ер., 1999 (член авторского коллектива), նույն՝ հայերեն լեզվով, Կառավարման ծրագրեր. դասակարգումը և տիպաբանությունը, Եր., 2000 (համահեղինակ), Մարդկային կապիտալը հասարակության զարգացման գործում, Եր., 2007 (համահեղինակ):

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՇՈՏ ԱՐԾՐՈՒՆԻ

(1966)

Ծնվել է Հրազդան քաղաքում: Սովորել է տեղի թիվ 5 միջնակարգ դպրոցում: 1983-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: 1992-96-ին սովորել է նույն ինստիտուտի ասպիրանտուրայում: Աշխատանքային գործունեությունը. 1989-94-ին՝ արդյունաբերական տարբեր ձեռնարկություններում՝ տնտեսագետ, 1996-98-ին՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ գլխավոր մասնագետ, 1998-99-ին՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ վարչության պետ, 2000-ին՝ ՀՀ արժեթղթերի շուկայի տեսչության վարչության պետ, 2001-ին՝ պետական գույքի կառավարման նախարարություն՝ վարչության պետ, 2002-05-ին՝ կորպորատիվ կառավարման կենտրոնի հիմնադիր տնօրեն, 2005-08-ին՝ ՀՀ նախագահին առընթեր քաղաքական հետազոտությունների ինստիտուտ՝ քաղաքական և տարածաշրջանային տնտեսության հարցերով հետազոտող, 2007-2012-ին՝ ՀՀ Ազգային Ժողով՝ փորձագետ, 2001-ից դասավանդում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, դոցենտ: 2016-ից՝ ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակ՝ փորձագետ:

«Հայաստանի տնտեսության կառուցվածքային հիմնախնդիրները տարածաշրջանային զարգացումներում» ատենախոսության համար ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան (2015թ.): Ա.Եղիազարյանի հետազոտական ընդգրկումները միջազգային տնտեսական հարաբերությունների տեսադաշտում ամփոփվել են «Турция и Россия во внешнеэкономических отношениях Азербайджана (1995-2006)», «Грузия: структурные проблемы экономики и турецкая экономическая экспансия (1994-2007)», «Украина в политике западного сообщества, Турция и Россия» և այլ մենագրություններում: Հեղինակը դրանցում արծարծում է նշված երկրների տնտեսությունների ճյուղային կառուցվածքը, արտաքին տնտեսական կապերի առանձնահատկությունները, փորձում կանխատեսումներ կատարել զարգացման ապագա միտումների վերաբերյալ: Անդրադառնալով Հայաստանի տնտեսության կառուցվածքային անհաշվեկշռվածություններին, դրանք պայմանավորող հիմնական գործոններին և դրանցից բխող ռիսկերին, ինչպես նաև Հարավային Կովկասի պետությունների տնտեսությունների համեմատական վերլուծության հիման վրա ցույց են տրվել դրանց բնորոշ կառուցվածքային հիմնախնդիրները, այդ թվում՝ մաքսային և Եվրոպական Միությանը նրանց անդամակցության տեսանկյունը: Հայաստանի տնտեսության կառուցվածքային թերզարգացվածության հաղթահարման և ազգային մրցունակության բարձրացման խնդիրների առումով Ա.Եղիազարյանը կատարում է մի շարք առաջարկություններ՝ կապված անվտանգության գործոնների, պարենային գլոբալ սպառնալիքներով պայմանավորված հանրապետության գյուղատնտեսության բարեփոխումների, Իրանի հետ էներգետիկ համագործակցության ընդլայնման, համաշխարհային և տարածաշրջանային շուկաներում հումքի խորը

վերամշակում ենթադրող և հարակից գործունեության տեսակներում համեմատական առավելություն ապահովելու և այլ հարցերի վերաբերյալ: Նա գտնում է, որ Հայաստանի համար ավելի շահավետ է հարաբերությունների ընդլայնումը ԵՄ հետ, որն ունենալով տնտեսության դիվերսիֆիկացված և զարգացած կառուցվածք, կարող է նպաստել տնեսությունում նոր ճյուղերի և գործունեության ոլորտների առաջացմանը:

Աշխ. «Турция и Россия во внешнеэкономических отношениях Азербайджана (1995-2006)», Е., 2007, «Грузия: структурные проблемы экономики и турецкая экономическая экспансия (1994-2007)», Е., 2007, «Украина в политике западного сообщества, Турция и Россия», Е., 2008, Экономика непризнанной Турецкой Республики Северного Кипра, М., 2012.

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՏԻ

(1932-1995)

Ծնվել է Դոնի Ռոստովում: 1954-ին ավարտել է Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի ինժեներատնտեսագիտական ֆակուլտետը: 1962-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1970-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, 1971-ին՝ պրոֆեսորի կոչում: 1972-1995-ին եղել է տնտեսագիտական ֆակուլտետի «Արդյունաբերության էկոնոմիկա» ամբիոնի վարիչ, 1976-1990-ին՝ տնտհաշվարկի և տնտեսական խթանման հիմնախնդիրների լաբորատորիայի վարիչ: 1990-1995-ին եղել է Փոքր բիզնեսի զարգացման միջազգային կենտրոնի տնօրենը:

Եղիազարյանի, ինչպես 1960-ական թվականների, այնպես էլ հետագա աշխատանքները մեծամասամբ նվիրված են արդյունաբերության մեջ տնտեսական խթանման, որակյալ աշխատուժի արդյունավետության, սոցիալիզմի ժամանակ կոլեկտիվ նյութական շահերի, տնտհաշվարկի հարցերին (“Эффективность квалифицированного труда”, “Коллективные материальные интересы при социализме”, “Коллективные формы стимулирования производства” և այլ): Կարևորելով հասարակական ար-

տադրության արդյունավետության բարձրացման հիմնա-խնդիրները՝ Եղիազարյանը քննության է ենթարկում որակյալ կադրերի պատրաստման օպտիմալ ձևերն ու ռացիոնալ կառուցվածքը: Այս առումով, հետազոտության ոլորտն է ընդգրկում երեք հիմնական համալիր հարցեր՝ կադրերի պատրաստման համակարգը, վերջինիս արդյունավետության որոշման մեթոդոլոգիան և կատարելագործման ուղիները: Նա անդրադարձել է 1960-ական թվականների վերջերին նոր ձևավորվող՝ ժողովրդական կրթության տնտեսագիտության ոլորտին, կարևորել դրանում գործող տնտեսական օրենքների ուսումնասիրությունը: Նրա կարծիքով միայն ժողովրդական կրթության բոլոր ձևերի միասնության մեջ ուսումնասիրությունը կարող է հնարավորություն տալ լուծելու տարբեր ձևերի դպրոցների համալրումը և լուծելու ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար որակյալ կադրերի պատրաստման հեռանկարային հարցերը: Առանձին ուշադրության արժանի են ուսումնական գործընթացների պլանավորման, սովորողների քանակակազմի, տարբեր մակարդակների ուսումնական հաստատությունների կառուցվածքի, կադրերի պատրաստման ձևերի ու մեթոդների և այլ խնդիրները: Իսկ, որ շատ կարևոր է, մի առանձին հետազոտության բնագավառ է համարվում կրթության համեմատական տնտեսագիտությունը, որի հիմնական առարկան պետք է լինի տարբեր երկրների ժողովրդական կրթության համադրումը: Անդրադառնալով ռեֆորմների խնդրին՝ նա նկատում է, որ եթե արդյունաբերության ոլորտում տնտեսական ռեֆորմի անցկացման պահին արդեն առկա է տնտհաշվարկի որոշակի համակարգ, ապա գյուղատնտեսության մեջ 1960-ականներին այն գտնվում էր զարգացման դեռևս վաղ շրջանում: Այս առումով, առաջինում ռեֆորմը պետք է ուղղված լինի տնտհաշվարկի գործող ձևերի զարգացմանը, կատարելագործմանը կամ փոփոխությանը, մինչդեռ գյուղատնտեսության մեջ ընդամենը խոսք է գնում տնտհաշ-

վարկային համակարգի ստեղծման մասին: Նոր համակարգի կարևորագույն օղակ են նյութական խրախուսման ֆոնդերը, որոնք Եղիազարյանի կարծիքով լավագույն ձևով են ներկայացնում կոլեկտիվ նյութական շահերի օգտագործումը: Նա մշակել է տնտեսական մեխանիզմի կատարելագործման, արդյունաբերության մեջ արտադրական միավորումների տնտեսական ինքնուրույնության ընդլայնման գծով խոշորամասշտաբ էքսպերիմենտի մշակման ու անցկացման (1984-1985), տնտեսվարման նոր համակարգերի հայեցակարգի տեսական և մեթոդական հիմունքները:

Անդրադառնալով արդյունաբերական արտադրության արդյունավետության աճի հարցին՝ նա հատկապես ընդգծում է նյութական խթանման դերն ու նշանակությունը (“Материальное стимулирование роста эффективности промышленного производства”): Մենագրության մեջ դիտարկվում է արդյունաբերության նյութական խրախուսման համակարգերի հիմնախնդիրների հետ կապված տեսական և գործնական հարցերի մի ամբողջ համալիր, որոնց միջոցով հեղինակը վերլուծում է գործող համակարգը, միաժամանակ առաջ քաշում դրա հետագա զարգացման հիմնական ուղղությունները: Նյութական շահագրգռվածությունը, ինչպես հայտնի է, ապահովվում է ըստ աշխատանքի վարձատրության ֆոնդի միջոցով, որի հիմնական բաղադրիչներն են՝ արդյունք իր համար՝ աշխատավարձի ձևով և արդյունք հասարակության համար, որը դրսևորվում է ձեռնարկության խթանման ֆոնդերի ձևով: Վերոնշյալ ձևերից յուրաքանչյուրն իրականացնում է որոշակի խթանիչ ֆունկցիա: Ընդ որում, ինչպես նկատում է Եղիազարյանը, դրանցով ստեղծված խթանները ոչ թե հակասում են իրար, այլ փոխլրացնում, գործելով միասնաբար: Այլ խոսքով, տնտեսագետը հետազոտում է նյութական շահերի, շահագրգռվածության և խթանների ողջ համակարգը, ձևերը, կառուցվածքը, միաժամանակ ներկայաց-

նելով դրանց տեղը արտադրական հարաբերությունների համակարգում:

Գ.Եղիազարյանը նշում է, որ 1980-ական թվականներին երկրում իրականացվող տնտեսական ռեֆորմներն իրենց էությամբ հակասական էին՝ կապված ժամանակի ընթացքում կուտակված հիմնահարցերի հետ, որոնք իրականում շատ էին, քան սկզբում թվում էր: «Реформы хозяйственного механизма в промышленности» աշխատության մեջ նա շուկայական տնտեսածևին անցնելու շարժման գլխավոր հակասությունը համարում է այդ անցման օբյեկտիվ անհրաժեշտություն և առկա սոցիալ-տնտեսական համակարգի անջատման պրոցեսը: Վերակառուցումը և շուկայի զարգացմանը խոչընդոտող այդ հակասությունը հանդես է գալիս տարբեր ձևերով.

- տնտեսության անհավասարակշռվածությունը, սրվող համընդհանուր դեֆիցիտը, որն իր հերթին արգելակում է շուկայական տնտեսության կարևոր տարրերի ձևավորումը,
- սոցիալ-քաղաքական, տնտեսական և ազգային գործոնների ազդեցությամբ, թույլ և դեռևս չամրապնդված շուկայի տրոհումը ազգային ու տարածքային աճող ձգտումներով,
- շուկայական բաշխման համակարգին անցմանն արգելակող բաշխման քաղաքական ու պրակտիկայի քաղաքականությունը,
- հասարակական գիտակցությունը կառուցված սոցիալիզմի մոդելի վերաբերյալ կեղծ դոգմաների վրա, որը մերժում է սեփականության այլ ձևերի առկայությունը, բացի պետական սեփականությունից,
- վարչա-հրամայական համակարգի դիմադրությունը, որի համար դեպի շուկայական տնտեսություն շարժման ամեն մի քայլ նշանակում է նրա իրավունքների ու արտոնությունների վերացում: Նշված արգելքների հաղթահարումը տնտեսական փոխակերպությունը կդարձնի ավելի

արդյունավետ:

1990-ական թվականներից Եղիազարյանի հետաքրքրությունները վերաբերում էին մանր և միջին ձեռնարկությունների սեկտորի ստեղծման և զարգացման միջոցով շուկային անցման մեխանիզմի ձևավորման մեթոդոլոգիական հիմքերին, առաջադրելով գործնական հանձնարարականներ, որոնք պետք է ունենան պետության աջակցությունը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանել են 50 գիտության թեկնածուներ: Հեղինակ է ավելի քան 120 գիտական աշխատանքների:

1980-ին Եղիազարյանն արժանացել է ՌԴ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Աշխ. Эффективность квалифицированного труда, М.,1968, (соавтор), Коллективные материальные интересы при социализме, М.,1968 (соавтор), Коллективные формы стимулирование производства, М., 1968 (соавтор), Продление материального стимулирования в промышленности, М., 1970, Интерес, коллектив, производство, М., 1970, Материальное стимулирование роста эффективности промышленного производства, М., 1976, Совершенствование экономических методов управления в отрасли, М., 1980, Реформа хозяйственного механизма в промышленности, М.,1990.

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ԱԴԱՄԻ

(1852-1914)

Ծնվել է Դավալու (այժմ՝ ք. Արարատ) գյուղում: 1875-ին ավարտել է Թիֆլիսի գիմնազիան, իսկ 1880-ին՝ Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1885-ին Մոսկվայի համալսարանում հանձնել է մագիստրոսական քննություն, ապա մասնակցել Կովկասի գյուղացիության վիճակը ուսումնասիրող հանձնաժողովի գործունեությանը: 1887-ից Կազանի համալսարանի փիլիսոփայության և իրավունքի պատմության պրիվատ դոցենտ է: 1889-ին ստացել է պետական իրավունքի մագիստրոսի, իսկ 1892-ին՝ դոկտորի գիտական աստիճան: 1893-ից եղել է Կիևի Ս.Վլադիմիրի համալսարանի պետական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր: Դասախոսել է Կիևի կայսերական և Օդեսայի համալսարաններում: Նա այն առաջիններից էր, որ պարգևատրվել է Գևորգյան Ոսկե խաչով: Պարգևատրումը ստացել է Մոսկվայում, Կրեմլի պալատում կազմակերպված մեծ հանդիսության ժամանակ, կայսեր ձեռքից: Եղել է Ներսիսյան դպրոցի տեսուչ, աշխատակցել «Մշակ», «Նոր դար», «Տարազ» և այլ պարբերականներին:

Նրա հիմնական աշխատությունները նվիրված են Անդրկովկասի հաստատությունների ուսումնասիրությանը: XIX դարի երկրորդ կեսին համայնքը դարձել էր հայ հասարակական մտայնության հիմնական հարցերից մեկը: Վերլուծվում և առաջադրվում էին տեսակետներ, որոնց նպատակը համայնքի տեղի ու նշանակության գնահատումն էր հասարակական զարգացման գործընթացում: Այս իմաստով բացառիկ արժեք է ներկայացնում Ս.Եղիազարյանի «Исследования по исстории учреждений в Закавказье, ч.1. Сельская община» ուսումնասիրությունը: Եթե ռուսական միտքն արդեն արգասավորվել էր համայնքի վերաբերյալ ուսումնասիրություններով, ապա Եղիազարյանի հետազոտությունը հայ իրականության մեջ առաջին ամբողջական ուսումնասիրությունն էր հասարակության կապիտալիստական շրջափոխության էտապում համայնքի պատմական հետագծի, նրա կառուցվածքի, տնտեսական ու սոցիալական կացության նկարագրի բացահայտման իմաստով: Գյուղական համայնքի սոցիալական դեմքի բնութագրման առումով Եղիազարյանն առանձնացնում է համայնական հողօգտագործման հարցերը՝ հանգամանորեն ներկայացնելով հողաբաշխման համփա-չարեքային համակարգի առանձնահատկություններն ու գյուղական համայնքի կառավարումը, ինչպես նաև համայնքի փոխակերպությունն ու քայքայումը՝ պայմանավորված ապրանքափողային հարաբերությունների ներթափանցմամբ և գյուղում կատարվող դասակարգային շերտավորմամբ:

Համայնական հողատիրությունը բնորոշ դիտելով բոլոր ազգերին նրանց զարգացման սկզբնական շրջանում, նա չի համաձայնում այն հեղինակների հետ (Ա.Երիցյան, Ս. Զելինսկի, Ն.Աբելով), ովքեր հայ ժողովրդի համար բնորոշ էին համարում հողատիրության միայն համայնական ձևը. «Որ համայնքը երբևիցե գոյություն ուներ և գոյություն ունի ոչ միայն հին Հայաստանի կազմի մեջ մտնող Անդրկովկասի շրջաններում, այլև ամբողջ Պարսկաստանում և Փոքր Ասիայում, դա փաստ է: Բայց մյուս կողմից

մասնավոր հողային սեփականության միաժամանակյա գոյությունը նույնապես կասկածի ենթակա չէ»: Ակներև է, որ Ս.Եղիազարյանը, ժխտելով միայն մասնավոր սեփականության նախասկզբնական գոյության վերաբերյալ գաղափարը, միաժամանակ նշում է նրա առկայությունը հին Հայաստանում:

Հայտնի է, որ Հայաստանում համայնական հողօգտագործման հիմքը համփաչարեքային համակարգն էր: Ըստ այդ համակարգի մեկ համփայի հողաբաժին ստանում էին 16 շունչ ունեցող ընտանիքները, դրանից քիչ, բայց զույգ թվով ընտանիքները համապատասխանաբար ստանում էին 3/4, 1/2, 1/4 և 1/8 համփա: Կենտ թվով ընտանիքներին լրացուցիչ տրվում էր մեկ շնչի հողաբաժին: Ս.Եղիազարյանն այսպիսի տարբերակումը համարում էր արհեստական՝ գտնելով, որ այդ «դասակարգումը» արվել է ավելի շուտ հողաբաշխման հարմարության գործնական նկատառումներից ելնելով:

Ընդհանրապես համփայի տնտեսական էության բացահայտումը ելակետային նշանակություն ունի հայկական համայնքի հողօգտագործման հարաբերությունների լուսաբանման տեսակետից: Ուստի այն ոչ միայն աննկատ չմնաց Ս.Եղիազարյանի կողմից, այլև դարձավ նրա հետազոտությունների առանցքային հարցերից մեկը:

Քննադատելով տարբեր հեղինակների (Ս.Ջելինսկի, Ա.Պարվիցկի) համփան «վճարունակություն» դիտելու մտայնությունը, Եղիազարյանը նկատում է. «Արևելքի գյուղական համայնքում ամենից առաջ որոշում են համայնքի անդամի տնտեսական, ունեցվածքային ունակությունը և հետո նոր հարկադրում այդ «ունակությանը» համապատասխան հարկերն ու պարհակները, այլ խոսքով, ոչ թե հողի չափն է կախված հարկերի չափից, այլ, ընդհակառակն, հարկերի չափը կախված է համայնքի անդամի հողաբաժնի մեծությունից»: Հետևապես, համփան մեծ հողաբաժին էր ստանում ոչ թե այն պատճառով, որ ավելի շատ հարկեր և պարհակներ ուներ, այլ այն պատճառով,

որ համայնքի մյուս անդամների համեմատ մեծ հողաբաժին ուներ: Համփայի տնտեսական ունակության և հարկերի ու պարհակների փոխհարաբերության այսպիսի հարցադրումը ինքնին տրամաբանական է:

Չնայած համայնքի կենսունակության վերաբերյալ Ս.Եղիազարյանի դատողություններին, նա միաժամանակ նկատում է, որ համայնքի կառավարումն «ընդունում է օլիգարխիկ երանգ, և համայնական հողատիրությունն աստիճանաբար քայքայվում է», միաժամանակ առաջարկելով միջոցներ վերջինս կանխելու և պայմաններ ստեղծելու գյուղատնտեսության զարգացման համար: Մերժելով հասարակական այն հոսանքի դոկտրինան, որն ակնկալում էր հողը վերցնել կալվածատերերից և տրամադրել գյուղացիությանը, նա գտնում է, թե անհրաժեշտ է վերացնել վաշխառությունը, նոր հողեր գնել, ջրանցքներ կառուցել, ազատ հողերը յուրացնելու նպատակով էժան վարկեր տրամադրել, ներդնել արտադրության առաջատար եղանակներ, սահմանափակել հողերի առքն ու վաճառքը, կարգավորել հողերի վերաբաժանման ժամկետներն ու հավասարակշռել բնակչության աճի ու համայնքի աշխատանքային հնարավորությունները և այլն: Իր ուսումնասիրություններում Ս.Եղիազարյանը հատուկ ուշադրություն է նվիրում գյուղացիության տնտեսական կենցաղի այնպիսի մի կարևոր հարցի, ինչպիսին ջրատիրման համայնական սկզբունքներն էին (“О водовладении в Закавказском крае”): Գյուղացիության տնտեսական կենցաղի վերլուծությունն ամբողջական դարձնելու նպատակով նա հանգամանորեն ներկայացնում է Անդրկովկասում տարբեր ազգերի գյուղական ընտանիքի իրավական կարգը և դրանով պայմանավորված հողատարածությունների ու ընտանեկան ունեցվածքի բաժանման կարգը:

Եղիազարյանի՝ Անդրկովկասի հաստատությունների պատմությանը վերաբերող ուսումնասիրություններում կարևոր տեղ է պատկանում քաղաքային ցեխային կազմակերպությունների՝ համքարությունների վերլուծությանը:

Մինչ այդ լույս էին տեսել Պ.Շանշյանի (П.Шаншиев, Два слова об амкстве, Тифлис, 1857) և Յու.Հախվերդյանի (Юрий Ахвердов, Тифлисские амкары. Об организации учреждения амкар и их обычиях, Тифлис, 1883) ուսումնասիրությունները: Սակայն Եղիազարյանի «Исследования по исстории учреждений в Закавказье, ч.2, Городские цехи» աշխատությունն իր բնույթով, կառուցվածքով և բովանդակությամբ համքարական տնտեսակարգի առաջին համակողմանի ուսումնասիրությունն է: Նրանում քննարկվում են ցեխային կազմակերպությունների ծագման պատմության ու տեսության այնպիսի կարևոր դրույթներ, որոնք մեծ նշանակություն ունեն հարցի պարզաբանման համար: Պատահական չէ, որ նրա գիրքը խիստ աշխույժ և հակասական քննարկումների առարկա էր դարձել ինչպես հասարակական, այնպես էլ կառավարական ոլորտներում՝ համարվելով արժեքավոր ձեռքբերում ինչպես հայրենական, այնպես էլ համաեվրոպական գիտական գրականության մեջ:

Ցեխային կազմակերպությունների ծագման հարցը դյուրին հարց չէր և, չնայած XIII դարից սկսած վեճեր էին գնում դրա շուրջ, մինչև XIX դարի վերջն այն վերջնականապես լուծված չէր: Առկա էին բազմաթիվ իրարամերժ տեսություններ: Օրինակ, առաջ էր քաշվում հռոմեական ծագման տեսությունը, ըստ որի միջնադարյան ցեխերը որոշակի «գենետիկական կապ» են ունեցել «հռոմեական մունիցիպալ կարգի հետ»: Համաձայն մեկ ուրիշ տեսակետի, անհրաժեշտ է կարևոր տեղ հատկացնել ազգային առանձնահատկությունների գործոնին: Այլ հեղինակներ առաջադրում էին դրանց ծագման «պետական» տեսությունը: Ոմանք էլ այն կապում էին ցեխերի անդամների կրոնական ընդհանրության փաստի հետ: Այս պարագայում, բնականաբար, որոշակի կարևորություն է ստանում համքարական կազմակերպությունների ծագման ու գնահատման, դրանց և եվրոպական երկրների միջնադարյան ցեխային կազմակերպությունների միջև ընդհանուր օրի-

նաչափությունների և առնչությունների ուրվագծումը: Հակստհաուզենը գտնում էր, որ համքարություններն Անդրկովկաս են թափանցել խաչակիրների կողմից, կամ Եգիպտոսից Պարսկաստան, իսկ այնուհետև Անդրկովկաս: Ըստ Զագորսկու, դրանք ունեն թուրքական ծագում: Գ.Հախվերդյանը դրանք վերագրում էր հայերի ազգային առանձնահատկություններին և այլն: Այդ տեսակետներից և ոչ մեկը Ս.Եղիազարյանը գիտական և պատմական փաստերով հիմնավորված չէր համարում: Քննադատելով համքարությունները «թուրքական կուլտուրայի և պետական կարգի արդյունք դիտելու» մտայնությունը, Ս.Եղիազարյանը նշում էր, որ թուրքերը, որպես հետամնաց և քոչվորական ժողովուրդ, իրենք էին ընդօրինակում նվաճված ժողովուրդների կուլտուրան: Նա գտնում էր, որ ժամանակագրական առումով հավաստի չի կարելի համարել նաև ինչպես Խ.Մառնակոզյանի տեսակետը, ըստ որի համքարությունները գոյություն ունեին դեռևս XIII դարում, այնպես էլ Շանշյանի կարծիքը, որը դրանք համարում էր առավել հին հաստատություն:

Դարեր շարունակ եղել են համքարական կազմակերպությունների նախատիպեր ու դրանց հետ կապված առանձին սովորություններ, սակայն համքարությունների գոյությունը Ս.Եղիազարյանը որոշակիորեն կապում է XVII դարի հետ, չնայած «XVII դարում առանձին համքարությունների տնտեսական գործունեության ոլորտը և շահերը չէին սահմանազատված, և գոյություն չուներ արհեստի մոնոպոլացում», այնուամենայնիվ, «քաղաքային բնակչության մեջ ցեխային կազմակերպությունները խիստ տարածված էին: Ճիշտ է, նրա հիմք էր ծառայում զբաղմունքների միասեռությունը, բայց տնտեսական շահը, իբրև այդպիսին և արհեստը այն ժամանակի սովորություններով չէր դիտվում որպես ցեխային վարպետների բացառիկ մոնոպոլ իրավունք: Աշխատանքն ազատ էր սահմանափակումից, ցեխերի կողքին գոյություն ունեին ազատ վարպետներ, որոնք չէին մտնում ցեխերի կազմի մեջ»:

Ս.Եղիազարյանը գտնում էր, որ XIX դարի անդրկովկասյան համքարական կազմակերպություններն իրենց զարգացման աստիճանով համապատասխանում էին XIII-XV դարերի եվրոպական ցեխային միություններին:

Համքարությունների ծագման հարցի վերաբերյալ Ս.Եղիազարյանը որոշակի տեղ հատկացնելով տնտեսական ու համքարության անդամների կրոնական ու էթիկական ընդհանրության գործոններին, ավելի շատ հակված էր ընդունելու «պետական» տեսությունը, ըստ որի համքարությունները արդյունք են պետության զուտ ֆինանսական և ոստիկանական նկատառումների: Դա բացատրում է այն ֆունկցիաներով, որ կատարում էին համքարությունները հարկային ու պետական կարգի պահպանության բնագավառներում:

Նա զարգացրել է մեկ այլ թեզ ևս, ըստ որի դեռևս շատ հին ժամանակներից սկսած, մարդկանց ներհատուկ ինքնապահպանման և ինքնապաշտպանության զգացումները ստիպել են միավորվելու, որը սկզբում դրսևորվել է արյունակցական համայնքների ձևով, որոնք հետագայում քայքայվում են և առաջ բերում արհեստական միությունների ստեղծման պահանջ: Բնական թե արհեստական այդ միությունները ենթադրում էին որոշակի տնտեսական, հոգևոր կամ կրոնական շահեր: Զուգահեռներ գծելով միջնադարյան եվրոպական ցեխերի հետ՝ Եղիազարյանը միաժամանակ ներկայացնում է Անդրկովկասի համքարությունների առանձնահատուկ, տարբերակիչ գծերը:

Չնայած XIX դարի վերջերին Անդրկովկասն արդեն թևակոխել էր զարգացման կապիտալիստական ուղին, բայց արտադրության ամենատարբեր ոլորտներում գերակշռում էր նահապետական տնտեսածևը: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով, Ս.Եղիազարյանը կատարում է հետևյալ ընդհանրացումը. «Ցեխային սիստեմը, որպես աշխատանքի կազմակերպման որոշակի ձև, ունի իր թույլ և լավ կողմերը: Տնտեսական ու կուլտուրական զարգացման որոշակի աստիճանում այն լիովին նպատակահար-

մար և օգտակար է, մյուսում, ընդհակառակը, հանդիսանում է իր դարն ապրած և իր նշանակությունը կորցրած հիմնարկություն: Անդրկովկասյան երկրի արհեստավորական արդյունաբերության ժամանակակից վիճակում ցեխային կարգը անհրաժեշտ է, այն չի հակասում նաև գործող օրենքներին:

Տնտեսագետի վերլուծությունները գյուղական համայնքի, քաղաքային համքարությունների կազմի, կառուցվածքի և հիմքերի մասին հետաքրքրություն են ներկայացնում Անդրկովկասի տնտեսական կենցաղի հետազոտության առումով: Նրա ուսումնասիրությունները պատկերացում են տալիս կապիտալիզմի զարգացման ժամանակաշրջանում հայ իրականության տնտեսական ու հասարակական հաստատությունների, հայ տնտեսագիտական մտքի հետազոտական ոլորտների վերաբերյալ:

Աշխ. Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպայում և մեր երկրի հայաբնակ մասերում և մեր գյուղացու այժմյան տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1882, Краткий этнографический очерк курдов Эриванской губерни. Тифлис, 1884, Административно-экономический очерк сельской общины в Ериванской губерни. В кн. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. 1, ч. 1, Тифлис, 1887, Формы общины и крестьянского землевладения в Тифлисской губерни. См. Свод матералов, т.2, Сельская община Елисаветпольской и Бакинской губерниях, см. Свод материалов т. 3, ч. 1, Исследования по истории учреждений в Закавказье, ч.1. Сельская община, Казань, 1889, Исследования по истории учреждений в Закавказье, ч.2, Городские цехи, Казань, 1891, О водовладении в Закавказском крае, Киев, 1896, Исследования по истории армянского права публичного и частного, вып.1. Киев, 1919.



ԵՐՋՆԿՅԱՆ ԲԱԳՐԱՏ ՀԱՅԿԻ

(1950)

Ծնվել է Երևանում: Սովորել է Ա.Չեխովի անվան թիվ 55 դպրոցում: 1971-ին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Ռադիոտեխնիկա» մասնագիտությունը: Տնտեսական գիտությունների թեկնածուի և դոկտորի աստիճանները ստացել է համապատասխանաբար 1989 և 2000 թվականներին, պրոֆեսոր է ինստիտուցիոնալ տնտեսագիտության գծով (2003): 1994-ից աշխատում է ՌԴ ԳԱ կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտում (ԿՏՄԻ), ներկայումս տնտեսական զարգացման ստրատեգիայի լաբորատորիայի վարիչն է: 1991-ին վերապատրաստվել է Նիդեռլանդներում, իսկ 1994-ին՝ ԱՄՆ-ում: Կազմակերպական գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ է (2003), կառավարման պետական համալսարանի գիտական աշխատանքների գծով ամբիոնի վարիչի տեղակալ: Գիտական աստիճաններ շնորհող մի քանի խորհուրդների, Ֆեդորենկոյի ֆոնդի փորձագիտական խորհրդի անդամ է, «Համալսարանի լրաբեր» ամսագրի «Ինստիտուցիոնալ էկոնոմիկա» սերիայի և «Միկրոէկոնոմիկա» ամսագրի խմբկոլների անդամ է, ՌԴ ԳԱ ԿՏՄԻ «Ինստիտուցիոնալ վերափոխումների տեսությունը

և պրակտիկան Ռուսաստանում» գիտական աշխատանքների ժողովածուի խմբագիր:

Երզնկյանի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են տրանսակցիոն ծախքերի տնտեսական տեսությունը, ինստիտուցիոնալ և էվոլյուցիոն էկոնոմիկան, ստրատեգիական պլանավորումը, կորպորատիվ կառավարումը, ֆինանսաարդյունաբերական խմբերը, կոնտրակտների տեսությունը: Հեղինակ է շուրջ 300 գիտական հրապարակումների:

Երզնկյանը կորպորատիվ կառույցներին առանցքային դեր է հատկացնում ժամանակակից տնտեսական համակարգերի գործունեության մեջ՝ որպես յուրատեսակ խթաններ քաղաքակիրթ շուկայական տնտեսության անցման ճանապարհին: Սակայն Ռուսաստանում կորպորատիվ կառույցները չխաղացին այդ դերը: Երզնկյանն այդ երևույթը բացատրում է մի շարք պատճառներով: Ռուսական կորպորացիաները, լինելով հետևանք երկրի համար ավերիչ տնտեսական ռեֆորմների, ընդունեցին իրենց պարտադրված խաղի կանոնները: Բնականաբար այդ հարցում նշանակալի էր դիսկրեցիոն կառավարման լայնամասշտաբ ընդլայնումը, որը հարկերից խուսափելու, ռենտայի, կոռուպցիայի մոլուցքով տարվելու հետ մեկտեղ, բերեց ստվերային տնտեսության աճին, ինչպես նաև ոչ արդյունավետ այնպիսի հաստատությունների զարգացմանը, ինչպիսիք են՝ բարտերը, փոխադարձ մարումները, չվճարումները, որոնք, առաջ բերելով տնտեսական համակարգի էռոզիա, կորպորատիվ կառույցները հրեցին դեպի ստվերային տնտեսություն: Ռուսական տնտեսության վերածննդի փոխարեն դրանք էլ ավելի ապակայունացրին այն, և տնտեսությունը հայտնվեց ինստիտուցիոնալ ծուղակների արատավոր օղակում: Երզնկյանն իր աշխատություններում.

- առաջարկել է «տեխնոլոգիա-տրանսակցիա-հաս-

տատություն» հարթության հատուկ կոնցեպտուալ սխեմա,

- ներկայացրել է կորպորատիվ կառույցների՝ իբրև հիբրիդ կազմավորումների դերը շուկայական և կորպորատիվ, ինչպես նաև տնտեսական գործունեության պետական կոորդինացիայի բացթողումների վերացման գործում,
- բացահայտել է ռուսական կորպորացիաների և կորպորատիվ կառույցների ինստիտուցիոնալ գենոտիպերը՝ կապված ինստիտուցիոնալ ծուղակների տրանսֆորմացիայի և դրանց ադապտացիայի հետ,
- վերլուծության է ենթարկել ռուսական տնտեսության դուալիզմի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, այսինքն՝ մի կողմից բիզնեսի կայուն, լեգալ ձևերի ծագում, մյուս կողմից՝ ստվերային կորպորատիվ գործունեության ձևով պետական օրգանների առաջացում՝ համապատասխան տանիքի ներքո,
- ներկայացրել է ժամանակակից ռուսական կորպորացիայի յուրահատկությունը, կառուցել է մաթեմատիկական մի մոդել, որի նպատակային ֆունկցիան կառավարչական օգտակարության մաքսիմիզացիան է,
- առաջադրել է տնտեսության կորպորատիվ-տեխնոլոգիական զարգացման նկարագրության ոչ գծային սխեմա՝ կիրառելով «կարգ» և «քաոս» հասկացությունները,
- ներմուծել է դիսկրեցիոն ձեռնարկությունը որպես ֆիրմա հասկացողությունը, որը կարող է աշխատել ինչպես լեգալ, այնպես էլ ոչ լեգալ շուկայի համար՝ ունենալով եկամուտների երկու տեսակ:

Աշխ. Холдинговые компании: особенности, опыт, проблемы, перспективы. -М., 1992 (монография), (соавтор: Э.А.Азроянц), Институциональная модернизация в свете построения в России справедливого общества. // Вестник университета. 2008.

№2(23). О моделях языкового выбора. / Львовские чтения -2008, Сборник научных трудов по материалам конференции. Под ред. С.Ю.Глазьева и Б.А.Ерзнкяна. - М.: ГУУ, 2008, Государственная политика в свете институциональной модернизации социально-экономических отношений. // Экономика и математические методы. 2007. Т.43. №4, Механизмы управления межфирменными отношениями: теоретические аспекты. // Микроэкономика. 2007, №2, Является ли институциональная матрица институциональной матрицей? // Экономическая наука современной России. 2007 №2. Специфика "контрактных" отношений государства и бизнеса в российском топливно-энергетическом комплексе. // Mon enednn 3ougna! oГ Econormcз, 2006, N0.3. Институциональная реальность социально-экономических систем и концепция институционального человека. / Эволюционная теория, инновации и экономические изменения. -М.: ИЭ РАН, 2006. Эволюционное направление российской экономической мысли. // Экономическая наука современной России, 2005, №4, "Выращивание" структур социального сектора: проблемы публичности благ, // Журнал экономической теории. 2005. №3. Семиотика институтов: случай "Дафны". // Вестник ГУУ. Серия Институциональная экономика. 2005. №1. Постсоциалистическая приватизация и корпоративное управление в свете теоремы Коуза. // Вопросы экономики, 2005, Шумпетер И. Мэйнстрим и эволюционная теория экономического развития. // Экономическая наука современной России. 2004. №4. Развитие института собственности в условиях глобализации. // Экономическая наука современной России. 2004. №3.



ԵՐԻՑՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴԱՎԹԻ

(1842-1902)

Ծնվել է Թիֆլիսում: Սովորել է Ներսիսյան դպրոցում, ապա՝ ռուսական գիմնազիայում: 1877-78-ի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ եղել է հատուկ գործերի հանձնակատար Մ.Լոռիս-Մելիքովի և Բ.Շելկովնիկովի մոտ: Պատերազմից հետո մինչև 1886-ը աշխատել է պետական կալվածքների նախարարությունում: 1866-1867-ին՝ Գ.Տեր-Ալեքսանդրյանի հետ հրատարակել է «Վաճառական» շաբաթաթերթը: Թերթի անվանումն ինքնին բնորոշում է նրա հիմնադիրների սոցիալ-տնտեսական հայեցության բովանդակությունը: Եվ որովհետև երկրամասի տնտեսական կյանքում տիրապետողն առևտրական կապիտալն էր, ուստի և տնտեսագիտական արծարծումներում առաջնակարգ նշանակություն են ստանում փողի և շրջանառության ոլորտի հարցերը: Թերթի էջերում իր վերլուծություններով նա հանդես է եկել դրամաշրջանառության, փողի և վարկի նշանակության, բանկերի դերի, առևտրական քաղաքականության և այլ հարցերի շուրջ: Նա հետևում էր ոչ միայն երկրամասի, այլև եվրոպական երկրների տնտեսական կյանքի փոփոխություններին: Հայտնի է, որ 1860-ական թվականներին համաշխարհային տնտեսագիտական

միտքը իր առաջին ընդհանրացումներն էր կատարում տնտեսական ճգնաժամերի երևույթի վերաբերյալ: Երիցյանը փողը համարում էր տնտեսական ակտիվության անհրաժեշտ պայմանը, հետևապես նրա առատությունը տնտեսության զարգացման բանալին է: Սակայն, եթե թղթադրամը թողարկվում է ոչ թե տնտեսության իրական պահանջմունքներին համապատասխան, այլ պետության պարտքերը մարելու և բյուջեի ճեղքվածքը փակելու համար, ծայր է առնում ինֆլյացիան, որը հաճախ կործանարար հետևանք է ունենում տնտեսության համար. «Մեր կյանքում, փողի ձեռքից ձեռ անցկենալը միևնույն նշանակությունն ունե, ինչպես արյունը մեր մարմնի մեջ: Անփողությունը միևնույնն է մեր տնտեսութենի համար: Արնի անկարգ վազելուց քայքայվում է մեր առողջությունը, ինչ որ արնի սակավությունը մեր առողջության համար: Իսկ երբ արյունն էլ չէ շարժվում, մարդս մեռնում է, միևնույնը պատահում է և մեր կյանքում, երբ որ փողի կարիք ենք ունենում»: Եվ նա ճգնաժամերի պատճառը համարում է փողի քանակի և ապրանքների քանակի միջև անհամապատասխանությունը, ըստ որում, կապված «անբնական» հիմքերի վրա դրված բանկերի գործունեության հետ: Բանկային համակարգի արևմտյան տարբերակը, որտեղ գործունեության նպատակը միայն սեփական շահն է, Երիցյանի համար ներկայանում է անընդունելի, առաջարկելով ստեղծել մեկ հասարակական կենտրոնական բանկ, որը կկենտրոնացներ ամբողջ «առևտրական գործունեությունը» և կկարգավորեր «տոմսակների և թղթադրամների գործածության ուղիղ ընթացքը»: Իսկ վերջինս, ըստ Երիցյանի տեսության, կարող է իրականացվել, եթե բանկերը սկսեն թողարկել չփոխարկվող տոմսակներ (բանկնոտներ), որոնք ապահովված կլինեն ոչ թե ոսկով ու արծաթով, այլ

մուրհակներով, «որոնց վրա նշանակված լինի քանակությունը ապրանքների գներով»:

Մեծ դեր հատկացնելով առևտրին ազգերի տնտեսական կյանքում, նա սակայն չէր ընդունում դասական տնտեսագետների ազատ առևտրի սկզբունքները և հակված էր չափավոր մաքսային քաղաքականության միջոցով հավասարակշռված առևտրի իրագործմանը:

Ա.Երիցյանն, ինչպես «Վաճառական», այնպես էլ «Մեղու Հայաստանի», «Արծագանք», «Փորձ» պարբերականներում հանդես է եկել հոդվածներով նաև երկրամասի ներտնտեսական խնդիրների վերաբերյալ: Հայտնի է, որ երկրամասի կապիտալիստական փոխակերպության հարցը հայ տնտեսագիտական մտքի ազատամտական և ազգային-պահպանողական հոսանքների հիմնական կռվանն էր: Ազատամտական հոսանքը կապիտալիզմի զարգացման ջատագովն էր, որը ազգի զարգացումը կապում էր «նյութական հարստության» մեծացման հետ՝ պնդելով, թե «մի ազգի տնտեսական կյանքից է կախված նրա մտավոր ու բարոյական կացությունը» (տե՛ս նաև Գ.Արծրունու և Ա.Արասխանյանի մասին գիտակենսագրական ուրվագծերը): Ազգային պահպանողականներն («Մեղու Հայաստանի», «Նոր-դար», «Արծագանք», «Փորձ») առաջադրում էին հակառակ բանաձև, թե «երկրի տնտեսական վերածնությունը» պետք է հաջորդի «երկրի բարոյական վերածնությանը»: Սակայն, ի տարբերություն մյուս թևի («Նոր-դար», «Մեղու Հայաստանի»), «Փորձը» և «Արծագանքը», որոնցում Ա.Երիցյանը հանդես էր գալիս հոդվածներով, ընդունում էին Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման պատմական օրինաչափությունը՝ կապիտալիզմը համարելով հասարակական-տնտեսական մի նոր աստիճան, դրսևորելով չափավոր լիբերալիզմ: Երիցյանը, ինչպես և ընդհանրապես պահպանողականները, արհեստները դիտում էր որպես

երկրամասի տնտեսական ուժերից մեկը, միաժամանակ նրա դիտողությունները մրցակցության՝ արդյունաբերության ու առևտրի համար ունեցած նշանակության, արտադրության կատարելագործման և առաջավոր մեթոդների ներդրման, երկրամասի վրա եվրոպական կապիտալի բարերար ազդեցության, բնական գիտությունների կարևորության՝ որպես առաջընթացի խթանի և այլ հարցերի վերաբերյալ ընդհանրություններ են հայտնաբերում ազատամտական հոսանքի հայեցության հետ:

Ա.Երիցյանը Կովկասի պետական կալվածքների նախարարության խմբում ուսումնասիրություններ է կատարել երկրամասի պետական գյուղացիության տնտեսական կենցաղի (գյուղացիության վիճակի, հողով ապահովվածության, հողօգտագործման ձևերի, հարկային համակարգի, վարձակալության և այլ հարցերի) վերաբերյալ, որոնց արդյունքները հրապարակվել են «Материалы для изучения экономического быта государственных крестьян» ժողովածուների հատորներում (ինչպես նաև առանձին գրքերով):

Ա.Երիցյանի գործունեությունը հատկապես եղել է հայոց պատմության, հնագիտության, հայ մտքի ու մշակույթի ուսումնասիրության բնագավառներում:

Աշխ. Экономический быт государственных крестьян. Борчалинского уезда Тифлисской губерни, Тифлис, 1889, Экономический быт государственных крестьян Казахского уезда Елисаветпольской губерни, Тифлис, 1889.

ՋԱՎԱՐՅԱՆ ՍԻՄՈՆ ՄԵԼԻՔԻ

(1865-1913)

Ծնվել է Այգեհատ (այժմ՝ գ.Դանուշավան, Լոռվա մարզ) գյուղում: Հայ հասարակական-քաղաքական գործիչ, «Հայ հեղափոխականների միության» հիմնադիրներից: Ավարտել է Մոսկվայի Պետրովյան երկրագործական ակադեմիան: 1882-86-ին եղել է Թիֆլիսի հայ նարոդնիկական խմբի անդամ:

XIX դարավերջի և XX դարասկզբի հայ տնտեսագիտական միտքն իր ընդգրկումներով բազմաբնույթ էր: Հրապարակվում էին ինչպես տեսական, այնպես էլ գործնական, վիճակագրական բնույթի աշխատություններ: Տեսաբան վիճակագիրները տեսական վերլուծությունները զուգորդում էին վիճակագրական նյութի օգտագործման հետ, վիճակագիր տեսաբանները զբաղված էին որոշակի եղանակներով ու մեթոդներով նյութի համակարգմամբ, որոնք թեև արտացոլում էին տնտեսական կյանքի ու նրա երևույթների օրինաչափությունները, այնուամենայնիվ, դրանցում տեսական արծարծումները պակաս բնույթ ունեին:

Սիմոն Զավարյանը վիճակագիր-տեսաբան էր: Զբաղվում էր երկրամասի ժողովրդական աշխատանքի համար հիմնականը հանդիսացող գյուղատնտեսության հետազոտմամբ:

1890-ական թվականների կեսերին Գյուղատնտեսության կովկասյան կայսերական ընկերությունը հատուկ

քննության առարկա է դարձնում հողագործության վիճակը, որի ուսումնասիրության համար հրավիրում է նաև Ս.Զավարյանին: Ուսումնասիրելով անբերրիության պատճառները Երևանի նահանգի և Ղարսի մարզում՝ նա բնութագրում է հողակառուցվածքը, կլիմայական պայմանները, տնտեսության վարման ձևերը և համակարգերը, կատարում անասնապահության, երկրագործության, ինչպես նաև պարենային հարցի հանգամանալից վերլուծություն: Այդ հետազոտության արդյունքներն ամփոփվել են «Опыт исследования сельского хозяйства хлебородного района Ереванской губернии и Карской области» աշխատության մեջ: Չժխտելով սոցիալական գործոնի և, մասնավորապես, հողատիրության ձևերի նշանակությունը գյուղատնտեսության բնույթի վրա, նա առաջնային դերը տնտեսական հարցերի քննության ժամանակ հատկացնում է բնակլիմայական պայմաններին. «Չժխտելով սոցիալական գործոնի և, մասնավորապես, հողատիրության ձևերի նշանակությունը գյուղատնտեսության բնույթի վրա, ես այնուհանդերձ պետք է հակառակն արտահայտվեմ հողերի բաշխման հարցում նրա գերագնահատող նշանակությանը» և, որ հողերի բաշխման հարցում սոցիալական պայմանները «խաղում են երկրորդական և նույնիսկ երրորդական դեր»: Գյուղացիության տնտեսական ու սոցիալական կացությունը, տարագնացությունը նա պայմանավորում է հողասակավության, հարկերի ու պարհակների, վաշխառուական կապիտալի հետ և այլն: Նրա տնտեսական ծրագիրը ենթադրում է միջոցառումների մի խումբ, ինչպես օրինակ, արտադրության առաջատար ձևերի կիրառում, մտավորականության նախաձեռնության և տնտեսական գործունեության, բնակչությունից մասհանումների հաշվին հասարակական պահեստների և ապահովագրական ֆոնդերի ստեղծումը և այլն, առաջարկություններ, որոնք տեսական եզրեր են որոնում նարոդնիկության հայեցության հետ և կառուցված են նույն մտադրույթի վրա: Նրա վիճակագրական աշխատությունները («Кавказ в сельско-хозяйственном отно-

шении в 1899г.», «Экономические условия Карабаха и голод 1906-1907гг.»), այսօր էլ օգտակար հետազոտություններ կարող են լինել երկրամասի ագրարային հարաբերությունների հետազոտողների ճանաչողական պատմական հետաքրքրությունների համար: Իսկ «Նախագիծ ազգաբնակչության տնտեսական վիճակի» գրքույկն ավելի շուտ մեթոդական ուղեցույց է գյուղական կյանքի տնտեսական կացության ուսումնասիրության համար: Նա նպատակ ուներ գյուղի բոլոր կարող ուժերին ներգրավել այդ աշխատանքներին, որպես մի հանձնարարական մտավորականությանը, որն առաքելություն ուներ ազգի հարատևության հիմքը հանդիսացող գյուղացիության տնտեսական ու սոցիալական գոյության բարվոքումը: Իսկ դա պահանջում է տնտեսական կյանքի կացությունն ու երևույթները պայմանավորող առկա բոլոր գործոնների ուսումնասիրությունը: Այստեղ է, որ նա իբրև հասարակական գործունեության բնագավառ, կարևոր ֆունկցիա է գծում վիճակագրության համար, կապված իրականության արտացոլման բազմակի ձևերի կիրառման հետ, հնարավորություն տալով պարզելու ներքին կապը և հասարակական գիտություններին նյութ տալու ավելի ճշգրիտ եզրակացությունների համար: Զավարյանը դա հատկապես կարևորում է հայ իրականության համար, որը, ինչպես և ամբողջ Արևելքը, ինտենսիվորեն ընդառաջ էր գնում կապիտալիստական վերափոխումներին: Դա ընդհանուր առաջընթաց է, որում յուրաքանչյուր ազգ որոշակի առաքելություն ունի: Որոշակի դեր ունի նաև հայ ժողովուրդը, որը պատմականորեն գտնվելով Արևելքի և Արևմուտքի սահմանագծում, կյանքի այդ մեծ շարժումների մեջ պետք է իրականացնի քաղաքակրթական ֆունկցիա, որպես «աշխատանքի նոր միջոցները տարածողն ու միջնորդը, ավելի ազատ, ավելի արդարացի մտքերու ու պահանջներու քարոզիչը»: Տնտեսական էվոլյուցիան մի ընդհանուր ընթացք է, որը սակայն որպես սուբստանցիա, պետք է ունենա հայկական ազգային ոգին:

1908-ին լույս է տեսնում Զավարյանի «Ապակենտրոնա-

ցում» աշխատությունը, որում քաղաքակրթության առաջընթացը քննության է ենթարկվում հասարակական կառուցվածքների սկզբունքների կատարելագործման դիտակետից, պետության կառուցվածքը որոշիչ է ինչպես ներկա, այնպես էլ հետագա զարգացման ուղղությունների կտրվածքով, պայմանավորելով ինչպես նոր կարգերի ստեղծումը, այնպես էլ հնի կործանումը: Չի կարելի գտնել «պետական կազմի որոշակի մի ձև, որն ընդունելի լինի բոլոր ժամանակների ու բոլոր երկրների համար: Պետական ամեն մի կառուցվածքի վրա իրենց կնիքն են դնում կամ աշխարհագրական պայմանները, կամ հասարակության տնտեսական կազմի ձևը, կամ ազգաբնակչության մտավոր զարգացման աստիճանն ու ազգությունների փոխադարձ հարաբերությունները և այլն: Վկայակոչելով արևմտյան երկրների սոցիալական և տնտեսական հետագիծը, նա նշում է, թե Թուրքիան ցուցաբերում է խիստ բազմազանություն և՛ աշխարհագրական բաժանումներով, և՛ տնտեսական գործունեության բնույթով, և՛ ազգային կազմով ու սոցիալական, կենցաղային, բարոյական ու կրոնական առանձնահատկություններով: Եվ առանց այս իրողության հաշվառման, երկրի նոր վերանորոգությունների ուղեգծումները հազիվ թե որևէ դրական ելք ունենան: Ս.Զավարյանի այս դիտողությունները վերաբերում են երիտթուրքերի քաղաքականությանը, որոնք թեև փորձում էին երկրի լիբերալացման նկրտումները համատեղել իսլամի «հոգևոր և բարոյական արժեքների» հետ, իրականում հանդես էին գալիս երկրի տարածքում ապրող ժողովուրդներին իրենց ենթարկելու բռնապետական մեթոդների կիրառումով:

Զավարյանն Արևմուտքում քաղաքացիական հասարակության նվաճումները կապելով «տեղական ինքնավար մարմինների հաստատության» առկայության հետ, այդ տրամաբանությամբ էլ Թուրքիայի համար առաջադրում է երկրի ժողովրդական նորոգության մի ծրագիր, որն առաջին հերթին ենթադրում է ապակենտրոնացում և

տեղական ինքնավարության որպես «օրենքներու քննության ու հասարակական գործերուն» «հասուն ու կենսունակ» խավերին մասնակից դարձնելու, որպես «անհատի քաղաքացիական առողջ զարգացման, ազատությունն ու ժողովրդավարությունը» ապահովող նախապայմանի: Իսկ երկիրն իր տնտեսական ու քաղաքական կացությամբ ու գործող օրենքներով հեռու է այդպիսին լինելուց:

Ս.Զավարյանը հարցը փորձում է դիտել լայն շրջագծերի մեջ: Նրա կարծիքով XIX դարավերջին և XX դարասկզբին համաշխարհային շուկան հասել էր զարգացման մի այնպիսի աստիճանի, որն իրավունք էր տալիս եզրակացնելու, թե երկրները «մեկը մյուսին անբաժան մասը կը կազմե: Եվ այդպիսով առևտուրի զարգացումը մեկ կողմե կը մղե մարդկությունը միանալ և ոչնչացնել պետություններու սահմանները, մասնագիտական զարգացումը մյուս կողմե կը շեշտե ամեն մեկ ուրույն շրջանի զարգացման կարևորությունն այդ շրջանին մեջ: Երկու ուղղություններու հաշտությունը կապահովի միայն ապակենտրոնացման- դաշնակցական կարգերու հաստատումով...դրություն մը, որ մեկ կողմե կապահովե տեղական ինքնուրույն արտադրությունն ու ստեղծագործությունը, մյուս կողմե կը բանա անսահման ասպարեզ սերտ ու ազատ հաղորդակցման համար»: Թե այդ ընդհանուր պրոցեսում ինչ ընթացք կստանա ազգերի գոյակցության հարցը, դրան կպատասխանի ապագան, իսկ ինչ վերաբերում է հայոց լեզվին, ապա այն պիտի պահպանվի «ամբողջ ուժով», որպես մեր պատմության պատվիրանի

Աշխ. Опыт исследования сельского хозяйства хлебородного района Ереванской губернии и Карсской области, Тифлис, 1899, Кавказ в сельско-хозяйственном отношении в 1899г., Тифлис, 1900, Նախագիծ ազգաբնակչության տնտեսական վիճակի ուսումնասիրության, Թիֆլիս, 1906, Экономические условия Карабаха и голод 1906-1907гг., Спб., 1907, Ապակենտրոնացումը, Կ.Պոլիս, 1908:

ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ ԵՂԻՇԵԻ

(1950)

Ծնվել է Արմավիրի մարզի Սովետական (այժմ՝ Ալաշկերտ) գյուղում: 1967-ին ավարտել է Արմավիրի միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետի աշխարհագրության բաժինը, որն ավարտել է 1971-ին: Հետագա տասնամյակում 1971-72-ին՝ Հոկտեմբերյանի շրջանի Արևիկ գյուղի միջնակարգ դպրոցի ուսմասվար, 1972-73-ին՝ ծառայություն խորհրդային բանակում, 1973-81-ին՝ Արմավիր քաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցի ուսմասվար: 1981-ին Զաքարյանն աշխատանքի է անցնում Երևանի «Քարի և սիլիկատների» գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես «Տեխնիկա-տնտեսագիտական հետազոտությունների լաբորատորիայի» ինժեներ, ավագ գիտաշխատող, իսկ այնուհետև գլխավորում է այդ լաբորատորիան: Այդ տարիներին նա դասախոսել է Երևանի պետական համալսարանում:

1986-ին Զաքարյանը Լենինգրադում (այժմ Սանկտ Պետերբուրգ) պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայկական ՍՍՀ բնական շինանյութերի ռեսուր-

սային ցիկլը» թեմայով՝ ստանալով աշխարհագրական գիտությունների թեկնածուի աստիճան:

Բնօգտագործման ռացիոնալացման ձևավորման ու զարգացման հարցերին նվիրված «Ресурсный цикл сотрой материалов Армении» մենագրությունում նա գիտատեխնիկական առաջընթացն արագացնող նոր ինվեստիցիոն քաղաքականության դիտակետից վերլուծում և գնահատում է Հայաստանի բնական շինանյութերի համալիր օգտագործման աշխարհագրական տեսանկյունները, առաջադրում ցիկլերի և ենթացիկլերի մոդելներ: «ՀՀ արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի հավասարակշռման հիմնախնդիրներն» են քննարկվում համանուն մենագրությունում: Այդ ուսումնասիրության համար նրան 1998-ին շնորհվում է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Պրոֆեսոր է 2007-ից: Նշված աշխատության մեջ տրված են հավասարակշռման նպատակային ֆունկցիան և տեսական գնահատման էությունը: Հավասարակշռումը քննարկվում է ճյուղի զարգացման ստրատեգիայի և արտադրանքի շուկայական իրացման համադրման պայմաններում: Նրանում մշակված են հավասարակշռման մոդելը և ցուցանիշները:

Նա ռեսուրսային ցիկլի կառուցվածքը և ներուժի օգտագործման հնարավորությունները դիտարկում է «բնություն-հասարակություն-բնություն» շղթայում, նյութերի շրջապտույտի ուղղակի և հակադարձ կապերի բացահայտման, բնական շինանյութերի անթափոն օգտագործման և արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Զաքարյանը 1992-2002-ին և 2004-2010-ին եղել է Արմավիրում իր իսկ հիմնադրած «Արարատ» համալսարանի ռեկտորը: 2011-ից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Մարքեթինգի ամբիոնի վարիչն է:

1996-ին նա ընտրվել է Արմավիր քաղաքի ավագանու անդամ, իսկ 2002-2004-ին աշխատել է Արմավիրի քաղաքապետ:

1998-ին նա ընտրվել է Ռուսաստանի Դաշնության միջազգային էկոլոգիական ակադեմիայի իսկական անդամ՝ ակադեմիկոս:

Զաքարյանը տնտեսագետների շրջանում այն սակավաթիվներից է, որի աշխարհում առանձնահատուկ տեղ է գրավում պոեզիան: Գործընկերներից քչերը գիտեն նրա ստեղծագործական այդ շերտի մասին: Բազմիցս տպագրվել է հանրապետական թերթերում, ամսագրերում, ալմանախներում, «Գրական Արմավիր» տարեգրքում: 1996-ին հրատարակվել են նրա «Սրտի կանչով», իսկ 2014-ին՝ «Միրաժից դուրս» բանաստեղծությունների ժողովածուները:

Աշխ. Ресурсный цикл строймaтериалов Армении, Ер., 1991, Արտադրության ռեսուրսատարության հիմնահարցերը, Եր., 1995, ՀՀ արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի հավասարակշռման հիմնախնդիրները, Եր., 1996, Ձեռնարկության կոոպերացիայի կազմակերպման և ներդրումների հիմնախնդիրները, Եր., 2000 (Հ.Աղաբեկյանի, Տ.Մուրադյանի համահեղինակությամբ), Արտադրության կոոպերացիայի և ինտեգրացման անհրաժեշտությունը տնտեսական կապերի կազմակերպման պայմաններում, Եր., 2000, (համահեղինակ), Մարքեթինգի հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Եր., 2013 (համահեղինակ), ՀՀ-ում բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ մասնագետների պահանջարկի գնահատումը և կանխատեսումը, Եր., 2014, Փոխհարաբերությունների մարքեթինգը սպառողական շուկայում, ուսումնական ձեռնարկ, Եր., 2016 (համահեղինակ):

ՋՈՐԱՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԿՐՏՉԻ

(1821-1859)

Ծնվել է Կոստանդնուպոլսում: Նախնական կրթությունը ստացել է տեղում: 1834-ին ուսումը թողնում է անավարտ և սկսում զբաղվել ինքնակրթությամբ: 1838-43-ին աշխատել է մաքսատանը, և ապա հայ հարուստներից մեկի թարգմանչի պաշտոնն է վարել նախ Մանչեստրում՝ 1843-ին, իսկ հետո Փարիզում՝ 1844-48-ին: Այստեղ էլ նա ուսումնասիրում է եվրոպական, հատկապես անգլիական և ֆրանսիական տնտեսագետների աշխատությունները, պատմություն, փիլիսոփայություն: 1848-ին վերադառնում է Կ.Պոլիս: Վարել է դպրոցի տնօրենի պաշտոն, ապա նորից աշխատել մաքսատանը, իսկ 1851-ին հեռանալով այդ պաշտոնից՝ զբաղվել գրական գործունեությամբ: Նա տնտեսագիտական և մանկավարժական բնույթի մի շարք աշխատությունների հեղինակ է, տպագրվել է «Բազմավեպ», «Մասիս», «Հայաստան» պարբերականներում:

Նրա տնտեսագիտական աշխատություններից գլխավորը «Քաղաքական տնտեսության վրա տեղեկություններ»-ն է: Քաղաքատնտեսությունը նա դասում է կարևորագույն գիտությունների շարքում, որի գործնական նշանակությունը կապված է հասարակական հարստության արտադրության, բաշխման և սպառման օրենքների ճանաչողության հետ: Տնտեսական գործունեության նպա-

տակը քիչ աշխատանքով սեփական պահանջմունքների բավարարումն է, որին մեծապես օգնում են աշխատանքի բաժանումը և առևտուրը, որոնք հատկապես մեծ չափերի են հասնում հասարակության քաղաքակրթության շրջանում: Առևտուրը կոչված է իրականացնելու մեծ ֆունկցիա, ինչպես փոխանակության միջոցով անձնական շահի բավարարման, ի վերջո նաև «մարդկային ընդհանուր ազգի» օգտակարության առումներով, նպաստելով ազգերի միջև համերաշխության ու խաղաղության ստեղծմանը: Ազգերի միջև առևտուրը սահմաններ չի ճանաչում. «Վաճառական ազգը բանաստեղծին երևակայելը կնմանի, անոր սահմանը խիստ ընդարձակ է»: Իսկ դրա համար պահանջվում են որոշակի պայմաններ, որոնցից ամենագլխավորներից մեկը խաղաղությունն է. «Մարդիկ հայտնի բան է, որ առանց վաճառականության կատարյալ բարեկեցության ու հանգստության մեջ չեն կրնար ապրիլ, ուրեմն շատ ցանկալի է, որ ազգերը իրարու հետ միշտ սիրով վարվեն, խաղաղությամբ իրարու հետ միանան, բայց, դժբախտաբար, նախանձը՝ չարաշահությունը, մարդու այն աստիճան կըկուրացնե, որ շատ ատեն սոսկալի պատերազմներ կուգան՝ ազգաց մեջ եղած վաճառականությունը՝ արյունահեղ թշնամություններով կը խափանեն, խաղաղությունը՝ վաճառականության հոգին է»:

Աշխատանքը նա համարում է հասարակության հարստության և բարեկեցության աղբյուրը, որը սակայն հիմք չի տալիս ենթադրելու, որ նա եղել է արժեքի աշխատանքային տեսության հետևորդը: Նա նշում է, որ ելակետ ունենալով այս կամ այն իրի վրա շատ աշխատանք ծախսելու փաստը, «...ասկե ոմանք սխալելով կարծեցին, որ բանի մը հարգը՝ իր կատարած աշխատութունեն հառաջ եկած է: Բայց սա սխալ կարծիք է... Ըսենք թե երկու ձկնորս ձուկ որսալու կերթան, ու անձրևին ու ցուրտին տակը՝ կաշխատին ձուկ բռնելու, հուսալով որ բռնածնին շատ ստակի վաճառեն: Բայց թե որ առաջ մեկը՝ բոլոր գիշերը աշխատելեն ետև միայն մեկ պզտիք ձուկ մը բռնե

ու մեկալը հարյուր հատ բռնելու ըլլա, կըրնա մի առաջինը իր մեկ ձուկը՝ մեկալին հարյուր ձկան գինովը ծախել: Թեկուզ երկուքին աշխատությունը մեկ եղած է, բայց անհնար է որ մեկ ձուկը՝ հարյուրին հավասար բռնե»: Այս հարցում նա կարևոր նշանակություն է տալիս օգտակարությանն ու հազվագիտությանը: Գնի ձևավորումը նա կապում է պահանջարկի ու առաջարկի հետ: Նրա կարծիքով աշխատանքները լինեն «մարմնավոր» թե «մտավոր՝ երկաթագործ, ոսկերիչ, բժիշկ թե իրավաբան, ունեն տարբեր դժվարություններ, սակայն դրանք չէ, որ պայմանավորում են աշխատավարձի չափը, այլ «կատարուած գործիքին հարգը», «Ամեն տեսակ գործիքի կամ աշխատանց հարգն ալ, ուրիշ ամեն իրանց հարգին պես իրենց աշխատութենեն կամ քչութենեն կախված է», իսկ մյուս մասով էլ պայմանավորված է մարդու «բնական հանճարով»: Այսինքն, աշխատավարձը նույնպես ենթակա է պահանջարկի ու առաջարկի, հազվագյուտության, սակավության կարգավորիչ ուժերին: Ինչպես այս, այնպես էլ առևտրի, ազատական տնտեսություն վարելու հարցերում Զորայանի հայացքները տեղադրվում են դասական տնտեսագիտության հայեցության մեջ:

Մասնավոր սեփականության քննադատությունը և հարուստների հարստությունը բաժանելու գաղափարը համարելով «անիրավություն», նա մերժում է նման սոցիալական դոկտրինան, քանի որ հարստության այդպիսի մասնատումը, խիստ բացասական հետևանքներ ունենալով ձեռնարկատիրական գործունեության վրա, չէր նպաստի սոցիալական հարցի լուծմանը, Ռիկարդոյի ոգով ասելով, թե «իրավ է, որ հարուստը կաղքատանա, բայց աղքատին ալ վիճակը աղեկ ըլլալուն տեղը՝ առավել գեշ կըլլա»:

Իսկ իրականում միշտ էլ հասարակության մեջ տեղի է ունենում «անուղղակի կերպով» հարստության բաշխում, որով հարուստներն աղքատներին մասնակից են ունենում իրենց եկամուտներին. հիմնում են մեծ գործարաններ, մշակում մեծ հողատարածություններ, ընդլայնում առևտրա-

կան գործը, կատարելագործում արհեստները (որն անհնար է փոքր հարստությունների ժամանակ), դրանով իսկ «ընշեղ մարդուց եկամուտ, փոխ առնողներուն վաստակ, գործավարներուն վարձ ու հասարակությանն ալ առատություն, արժանություն ու վայելքը կբերեն»: Զորայանի դիտողությունների ուղեցույցները շահերի ներդաշնակության տեսությունն է: Համընդհանուր ազատության պայմաններում հասարակությունն իրար կապող սկզբունքը սոցիալական շերտերի միջև ոչ այլ ինչ է, քան փոխանակվող ծառայությունների ամբողջություն: Հասարակության բարոյական կոդեքսը պետք է հիմնված լինի ոչ թե անհանդուրժողականության, այլ համերաշխության վրա. «Երբ որ հոյակապ ու ամուր պարիսպը մը կը տեսնենք, անոր մեջի ամեն քարերը մեծ կամ ամենը մանր չեն, անոնց մեջ խիստ մեծն ալ կա, միջակն ալ, խիստ մանրն ալ, ու ամենուն մեկեն միավորությամբ՝ այն հաստատուն պարիսպը կը շինվի: Ասանկ ալ, մարդկային ընկերությունները միայն հարուստ մարդիկերե կամ միայն աղքատներե չեն շինվի, այլ նախախնամությունը անանկ տնօրիներ է, որ կերպ կերպ պետքերով հարուստն ու աղքատը իրարու հետ կապրին: Անոր համար, ամեն բարեկարգ ընկերության մեջ, հարուստն ալ տեղ ունի, միջակն ալ, աղքատն ալ:

Ուրեմն ցանկանք, որ ամեն տեղ ստացուածք ապահովություն գտնեն...»:

Ձեռնարկատերերի և բանվորների փոխհարաբերությունը «իրավահավասարազոր» կողմերի առք ու վաճառքի ակտ է, ուստի օրենքի ուժով աշխատավարձի մաքսիմում կամ մինիմում սահմանել չի կարելի և պետք է թողնվի «բնականոն» ընթացքին՝ պահանջարկի և առաջարկի կարգավորմանը: Զորայանն անդրադարձել է նաև այլ կատեգորիաների՝ կապիտալի, փողի, ռենտայի, հարկերի, պետության տնտեսական ֆունկցիաների, դրամաշրջանառության, առևտրական ընկերությունների, և այլ ներտնտեսական հարցերի քննությանը, որոնց վերաբերյալ նրա հայացք-

ները տեղադրվում են XIX դարի առաջին կեսի արևմտյան տնտեսագիտական դպրոցների առաջադրույթներում:

1840-ականների հրապարակումներից տնտեսագիտական հարցերի վերաբերյալ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Վիեննայի Մխիթարյաններից Տ.Թնկրյանի «Բազմավեպում» տպագրված հոդվածաշարը և Ղուկաս Տերտերյանցի «Գիտություն վաճառականության» ուսումնասիրությունները: Սակայն Ն.Զորայանը այն տնտեսագետն էր, որն, ըստ էության, քննության առարկա է դարձրել քաղաքատնտեսության հիմնական կատեգորիաները և, որպես ազատամտական ուղղության ներկայացուցիչ, դրվատել արևմտյան տնտեսաձևի սկզբունքները: Տնտեսագիտությունը նրա լուսավորչական ծրագրի բաղկացուցիչներից էր:

Ն.Զորայանը ստեղծել է նաև թարգմանչական բնույթի գրականություն:

Աշխ. Քաղաքական տնտեսութեան վրայ տեղեկություններ, ԿՊ, 1849, Նկարագիր ազգային դաստիարակութեան, ԿՊ, 1849, Ընթերցասիրություն կամ գիրք կարդալու միջոցով մտավորական մշակութեան հասնելու օգտակար խրատներ, ԿՊ, 1852:

ՋՈՐՅԱՆ ՀԱԿՈԲ ՆՇԱՆԻ

(1894-1942)

Ծնվել է Տրապիզոնի կուսակալության Օրդու քաղաքում: 1900-08-ին սովորել է տեղի, 1908-12-ին՝ Կ.Պոլսի Պերպերյան վարժարանում, 1919-20-ին՝ Լոզանի (Շվեյցարիա) համալսարանի փիլիսոփայության, 1920-25-ին՝ Բեռլինի համալսարանի քաղաքատնտեսության ֆակուլտետներում, մասնագիտացել սոցիոլոգիայի, քաղաքատնտեսության, փիլիսոփայության ու պատմագիտության մեջ: Այդ տարիներին արդեն «Արեգ» ամսագրի (Վիեննա) էջերում տպագրվում են նրա առաջին գիտական հետազոտությունները՝ նվիրված ավատատիրական Հայաստանի հասարակական-տնտեսական հարաբերություններին:

Հ.Զորյանը Ս.Թեհլերյանի հետ գործակցել է Թալեաթ փաշայի սպանության համար: Ուսման տարիներին մասնակցել է Գերմանիայի ուսանողական սոցիալիստական շարժմանը, ՀՕԿ-ի և նշանավոր հայասեր Յոհաննես Լեփսիուսի «Գերմանահայկական ընկերության» աշխատանքներին: 1925-ին Բեռլինի համալսարանում հայտնի գիտնականներ Վ.Զոմբարտի և Յ.Մարքվարտի ղեկավարությամբ պաշտպանել է ատենախոսություն «Սոցիալական շերտավորումը միջնադարյան Հայաստանում» թեմայով և

ստացել փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1925-ից դասախոսել է ԵՊՀ-ում: 1931-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1930-31-ին եղել է Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտի տնօրեն (ռեկտոր), 1931-37-ին ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան: 1927-29-ին նա համատեղությամբ վարել է Հանրային գրադարանի, 1932-35-ին՝ Կուլտուրայի պատմության ինստիտուտի և 1936-37-ին՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրենի պաշտոնները:

Հ.Զորյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են հին և միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական պատմությանը: Այս իմաստով հատկապես ուշագրավ են նրա «Արաբների հարկային քաղաքականությունը ավատական Հայաստանում», և «Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը» ուսումնասիրությունները: Հիմնվելով համապատասխան մատենագիտական փաստերի վրա, նա ցույց է տալիս Հայաստանում արաբների վարած տնտեսական ու հարկային քաղաքականության բացասական հետևանքները: Քաղաքի և գյուղի միջև հակադրությունը նա կապում է աշխատանքի բաժանման հետ՝ պայմանավորված ապրանքափոխանակության զարգացմամբ:

«Արաբական նվաճումի անդրադարձումը ֆեոդալական հողատիրության փոխհարաբերությունների վրա.

Քաղաքների բարգավաճումը. արհեստավորական արտադրությունը ֆեոդ. Հայաստանի ապրանքափոխանակության շրջանում. «Առևտրական և վաշխառուական կապիտալ» հարցերը, որոնք քննարկվում են աշխատություններից մեկում, ըստ էության ուրվագծում են նրա ուսումնասիրությունների թեմատիկան:

Հ.Ջորյանի՝ հայ ժողովրդի քննական պատմության բազմահատորյակի ստեղծման ծրագիրը, որի ուղղությամբ զգալի աշխատանք էր կատարել, չիրականացավ: 1937-ին նա անհիմն մեղադրանքներով ձերբակալվեց: Մահացել է բանտում: Արդարացվել է հետմահու:

Աշխ. Արաբների հարկային քաղաքականությունը ավատական Հայաստանում, Երևանի պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր» №2-3, 1927, Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը, ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», №2-3, 1927-1928, Ֆեոդալական Հայաստանի գյուղացիական շարժումները X դարում, «Տեղեկագիր» Երևանի պետական համալսարանի, №4, 1928:

ՋՈՒՐԱԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՇԱՐԲԱԹԻ

(1902-1982)

Ծնվել է Նոյեմբերյանի շրջանի Ղալաչա (այժմ՝ Բերդավան) գյուղում: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Բարձրագույն կրթություն ստացել է Անդրկովկասյան կոմունիստական համալսարանում, որն ավարտել է 1926-ին: Վարել է կուսակցական և մանկավարժական տարբեր աշխատանքներ: Խմբագրել է «Կարմիր ռանչպար» թերթը: 1938-40-ին եղել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, որի ավարտից հետո, նորից անցել է գիտամանկավարժական աշխատանքի: Աշխատել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում՝ որպես քաղաքատնտեսության բաժնի վարիչ, իսկ 1969-ից՝ ԵՊՀ-ում որպես քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր:

1951-ին Մոսկվայում «Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր» հետազոտության համար ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտը նրան շնորհում է դոկտորի աստիճան, նույն թվականին ստանում է պրոֆեսորի կոչում: Աշխատությունն ընդգրկում է XVIII դարի վերջերից մինչև XIX դարի 90-ական թվականներն ընկած ժամանակաշրջանը:

Ելակետ ունենալով երկրի տնտեսական զարգացման աստիճանը՝ նա նշված ժամանակաշրջանի հայ տնտեսա-

գիտական միտքը ենթարկում է որոշակի պարբերացման՝ առանձնացնելով երեք էտապներ. ֆեոդալական կարգերի քայքայման և կապիտալիստական կարգերի ծագման շրջանում (XVIII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի առաջին կեսը), Ռուսաստանում ճորտատիրական կարգերի ճգնաժամի, այդ կարգերի անկման և կապիտալիզմին անցնելու շրջանում (1850-1870-ական թվականներ) և երկրամասի կապիտալիստական փոխակերպության շրջանում (1870-1890-ական թվականներ):

Տնտեսական զարգացման այդ հենքի վրա էլ նա անդրադառնում է հայ տնտեսագիտական մտքի առանձնահատկություններին՝ վերլուծելով մի շարք մտածողների (Շահամիրյանների խմբի, Ն.Զորայանի, Մ.Նալբանդյանի և ուրիշների) հայացքները: XIX դարի երկրորդ կեսի համար առանձնացնելով երեք ուղղություններ՝ «ռևոլյուցիոն դեմոկրատական, լիբերալ բուրժուական, կղերաֆեոդալական», նա հատկապես նշանակալից տեղ է հատկացնում ազատամտական ուղղությանը, ինչպես նաև անդրադառնում նարոդնիկության ու մարքսիզմի տարածման որոշ հարցերի:

Նրա կարծիքով տնտեսագիտական մտքի պատմության հարցերի շարադրանքը, ըստ ուղղությունների չի արտացոլում իրական պատկերը: Որպես թե այն պետք է կատարվի «պատմական այն հաջորդականությամբ, որով նրանք տեղի են ունեցել»: Հայ հասարակական տնտեսագիտական մտքի առանձնահատկություններից է այն, որ մինչև խորհրդային կարգերի հաստատումը, նրա զարգացումն ընթացել է բուն Հայաստանի սահմաններից դուրս: Հետևապես նրա ուսումնասիրության ժամանակ հարկ է ելակետ ունենալ ոչ թե տարածքային սահմանների սկզբունքը, այլ այն դիտարկել իր ամբողջության՝ փոխազդեցությունների ու կապերի մեջ:

1960-ական թվականներից Ս.Զուրաբյանին ավելի շատ սկսեցին հետաքրքրել տնտեսական պատմության հարցերը: Նրա «Սովետական Հայաստանի ժողովրդական

տնտեսության զարգացումը 50 տարում» մենագրությունն ուրվագծում է այն տեղաշարժերը, որոնք կատարվել են արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի ու կապի, բնակչության կենսամակարդակի բնագավառներում, անդրադառնում զարգացման հեռանկարներին:

«ՍՍՀՄ արտաքին տնտեսական կապերը և երկու սիստեմների տնտեսական մրցությունը» նրա 1970-ական թվականների թեմատիկան էր: Ինքնաբավ տնտեսությունը արդյունավետության առումով ենթադրում է մեծ ծախքեր, հետևապես նաև ցածր արդյունավետություն: Բնակլիմայական պայմանների կամ բնական հարստությունների տարբերությունների հիման վրա եղած տնտեսական կապերը իրենց տեղը զիջում են տնտեսական գործոններին: Հետևապես ԽՍՀՄ արտաքին տնտեսական կապերի ընդլայնումը և հետագա խորացումը նա դիտում էր ժամանակի պահանջ:

1965-ին նրան շնորհվում է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Որպես հարգանքի տուրք՝ 1997-ից նրա հայրենիքում՝ Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքում գործում է «Սարգիս Զուրաբյան վարժարան» նախակրթարանը:

Աշխ. Մ.Նալբանդյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքները, 1940, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, 1959, Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացումը 50 տարում, 1971, Քաղաքատնտեսության ձեռնարկ (համահեղինակ), ՍՍՀՄ արտաքին տնտեսական կապերը և երկու սիստեմների տնտեսական մրցությունը, 1976:

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՋՈՅԱ ԱՂՎԱՆԻ

(1951)

Ծնվել է ՀՀ Սևան քաղաքում: 1968-ին ոսկե մեդալով ավարտել է Երևանի թիվ 54 միջնակարգ դպրոցը, իսկ 1974-ին՝ գերազանցության դիպլոմով Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: Նույն թվականին ընդունվել է ՀՀ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրան: 1978-ից աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ սկզբում ռեկտորի օգնականի պաշտոնում, այնուհետև որպես քաղաքատնտեսության ամբիոնի ասիստենտ: 1989-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի աստիճան, իսկ 1992-ին՝ դոցենտի կոչում: 1996-ին տեղափոխվել է նույն բուհի Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն: 2007-ին «Կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիայի փոխազդեցության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» ատենախոսության համար ստացել է դոկտորի գիտական աստիճան: Նրա հետազոտական ոլորտներից են նաև միջազգային տնտեսական ինտեգրացիայի հարցերը: Նա հետարդյունաբերական-տեղեկատվական հասարակության առաջնային նշանակության հիմնախնդիրներից մեկը համարում է կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիայի փոխազդեցությունը: Գիտատեխնիկական առաջընթացի

աճող տեմպերի պայմաններում բարձր տեխնոլոգիական ապրանքների կենսացիկլը դրսևորում է արագընթաց կրճատման միտում, որի արդյունքում գիտատար ճյուղերում ներդրումներ կատարելու մրցակցային պայքարն ավելի է սրվում, ինչը նպաստավոր պայմաններ է ձևավորում «ուղեղների արտահոսքի» համար դեպի այն երկրներ, որոնք բարձրորակ աշխատուժին առաջարկում են համարժեք վարձատրություն: Այդ երկրների վրա ազդեցությունը ոչ միայն դրական է, այլ նաև երկարաժամկետ, որը «վերածվում է» առարկայացած, նյութական կապիտալի՝ նրան բերելով լրացուցիչ մրցակցային առավելություն: Էմիգրացիայի ազդեցությունը դոնոր երկրների վրա առաջին հերթին արտահայտվում է գործողության և սոցիալական լարվածության թուլացումով, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճով, մասնավոր տրանսֆերտների աճով՝ ինչը կանխում է բնակչության կենսամակարդակի հետագա անկումը, սակայն իր ամբողջության մեջ բացասաբար է անդրադառնում բնակչության ժողովրդագրական կազմի, իսկ բարձրորակ մասնագետների արտահոսքն առաջին հերթին երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա:

Ընդհանրապես միգրացիան գնահատվում է որպես դրական երևույթ, որն ապրանքների և ֆինանսական ռեսուրսների հետ միասին որպես տեղաշարժ երկրների միջև նպաստում է համաշխարհային մասշտաբով տնտեսական աճին: Թադևոսյանը գտնում է, թե արտերկրյա աշխատուժ ընդունող երկրի համար միգրացիան ընդունելի է մինչև մի որոշ սահման, վերջինս «ապրանքների արտահանումից ստացվող արտարժույթի մուտքն է: Քանի դեռ արտարժույթի ներհոսքի ծավալները մեծ են, կարելի է շարունակել օտարերկրյա աշխատուժի ներգրավումը, դրանց ծավալների անկումն ահազանգում է տնտեսական աճի և զբաղվածության միջև համամասնության խախտման մասին»:

Տնտեսագետները երևույթներն առաջին հերթին քննում են ռացիոնալության և նպատակամղվածության տեսանկյունից: Մարդիկ և հաստատություններն իրենց ամենօրյա

տնտեսական պահվածքում իրականացնում են ընտրություն՝ համադրելով հնարավոր օգուտները կատարվող ծախքերի հետ, տվյալ դեպքում միգրանտների և ընդունող երկրների շահերը պետք է համընկնեն: Այս իմաստով, Զ.Թադևոսյանը միջազգային միգրացիայի վերաբերյալ տեսական հետազոտությունների թերությունը տեսնում է այն բանում, որ դրանցում հաճախ ավելի շատ խոսք է գնում ոչ այնքան դրա տնտեսական հետևանքների, որքան բացասական կողմերի մասին՝ նշելով ազգամիջյան ընդհարումների, ժողովրդագրական հետևանքների ու սոցիալական լարվածության երևույթների փաստերը:

«Միջազգային տնտեսական ինտեգրացիա» (համահեղինակ) գրքում Թադևոսյանն անդրադառնում է միջազգային տնտեսական ինտեգրման հարցերին: Արևմտաեվրոպական և այլ տարածաշրջաններում տնտեսական ինտեգրման գործընթացները որակվում են որպես երկրների համեմատական առավելություններից բխող համագործակցության ձև, որն էական դեր է խաղում տնտեսական ոչ բավարար ներուժ ունեցող երկրների վերելքի համար: Անդրադարձ է կատարվել ԵՄ, ԱՊՀ ու Սևծովյան տնտեսական համագործակցության երկրների հետ ՀՀ տնտեսական ինտեգրման հիմնախնդիրներին:

Զ.Թադևոսյանը մի քանի ուսումնական ձեռնարկների հեղինակ է:

Աշխ. Կապիտալի և աշխատուժի միգրացիան. իրավիճակը և հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2005, Միջազգային տնտեսական ինտեգրացիա, Եր., 2006 (Դ.Ռ.Գալոյանի համահեղինակությամբ), Միջազգային տնտեսագիտություն. տեսություն և քաղաքականություն (ուսումնական ձեռնարկ), Եր., 2015 (Դ.Գալոյանի համահեղինակությամբ): Զ. Թադևոսյանի գիտական ղեկավարությամբ հրատարակվել են Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., 2014, ՀՀ տարածքային համաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, Եր., 2015, ՀՀ արտահանման բազմազանեցման և աճի հնարավորությունները, Եր., 2016, մենագրությունները:

ԹԱՎԱԴՅԱՆ ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ

(1953)

Ծնվել է Երևանում: Սովորել է Ձերժինսկու անվան թիվ 20 դպրոցում: 1975-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1975-79-ին եղել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտ (Մոսկվա), որտեղ 1979-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1991-92թթ. եղել է նույն ինստիտուտի դոկտորանտ և 1992-ին պաշտպանել դոկտորական թեզ «Տնտեսագիտական ցուցանիշների մոդելավորման և համակարգման մեթոդները» թեմայով՝ նվիրված գնային, բնաիրային, դրամավարկային ցուցանիշների փոխազդեցության մեխանիզմների որոշման սկզբունքներին: Աշխատանքային գործունեության հետագծի հիմնական տարեթվերն են՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ասիստենտ, 1983-93-ին նույն ինստիտուտի դոցենտ, 1994-96-ին Հայներարտբանկի գլխավոր փորձագետ, Կենտրոնական բանկի ատեստացիոն հանձնաժողովի անդամ, 1993-96-ին ԵրԺՏԻ պրոֆեսոր, 1994-96-ին «Տնտեսագիտություն» մասնագիտության հանրապետական փորձագիտական խորհրդի նախագահ, 1996-02-ին ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի նախագահ, 2003-

07-ին տնտեսագիտական հետազոտությունների կենտրոնի նախագահ, 2007-08-ին ՀՊՏՀ պրոֆեսոր, 2009-ից նույն համալսարանի մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամբիոնի վարիչ: Ազգային բանկի դրամավարկային քաղաքականության փորձի ուսումնասիրության նպատակով 1981-ին եղել է Հունգարիայում, իսկ 1998-02-ին՝ որպես ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի պատվիրակության ղեկավար, մասնակցել է մի շարք միջազգային բարձրագույն ֆինանսական վերահսկիչ մարմինների կոնգրեսներին:

Թավադյանի ուսումնասիրություններում արծարծվում են տնտեսական հետազոտությունների մեթոդի և տեսաճանաչողական ֆունկցիայի, տնտեսական օրենքների պատճառահետևանքային կապերի, գների, տնտեսության օպտիմալության, տնտեսական կատեգորիաների համակարգման, ֆինանսական քաղաքականության և այլ հիմնահարցեր:

«Системология экономических категорий» աշխատության մեջ ձևակերպվել են գնային, բնաիրային և դրամավարկային ցուցանիշների ֆունկցիոնալ կապերը: Ըստ էության նրանում առաջին անգամ սահմանվում են անորոշության միջակայքի և անորոշության փոխհարաբերություն հասկացությունները: Հանգամանալից քննության են ենթարկվում տնտեսական կատեգորիաների ճանաչողական, արտադրության ծավալի ու գնի հիմնական ինդիկատորների համակարգում սահմանային ծախսերի և գնահատումների, փողի և հավասարակշռված տնտեսության հիմնահարցերը, ինչպես նաև տնտեսական կատեգորիաների համակարգի տրամաբանական ֆունկցիոնալ կառուցվածքը:

Թավադյանի այլ հրապարակումներում ցույց է տրվում, որ կոնվերգենցիայի սկզբունքը հստակ գործում է նաև տնտեսության մեջ. եթե մի դեպքում ընտրվում է ազատության և տնտեսական արդյունավետության նպատակ, որոշակի սոցիալական պահանջների պարագայում, իսկ

այլ դեպքում ձևավորվում է սոցիալական նպատակի մաքսիմումը, որոշակի արդյունավետության պահանջների դեպքում, ապա արդյունքում լավագույն, օպտիմալ լուծումները երկու խնդիրների համար համընկնում են: «Ներդրումների և գնաճի ֆունկցիոնալ կապի գնահատականը» (Ա.Թևիկյանի հետ համահեղինակությամբ) աշխատանքում, գնահատվում են ինֆլյացիայի նեոդասական կոնցեպցիան և դրա վրա հիմնված պոստուլատները: Ցանկացած տնտեսության որոշակի իրավիճակում բնորոշ է միանգամայն որոշակի ինֆլյացիայի մակարդակ: Այդպիսի հարցադրումը ուղղված է գտնելու տնտեսության այնպիսի կառուցվածք, որը թույլ է տալիս երկարաժամկետ կտրվածքով հասնելու մրցունակության բարձր մակարդակի: Ձևակերպվել են տնտեսության անհավասարակշռված վիճակը նկարագրող պոստուլատները, գնաճի առավելագույն հնարավոր մակարդակը և նրա ազդեցությունը տնտեսության վրա:

Ա.Թավադյանը «Интервалы неопределенности экономики» աշխատությունը նորից անդրադարձ է անորոշության խնդրին, այսինքն՝ նրանում ելակետ է դարձրել տնտեսական երևույթների մաթեմատիկական վերլուծությունների ժամանակ, ոչ այնքան բացարձակ ճշմարտությունների հասնելու հարցը, այլ արդյունքների միջակայքային անորոշությունների չափումների խնդիրը: Հեղինակը, ըստ էության մերժում է մաթեմատիկայի կիրառության հնարավորությունների ֆետիշացման հայեցողությունը, որպես թե տնտեսական կյանքն իր կոնկրետ վերլուծական իրացումներում չի ենթարկվում ճշգրիտ չափման: Ավելին, այս դեպքում քանակական կոնկրետացումը կարող է բերել մի շարք հատկանիշների կորստին, ինչը նորից հաստատում է գործընթացի քանակական բնութագրության նվազագույն միջակայքային մեթոդի իրատեսական լինելը: Գրքի առաջին գլխի նախադրյալները հատկանշվում են գնային և բնաիրային ինդիկատորների անորոշությունների հարաբերակցության, էկոնոմիկայի առանցքային ինդիկատոր-

ների անորոշության միջակայքերի, սահմանային ծախսերի և գնահատումների նվազագույն միջակայքի սկզբունքի վերաբերյալ հետագա վերլուծություններով: Աշխատության վերջին բաժնում հեղինակն ավելի է խորացնում իր տեսակետները՝ սահմանային ծախսերի և գնահատումների չափանիշային հատկությունների, դրամական համակարգի և առանցքային ինդիկատորների փոխադարձ կապի, վերջիններիս վերլուծության դինամիկ տեսանկյունների և այլ հարցերի հետ:

Գրքում առաջադրված սկզբունքները Թավադյանն իր հետագա հրապարակումներում փորձում է ներհյուսել ազգային, տարածաշրջանային և գլոբալ տեսությունների իրական գործընթացների շարժումներին:

«Տնտեսագետ» հրատարակչությունը «Ամբերդ» մատենաշարով (№26 Ա.Թավադյանի հետազոտական խումբը) հրատարակել է «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գերակայությունների գնահատումը և կանխատեսումը» աշխատությունը, որում սցենարային մեթոդների վրա հիմնված էկոնոմետրիկ և դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGL) մոդելների կիրառումը հնարավորություն է ընձեռում ստանալ հիմնավորված սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների գնահատականները՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսությանը բնորոշ ռիսկերը և անորոշությունը: Կատարվել են մակրոտնտեսական իրավիճակի վերլուծություններ, խնդիր ունենալով բացահայտել, թե ինչպես են այդ իրավիճակների փոփոխություններն անդրադարձել բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա:

Աշխ. «Системология экономических категорий» (համահեղինակությամբ Վ.Ս.Դադայանի), М., 1992, Проблемы метода и теоретико-познавательные функции экономических исследований, М., ИЭМИ АН СССР, 1978, Интервалы неопределенности экономики, М., 2012, Пороги чувствительности постсоветской экономики, Мир перемен, №2, 2013, Армения и таможенный союз, оценка

экономического эффекта интеграции, Санкт-Петербург, 2013 (թարգմանված է նաև անգլերեն), ՀՀ տնտեսության մրցունակության ու նորարության հիմնախնդիրները և դրանց ազդեցության գնահատումը տնտեսական աճի վրա, Ե., 2014 (համահեղինակ), Принсип минимального интервала полосы неопределенности экономики, Мир перемен, 2014, №1, Sensitivity Thresholds of Countries with Transtional Economics The Case of Armenia, Intellectual Archive, number 5, Canada, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գերակայությունների գնահատումը և կանխատեսումը, «Ամբերդ» մատենաշար, 26, «Տնտեսագետ», հրատ., Եր., 2015, Перспективы интеграционных процессов на Евразийском пространстве, Мир перемен, №4, 2016, Տնտեսամաթեմատիկական մեթոդներ և մոդելներ, «Տնտեսագետ», 2017 (ուսումնական ձեռնարկ) (համահեղինակ և ընդհանուր խմբագիր):



ԹՈՎՄԱՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ ՌԱՖԱՅԵԼԻ

(1910-1989)

Ծնվել է Խեք գյուղում (Արևմտյան Հայաստանի Հայոց ձոր գավառ): Մայրը երկու երեխաների հետ փրկվել է 1915-ի եղեռնից, ապաստանել Երևանում: 1929-ին ավարտել է Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1937-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Կատարել է դասախոսական և այլ աշխատանքներ: 1949-ին դասախոսել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնում: 1951-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1954-ին՝ դոցենտ: 1963-ին ընտրվել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան: 1966-ին նշանակվել է ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ, 1968-ից մինչև կյանքի վերջը՝ նույն ինստիտուտի տնտեսական պատմության և տնտեսագիտական մտքի պատմության բաժնի վարիչ: 1969-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, 1971-ին պրոֆեսորի կոչում:

Թովմասյանի աշխատությունները վերաբերում են հայ տնտեսագիտական մտքի պատմության, մարքսիստական քաղաքատնտեսության հարցերին և հակամարքսիստական

քաղաքատնտեսության քննադատությանը: Նրա առաջին աշխատությունը՝ «Սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը Բուլղարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայում», ուրվագծում է Բուլղարիայի տնտեսության պատմությունը մինչև ժողովրդական դեմոկրատական կարգերի հաստատումը և նրանից հետո սոցիալիստական շինարարության նվաճումները:

Թովմասյանի ներդրումը հատկապես կապված է հայ տնտեսագիտական մտքի պատմության հետազոտության հետ: Միջին դարերի մտածողների, այդ թվում նաև հայ մատենագիրների մոտ սոցիալական գիտություններն առանձնացված չէին, և պատմությունը, գրականությունը, իրավագիտությունը հաճախ շարադրվում էին միևնույն հեղինակի կողմից: Դա վերաբերում է նաև սոցիալ-տնտեսագիտական գաղափարներին, որով հարուստ է ինչպես հայ մատենագիտությունը, այնպես էլ ժողովրդական ստեղծագործությունը (էպոսը, հեքիաթներն ու առակները): Այս իմաստով ուսումնասիրության օբյեկտ են դարձել հայ մտավոր մշակույթի բոլոր աղբյուրները: Դրանցում բացակայում էր տնտեսական կատեգորիաների (ապրանքի, արժեքի, փողի, կապիտալի, շահույթի և այլն) վերլուծությունը, հետևապես բացակայում էր նաև ձևավորված ուսմունք դրանց մասին: Ա.Ն.Թովմասյանի «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը վաղ միջնադարում», «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը IX-XIV դարերում» և «Սոցիալ-տնտեսագիտական միտքը Հայաստանում XV-XVIII դարերում» աշխատություններում սոցիալ-տնտեսագիտական գաղափարները համակարգվում են իրենց զարգացման ընթացքի մեջ՝ վաղ միջնադար - զարգացած ֆեոդալիզմ – ուշ միջնադար հետագծով: Նշված աշխատություններում օգտագործվել են հայ մատենագիր-

ների այն դրույթները, որոնք «վերաբերում են սոցիալ-տնտեսական երևույթների վերլուծությանը, երկրի նյութական ու աշխատանքային ռեսուրսների օգտագործմանը կամ բնութագրվում են նյութական արտադրության ճյուղերի վիճակն ու զարգացման աստիճանը»: Հայ մատենագիրների ասույթների գնահատման չափանիշ է ընդունվել ոչ թե տնտեսական գիտության «այսօրվա բարձունքը», այլ պատմական հայացքը: Այս իմաստով ուշագրավ դիտողությունների կարելի է հանդիպել Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում և այլ մտածողների մոտ արհեստագործության, առևտրի ու դրամաշրջանառության, վարձատրության, գյուղատնտեսության, սեփականության և այլ հարցերի վերաբերյալ:

Հայ մատենագիրների տնտեսագիտական հայացքների գնահատման առումով հատկապես արժեքավորվում է Գրիգոր Տաթևացու ներդրումը տնտեսական երևույթների մեկնությունների առումով: Խոսքը վերաբերում է տնտեսական այլ և այլ կատեգորիաների վերաբերյալ դիտողություններից զատ, հասարակական զարգացման, օրինաչափությունների ճանաչողության, ի տարբերություն Պլատոնի բնածին գաղափարների տեսության մարդկանց բնական հավասարության, մարդկային աշխատանքի ստեղծագործական բնույթի ու սոցիալական բովանդակության առանձնահատկությունների, մարդկանց սահմանափակ ունակությունների և բազմազան պահանջների միջև հակասությունից ծագող աշխատանքի բաժանման անհրաժեշտության վերաբերյալ վերլուծություններին:

Ժողովրդական ստեղծագործություններում (դյուցազնավեպեր, հեքիաթներ, առակներ) սոցիալական երևույթների արժեքավորման Ն.Թովմասյանի մեկնությունները,

կարծես, լրացնում են միջին դարերի հայ մատենագիրների հայացքները:

Արևմտահայ տնտեսագիտական մտքի պատմության վերաբերյալ տնտեսագետ պատմաբանների կողմից կատարվել էին սահմանափակ արծարծումներ: «Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր» (Եր., 1988) աշխատությունը նպատակ էր հետամտում լրացնել հարցի ծավալուն պատմության բացը: Հայտնի է, որ արևմտահայ տնտեսագիտական միտքը հատկանշվում էր քաղաքատնտեսության և գործնական վաճառականության բնույթի ձեռնարկներով: Աշխատությունում հաջորդականության մեջ ներկայացվում են Նիկողայոս Զորայանի, Ռեթեոս Պերպերյանի, Կարապետ Ուրբյուճյանի, Մ.Քեշիշյանի, Միհրան Հովհաննիսյանի, Հրանտ Թորոսյանի, Ղուկաս Տերտերյանի և այլ հեղինակների ձեռնարկների արծարծումների շրջանակներն ու հարցադրումների հատումները արևմտյան տնտեսագիտական մտքի հետ, որոնք որոշ հետաքրքրություն են ներկայացնում նրանց հայացքների և «առհասարակ տնտեսագիտական գրականության բնութագրության համար»: Անդրադարձ է կատարվում Մխիթարյան միաբանների ու Հարություն Սվաճյանի, Մատթեոս Մամուրյանի, Գրիգոր Չիլինկիրյանի սոցիալ-տնտեսագիտական գաղափարներին:

Ն.Թովմասյանի հետազոտական տիրույթը վերաբերում է նաև խորհրդային տնտեսագիտական մտքի պատմությանը (Թ.Ավդալբեգյան, Հ.Ազատյան, Ն.Ստեփանյան և ուրիշներ):

Թովմասյանը ստեղծել է գրականություն նաև տնտեսագիտական ուսմունքների ընդհանուր պատմության վերաբերյալ: Նրա «Տնտեսագիտական ուսմունքների պատմությունը» հայոց լեզվով առաջին ձեռնարկն էր, որում

մարքսիստական տեսության դիրքերից ներկայացված է տնտեսագիտական միտքը՝ սկսած հին արևելքից մինչև մինչմարքսյան կապիտալիզմի տնտեսագիտական մտքի գլխավոր ուղղությունները:

Աշխ. Աշխատավարձի ժամանակակից բուրժուական տեսությունների ռեակցիոն էությունը, Եր., 1955, Սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը Բուլղարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայում, Եր., 1957, Հավելյալ արժեքի թեորիան Մարքսի տնտեսական ուսմունքի անկյունաքարն է, Եր., 1959, Մանրբուրժուական տնտեսագիտության քննադատության ուրվագծեր, Եր., 1961, Արդի հակամարքսիստական քաղաքատնտեսության քննադատության ուրվագծեր, Եր., 1963, Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Եր., 1965, Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները, Եր., 1966, Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը IX-XIV դարերում, Եր., 1970, Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը վաղ միջնադարում, Եր., 1973, Ժամանակակից բուրժուական և ռեֆորմիստական քաղաքատնտեսության հիմնական ուղղությունների քննադատությունը, Եր., 1974, Հայ սովետական տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, Եր., 1976 (Մ.Ա.Գրիգորյանի համահեղինակությամբ), «Սոցիալ-տնտեսագիտական միտքը Հայաստանում XV-XVIII դարերում, Եր., 1982, Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, Եր., 1988 (Հ.Հ.Թամրազյանի, Դ.Թ.Պապիկյանի համահեղինակությամբ):

ԹՈՐՈՅԱՆ ՎԱՍԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

(1949)

Ծնվել է Թալինի շրջանի Շղարշիկ գյուղում: 1966-ին ավարտել է Կարմրաշեն գյուղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը, որն ավարտել է 1971-ին: 1975-ին ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ կենտրոնական տնտեսա-մաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրան, ապա այն շարունակել նույն ակադեմիայի համամիութենական համակարգային վերլուծությունների գիտահետազոտական վերլուծությունների գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում: 1979-ին պաշտպանել է թեկնածուական թեզ «Ինվեստիցիոն նպատակային ծրագրերի տնտեսամաթեմատիկական մոդելավորում» թեմայով: 1997-ին պաշտպանել է դոկտորական թեզ «Անցումային շրջանի տնտեսության կարգավորման ծրագրանպատակային հայեցակետը» թեմայով և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Պրոֆեսորի կոչում ստացել է 1998-ին: 1984-ից աշխատել է Երևանի պետական համալսարանի էկոնոմիկայի մաթեմատիկական մոդելավորում ամբիոնում, 1991-2002-ին՝ որպես նույն ամբիոնի վարիչ: 2002-ին անցել է աշխատանքի ՀՀ արժեթղթերի հանձնա-

ժողովում՝ հանձնաժողովի անդամի պաշտոնում, իսկ 2006-ին ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում՝ նորից հանձնաժողովի անդամի պաշտոնում, միաժամանակ համատեղությամբ Երևանի պետական համալսարանում որպես էկոնոմիկայի տնտեսամաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, 2011-ից՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի պրոֆեսոր:

Գիտական հետաքրքրությունները վերաբերում են ներդրումային ծրագրերի տնտեսամաթեմատիկական մոդելավորման, անցումային շրջանի տնտեսական կարգավորման հարցերին:

Նրա «Անցումային շրջանի տնտեսության կարգավորման ծրագրանպատակային հայեցակետը» մենագրությունում Կոլկոդոյի գործակցի դինամիկայի վերլուծության հիման վրա վեր են հանվել անցումային մի քանի երկրների «կայունացման գործընթացը խոչընդոտող և աջակցող գործոնները»: Նրանում անցումային շրջանին բնորոշ հիմնախնդիրները տրոհվում են երեք խմբի՝ կարճաժամկետ (գների, աշխատավարձի, արտաքին առևտրի ազատականացում և գների կայունացում), միջին ժամկետի (մասնավորեցում, կառուցվածքային փոփոխություններ հարկաբյուջետային և դրամավարկային ոլորտներում, շուկայական տնտեսության ինստիտուտների ստեղծում) և հեռանկարային (շուկայական հարաբերությունների կուլտուրայի ստեղծում): Նշված խնդիրների լուծումը ներկայացվում է համալիրների տեսքով, դրանցում կենտրոնացնելով ամբողջ ներուժը: Այդպիսի հնարավորություն ընձեռում է ծրագրանպատակային հայեցակարգի կիրառումը նպատակային ծրագրերի (ՆԾ) համակարգի տեսքով: ՆԾ-ների համար առանձնացվում են չորս անհրաժեշտ հատկանիշներ՝ ենթադրվող արդյունքի օպերացիոնալ որոշա-

կիությունը, անհրաժեշտ արդի հասանելիությունը, նպատակի իմերջենտ բնույթը և ոչ թե հաստատված գործընթացի պահպանմանը, այլ անցման գործընթացի իրականացմանն ուղղված լինելը, որի նպատակն է հաստատել նոր գործընթաց: Ծրագրանպատակային մոտեցումը օժտված է այնպիսի հատկություններով, որոնք հատուկ են «կառավարման հայեցակարգին», այսինքն՝ համատեղելի են հիերարխիայի ձևական սկզբունքին: Մի կողմից այն կիրառելի է սոցիալ-տնտեսական համակարգի տարբեր մակարդակներում (հիերարխիայի հետ «արտաքին» համատեղության), մյուս կողմից պետք է ունենա հիերարխիկ կառուցվածք (հիերարխիայի հետ «ներքին» համատեղելիություն): ՆԾ-երի մշակման, իրացման և կառավարման գործընթացներում կարևոր տեղ է հատկացվում նրանց տնտեսամաթեմատիկական մոդելավորմանը՝ որպես տեխնոլոգիապես, պատճառահետևանքային կապերով, ժամանակի մեջ համաձայնեցված միջոցառումների փոխկապակցված համակարգ: Այն հնարավորություն է տալիս միևնույն մոդելի մեջ ընդգրկել տարբեր բնույթի, գիտատեսչական պատկանելիության, մասշտաբների և տարբեր տարածաշրջաններում տեղակայված սոցիալ-տնտեսական օբյեկտներ: Բացի այդ ՆԾ-երի ցանցային մոդելը հնարավորություն է տալիս միաժամանակ ուսումնասիրել ինչպես առանձին օբյեկտների, այնպես էլ ամբողջ ՆԾ-ի տարբերակային հնարավոր իրավիճակները, որը հիմք է հանդիսանում ինչպես առանձին ՆԾ-ի շրջանակներում, այնպես էլ ՆԾ-երի համակարգում արդյունավետ լուծումների որոշման համար: Լուծվել է ՆԾ-ի մոդելում նախագծերի թույլատրելի կոմբինացիաների գոյության անհրաժեշտ և բավարար պայմանների խնդիրը:

Առանձնահատուկ ուշադրության են արժանացել տնտեսական համակարգում ընդհանրապես և նպատա-

կային ծրագրերի համակարգում, մասնավորապես լուծման հայեցակարգերի ընտրության և դրա շրջանակներում լուծման գոյության և ստացման հարցերը: Մասնավորապես, տնտեսական համակարգում լուծումը ներկայացվում է որպես որոշակի «արտադրություն» և «արդյունավետություն» ապահովող հնարավոր վիճակ: Վերջին երկու կատեգորիաների տարբեր մեկնաբանությունները ծնում են լուծման տարբեր հայեցակարգեր և հակառակը՝ լուծման յուրաքանչյուր հայեցակարգի իմաստով այդ կատեգորիաներն ունեն համապատասխան մեկնաբանություն: Այս տեսակետից կարևորվում են մենագրությունում ՆՕ-երի համակարգի մոդելի շրջանակներում ստացված հավասարակշիռ վիճակների գոյության պայմանները և դրանց ստացման վերջավոր ալգորիթմը, ինչպես նաև նույն շրջանակներում ձևակերպված խաղի միջուկի որոշման խնդիրը: Աշխատության մեջ քննարկվում են նաև ՆՕ-երի համակարգում որոշումների կայացման գործընթացում պետական միջամտության արդյունավետության բարձրացման խնդիրները:

Աշխ. Մի քանի հարցեր գծային հավասարումների և անհավասարությունների համակարգերի ոչ բացասական և դրական լուծումների գոյության վերաբերյալ Եր., 1986 (ուսումնական ձեռնարկ), Անցումային շրջանի տնտեսության կարգավորման ծրագրանպատակային հայեցակետը, Եր., 1997:

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՐՋԱՆԻԿԻ

(1954)

Ծնվել է Արագածոտնի մարզի Կոշ գյուղում: 1973-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը և 1978-ին ավարտել Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Աշխատանքի էկոնոմիկա բաժինը: 1978-82-ին սովորել է նույն ինստիտուտի ասպիրանտուրայում: 1978-83-ին եղել է քաղաքատնտեսության ամբիոնում որպես կաբինետի լաբորանտ, վարիչ, 1983-89-ին նույն ամբիոնի ասիստենտ, 1989-94-ին՝ դոցենտ: 1988-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: «ՀՀ բնակչության դրամական եկամուտների կարգավորման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության համար 2013-ին նրան շնորհվում է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

Ա.Թորոսյանի աշխատանքային գործունեության հետագա ուղին է. 1994-98-ին՝ Հայխնայբանկում վարչության փոխնախագահ, 1998-2000-ին՝ Հայէկոնոմբանկի Արաբկիր մասնաճյուղի կառավարիչ, 2000-05-ին՝ ՀՀ նախագահի վերահսկողական ծառայությունում որպես գլխավոր մաս-

նագետ, 2005-09-ին՝ վերահսկողական ծառայության խորհրդատու, 2009-ից՝ վերահսկողական ծառայության 1-ին բաժնի վարիչ: Դասավանդում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Սկսած 1990-ական թվականներից բնակչության եկամուտների կարգավորման հարցը հայ տնտեսագիտական մտքի մշտական արծարծվող թեմաներից է: Հրապարակված ուսումնասիրություններում մեկնություններ են տրվել հին և նոր ժամանակների տնտեսական ու սոցիալական ուսմունքների դրույթներին: Հայաստանի Հանրապետության բնակչության դրամական եկամուտների շերտավորման պատճառների և միտումների բացահայտման ու սոցիալ-տնտեսական քաղաքականության և հետագա կատարելագործման խնդիրների քննությունն է ակնկալում Ա.Թորոսյանի «ՀՀ բնակչության դրամական եկամուտների կարգավորման հիմնախնդիրները» աշխատությունը: Հարցը բնականաբար ենթադրում է կենսամակարդակ և կյանքի որակ հասկացությունների իմաստային ճշգրտումը: Լինելով մոտ, բայց ոչ նույնական, այն կարծիքն է դիտվում առավել ընդունելի, համաձայն որի գնողունակ տարբեր գործոնները կենտրոնանում են դրանց համադրական պարամետրերում. ըստ այդ չափանիշների անհատական պահանջմունքների ամբողջության հատվածավորմամբ կարելի է հաջողությամբ լուծել վերլուծության և կանխատեսման խնդիրները: Այդ դեպքում «կյանքի որակը» համարվում է այնպիսի կատեգորիա, որը ներառում է սպառման մոդելը որոշող սոցիալ-մշակութային գործոնները, իսկ «կենսամակարդակ» կատեգորիան՝ տնտեսական գործոնները, այսինքն՝ այն «տնտեսական վիճակը», որն արտահայտում է մարդկանց կողմից տարբեր սպառողական հավաքածուների սպառման մակարդակը:

Որոշակի վերլուծությունների արդյունքում կատարվում է այն եզրակացությունը, թե տնային տնտեսությունների համախառն եկամուտների կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները, մասնավորապես, դրամական եկամուտների տեսակարար կշռի աճը, վկայում են հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորման դրական արդյունքների մասին: Ու թեև ընդհանուր առմամբ բնակչության եկամուտների կառուցվածքը դրսևորում է զարգացած երկրներին բնորոշ սոցիալական ուղղվածություն, «իրականում այդ այդպիսին է միայն արտաքուստ»: Եվ Ա.Թորոսյանը համապատասխան նյութի վերլուծության միջոցով, հանրապետության բնակչության դրամական եկամուտների կառուցվածքի, սոցիալական շերտավորման բարդ ու հակասական միտումների մեջ լուծումներ է փնտրում փոքր բիզնեսի զարգացման, չհաշվառվող տնտեսության ծավալների կրճատման, աշխատանքային միգրացիայի պետական կարգավորման, կենսաթոշակային համակարգի բարեփոխումների և այլ առաջարկներում: Նշված հարցերը նա դիտարկում է ժամանակի հոսքի մեջ, իսկ անվիճելին այն է, որ այդ լուծումների համար պահանջվում է պետության համալիր մասնակցությունը:

Աշխ. ՀՀ բնակչության դրամական եկամուտների կարգավորման հիմնախնդիրները, Եր., 2012, ՀՀ բնակչության եկամուտների կարգավորման արդի հիմնախնդիրները (դասախոսությունների նյութեր), Եր., 2014:

ԹՈՐՈՍՅԱՆ ԹՈՐՈՍ ՇԱՀԵՆԻ

(1950)

Ծնվել է Երևանում: 1967-ին ավարտել է թիվ 35 միջնակարգ դպրոցը, 1973-ին՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1973-76-ին սովորել է ՀՀ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում: Նույն ինստիտուտում 1976-79-ին եղել է կրտսեր գիտաշխատող, 1983-ից՝ ավագ գիտաշխատող, 1979-92-ին՝ գիտական քարտուղար: 1978-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 1985-ին՝ դոկտորի գիտական աստիճան, իսկ 1989-ին՝ պրոֆեսորի կոչում:

1992-ից եղել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում՝ որպես Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, միաժամանակ ղեկավարել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի Արտաքին տնտեսական կապեր գիտական ուղղությունը: 2017-ից տնտեսագիտական ֆակուլտետի պրոֆեսոր:

Նրա աշխատանքները վերաբերում են արդյունաբերության արտադրական կուտակման արդյունավետությանը, հանրապետության արտաքին տնտեսական կապերին:

«Эффективность производственных накоплений в промышленности Армянской ССР» և «Фонды произ-

водственного накопления и пути его эффективного использования в условиях развитого социализма» մենագրությունների քննության առարկան կուտակման աղբյուրների միջև փոխադարձ կապերի, կուտակման ֆոնդի կառուցվածքի, կուտակման նորմայի և արտադրական կուտակման նորմայի դինամիկայի հարցերն են: Նա կարևորում է ամորտիզացիոն հատկացումների դերի ուժեղացումը՝ որպես կուտակման աղբյուրի, առաջադրում է կուտակման ֆոնդի մի կառուցվածք, որն իբր առավել ստույգ է արտահայտում ազգային եկամտի կուտակվող մասը և նպաստում ինչպես կուտակման ֆոնդի, այնպես էլ նրա տարրերի արդյունավետ օգտագործմանը:

Թ.Թորոսյանի հետագա շրջանի աշխատանքները հիմնականում կապված են հանրապետության արտաքին տնտեսական կապերի հարցերին: Նրա «Միջազգային տնտեսագիտություն. առևտուր և ֆինանսներ» գիրքը բաղկացած է երկու մասից՝ առաջին կեսը, որպես ուսումնական ձեռնարկ պատկերացում է տալիս միջազգային առևտրի ու ֆինանսների հիմնական հասկացությունների, երկրորդ կեսը՝ Հայաստանում արտաքին տնտեսական կապերի ձևավորման ու զարգացման մասին:

Թ.Թորոսյանի համահեղինակությամբ և ընդհանուր խմբագրությամբ «Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը» կոլեկտիվ աշխատությունը պատկերացում է տալիս այդ կապերի հետագծի վերաբերյալ, կանխորոշելով ինտեգրացիայի մի շատ երկարատև «բարդ ու դժվարին գործընթաց, որի իրականացումը, նույնիսկ քաղաքական կամքի դրսևորման դեպքում, կարող է տասնամյակներ տևել»: Հեղինակները փորձում են Հայաստան-Եվրամիություն փոխհարաբերությունները ներկայացնել հարցերի հետևյալ կապակցություններում. Եվրամիության երկրների և Հայաստանի միջև տնտեսական կապերի նպատակաուղղվածությունները, առևտրատնտեսական կապերի օրինաչափությունները և միջազգային ֆինանսատնտեսական ճգնա-

ժամը, Եվրամիության արժութային համակարգի ձևավորումն ու զարգացումը և Հայաստանի դրամը, օտարերկրյա ուղղակի ներդրումները Եվրամիության երկրներում և Հայաստանում: Հեղինակները Եվրամիության հետ ինտեգրացման գործընթացում կարևորում են «տարածաշրջանային» սկզբունքը:

«Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում» ուսումնասիրությունը նույնպես իրականացրել է Թորոսյանի հետազոտական խումբը: Հեղինակները քննության առարկա են դարձրել Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի տնտեսությունների արտաքին առևտրի վիճակը, կառուցվածքը, ապրանքների առևտուրը և ծառայությունների ոլորտների զարգացումները սահմանի բացման պարագայում և դրա սոցիալ-տնտեսական հետևանքները, ինչպես նաև այս կամ այն ճյուղում ապրանքների և ծառայությունների արտահանման կամ ներմուծման համեմատական առավելությունները, ազգային արտադրության ինչ պաշտպանական միջոցներ են ենթադրվում և այլն:

Աշխ. Эффективность производственного накопления в промышленности Армянской ССР, Ер. 1980, Фонды производственного накопления и пути его эффективного использования в условиях развитого социализма, М., 1985, Հայաստանի արտաքին տնտեսական կապերի զարգացման հեռանկարները, Եր., 1989 (համահեղինակ), Հայաստան-Թուրքիա. առևտրատնտեսական կապեր, Եր., 2001, Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա, Եր., 2004 (ուսումնական ձեռնարկ), Միջազգային տնտեսագիտություն. առևտուր և ֆինանսներ, Եր., 2003, 2005, 2009 (ուսումնական ձեռնարկ), Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը Եր., 2010 (համահեղինակ), Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում, Եր., 2012 (համահեղինակ):



ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆՈՍԻ

(1904-1968)

Ծնվել է Ալեքսանդրապոլի գավառի (այժմ՝ Շիրակի մարզ) Սվանվերդի (այժմ՝ Լուսաղբյուր) գյուղում: Գյումրիի ծխական դպրոցն ավարտելուց հետո սովորել է հողաչափերի վարժարանում: 1933-ին Լենինականի (այժմ՝ Գյումրի) կոոպերատիվ ինստիտուտն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը և 1938 թվականից մինչև իր կյանքի վերջը դասախոսել է նույն ֆակուլտետում: Նա 1946-68-ին եղել է ժողովրդական տնտեսության պլանավորման ու ճյուղային էկոնոմիկայի ամբիոնի վարիչ, 1945-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նրա ուսումնասիրության ոլորտները վերաբերում են Հայաստանի տնտեսական զարգացման պատմության, ժողովրդական տնտեսության պլանավորման, արտադրության արդյունավետության բարձրացման, միջճյուղային կապերի բարելավման հարցերին:

Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ճանաչողական որոշակի արժեք է ներկայացնում նրա «Экономическое развитие Армении» երկհատոր աշխատությունը, որտեղ վերլուծվում է Հայաստանի տնտեսական պատմությունը, ըստ որոշակի պարբերացման. Հայաստանը Ռուսաստանի հետ միացման նախօրեին, մինչռեֆորմյան, կապիտալիստական, XX դարասկզբի և Հոկտեմբերյան հե-

ղափոխությունից մինչև խորհրդային իշխանության հաստատման և խորհրդային շրջանները:

Իր ժամանակին ուղեցույցի նշանակություն էին ստացել Թումանյանի «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պլանավորումը» աշխատության 8 պրակները, որոնցում ընդհանրացված են ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պլանավորման փորձը, պլանավորման ձևերի ու մեթոդների զարգացման ու կատարելագործման հարցերը, այդ գործառույթի առանձնահատկությունները տնտեսության տարբեր ոլորտներում ու ճյուղերում:

Տնտեսության զարգացման մասշտաբները, վերարտադրության տեմպերը և ժողովրդատնտեսական հիմնական համամասնությունները բնութագրող առավել ընդհանուր տնտեսական ցուցանիշներին՝ ժողովրդատնտեսական հաշվեկշռի քննությանն է նվիրված «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության բալանսը» աշխատությունը: Որպես փոխկապակցված հաշվեկշռային աղյուսակների համակարգ՝ ցույց են տրվում ժողովրդատնտեսական հաշվեկշռի էությունը և հիմնախնդրի մեթոդաբանական կատարելագործման էվոլյուցիան սոցիալիստական շինարարության տարբեր էտապներում, առանձին-առանձին վերլուծության օբյեկտ դարձնելով հասարակական ամբողջական արդյունքի, ազգային եկամտի, աշխատանքային ռեսուրսների, նյութական հաշվեկշիռների և արտադրանքի միջճյուղային հաշվեկշռի, ազգային հարստության և ժողովրդական տնտեսության ամփոփ հաշվեկշռի հարցերը:

Թումանյանը 1966-ին արժանացել է ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Աշխ. Экономика Армении в XIX и в начале XXвв., Ер., 1947, Экономическое развитие Армении, Ер., ч.I, 1954, ч.II, 1956, Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքի մասին, Եր., 1954, Հայաստանի տնտեսական զարգացման պատմությունը, Եր., 1960, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, Եր., 1962, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պլանավորում, ուսումնական ձեռնարկ 8 պրակով, Եր., 1965, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության բալանսը, Եր., 1970:

ԻՇԽԱՆՅԱՆ ԲԱԽՇԻ ՋԱՔԱՐԲԵԿԻ

(1879-1921)

Ծնվել է 1879-ին Ղարաբաղի Խաչեն գավառի Խանծք գյուղում (այժմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանում): 1898-ին ավարտել է Շուշիի թեմական իննամյա դպրոցը: 1899-ին հաճախել է էջմիածնի հայկական հոգևոր ակադեմիայի վարժարանը: 1901-03-ին սովորել է Լայպցիգի առևտրային ինստիտուտում, այնուհետև ուսումը շարունակել Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում: 1905-ին ավարտել է Լայպցիգի առևտրային ինստիտուտը և ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան: 1903-ին Ժնևում մասնակցել է Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայկական կազմակերպության (սպեցիֆիկներ) հիմնադրմանը: Թարգմանել և Ժնևում հրատարակել է Կ.Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատությունը: 1906-ին խմբագրել է կազմակերպության «Կյանք» շաբաթաթերթը: 1908-ին բանտարկվել է՝ մեղադրվելով հակացարական գործունեության մեջ: 1911-13-ին ապրել է Գերմանիայում, աշխատակցել «Սոցիալիստ» ամսագրին: 1917-ին, Բաքվի հայկական կոտորածներից հետո, պայքարել է բոլշևիկների դեմ: 1918-20-ին ղեկավարել է Հայաստանի առաջին հանրա-

պետության կառավարության վիճակագրական բաժնի տեսչությունը: Նա մերժեց բոլշևիկյան կարգերի մուտքը Հայաստան: 1920-ի դեկտեմբերին բանտարկվեց, իսկ 1921-ին շատերի հետ տարագրվեց Իրան, որտեղից Եվրոպա մեկնելու ճանապարհին մահացել է: Նրա «Երկու ամիս բոլշևիկյան բանտում» (Գահիրե, 1924) գիրքն իր իսկ խոսքերով «լուսանկարչական ճշմարտությամբ» գրված մեմուարներ են այդ մղձավանջային օրերի, բռնությունների ու ողբերգական անցքերի մասին:

Իշխանյանի աշխատություններն ընդլայնեցին տնտեսական կյանքի ճանաչողության տեսապատմական սահմանները, դրանք հարստացնելով նոր հասկացություններով, նպաստելով հայ տնտեսական գիտության պրոֆեսիոնալ մտավոր մակարդակի բարձրացմանը:

Իշխանյանի գիտական ժառանգության կարևոր հատվածը վերաբերում է տնտեսական զարգացման հարցերին: «Տնտեսական զարգացման ֆազերը» աշխատության մեջ նա հասարակության առաջընթացի պատմությունը դիտում է փոխանակային կոնցեպցիայի դիտակետից՝ առանձնացնելով տնային փակ տնտեսության, քաղաքային տնտեսության և ժողովրդական տնտեսության շրջանները, մի սխեմա, որն ավելի ճիշտ է արտահայտում «պատմական մարդու տնտեսության զանազան ձևերը, նրանց աստիճանական բարդացումը, հազարավոր դարերի օրգանական զարգացումը»: Անդրադառնալով հասարակության էվոլյուցիան բացատրող այլևայլ ուղղությունների մեկնությանը, նա չէր ընդունում հասարակության բոլոր շարժումները տնտեսական գործոնի դիտակետից քննարկող տնտեսական ուղղությունը, որին, ըստ էության, հանգում է Կ.Մարքսի ու Ֆ.Էնգելսի ուսմունքը: Նրանք «չեն մշակել մի որոշ փիլիսոփայական սիստեմ», «ինքնուրույն մեթոդ և ուսումնասիրության հատուկ եղա-

նակ», այդ ուսմունքում «անհատը հասարակության զարգացման մեջ դեր չի խաղում, այլ միայն դասակարգն է իսկական գործոնը», «հասարակության զարգացման օրենքն ըստ այս ուղղության պետք է փնտրել հասարակության մեջ իշխող տնտեսական պայմանների մեջ. տնտեսական պայմաններն են այն հրամայական օրենքները, որոնք ղեկավարում են հասարակության ընթացքը»: «Ի՞նչ է հասարակությունը» աշխատությունում նա հասարակական կյանքի ճանաչողության հարցերում նաև կարևոր է համարում հայ իրականությանը հաղորդակից դարձնել այդ ասպարեզում համաշխարհային մտքի ձեռքբերումներին: Նրա կարծիքով, սոցիոլոգիան, որը, լինելով «մարդկային գիտությունների համակարգության» մեջ ամենաերիտասարդը, պետք է պատասխան տա այդ կնճռոտ հարցին: Բայց սոցիոլոգիան ինքը նույնպես ներառում է տարբեր ուղղություններ: Եվ նա ապավինում է պլյուրալիստական հայացքին. սոցիոլոգիայի հիմնական խնդիրը պետք է լինի «ցույց տալ միաժամանակ և զուգահեռաբար գործող պատճառների ազդեցությունը և հակազդեցությունը հասարակական կյանքում»:

Բ.Իշխանյանի «Հասարակական գաղափարները Ռ.Պատկանյանի և Ս.Շահազիզի բանաստեղծությունների մեջ» ընդարձակ ներածությամբ - ռուսահայ վերածնիչների սոցիալական դավանանքի բնույթը (սոցիոլոգիական վերլուծություն)» բաղկացած է ներածությունից և բուն թեմայից: Առաջինը, ճիշտ է, կապված է երկրորդի հետ, բայց իր արծարծումների մեջ ընդգրկում է շատ ավելի լայն շրջանակներ, հասարակական մտքի չափումների իր առանձնահատկություններով՝ ակնկալելով նորարարություն. «Մենք հարցին մոտեցել ենք իբրև հասարակագետ և ոչ գեղարվեստագետ, սոցիոլոգիական տեսակետներով և ոչ էսթետիկական պահանջներով: Ոչ թե ձևը, արվեստը,

արտաքին տեխնիկան, այլ ստեղծագործությունների գաղափարային պարունակությունն է հրավիրել մեր ուշադրությունը: Մենք ջանացել ենք գրական արտադրությունների, իբրև իդեոլոգիական կոնկրետ փաստերի, սոցիոլոգիական էկվիվալենտները որոնել և հաստատել լայն հասարակական կյանքի օբյեկտիվ պայմանների մեջ, գործադրելով գենետիկ վերլուծական մեթոդը»: Նա անդրադառնում է եվրոպական մտքի բազմաթիվ նշանավոր ներկայացուցիչներին՝ ցույց տալու, որ նրանց սոցիալական վերափոխումների ձգտումները և վարդապետած գաղափարները բխում էին ոչ թե վերդասակարգային, համազգային վերացական հումանիզմից, այլ դասակարգային տիրապետության նոր պայմաններից: Այդպիսին էր նաև հայկական լիբերալիզմը՝ Նազարյանը, Նալբանդյանը, Արծրունին, ովքեր իրենց մտքերի ու գաղափարների պաշարը քաղել էին «եվրոպական բուրժուազիայի սոցիալական դավանանքից, ապա վարդապետել ու գործադրել մեր իրականության մեջ, կատարվել են հայ բուրժուազիայի դասակարգային շահերի շրջանակի մեջ, հօգուտ և ի վնաս նրա հասարակական իդեալի»: Մեթոդոլոգիական սխալ պիտի դիտել անցյալի այդ «փայլուն մեծությունների գնահատության ժամանակ» առաջնորդվել «այժմեականի հասարակական արժեքի մեծությամբ»: Այստեղ կարևորն այն է, որ հայ վերածնիչները տվյալ ժամանակաշրջանում իրենց գործունեությամբ սկիզբ են դնում առաջընթացին, առաջադրում հասարակական կյանքի նոր լուծումների անհրաժեշտությունը:

1912-ին Բեռլինում լույս է տեսնում Բ.Իշխանյանի «Օտարերկրացիների գործունեության նշանակությունը և պատմությունը Ռուսաստանում» մենագրությունը: Այդ հետազոտության համար նա ստացել է գիտությունների դոկտորի աստիճան: Հարցի դրվածքն ինքնին արժանի է

ուշադրության՝ կապված XIX դարում ռուսական իրականության մեջ տեղ գտած հասարակահայեցության հետ, թե արևմտյան տնտեսական հարաբերություններն արմատավորվում են արհեստականորեն և անհեռանկար են, ուստի Ռուսաստանին անհրաժեշտ է տնտեսության այնպիսի ուղի, որը շրջանցում է Արևմուտքի սոցիալական հետագիծը: Նա անդրադառնում է եվրոպական երկրների և Ռուսաստանի տնտեսական պատմության առանձնահատկություններին: Առաջիններին բնորոշ էին միևնույն «տնտեսական կազմակերպման ձևերը» և «առաջ էին շարժվում միևնույն մշակութային ուղիով», Ռուսաստանը մոնղոլների երկարատև տիրապետության արդյունքում հետ էր մնացել, ուստի «Ռուսական կայսրության եվրոպականացման անհրաժեշտությունը ցարերի աչքում ոչ թե ժամանակի համապարփակ ու բովանդակալից մշակութային հարց էր, այլ զուտ իշխանությունը պահելու խնդիր… ռազմական հզորության պահպանումը և դրանով պայմանավորված քաղաքական դիրքի հաստատումը եվրոպական տերությունների շարքում»: Աշխատության մեջ հանգամանորեն տվյալներ են բերվում Իվան III-ի և Իվան Ահեղի ժամանակներից սկսած և Արդեն Պետրոս Առաջինի և Եկատերինա Երկրորդի այն բազմաշերտ գործունեությունների մասին, որոնք նպատակ ունեին հաղթահարելու երկրի տնտեսական հետամնացությունը: Հատկապես խոսքը վերաբերում է եվրոպական ամենատարբեր մասնագետներին Ռուսաստան հրավիրելու և նրանց տրվող արտոնությունների և նրանց գործունեությունը կարգավորող օրենքներին: Ինչ խոսք, նման քաղաքականությունը որոշ չափով նպաստեց գործարանային արտադրության, ռացիոնալ հողօգտագործման սկզբունքների արմատավորմանը, սակայն օտարերկրացիների տնտեսամշակութային առաքելությունը սպասվածի չափով իրականացնել հնա-

ռավոր չէր, որի պատճառը հարկ էր փնտրել «երկրում իշխող համակարգի, այն ժամանակվա սոցիալական կառուցվածքի, երկրի օբյեկտիվ պայմանների… ճորտատիրական կարգերի առկայության հետ»: Թերևս, դրանով պիտի բացատրել, որ օտարերկրացիների գործունեությունը Ռուսաստանում չէր կարող ունենալ «համընդհանուր հասարակական արդյունավետություն» և, որ ճորտատիրության վերացումից հետո էլ կապիտալիզմի լինել-չլինելու հարցը շարունակում էր մնալ ռուս հասարակագիտական մտքի առանցքային հարցը:

Բ.Իշխանյանի ուշագրավ աշխատություններից է «Развитие милитаризма и империализма в Германии, (Историко-экономическое исследование)» մենագրությունը, որում հեղինակը խնդիր էր դրել «կոնկրետ փաստերի» և պաշտոնական փաստաթղթերի հիման վրա տալ ռազմական հզորության և ագրեսիվ Գերմանիայի իրական պատկերն ու պատմական զարգացման գենետիկական վերլուծությունը»: Աշխատության նշանակությունը դուրս է զուտ ազգային տիրույթի սահմաններից: Նա, ըստ էության, ընդհանրացնում է XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի Գերմանիայի հասարակական զարգացումը, ցույց է տալիս արագ տնտեսական աճի և նույնքան արագ կատարվող միլիտարիզացիայի պատճառները, ինչը վկայում է այն որոշակի հետևողական ծրագրային միտումի մասին, որը կոչվում է պատերազմի տնտեսական, ռազմական ու տեխնիկական նախապատրաստություն: Հայտնի տնտեսագետ Մ.Տուգան-Բարանովսկին աշխատության ներածականում այն արժևորում է այսպես. «Բ.Իշխանյանի գրքում հավաքված է ընդարձակ և ուսանելի փաստացի նյութ, որը կարող է օգնել պարզաբանել ներկա պատերազմի պատճառները: Գրքի այսպիսի բնույթը իրավունք է տալիս արժանանալու հասարակական ուշադրության …»:

Իշխանյանի այլ աշխատություններում քննության են ենթարկվել Թուրքիայի տնտեսական կացության, հայ-վրացական հարաբերությունների տնտեսական խնդրի, Գերմանիայի և Թուրքիայի տնտեսաքաղաքական փոխհարաբերությունների, կովկասյան ժողովուրդների տնտեսական և սոցիալական շերտավորման հիմքերի և այլ հարցեր:

Իշխանյանի գիտական հետաքրքրությունների շերտերից է ժողովրդագրության հարցերը: Կարևոր է, թե տնտեսական գիտությունը որքան ճշմարիտ է արտահայտում տեղաշարժերի իրական պրոցեսները: Իսկ այս իմաստով վիճակագրությունը հենց այն գիտությունն է, որը հնարավորություն կտա կռահել տնտեսական երևույթների բազմանշանակ էությունն իր ամբողջ կապերի մեջ: Եվ նա վիճակագրական գիտության իմաստային ֆունկցիոնալ նշանակությունը դնում է լայն տեսադաշտի վրա: Այս ուղղությամբ նրա աշխատությունները նորույթ էին անցյալ դարասկզբի հայ տնտեսագիտական մտքի պատմության մեջ, որոնք անտեսվել են բնակչության վերարտադրության տեղաշարժերի հիմնախնդրով զբաղվող մասնագետների կողմից:

Իշխանյանի «Կովկասի ազգությունների բնակչության կազմը. պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը» (որն ունեցել է նաև գերմաներեն և ռուսերեն հրատարակություններ) աշխատությունը նպատակ ուներ համապատասխան թվական տվյալների հիման վրա պարզել և ամբողջական պատկերացում տալ ամբողջ կովկասյան ազգաբնակչության ազգային բաղկացուցիչ մասերի, նրա տարածման, բաշխման, խմբավորումների և կովկասյան ազգությունների պրոֆեսիոնալ դասակարգման, սոցիալական շերտավորման, այդ ազգությունների տնտեսական վիճակի ձեռքբերումների և հասարակական դասակարգային ուժերի փոխհարաբերությունների մասին:

Սույն կտրվածքներով վերլուծությունների արդյունքում, նա երկրամասի կուլտուր-տնտեսական, հետևապես նաև տեխնիկատնտեսական ու ընդհանուր կուլտուրական առաջադիմության աղյուսակում հայերին հատկացնում է առաջին հորիզոնականը, որոնց մոտ են գտնում տնտեսական ռացիոնալիզմի լայն հիմքերի վրա զարգացած կապիտալիստական դասակարգ, իսկ մյուս ազգերը դեռևս հիմնապես պահպանել են միջնադարյան նահապետական հասարակության կառուցվածքի տիպը:

Հետաքրքիր վիճակագրական ժողովածու է նաև նրա «Ժողովուրդների տերիտորիական բաժանումները և նրանց աճումը Անդրկովկասում», որի առաջին մասն է լույս տեսել: Աշխատության բովանդակությունն իր չափումների մեջ, ըստ էության՝ ժամանակի և ոչ միայն՝ եզակի վիճակագրական ուսումնասիրություն է:

Աշխ. Տնտեսական զարգացման ֆազերը, Թիֆլիս, 1906, Թուրքիայի ապագան, Թիֆլիս, 1907, Ի՞նչ է հասարակությունը, Թիֆլիս, 1909, Հասարակական գաղափարները Ռ.Պատկանյանի և Ս.Շահազիզի բանաստեղծությունների մեջ: Ընդարձակ ներածությամբ - ռուսահայ վերածնիչների սոցիալական դավանանքի բնույթը (սոցիոլոգիական վերլուծություն)», Թիֆլիս, 1910, Wiesen and Geschichte des Austanclertums in Rurland, 1912, Ischchanian B. Nationaler Bestand, berufsmassiyt Gruppierung and soriale Gliederung der kaukasischen Yolker: Ststisfischo konnmishe Unfersuchuyen, Berlin, Leipzig: Gosche, 1913, Հայ-վրացական հարաբերությունների պրոբլեմը, Թիֆլիս, 1914, Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչության կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը, Թիֆլիս, 1914, Գերմանիայի և Թուրքիայի տնտեսաքաղաքական փոխհարաբերությունը, Թիֆլիս, 1915, Развитие милитаризма в Германии, Петроград, 1917, Ժողովուրդների տերիտորիական բաժանումները և նրանց աճումը Անդրկովկասում, Բաքու, 1919 և այլն:

ԼԻՍԻՑԻԱՆ ՆԱՋԵԼԻ ՍՏԵՓԱՆԻ

(1906-2005)

Ծնվել է Թիֆլիսում: Պարել սովորել է իր քրոջ՝ Թիֆլիսի ռիթմի և պլաստիկայի ինստիտուտի հիմնադիր Սրբուհի Լիսիցիանի մոտ: 1920-30-ականներին հանդես է եկել Թիֆլիսի, Լենինգրադի, Մոսկվայի, Գերմանիայի քաղաքների բեմերում:

1930-ին ավարտել է Լենինգրադի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: 1930-32-ին աշխատել է ՍՍՀՄ պետբանկի հայկական գրասենյակում, 1932-36-ին՝ ՍՍՀՄ պետբանկի Լենինգրադի գրասենյակում՝ որպես դրամարկղային պլանի և դրամաշրջանառության խմբի ղեկավար (1934-ից խորհրդական): 1941-ին Լենինգրադի ֆինանսա-տնտեսագիտական ինստիտուտի ասպիրանտուրան ավարտելուց հետո մինչև 1946թ. աշխատել է ԽՍՀՄ պետբանկի վարչությունում: 1943-46-ին գլխավորել է պլանային տնտեսագիտական վարչությունը:

1946-49-ին սովորել է ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի դոկտորանտուրայում: 1949-52-ին եղել է նույն ինստիտուտում ավագ գիտաշխատող: 1965-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

Ն.Լիսիցիանն իր մասին թողել է մտավորականի, մասնագետի և մարդու լավագույն հուշը. «Մեր կոլեկտիվի անդամները,- գրել է Ռուսաստանի Ֆեդերացիայի կառավարությանը կից ֆինանսական ակադեմիայի ռեկտոր, պրոֆեսոր Ա.Գրյազնովը Ն.Լիսիցիանի 95-ամյա հոբելյանի առթիվ,- հիշում են գիտական կոնֆերանսներին Ձեր ոգևորիչ ելույթները, Ձեր կարողությունը փաստարկների ուժով ապացուցելու բարդ հիմնախնդիրների վերաբերյալ Ձեր արտահայտած դիտողությունների ճշմարտացիությունը, Ձեր նրբագեղությունն ու ինտելիգենտությունը, երիտասարդության ուսուցչի իմաստությունը, մարդկային բարությունն ու սրտակցությունը»:

Ն.Լիսիցիանը բազմաթիվ գիտական աշխատանքների հեղինակ է, ակտիվ համագործակցում էր «Вопросы экономики» և «Деньги и кредит» ամսագրերին, իսկ «Кредитование государственной розничной торговли в СССР (в соавторстве)» աշխատության համար արժանացել է ՍՍՀՄ ԳԱ նախագահության առաջին մրցանակի:

Աշխ. Влияние кредита на ускорение оборочиваемости оборотных средств промышленных предприятий, М., 1951, Кредитование государственной розничной торговли в СССР (в соавторстве с В.П.Дьяченко), М., 1957, Кредит по обороту материальных ценностей, М., 1961, Оборотные средства в системе воспроизводственных процессов: Вопросы теории и практики, М., 1986.

ԽԱՆԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԳՈՒՐԳԵՆԻ

(1937-2008)

Ծնվել է Կիսլովոդսկ քաղաքում: Սովորել է Երևանի Ձերժինսկու անվան դպրոցում: 1959-ին ավարտել է Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկամեքենաշինական ֆակուլտետը: 1959-65-ին աշխատել է Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանում, 1967-82-ին՝ պլանավորման և նորմատիվների գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես բաժնի վարիչ, 1982-ից ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում սկզբում որպես բաժնի վարիչ, իսկ 1991-2007-ին՝ փոխտնօրեն: 1973-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան ստացել է 1990-ին:

1998-2008-ին համատեղությամբ աշխատել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանում՝ որպես տնտեսագիտական ֆակուլտետի դեկան:

Խանիկյանի գիտական հետաքրքրությունների ոլորտը վերաբերում է գիտություն-արտադրություն կապի փոխներգործության և կառավարման հարցերին, որոնք էլ դարձել են նրա «Наука-производство: вопросы взаимодействия и управления» մենագրության քննության առարկան: Փոխվել է գիտական և արտադրական գործունեության փոխներգործության բնույթը: Գիտության և արտա-

դրության միջև գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական բարդացող կապերը ուղեկցվում են տնտեսական, իրավական, վարչական և հասարակական այլ նորմերով և նորմատիվներով բնութագրվող հասարակական պայմանների որակական տեղաշարժերով: Հիմնական խնդիրը դրանց միջև փոխներգործության և փոխադարձ կապի վերաբերյալ վերացական, տեսական դատողություններից կոնկրետ պրակտիկային անցնելն է: Սոցիալ-տնտեսականի համեմատությամբ գիտատեխնիկական կապերի առաջանցիկ և անհամամասնական զարգացումը հանգեցրել է գիտություն-արտադրություն համակարգում ֆունկցիոնալ և հասարակական պայմանների փոխներգործության միջև որոշակի անհամապատասխանության: Դա է այն հիմնական հակասությունը, որն արտահայտվում է միջգերատեսչական արգելքների կենսունակության, գիտատեխնիկական միջոցառումների և դրանց նյութատեխնիկական ապահովման գործող ֆինանսավորման բազմաթիվ ուղիների գոյության, ԳՏԱ-ն ճյուղային և տարածքային անբավարար զարգացման մեջ: Խնդիր է դրված փոխազդեցության ֆունդամենտալ և անհամաձայնեցված անջատ-անջատ կապերից անցնել դրանց միասնական և ճկուն ծրագրային արժեքային ձևին, գիտությունը և արտադրությունը դիտարկել որպես համակարգային կազմավորում, որին ներհատուկ է ճանաչողական և մարմնավորող ֆունկցիաների օրգանական միասնությունը: Հիմնավորվում է ԳՏԱ-ն արագացնող հանրապետական ֆոնդի ստեղծման անհրաժեշտությունը և նրա ինտեգրացիան զարգացման ճյուղային ֆոնդերի հետ հեռանկարային և ընթացիկ պայմանագրային համաձայնությունների համակարգում:

Աշխ. Наука-производство: вопросы взаимодействия и управления, Ер., 1988.

ԽԱՉԱՏՈՒՐՈՎ ՏԻԳՐԱՆ ՍԵՐԳԵՅԻ

(1906-1989)

Ծնվել է Մոսկվայում: 1923-ին ընդունվել է Մոսկվայի պետական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետի վիճակագրության բաժինը: Դա մի դպրոց էր, որն, ըստ էության, կանխորոշեց նրա գիտական ստեղծագործության բնորոշ գծերը: Համալսարանն ավարտելուց հետո նա աշխատել է տրանսպորտի էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտում՝ միաժամանակ դասավանդելով Մոսկվայի պետական համալսարանում: 1940-ին նա պաշտպանում է դոկտորական ատենախոսություն և ստանում պրոֆեսորի կոչում: 1941-ից նա եղել է երկաթուղային տրանսպորտի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի տեղակալ, իսկ 1945-ից՝ նրա տնօրենը: 1943-ին Խաչատուրովը ընտրվում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, 1966-ին՝ ակադեմիկոս, իսկ 1967-71-ին եղել է տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարը:

1970-ական թվականներին նա եղել է Ա.Կոսիգինի կառավարության առաջատար փորձագետներից մեկը, մասնակցել է տնտեսական ռեֆորմների նախապատրաստմանը

և իրականացմանը, կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման մեխանիզմների մշակմանը:

Խաչատուրովի հրապարակումներում կարելի է առանձնացնել նրա գիտական հետաքրքրություններն արտահայտող երեք հատվածներ՝ տրանսպորտի էկոնոմիկա (առաջին հերթին երկաթուղային), կապիտալ ներդրումների արդյունավետություն, բնօգտագործման տնտեսական հիմնահարցեր:

Իր առաջին խոշոր աշխատությունը՝ «Размещение транспорта в капиталистических странах и в СССР» նա թողարկում է 1939-ին, որը մեկ տարի հետո պաշտպանում է որպես դոկտորական ատենախոսություն: 1946-ին լույս է տեսնում «Основы экономики железнодорожного транспорта» մենագրությունը: Բացի ընդհանուր բնույթի հարցերից նրանում ցույց է տրվում փոխադրումների ինքնարժեքի հաշվարկման մեթոդները, մշակվել են տրանսպորտի պլանավորման բեռնափոխադրումների զարգացման և պլանավորման խնդիրները: Դա, ըստ էության պատմատնտեսագիտական բնույթի աշխատություն է, որում հետազոտվում է կապիտալիստական երկրների երկաթուղային տրանսպորտի զարգացման առանձնահատկություններն իր երեք տեսակներով՝ ամերիկյան, եվրոպական և գաղութային, որոնք իրարից տարբերվում են գնացքների քաշով և երթևեկության խտության աստիճանով: Հեղինակը տվել է մինչհեղափոխական Ռուսաստանի տրանսպորտային ցանցի տեղաբաշխման տնտեսական ու քաղաքական գործոնների վերլուծությունները: Այնուհետև հաջորդաբար լույս են տեսնում նրա «Пути развития транспорта СССР» (1941), «Транспорт-могучая сила в Отечественной войне» (1942), «Железнодорожный транспорт в Великой Отечественной войне» (1943), «О восстановлении и некоторых перспективах развития

транспорта» (1943), «Важнейшее средство связи между тылом и фронтом» (1943) և այլ աշխատություններ, որոնցում հետազոտվում են պատերազմական շրջանում տրանսպորտի աշխատանքի բարելավման, ՍՍՀՄ արևմտյան մարզերի երկաթուղային գծերի վերականգնման հերթականության, տրանսպորտի տարբեր տեսակների աշխատանքների կոորդինացման, տրանսպորտի կապիտալ վերանորոգման և հետագա զարգացման հարցերը: Բացի ընդհանուր բնույթի հարցերից, նրանում ցույց է տրվում փոխադրումների ինքնարժեքի հաշվարկման մեթոդները, մշակվել են տրանսպորտի պլանավորման, բեռնափոխադրումների զարգացման և պլանավորման հիմնախնդիրները: Այդ ցիկլը ավարտում է «Экономика транспорта» աշխատությունը: Լայն են նրանում քննարկվող հարցերի շրջանակները: Հիմնական ուշադրության առարկան տրանսպորտի համալիր զարգացման պլանավորման մեթոդոլոգիական հիմնախնդիրներն են: Մշակվել են տրանսպորտի տեխնիկական վերազինման և նրա շահագործման տնտեսական արդյունավետության միջոցառումների, աշխատանքի էկոնոմիկայի, աշխատավարձի, տարիֆների, ֆինանսների և տնտհաշվարկի կազմակերպման համեմատական հաշվարկների մեթոդները և այլն: Նրանում արժեքային և բնաիրային ցուցանիշների համադրման հիման վրա առաջարկվում է տրանսպորտային տարբեր ձևերի տնտեսական արդյունավետության որոշման մեթոդիկա:

Կապիտալ ներդրումների արդյունավետության հիմնահարցերը Խաչատուրովին սկսում են հետաքրքրել 1960-ական թվականներին:

Երկար տարիներ նա գլխավորել է ՍՍՀՄ ԳԱ «Հիմնական ֆոնդերի, կապիտալ ներդրումների և նոր տեխնիկայի արդյունավետություն» հիմնահարցի գծով գիտական խորհուրդը: Ժամանակի ընթացքում նա դառնում է կապիտալ

ներդրումների հետազոտության նոր դպրոցի ստեղծողը: Այդ խորհրդի կողմից ստեղծված «Կապիտալ ներդրումների և նոր տեխնիկայի արդյունավետության որոշման տիպային մեթոդիկան» ունեցել է չորս հրատարակություն: Այն էական նշանակություն է ունեցել պետպլանի, նախարարությունների և գերատեսչությունների գործունեության, ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների աշխատանքների վրա:

1970-ական թվականներին երկրի համար հրատապ նշանակություն էին ստացել բնօգտագործման հարցերը, որոնք պահանջում էին լուրջ գիտական ինտուիցիա և կանխատեսումներ: 1973-ին արտադրողական ուժերի և բնական ռեսուրսների ուսումնասիրությունն իրականացնող հանձնաժողովի կազմակերպած գիտաժողովին Խաչատուրովը հանդես է գալիս «Բնական ռեսուրսները և ժողովրդական տնտեսության պլանավորումը» զեկուցումով: Այդ հիմնահարցի վերաբերյալ նրա մտահղացումները իրացվում են մի շարք մենագրություններում. 1980-ին տնտեսագիտության ինստիտուտը հրապարակում է «Շրջակա միջավայրի պահպանությունը և նրա սոցիալ-տնտեսական արդյունավետությունը» կոլեկտիվ աշխատանքը, երկու տարի անց Մոսկվայի պետական համալսարանը տպագրում է «Экологические проблемы рационального природопользования и охраны окружающей среды» (կոլեկտիվ) մենագրությունը, իսկ 1989-ին հետմահու՝ «Инвестиционная политика природопользования» աշխատությունը: Նրա կողմից առաջադրված հարցերը ոչ միայն նորարարական էին, այլև «...մեթոդոլոգիական բանալի են հանդիսանում արդի Ռուսաստանի տնտեսական անվտանգության հիմնահարցերի մշակման և պրակտիկ լուծումների համար»:

Խաչատուրովի գործունեության անբաժան մասն էր կազմում աշխատանքը ուսանողների, ասպիրանտների հետ: Նա դասավանդել է հեղինակավոր տարբեր բարձրագույն հաստատություններում: Սակայն ի սկզբանե կապված էր Մոսկվայի պետական համալսարանի հետ, ղեկավարել է տնտեսական կանխատեսումների լաբորատորիան (1976-79թթ.), իսկ հետո կազմակերպել և ղեկավարել բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնը (1978-89թթ.):

Խաչատուրովի գործունեության մեջ առանձնացվում են երկու պահեր: Շուրջ երեսուն տարի նա կապված է եղել «Вопросы экономики» ամսագրի աշխատանքի հետ՝ սկզբում որպես խմբագրական խորհրդի անդամ, իսկ հետո քսաներկու տարի որպես գլխավոր խմբագիր: Այդ տարիներին ամսագիրն իր սկզբունքներով շատ հարցերում պայմանավորեց երկրում տնտեսական մտածողության վիճակն ու կուլտուրան:

1980-ական թվականների սկզբում բարձրացվեց երկրում տնտեսագետների հասարակական կազմակերպության վերածննդի հարցը, որը պիտի շարունակեր 1765թ. Եկատերինա Երկրորդ թագուհու ստեղծած Ազատ տնտեսական ընկերության ավանդները: 1982-ին Մոսկվայի պետական համալսարանում տեղի է ունենում տնտեսագիտական գիտական ընկերության հիմնադիր համագումարը, որի առաջին նախագահը դարձավ ակադեմիկոս Տ.Խաչատուրովը: Եվ այսօր Ռուսաստանի Ազատ տնտեսական ընկերության շենքում, որի նախկին անվանումը վերականգնվել է 1992-ին, նրա բոլոր նախագահների կողքին, սկսած առաջինից՝ Ա.Օլսուֆևից, կախված է Տիգրան Խաչատուրովի դիմանկարը:

Խաչատուրովը չորս անգամ պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով: Նա ընտրվել էր Հուն-

գարիայի և Լեհաստանի գիտությունների ակադեմիաների պատվավոր անդամ, Օ.Լանգեի անվան Վրոցլավի տնտեսագիտական ակադեմիայի և Վարշավայի համալսարանի պատվավոր դոկտոր:

«Հենց նրանք, երբեմն քամու տակ մինչև գետին կորացած, բայց այդպես էլ չջարդվածները, իրենց չկորցրած մարդիկ, մեզ՝ երիտասարդներիս համար եղել են այն հենարանը, որը մեզ օգնել է ոտքի կանգնելու: Որքան էլ հակասական է, հենց այդպիսի ուսուցիչները մեզ հետ ունեցած մտերմության ուժով նշանակալից մեծ չափով ազդել են մեզ վրա, քան նրանք, ովքեր գնացել են ճամբարներ կամ հեռացել արտասահման: Մտավորականության այդ շերտի դերը դեռևս պետք է գիտակցել» (Տ.Խաչատուրովի հիշատակին նվիրված Գ.Պոպովի հոդվածից):

Աշխ. Размещение транспорта в капиталистических странах и в СССР, М., 1939, Великая железнодорожная держава, М., 1944, Железнодорожный транспорт в Великой Отечественной войне, М., 1946, Основы экономики железнодорожного транспорта, ч.1, М., 1946, Экономика транспорта, М., 1959, Транспортная система СССР, М., 1960, Экономическая эффективность капитальных вложений, М., 1964, Социалистическое раширенное воспроизводства, М., 1971, Советская экономика на современном этапе, М., 1975, Вопросы экономического роста СССР, М., 1976 (соавтор), Эффективность капитальных вложений, М., 1979, Экономика природопользования, М., 1987, Инвестиционная политика природопользования, М., 1989.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐՈ ՀԱԿՈԲԻ

(1899-)

Ծնվել է Կարսի մարզի Կարմիր Վանք գյուղում: 1912-14-ին սովորել և ավարտել է Ալեքսանդրապոլի ուսումնարանը, 1923-26-ին՝ Անդրկովկասի կոմունիստական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Մինչև 1932-ը Լենինականում (այժմ Գյումրի) վարել է խորհրդային և կուսակցական պաշտոններ:

Կ.Խաչատրյանը 1932-33-ին եղել է Կոոպերտիվ- տնտեսագիտական ինստիտուտի տնօրեն (ռեկտոր): 1933-ին նշանակվել է Երևանի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր և տնտեսագիտական ֆակուլտետի դեկան: 1937-ից անցել է այլ աշխատանքի. 1937-41-ին՝ ՀԽՍՀ գլխավոր դատախազի օգնական, 1941-43-ին՝ զինվորական դատախազ, 1943-49-ին՝ արդարադատության նախարարի տեղակալ, այնուհետև՝ փաստաբանների հանրապետական կոլեգիայի նախագահ: 1944-54-ին Կ.Խաչատրյանը համատեղությամբ աշխատել է ԵՊՀ հեռակա իրավաբանական ֆակուլտետում՝ որպես քաղաքատնտեսության դասախոս:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ ԵՐՎԱՆԴԻ

(1930)

Ծնվել է ՀՀ Շիրակի մարզի Լուսաղբյուր գյուղում: 1952-ին ավարտել է Երևանի պետական համալսարանը:

1970-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան, 1978-ին՝ պրոֆեսորի կոչում:

1966-87-ին եղել է ԽՍՀՄ պետպլանին առընթեր պլանավորման և նորմատիվների ԳՀԻ հայկական մասնաճյուղի տնօրեն, 1988-90-ին՝ Մոսկվայի կադրերի վերապատրաստման ինստիտուտի ամբիոնի վարիչ, 1996-2002-ին՝ Մոսկվայի սպառողական կոոպերացիայի համալսարանի երևանյան մասնաճյուղի, իսկ 2003-ից՝ Երևանի փոքր բիզնեսի և միջազգային հաշվապահության ակադեմիայի ռեկտոր:

Աշխատանքները վերաբերում են տնտեսության նորմատիվային կառավարման և ծախսերի արդյունավետության գնահատման խնդիրներին:

Նոր տեխնիկայի տնտեսական արդյունավետության հարցերը Խաչատրյանին հետաքրքրել են 1960-ական թվականներից սկսած: Նրա «Экономическая эффективность новой техники» աշխատությունը հավակնում է ոչ թե նոր տեխնիկայի ներդրման տնտեսական արդյունավետության

տեսական, այլ ավելի շուտ հանրապետության էլեկտրա-տեխնիկական արդյունաբերության և սարքաշինության ձեռնարկություններում առկա թերությունների վերացման միջոցառումների մշակման նպատակին: Ժամանակի տնտե-սագիտական միտքը, որպես արդյունաբերական արտա-դրության տնտեսական արդյունավետության գնահատու-թյան ընդհանուր ցուցանիշ, համարում էր կամ շահութա-բերությունը, կամ ֆոնդահատույցը, կամ էլ աշխատանքի արտադրողականության և ինքնարժեքի ցուցանիշը: Մինչ-դեռ Հ.Խաչատրյանը գտնում է, որ ծախսերի տնտեսական արդյունավետության ընդհանուր գնահատականի համար անհրաժեշտ է ունենալ համալիր ցուցանիշ, որի միջոցով տնտեսական արդյունավետության բոլոր «մասնակի» ցուցանիշները կագրեգացվեն մի միասնական ընդհանրա-կան ցուցանիշի մեջ: Այդպիսին նրա «Совершенствование планирования и оценки эффективности затрат» աշ-խատության մեջ համարվում է «կատարված ծախսերի տնտեսական էֆեկտը» կամ «տնտեսական էֆեկտը»: Նրանում հիմնական ֆոնդերի և նոր տեխնիկայի փաս-տացի արդյունավետության հարցերը վերլուծվում են հանրապետության մեքենաշինության ճյուղի օրինակով, դիտարկվում գիտատեխնիկական առաջընթացի տնտե-սական արդյունավետության մեթոդոլոգիական և մեթո-դական տեսանկյունները: Նա նշված հարցերին անդրա-դառնում է նաև այլ աշխատություններում, իսկ «Норма-тивное управление экономикой» հետազոտության մեջ տնտեսության նորմատիվային հիմնահարցի վերաբերյալ մշակվել է ժողովրդական տնտեսության նոր գիտատեխ-նիկական բազայի պլանավորմանն ու կառավարմանն անցնելու հնարավոր տարբերակներից մեկը, որպես որոշակի փորձ՝ արված առաջարկություններն օգտագոր-ծելու արտադրության պլանավորման մեթոդոլոգիական և

կազմակերպչական ձևերի հիմնահարցերի լուծման, ձեռնարկությունների, ժողովրդական տնտեսության ճյուղերի աշխատանքի չափանիշների ու գնահատության մեթոդների որոշման համար: Նախասիրություն ունենալով տնտեսության կառավարման մեթոդների հիմնահարցերը՝ Խաչատրյանը փորձում է ցույց տալ, որ մարքեթինգը նույնպես ենթակա է նորմատիվային կառավարման («Маркетинг. В странах с переходной экономикой»):

Հ.Խաչատրյանի «Ֆինանսական և կառավարչական հաշվապահական հաշվառման ուսումնամեթոդական և կիրառական ձեռնարկությունների ժողովածու» երկհատոր աշխատությունը որոշակի փորձ է հաղթահարելու այն խզվածությունը, որ առկա է ուսումնամեթոդական և գործնական կիրառական ձեռնարկների միջև, դրանք դիտարկելով նույն հարթության մեջ:

Աշխ. Экономическая эффективность новой техники, Е., 1964 (Ս.Մինասյանի համահեղինակությամբ), Совершенствование планирования и оценки эффективности затрат, Ер., 1974, Проблемы управления научно-техническим прогрессом в промышленности, Ер., 1976 (авторский коллектив), Արդյունավետություն, կառավարում, որակ, Եր., 1977, Нормативное управление экономики, Ер., 1980, Маркетинг в странах с переходной экономикой, Ер., 1992, Ֆինանսական և կառավարչական հաշվապահական հաշվառման ուսումնամեթոդական և կիրառական ձեռնարկների ժողովածու, հ. 1, 2, Եր., 2007, Տնտեսագիտություն. անգլերեն հայերեն, հայերեն անգլերեն տերմինների բացատրական բառարան, Եր., 2011 (համահեղինակ), Ֆինանսական հաշվետվություններում միջազգային ստանդարտների կիրառման խորհրդատվություն, Եր., 2013:

ԽԼՂԱԹՅԱՆ ՎԱՐԱՋԴԱՏ ԵՐԵՄԻ

(1930-2002)

Ծնվել է ՀՀ Ախուրյանի շրջանի (Շիրակի մարզ) Բենիամին գյուղում: 1934-ին ընտանիքով տեղափոխվել է Երևան: 1949-ին ավարտել է Երևանի թիվ 41 միջնակարգ դպրոցը: 1949-54-ին սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը:

1954-ին ընդունվել է ասպիրանտուրա: Ստացել է Մ.Նալբանդյանի անվան կրթաթոշակ: 1958-ին «Կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետությունը և բանկային վերահսկողության մի քանի հարցեր» թեմայով ատենախոսության համար շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի, իսկ 1970-ին՝ «Ձեռնարկության արտադրության շահութաբերությունը» հետազոտության համար դոկտորի գիտական աստիճան: 1962-ին շնորհվել է դոցենտի, իսկ 1973-ին՝ պրոֆեսորի կոչում:

Խլղաթյանը սկսել է դասախոսել դեռևս ասպիրանտական տարիներին: Նրա հետագա գործունեության հետագիծը եղել է. 1961-75-ին՝ ֆինանսներ և վարկ ամբիոնի վարիչ, 1975-80-ին՝ նորաստեղծ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի գիտական աշխատանքների

գծով պրոռեկտոր, 1980-91-ին՝ ֆինանսահաշվային ֆակուլ-տետի դեկան, 1991-ից՝ ընդհանուր ֆինանսներ և վարկ ամբիոնի պրոֆեսոր:

Նա հանրապետության առաջին տնտեսագետներից մեկն էր, որ կարևորել է տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների օգտագործումը: «Արտադրության շահութաբերությունը և մաթեմատիկական մեթոդները» մենագրության մեջ մաթեմատիկական մեթոդների ու էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի օգտագործումը համարվում է շահութաբերության հաշվարկման ու պլանավորման արդյունավետությունը բարձրացնող գործոն: Կատարել է մի շարք պրակտիկ առաջարկություններ շահույթ ու շահութաբերություն կատեգորիաների պլանավորման ու հաշվարկման հետագա կատարելագործման ուղղությամբ, ցույց են տրվել դրանց քանակական ու որակական կողմերը՝ առանձին ուշադրություն դարձնելով արտադրության շահութաբերության ցուցանիշների մաթեմատիկական մոդելավորմանը, հաղթահարելով տնտեսագիտական ու մաթեմատիկական բնույթի մի շարք դժվարություններ: Հարցերն իրենց հետագա շարունակությունն են ստանում նրա «Ձեռնարկության արտադրության շահութաբերությունը և օպտիմալ պլանավորումը» աշխատության մեջ: Արդյունաբերական ձեռնարկության օպտիմալ պլանավորման հարցը ժամանակի տնտեսագիտական գրականության մեջ թույլ լուսաբանված հարցերից էր: Եվ դա այն պատճառով, որ առաջնային տեղ էր հատկացվում ժողովրդական տնտեսության օպտիմալ պլանավորմանը: Առանձին հեղինակներ օպտիմալ պլանավորման հնարավորությունների օգտագործման առումով վճռական դերը հատկացնում էին ձեռնարկությանը:

Նա զարգացնում է այն տեսակետը, որ առանց ձեռնարկության օպտիմալ պլանավորման ամբողջ ժողովրդա-

կան տնտեսությունը չի կարելի օպտիմալ պլանավորել և ընդհակառակը: Այսինքն, դրանք հարկ է մշակել զուգահեռաբար: Սակայն նրա քննության առարկան արտադրության շահութաբերության մոդելավորման հարցերն են, որոնք իրենց վերլուծական իրացումները ստացան այլ աշխատություններում:

Նա ավելի քան հարյուր գիտական աշխատանքների հեղինակ է: Հրատարակել է մի շարք ուսումնական ձեռնարկներ և դասախոսությունների տեքստեր:

Իսկ «ՍՍՀՄ ֆինանսավարկային սիստեմը» գիրքը թույլատրված էր որպես ուսումնական ձեռնարկ բուհերի տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար:

Վ.Խլղաթյանը 2001-ին պարգևատրվել է Անանիա Շիրակացու անվան մեդալով:

Աշխ. Արտադրության շահութաբերությունը և մաթեմատիկական մեթոդները, Եր., 1968, Ձեռնարկության արտադրության շահութաբերությունը և օպտիմալ պլանավորումը, Եր., 1970, Արտադրության շահութաբերությունը, Եր., 1974, ՍՍՀՄ ֆինանսավարկային սիստեմը (ուսումնական ձեռնարկ), Եր., 1983, Բաժնետիրական ընկերությունների հաշվեկշիռը և շահույթի հաշվարկման նոր կարգը (ուսումնական ձեռնարկ), Եր., 2003:

ԽՈՋԱԲԵԿՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԵՂԻՇԻ

(1929-2012)

Ծնվել է Զախրլու (այժմ՝ գ. Խաչաղբյուր՝ ՀՀ Վարդենիսի շրջանում): Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, իսկ 1946-ին ավարտել է Վարդենիսի միջնակարգ դպրոցը: 1946-49-ին աշխատել է Խաչաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցում: 1949-ին ընդունվել և 1954-ին գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը և որից հետո մինչև 1960թ. աշխատել է «Հայպետհրատում»: 1960-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում: 1960-ին ընտրվել է ավագ գիտաշխատող, 1963-ին նշանակվել է ինստիտուտի գիտնական քարտուղար, 1967-ից պարբերաբար ընտրվել է ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների բաժնի վարիչ, 1983-ից՝ ինստիտուտի փոխտնօրեն, 1999-2006թթ.՝ տնօրեն, 2006-ից՝ տնօրենի խորհրդատու: 1963-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 1975-ին՝ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, պրոֆեսոր է 1977-ից: 1982-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1994-ին՝ ակադեմիկոս:

Խոջաբեկյանի առաջին աշխատությունները վերաբերում են ճյուղային տնտեսագիտությանը: «Ներարտադրական ռեզերվները մեքենաշինության մեջ Հայկական ՍՍՌ

մեքենաշինական ձեռնարկությունների օրինակով» աշխատանքում բացահայտվում է արտադրական ռեզերվների էությունը, տրվում են ներարտադրական ռեզերվների դասակարգումը, դրանց տարբեր տեսակների միջև եղած կապն ու փոխհարաբերությունը, աշխատանքի արտադրողականության բարձրացման ռեզերվները:

Նրա գիտական հետաքրքրությունների հետագա ոլորտները վերաբերում են ժողովրդագրության և զբաղվածության քաղաքականության մշակման, բնակչության և աշխատանքային ռեսուրսների կառավարման փոփոխությունների և կանխատեսման, ՀՀ սոցիալ-տնտեսական հեռանկարային հիմնախնդիրներին:

1968-ին Մոսկվայում ռուսաց լեզվով լույս է տեսնում «Հայկական ԽՍՀ բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966-1985թթ.» եռահատոր կոլեկտիվ աշխատությունը նրա մասնակցությամբ ու ղեկավարությամբ: Դրանում կանխատեսվում են հանրապետության աշխատանքային ռեսուրսների զարգացումը երկարատև հեռանկարում, հիմնավորվում են աշխատանքային ռեսուրսների կազմավորման ու բաշխման ուղիները: Այդ հարցերն իրենց խորացումներն են ստանում նրա «Հայկական ԽՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների արտադրության արդի պրոբլեմները» և այլ աշխատություններում: Հայաստանում քաղաքակենտրոնացման մինչհեղափոխական միտումների, ինդուստրացման սոցիալ-տնտեսական հետևանքների, ՀՍՍՀ քաղաքակենտրոնացման, էթնոժողովրդական գործընթացների և բնակչության շարժի խնդիրներ են դիտարկվում «Демографические аспекты урбанизации в Армянской ССР» գրքում (համահեղինակությամբ): Իսկ «Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում» մենագրության մեջ վերլուծվում են աշխատանքի շուկայի և զբաղվածության պետական կարգավորման հիմնախնդիրները:

XIX-XX դարերում Հայաստանի բնակչության աճի և տեղաշարժերի օրինաչափությունների պատմությունը ամփոփում է նրա «Демография и проблемы занятости в Армении с начала XIX века до середины XXI века» (2006) և ըստ էության ներկայացնում է նախորդ հետազոտությունների խտացումը: Բնակչության շարժը լայն հասկացողություն է: Դրանք որոշակի հոսքեր են դեպի երկիր նրանից դուրս, երկրի ներսում տարբեր շրջանների, քաղաքների ու գյուղերի, տնտեսության տարբեր ոլորտների միջև և այլն: Աշխատությունը պատկերում է XIX դարի այդ շարժը սկսած քարավանների սկզբնաերթից դեպի Արևելյան Հայաստան (Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից), բնակչության աճը և տեղաբաշխումը, զբաղվածության ոլորտները, կապիտալիզմի զարգացման հետ կապված տարածքային տեղաշարժերը և այլն:

Ժողովրդագրության հիմնական և առանցքային հարցը բնակչության վերարտադրության նրա թվաքանակի, կազմի տեղաբաշխման փոփոխության խնդիրն է, որը դիտարկվում է մինչև երկրորդ աշխարհամարտը և Մեծ հայրենականից հետո: Վ.Խոջաբեկյանը այս վերջին շրջանի համար սահմանագծում է հիմնականում վեց փուլեր.

- հետպատերազմյան տասնամյակը, երբ բնակչության բարձր աճն ուղեկցվում էր արտասահմանից կատարվող ներգաղթով,
- հիսունականների կեսերից մինչև 60-ականի առաջին տարիները, երբ բնորոշը բնակչության բնական բարձր աճն էր,
- 60-ականի կեսերից մինչև 70-ականի կեսերը, երբ բնակչության բնական աճը տեղի էր ունենում ծննդի և մահացության նվազման պայմաններում,
- 70-ականի երկրորդ կեսից մինչև 80-ականների վերջերը, որին բնորոշ է դառնում բարձր ծնունդը, որն ուղեկցվում էր մահացության նվազման հետ,
- հինգերորդ փուլն սկսվում է երկրաշարժով և ընդգրկում է 1990-ականի առաջին երկու տարիները, երբ

ծնունդը երկրաշարժի ընթացքում կարճ տևողությամբ անկում ապրեց, հետո, ընդհակառակը աճեց: Սակայն աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական կատարված արմատական փոփոխությունների արդյունքում սկիզբ առած արտագաղթն ու բռնագաղթը հանգեցնում են բնակչության վերարտադրության նվազմանը բնորոշ դառնալով ծննդի անկումը և մահացության էվոլյուցիոն աճը,

- 1990-ական թվականներից սկսած նորագույն շրջանը տնտեսական կյանքի աննախադեպ փոխակերպությունների և ժողովրդագրական նոր պրոցեսների և միտումների փուլը:

Հայտնի է այն կապը, որ առկա է ժողովրդագրության և սոցիոլոգիայի, պատմության, ազգագրության, տնտեսագիտության տեսության և այլ գիտությունների հետ: Սակայն, անհնար է այն պատկերացնել առանց վիճակագրական չափումների: Հենց վերջինս էլ հնարավորություն է տալիս երևույթները ենթարկելու համապատասխան հիմնավորումների ու եզրակացությունների:

Ինչպես ամեն մի սոցիալական հեղաշրջում, այնպես էլ անցումը շուկայական տնտեսաձևին, ուղեկցվեց բազմաթիվ հակասություններով: Հարկ չկա անդրադառնալու բոլոր այն արծարծումներին, որոնք առկա են Վ.Խոջաբեկյանի գրքում: Իբրև օրինակ միայն մեկ «Զբաղվածության քաղաքականությունը գաղթը կարգավորող գործոն է» գլխի հարցերի բազմությունը. զբաղվածության քաղաքականության դերը, աշխատանքային ռեսուրսների թերօգտագործումը և գործազրկությունը, աշխատանքի շուկայի իրավիճակը, աշխատանքի շուկայի պետական կարգավորման անհրաժեշտությունը, արդյունաբերության վերակողմնորոշումը, գյուղատնտեսության և գյուղական բնակավայրերի վերափոխումների հեռանկարները, նյութական արտադրության այլ ճյուղերի զարգացման անհրաժեշտությունը, ծառայությունների ոլորտի որոշ ճյուղերի կարգավորումը գիտակրթական համակարգի դերը գաղթի գործընթացներում:

Եվ այսպես, աշխատության ամբողջ շարադրանքի ընթացքում կոնկրետ առաջադրույթի շրջանակներում կատարվում են համապատասխան վիճակագրական նյութի վերլուծություններ, երևույթների տարբեր կապակցությունների մեջ փորձում որոշարկել ինչ ունենք և ինչ կարող էինք ունենալ սահմանը:

Գիտական գործունեությանը զուգահեռ նա դասավանդել է հանրապետության տարբեր բուհերում:

2003-ին պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Աշխ. Ներարտադրական ռեզերվները մեքենաշինության մեջ, Եր., 1962, Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Եր., 1976, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Եր., 1979, Bevölkerungswachstum und Arbeitskräfteressourcen in der Armenischen SSR, Akademie-Verlag-Berlin, 1983 Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Ер., 1990 (համահեղինակությամբ), Արցախը փորձության ժամին, Եր., 1991, Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Եր., 1998, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը, XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Եր., 2001, Демографические проблемы занятости в Армении с начала XIX века до середины XXI века, Ер., 2006.

ԽՈՐԱՍԱՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԱՐՄԵՆԱԿԻ

(1908-1981)

Ծնվել է Երևանում: Սովորել է քաղաքային գիմնազիայում: 1927-ին ինդուստրիալ տեխնիկումն ավարտելուց հետո 1929-ին ընդունվել է Հայաստանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետը և ավարտել այդ հիմքի վրա ստեղծված Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ստանալով ինժեներ-շինարարի մասնագիտություն: Նա երկար տարիներ աշխատել է ՀԽՍՀ պետպլանի կապիտալ շինարարության, ՀԽՍՀ տեքստիլ արդյունաբերության, մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության նախարարությունների կապիտալ շինարարության բաժիններում, նախ որպես ինժեներ-շինարար, ապա՝ սեկտորի և բաժնի վարիչ: Նա 1962-67-ին աշխատել է որպես ՀԽՍՀ պետշինի շինանյութերի և կոնստրուկցիաների ԳՀԻ, 1967-75-ին՝ ՀԽՍՀ պետպլանին կից էկոնոմիկայի և պլանավորման ԳՀԻ սեկտորի վարիչ, 1975-ից մինչև իր կյանքի վերջը՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում զբաղեցնելով ավագ գիտաշխատողի պաշտոնը: 1964-ին Մոսկվայի ճարտարապետական ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական, իսկ 1973-ին՝ ԽՍՀՄ պետպլանին կից գործող խորհուրդը «Քաղաքների հիմնահարցերը ՀՍՍՀ արտադրողական ուժերի զարգացման և տեղաբաշխման մեջ» հետազոտության համար նրան

շնորհում է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

Աշխատանքները վերաբերում են շինարարության տնտեսագիտության, քաղաքների զարգացման, ընդլայնված վերարտադրության հարցերին: Նա 1960-ական թվականներին հիմնավորում էր հանրապետության շինարարության ինդուստրացման համար համապատասխան բազայի ստեղծման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա լայն չափով օգտագործել իրենց ֆիզիկա-մեխանիկական և ջերմամեկուսիչ հատկություններով ավելի էժան ու թեթև նյութերի օգտագործումը՝ դրանով իսկ իջեցնելով բնակշինարարության արժեքը («Экономика крупнопанельного домостроения в Армении»): Մի այլ աշխատության մեջ («Экономика и резервы снижения стоимости строительства из природных камней») բնութագրվում է բնակարանային շինարարության վիճակը և նրա նյութատեխնիկական բազայի զարգացման ընդհանուր ուղղությունները ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ ըստ շինարարության կենտրոնացման գոտիների՝ հաշվի առած վերջիններիս շինարարական պայմանների հիմնական հատկանիշները: Նրանում լուսաբանվում են ՀԽՍՀ բնական քարանյութերի և թեթև բետոնների ֆիզիկա-մեխանիկական և տեխնիկա-տնտեսական բնութագրերը, ինչպես նաև այդ նյութերի արտադրության տնտեսագիտության հարցերը, կատարվում է տուֆից պատրաստած և թեթև բետոնե կոնստրուկցիաների տնտեսական էֆեկտիվության համեմատական վերլուծություն: Գ.Խորասանյանի գիտական հետաքրքրություններում երկար տարիներ կարևոր տեղ են զբաղեցրել հանրապետության քաղաքների զարգացման հիմնախնդիրները, որոնք արտահայտվել են «Некоторые вопросы экономического развития городов Советской Армении», «Научно-технический прогресс и развитие городов» և այլ աշխատություններում: Դրանցում ցույց են տրվում հանրապետության քաղաքների ձևավորման և զարգացման

առանձնահատկությունները արտադրողական ուժերի զարգացման և տեղաբաշխման հիմնախնդիրների հետ: Հետազոտությունները՝ կապված քաղաքների զարգացման օպտիմալության գործոնների բացահայտման հետ, ցույց են տվել, որ ոչ միայն քաղաքների կամ ձեռնարկությունների չափերն են որոշում արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման օպտիմալությունը կամ աշխատանքի արդյունավետությունը, այլև վերջինս որոշվում է արդյունաբերության կառուցվածքով, մասնագիտացման մակարդակով, գիտատեխնիկական առաջընթացի ձեռքբերումների օգտագործման աստիճանով, քաղաքի կամ նրա տարածաշրջանի ամբողջ տնտեսության համալիր զարգացումով: Այս առումներով նրա աշխատություններում ցույց են տրվում գիտատեխնիկական առաջընթացի դերը հանրապետության քաղաքների համալիր զարգացման, ուրբանիզացիայի գործընթացների և քաղաքային ագլոմերացիայի ձևավորումը, քաղաքների համակարգի զարգացման տարածքային համամասնությունների կատարելագործումը, ինչպես նաև որոշ քաղաքների աճի կարգավորման հարցերը:

1961-ին նրան շնորհվել է «Հայկական ՍՍՀ վաստակավոր ռացիոնալիզատորի» կոչում:

Աշխ. Տանիքային աշխատանքներ, Եր., 1961, Экономика крупнопанельного домостроения в Армении, Ер., 1961, Կոմպլեքսային մեքենայացումը շինարարության մեջ, Եր., 1963, Экономика и резервы снижения стоимости строительства из природных камней, М., 1970 (в соавторстве с А.Хорасаняном), Некоторые вопросы экономического развития городов Советской Армении, Ер., 1976, Вопросы расширенного воспроизводства в свете решений XXV съезда КПСС, Ер., 1978 (в соавторстве с В.И.Газанчияном), Научно-технический прогресс и развитие городов (на примере Армянской ССР), Ер., 1984 (в соавторстве с А.Г.Хорасаняном).

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ՆԻԿՈԼԱՅԻ

(1911-1996)

Ծնվել է Ղուրդուղուլի գյուղում (այժմ՝ գ.Արմավիր, ՀՀ Արմավիրի շրջանում): Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1930-34-ին, դասավանդել է Ախալքալաքի շրջանի գյուղական դպրոցում: 1939-ին ավարտել է Թբիլիսիի երկաթուղային տրանսպորտի ինժեներների ինստիտուտը: Աշխատել է Երևանի երկաթուղային կայարանում՝ որպես գլխավոր ինժեներ: 1946-ին ընդունվել է ՀՀ ԳԱ ասպիրանտուրա: 1950-ին «ՀՍՍՀ երկաթուղային տրանսպորտի զարգացման հիմնական ուղիները» թեմայով պաշտպանել է թեկնածուական, իսկ 1970-ին՝ «Անդրկովկասյան տնտեսական ռեգիոնի տրանսպորտի զարգացման հիմնական ուղղությունները» թեմայով դոկտորական ատենախոսություն: 1950թ. աշխատել է ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում որպես կրտսեր, իսկ այնուհետև ավագ գիտական աշխատող: 1963-ին տեղափոխվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ժողովրդական տնտեսության պլանավորման ամբիոն: 1972-ին ստացել է պրոֆեսորի կոչում: 1975-ից եղել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ճյուղային

էկոնոմիկայի ամբիոնի վարիչ, 1979-ից՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

Խուրշուդյանի աշխատանքները գրեթե բացառապես վերաբերում են տրանսպորտի էկոնոմիկայի հարցերին: «Ավտոմոբիլային տրանսպորտի վիճակը և զարգացման հեռանկարները Հայկական ՍՍՌ-ում» աշխատության մեջ, հիմք ընդունելով ժողովրդական տնտեսության 1959-1965թթ. յոթնամյա պլանի նախատեսվող տնտեսական աճի ցուցանիշները, ավտոմոբիլային տրանսպորտի և ավտոճանապարհների գոյություն ունեցող վիճակը, ավտոտնտեսությունների տեխնիկատնտեսական շահագործման, տեխնիկատնտեսական ցուցանիշների փաստացի մակարդակը, փորձ է արվել լուսաբանել հանրապետության բեռնատար ավտոմոբիլային պարկի ռացիոնալ օգտագործման, ավտոտնտեսությունների մասշտաբների և ավտոմոբիլային երթևեկության առաջավոր համակարգերի ընտրության, ավտոտրանսպորտի հեռանկարային զարգացման հարցերը:

Արտադրության ճյուղերի և տրանսպորտի համամասնական զարգացման խնդիրները դառնում են քննության առարկա նրա «Проблемы развития транспорта Закавказского экономического района» աշխատությունում: Արդյունաբերության համակենտրոնացումը և մասնագիտացումը դիտվում է արդյունավետ արտադրության օպտիմալ ծավալների և տրանսպորտատնտեսական ռացիոնալ կապերի առկայության պայմաններում, որը տրանսպորտի բոլոր ձևերի հետագա զարգացումը դարձրել է անհրաժեշտություն: Խնդիրը հանգում է արդյունքների արտադրության և փոխադրումների նվազագույն ծախքերով հասնելու առավելագույն էֆեկտի: Նրանում դիտարկվում են արտադրության ու տրանսպորտի զարգացման ու տեղաբաշխման, տրանսպորտային-տնտեսա-

կան կապերի, ժողովրդական տնտեսության և տրանսպորտի աճի տեմպերի, տրանսպորտի տարբեր ձևերի միջև փոխադրումների արդյունավետ բաշխման, տրանսպորտի և ճանապարհային ցանցի, երկաթուղային տրանսպորտի զարգացման կապիտալ ներդրումների արդյունավետության հարցերը:

Խուրշուդյանը շուրջ 120 գիտական աշխատությունների, մի շարք ուսումնական գրականության հեղինակ է: Պարգևատրվել է մեդալներով, իսկ 1970-ին արժանացել է ՀՍՍՀ վաստակավոր տնտեսագետի կոչման:

Աշխ. Принципы распределения перевозок между железнодорожным и автомобильным транспортом в условиях Армянской ССР, Ер., 1957, Ավտոմոբիլային տրանսպորտի վիճակը և զարգացման հեռանկարները Հայկական ՍՍՌ-ում, Եր., 1961, Основные направления развития транспорта Закавказья, Ер., 1965, Проблемы развтия транспорта Закавказского района, Ер., 1972, Տրանսպորտի էկոնոմիկայի ընդհանուր դասընթաց (ուսումնական ձեռնարկ), Եր., 1977, Բեռնափոխադրումներ և տարիֆներ (ուսումնական ձեռնարկ), Եր., 1985:

ԾՊՆԵՑՅԱՆ ՀՐԱՉՅԱ ՍԵՐԳԵՅԻ

(1961)

Ծնվել է Երևանում: 1983-ին ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի մեքենայացման ֆակուլտետը, ստացել գյուղատնտեսության ինժեներ-մեխանիկի որակավորում: Ինստիտուտն ավարտելուց հետո ընդունվել է գյուղատնտեսության էկոնոմիկայի հայկական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրա, 1988-ին պաշտպանել է թեկնածուական թեզը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1987-1990-ին աշխատել է գյուղատնտեսության էկոնոմիկայի և կազմակերպման գիտահետազոտական ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Ծպնեցյանի հետագա աշխատանքային գործունեության ընթացքը. 1990-ից ՀՀ գյուղատնտեսության նախարարության գիտական ապահովման հանրապետական կենտրոնում որպես գիտահետազոտական փորձակոնստրուկտորական աշխատանքների կոորդինացիայի, պլանավորման և ֆինանսավորման բաժնի վարիչ, 1992-ից՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տնտեսագիտական գլխավոր վարչությունում որպես ծրագրավորման և գյուղի զարգացման վարչության պետ, 1995-ից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում որպես ագրարային քաղաքականության վարչության պետ, 1997-ից՝

ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարությունում որպես տարածքային քաղաքականության վարչության պետ, այնուհետև ՀՀ գյուղատնտեսության նախարարության ծրագրերի մշակման և կոորդինացման, ագրարային քաղաքականության և պարենային ապահովության, գյուղատնտեսության և գյուղի սոցիալական զարգացման ծրագրավորման վարչությունների պետ:

2006-ին «Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնական խնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով պաշտպանել է դոկտորական թեզը, ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Նրա աշխատանքները հիմնականում վերաբերում են ագրարային ոլորտում ձևավորված հարաբերությունների առանձնահատկությունների, ենթակառուցվածքների ձևավորման, գործունեության և զարգացման հիմնական ուղղությունների վերլուծությանը:

Ծպնեցյանի «Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրներն անցումային տնտեսության պայմաններում» մենագրության մեջ ամբողջական տեսքով հետազոտվում են անցումային տնտեսության պայմաններում ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրները, դրանց լուծման ուղղություններն ու ուղիները: Վերլուծելով հանրապետության ագրարային ոլորտի վերջին զարգացումները, նա միջազգային փորձի ուսումնասիրությամբ փորձում է հիմնավորել գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած խնդիրները՝ պայմանավորված ենթակառուցվածքների արդյունավետ գործունեությամբ: Այս իմաստով, նա առանձնացնում է արտադրատեխնիկական սպասարկումների ու մատակարարումների, մասնագիտացված ու մելիորատիվ սպասարկումների, գյուղատնտեսական արտադրանքի պահպանման ու փոխադրման, գիտական, կրթական, տեղե-

կատվական և խորհրդատվական ապահովման ենթակառուցվածքների գործունեության բարելավման ու զարգացման գերակայությունները: Ծպնեցյանը մեծ տեղ է հատկացնում ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների բնագավառում ծառացած խնդիրներին ու դրանց լուծման հնարավորություններին, որոնք բերում են ոլորտի տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Այս նպատակով նա առաջադրում է ագրարային ոլորտի արդյունավետ գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների մի մոդել, որի միջոցով քննության է ենթարկում ոլորտում իրականացվող ներդրումների արդյունավետության գնահատման մեթոդական հարցերը: Նա զբաղվել է նաև գյուղատնտեսության մեքենայացման (գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումներ) հարցերով, հանդես եկել հրապարակումներով՝ ուղղված հանրապետությունում տրանսպորտային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

Այլ հրատարակումներում անդրադարձ է կատարվել գյուղատնտեսության մեծածախ շուկաների ձևավորման, պարենային անվտանգության, հողային ռեսուրսների օգտագործման, գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման և այլ հարցերի:

Աշխ. Ագրարային ոլորտում ենթակառուցվածքների գործունեության վերլուծությունը և հիմնախնդիրները, Եր., 2005, Ագրարային ոլորտում արտադրական ենթակառուցվածքների կայուն գործունեության ապահովման գերակայությունները, Եր., 2005, Ագրարային ոլորտի ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրների լուծման հիմնական ուղիները, Եր., 2005, Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրներն անցումային տնտեսության պայմաններում, Եր., 2005, Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում (համահեղ.) Եր., 2016:

ԿԱԶՈՒՄՈՎ ՀՐԱՉՅԱ ԲԱԳՐԱՏԻ

(1928-1982)

Ծնվել է Իջևանում: 1950-ին ավարտել է Կիրովաբադի գյուղատնտեսական ինստիտուտը: Տնտեսագիտության դոկտորի աստիճան ստացել է 1966-ին, պրոֆեսորի կոչում՝ 1967-ին: 1976-82-ին եղել է ՀԽՍՀ պետպլանին առընթեր տնտեսագիտության և պլանավորման ԳՀԻ բաժնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են գյուղատնտեսության և արդյունաբերության արդյունավետության բարձրացման, գնագոյացման հարցերին:

«Пути подема экономики хлопкосеющих колхозов» գրքում անդրադարձ է կատարվում Ադրբեջանի բամբակացան տնտեսությունների արտադրության ճյուղային կառուցվածքի կատարելագործմանը, ոռոգվող հողամասերում հողի լրիվ օգտագործման և բերքատվության բարձրացման, ինչպես նաև արտադրական ֆոնդերի արտադրողական օգտագործման և ինքնարժեքի իջեցման միջոցով գյուղատնտեսական արդյունքների արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Կազումովը անդրադարձել է նաև արդյունաբերական արտադրանքի գնագոյացման հարցերին:

Աշխ. Пути подема экономики хлопкосеющих колхозов, Баку, 1969, Актуальные вопросы ценообразования на промышленную продукцию, Е., 1977 (համահեղինակ):

ԿԱԼԵՆՋՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՕՀԱՆԻ

(1954)

Ծնվել է Գագրայում (Աբխազիա): 1976-ին գերազանցությամբ ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Ընդունվել է նույն համալսարանի ասպիրանտուրան տնտեսության վերլուծության մաթեմատիկական մեթոդներ մասնագիտությամբ: 1980-ին ստացել է տնտեսական գիտությունների թեկնածուի աստիճան: 1980-90-ին աշխատել է ԽՍՀՄ ԳԱ կենտրոնական տնտեսա-մաթեմատիկական ինստիտուտում որպես կրտսեր և ապա ավագ գիտաշխատող: 1985-90-ին եղել է ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության բաժանմունքի ժողովրդական տնտեսության օպտիմալ պլանավորման և կառավարման համալիր հիմնախնդրի գիտական խորհրդի քարտուղարը, 1990-96-ին՝ ՌԴ կառավարությանն առընթեր ժողովրդական տնտեսության ակադեմիայի և ապա Ռուսաստանի Ֆեդերացիայի ծրագրի առաջատար գիտաշխատող, տնօրեն, 2000-ից՝ նույն ակադեմիայի կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի տնօրեն, միաժամանակ «Եվրոմենեջմենթ» ինստիտուտի նախագահ: 2002-ին ստացել է դոցենտի կոչում: 2003-ին

պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Аутсорсинг и делегирование полномочий в деятельности компании» թեմայով և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

Ս.Կալենջյանը Ռուսաստանում բիզնեսի և բիզնես կրթության զարգացման առաջատար մասնագետներից մեկն է: Նրա գիտական աշխատանքները լայն կիրառություն են գտել ռուսական միավորումներում: Ինչպես վկայում է նրա աշխատությունների ցանկը, հիմնախնդիրը վերաբերում է միավորումների լիազորությունների փոխանցմանն ու աուտսորսինգի տեսությանն ու պրակտիկային, որոնք իրականացնում են կառավարման վարչա-հրամայական մեթոդների տրանսֆորմացիա: Կալենջյանի խմբագրությամբ, ինչպես նաև Գ.Բյոմեի և Գ.Բորշի (ԳՖՀ) հրատարակած գրքերի շարքերը, նշանակալից ներդրում են հանդիսացել Ռուսաստանի ձեռնարկատերերի նոր սերնդի ձևավորման համար:

Ս.Կալենջյանի կատարած հետազոտությունների ու ներդրված աշխատանքների գիտական և պրակտիկ նյութը կայանում է հետևյալում.

- աուտսորսինգի համակարգային կիրառման և լիազորությունների փոխանցման հիման վրա մշակվել է ձեռնարկատիրական գործունեությունը վարելու կոնցեպցիա,
- լիազորությունների փոխանցման դուալիզմի սկզբունքի կիրառման միջոցով հիմնավորվել է միավորումների մրցունակության բարձրացման ռազմավարությունը՝ նպատակ ունենալով բիզնեսի աճի ներքին ու արտաքին աղբյուրների արդյունավետ օգտագործման մաքսիմալացումը,
- մշակվել է ռուսական միավորումների մենեջմենթի անհրաժեշտ տրանսֆորմացիայի մեթոդոլոգիական սկզբունքները մրցակցության ուժեղացման և համաշխարհային

տնտեսության գլոբալիզացիայի պրոցեսների զարգացման պայմաններում,

- մշակվել և իրացվել են ռուսական միավորումներում աուտսորսինգի և լիազորությունների փոխանցման կիրառության ու գործադրման մեթոդները,
- մշակվել են ուսուցողական խորհրդատվության դրույթներ, որն ապահովում է կառուցելու աուտսորսինգի և լիազորությունների փոխանցման մեթոդները արդյունաբերության ձեռնարկությունների և տնտեսության այլ ճյուղերի պրակտիկայում: Որպես կորպորատիվ ուսուցման առանցքային օղակի, այն իր իրացումներն է ստացել Ռուսաստանի բազմաթիվ ձեռնարկություններում:

Ս.Կալենջյանը մեծ ուշադրություն է դարձնում Ռուսաստանում ընտանեկան ձեռնարկատիրական ավանդների վերականգնման հարցերին, հատուկ հետազոտություններ կատարելով ինչպես մինչհեղափոխական, այնպես էլ ժամանակակից Ռուսաստանի վերաբերյալ:

Ս.Կալենջյանը մասնակցել է Հայաստանում մի շարք կոնֆերանսների, սեմինարների կազմակերպմանն ու ուսումնական ծրագրերի ներդրմանը: Եղել է Հայաստանի զարգացման տարբեր հանձնաժողովների անդամ: Իրականացնում է բարեգործական աշխատանքներ դպրոցական կրթության ոլորտում, մասնավորապես Աբխազիայում Խ.Աբովյանի և Օ.Ա.Կալենջյանի անվան դպրոցներում:

Ս.Կալենջյանը հանդիսանում է Փարիզի գործարար վարչարարության եվրոպական միջազգային մենեջմենթի ինստիտուտի և գործարար վարչարարության եվրոպական համալսարանի (Շվեյցարիա) պատվավոր դոկտոր:

2007-ին արժանացել է Ռուսաստանի Ֆեդերացիայի վաստակավոր տնտեսագետի պատվավոր կոչմանը:

Ц2Ի. Реструктуризация и рост кокурентоспособности на основе Евраменеджмента, М., 1999, Аутсорсинг: делеригование управления в стратегии развития компании, М., 2001, Теория и практика делегирования полномочий и ответственности в рамках компании, М., 2002 (соавтор Беме Г.), Межличностные коммуникации при делегировании полномочий и ответственности, М., 2002 (соавтор Беме Г.), Делегирование полномочий и ответственности: замещение, консультирование, контроль, М., 2002 (соавтор Беме Г.), Аутсорсинг и делегирование полномочий в деятельности компании, М., 2003, Делегирование полномочий и ответственности. система эффективного управления, М., 2007 (соавтор Беме Г.), Система эффективного управления: мотивация и развитие персонали, М., 2010, (соавтор Борш Г.), Система эффективного управления: потенциал успеха и самоменджмент, М., 2010 (соавтор Борш Г.), Система эффективного управления: организационная функция менеджментом М., 2012 (соавтор Борш Г.), Стратегический маркетинг, М., 2014, (соавтор Борш Г.).

ԿԱՐԱԳԵԴՈՎ ՌԱՅՄՈՆԴ ԳԱՐԵԳԻՆԻ

(1925-1987)

Ծնվել է Երևանում: 1952-ին ավարտել է Բաքվի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: Տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան ստացել է 1971-ին, պրոֆեսորի կոչում՝ 1973-ին: 1973-85-ին եղել է ԽՍՀՄ ԳԱ Սիբիրի բաժանմունքի արդյունաբերական արտադրության էկոնոմիկայի և կազմակերպման ինստիտուտի սեկտորի վարիչ, 1985-87-ին՝ ԽՍՀՄ առևտրի նախարարության առևտրի իրավիճակի և պահանջարկի ուսումնասիրության համամիութենական ԳՀԻ հայկական մասնաճյուղի (1993-ից՝ ՀՀ առևտրի նախարարության սպառողական շուկայի և մարքեթինգի ինստիտուտի) տնօրեն:

Աշխատանքները վերաբերում են քաղաքատնտեսությանը, ֆինանսներին, արտադրության կառավարման և տնտեսական մեխանիզմի կատարելագործման խնդիրներին:

Խորհրդային տնտեսագիտական միտքը երկար տարիներ առաջնորդվում էր այն կարգախոսով, թե իբր սոցիալիստական ապրանքային արտադրության կատեգորիաները «փոխել են իրենց բովանդակությունը, բայց պահել են ձևը», ինչը վնասաբեր հետևանքներ է ունեցել տնտե-

սական պրակտիկայում: Այդ պատճառով շատ կատեգորիաներ տեսական առումով մնում էին չբացահայտված: Խոսքը, հատկապես վերաբերում է շահույթի էությանն ու ֆունկցիաներին: Կարագեդովի «Սոցիալիստական ձեռնարկության շահույթի տնտեսական բովանդակությունը» աշխատությունը փորձ է «տեսականորեն» պարզաբանել շահույթը՝ որպես սոցիալիստական տնտեսության տնտեսական կատեգորիա: Նա շահույթը դիտարկում է ժողովրդատնտեսական և առանձին ձեռնարկության կտրվածքով: Ձեռնարկության շահույթը նա համարում է որպես նրա աշխատանքի ցուցանիշն ամփոփող առանձնահատուկ տնտհաշվարկային կատեգորիա և արտադրության տնտեսական խթանման ներգործուն լծակ: Նա իր տեսակետը կառուցում է այն առաջադրույթի վրա, ըստ որի «շահույթը հենց իր այդ ֆունկցիաներով է տարբերվում հավելյալ արդյունքի արժեքի մյուս ձևերից, և այդ ֆունկցիաներն են բացատրում շահույթի՝ որպես ինքնուրույն կատեգորիայի գոյության անհրաժեշտությունը»:

1960-ական թվականների վերջերին՝ կապված ԽՍՀՄ-ում իրականացվող տնտեսական ռեֆորմի հետ, աճել էր շահույթի ցուցանիշի դերը ձեռնարկությունների տնտեսական արդյունավետության գնահատման ժամանակ՝ տնտեսագիտական միտքը մղելով տնտեսական արդյունավետության և շահութաբերության կատեգորիաների հարաբերակցության տեսական նոր վերլուծությունների: Դա շատ տարողունակ հիմնահարց է, որի մի մասի՝ տնտեսական օպտիմումի և շահույթի ոչ մարքսիստական տեսությունների վերլուծությանն ու գնահատությանն է նվիրված Կարագեդովի «Рентабельность и экономический оптимум» (критический обзор немарксистской литературы) մենագրությունը: Նրանում հարցը քննարկվում է դասական տնտեսագիտություն, մարժինալիզմ, նեոդասական դպրոց

և նորագույն շրջան հաջորդափոխության հետագծով: Աշխատության մեջ հանգամանորեն վերլուծության են ենթարկվում խնդրի շառավիղները նշված ուղղություններում, ոչ միայն քննադատության նկատառումներով (ինչը բնորոշ էր այդ ժամանակի խորհրդային տնտեսական մտածողությանը), այլ նաև տնտեսագիտական վերլուծության կուտակված փորձից օգուտ քաղելու և նրանցում առաջադրված որոշակի գաղափարների քննական վերլուծության արդյունքում օգտագործելու «սոցիալիստական տնտեսության պլանային կառավարման հետագա կատարելագործման շահերի համար»:

Նշված հարցերն իրենց հետագա խորացումները ստանում են «Рентабельность и эффективность социалистического предприятия» և այլ աշխատություններում, որտեղ, շահույթը համարելով տնտեսական արդյունավետության ցուցանիշ, վերլուծությունը կառուցում է այն սկզբունքի վրա, որ գործնական արժեքի հավակնող տնտեսագիտական վերլուծությունը չի կարող անտեսել կոնկրետ տնտեսական իրավիճակների պայմանների և տեսական մոդելների նախադրյալների միջև էական հակասությունները, մասնավորապես այն հակասությունները, որոնք առկա են խորհրդային տնտեսության մեջ:

Ռ.Կարագեդովի «Хозрасчет, эффективность и прибыль» (очерки теории) մենագրությունը, կարծես ընդհանրացնում է հեղինակի նախորդ հետազոտական գործունեությունը: Նրանում մշակվում է տնտեսական հաշվարկի հիմնահարցը՝ որպես սոցիալիստական ձեռնարկությունների կառավարման մեթոդի: Շահույթը դիտելով որպես տնտեսական հաշվարկի կենտրոնական կատեգորիաներից մեկի, հեղինակը նրա ֆունկցիաներից որպես գլխավորի, առանձնացնում է ձեռնարկության արդյունավետության չափակցման ֆունկցիան: Հանգամանալից վերլուծության են

ենթարկվում տնտեսական արդյունավետության և շահութաբերության կատեգորիաների հարաբերակցության հարցերը: Վերջիններս դիտարկվում են տնտեսագիտական մտքի պատմության արծարծումների էվոլյուցիայի մեջ. դասական տնտեսագիտություն, տնտեսական մարժինալիզմ և հազվագյուտության սկզբունք, ընդհանուր հավասարակշռության տեսությունը, «նեոդասական դպրոց» և բարեկեցության տնտեսագիտություն, շահույթի տեսության էվոլյուցիայի փուլերը, շահութաբերությունը մարքսիստական հայեցության մեջ հաջորդականությամբ: Ընդ որում, որ կարևոր է, դա կատարվում է ոչ թե մարքիսիստական տեսությունները մերժելու, ինչպես դա հաճախ տեղի ուներ ժամանակի տնտեսագիտական գրականության մեջ, այլ դրանցում առաջադրված դրույթների խորհրդային տնտեսվարման պրակտիկայում հնարավոր օգտագործման դիտակետից:

Աշխատության մեջ տնտհաշվարկի և շահույթի հարցերը քննության են ենթարկվում սոցիալիստական հասարակարգի տնտեսական մեխանիզմի գործողության ընդհանուր հիմնախնդիրների հետ կապի մեջ:

Աշխ. Սոցիալիստական ձեռնարկության շահույթի տնտեսական բովանդակությունը, Եր., 1964, Прибыль в системе экономических категорий социализма (очерк теории), М., 1964, Рентабельность и экономический оптимум (критический обзор немарксистской литературы), Новосибирск, 1970, Рентабельность и эффективность социалистического предприятия, Новосибирск, 1971, Хозрасчет, эффективность и прибыль: очерки теории, Новосибирск, 1979.

ԿԱՐԱԳՅԱՆ ԿԱՐՊԻՍ ՊՈՂՈՍԻ

(1908-1992)

Ծնվել է Թուրքիայի Իզմիր քաղաքի Պարտիզակ ավանում: 1933-ին ավարտել է Գյումրիի կոոպտնտեսագիտության ինստիտուտը: 1938-ից դասախոսել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում, 1941-42-ին՝ ֆակուլտետի դեկան, 1942-53-ին՝ «Հայկոոպի» գլխավոր հաշվապահ: 1957-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1961-1974-ին եղել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի հաշվապահական հաշվառման և վիճակագրության ամբիոնի վարիչ, 1965-1970-ին՝ միաժամանակ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան: 1970-ին ստացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի, իսկ 1977-ին՝ պրոֆեսորի կոչում:

Կարագյանի աշխատանքները վերաբերում են Հայաստանում կոոպերացիայի զարգացման պատմության, հաշվապահական հաշվառման, առևտրի հարցերին:

«Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում» աշխատության մեջ նա ուրվագծում է կոոպերատիվ շարժման տեսության պատմությունը, այնուհետև անդրադառնում հայ իրականության մեջ կոոպե-

ռացիայի ծագման ու զարգացման նախադրյալներին ու առանձին վայրերում կոոպերատիվ ընկերությունների գործունեությանն ու ֆունկցիաներին՝ որպես կապիտալիստական հարաբերությունների պայմաններում բնակչության ուժեղացող շերտավորումը, կուլակային տնտեսություններին ընդդիմանալու, աղքատությունը մեղմելու և գյուղացիական տնտեսությունների հողասակավությունը վերացնելու միջոցների: Աշխատության երկրորդ մասը ներկայացնում է սպառողական կոոպերացիայի պատմությունը Խորհրդային Հայաստանում:

Կարագյանը «Հաշվապահական հաշվառման տեսություն» դասագրքի հեղինակն է, որն ունեցել է մի քանի հրատարակություն:

Աշխ. Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում, Եր., 1957, Սովետական առևտրի զարգացումը Հայաստանում, Եր., 1961 (համահեղինակ), Հաշվապահական հաշվառման տեսություն, 4 հրատ., լրացումներ և բարեփոխումներ, Եր., 1982:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ

(1908-1977)

Ծնվել է Ախալքալաքում: 1928-ին ընդունվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը: Ուսումնառությանը զուգընթաց աշխատել է Կենտրոնական վիճակագրական վարչությունում որպես վիճակագիր, ապա՝ ասիստենտի հաստիքով տեղափոխվել Մոսկվայի պլանային ինստիտուտի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն: 1940-ին ընդունվել է Մոսկվայի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ասպիրանտուրա: Նա երկար տարիներ աշխատել է Երևանի պետական համալսարանում, իսկ այնուհետև Մոսկվայի ֆինանսական ինստիտուտում: Այդ տարիներին նա զբաղվել է արտադրական հզորությունների և հիմնական ֆոնդերի օգտագործման վիճակագրական հետազոտությամբ, այդ հիմնախնդրի վերաբերյալ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն: Ա.Կարապետյանը 1960-ին հրավիրվել է Երևան՝ ՀՍՍՀ ԳԱ տնտեսավիճակագրական հետազոտությունների լաբորատորիայի կազմակերպման համար: Նա եղել է պետպլանի հաշվողական կենտրոնի հիմնադիրը (1969) և տնօրենը: 1972-75-ին եղել է ԵՊՀ վիճակագրության ամբիոնի վարիչ, իսկ այնուհետև պաշտոնավարել պետպլանի հաշվողական կենտրոնում: Բնակչության կեն-

սամակարդակի թեմատիկան դարձավ Ա.Կարապետյանի հետազոտական գործունեության առանցք՝ հրապարակելով մի շարք աշխատանքներ: «ԽՍՀՄ բնակչության եկամուտների և սպառման վիճակագրական մեթոդների ուսումնասիրությունը» թեմայով ատենախոսության համար 1968-ին նրան շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Պրոֆեսորի կոչում ստացել է 1971-ին: «Նրա անվան հետ է կապված բնակչության կենսամակարդակի որոշման մի շարք կարևոր խնդիրների լուծումը վիճակագրական վերլուծության և պլանավորման բնագավառում» (Աբել Աղանբեգյան):

Ա.Կարապետյանի «Доходы и потребление населения СССР» աշխատությունն ամփոփում է նրա նախորդ տարիների աշխատանքը, ներկայացնելով այն հիմնական դրույթները, որոնցում առավել նշանակալից էին նրա ներդրումները:

Հեղինակն առաջիններից էր, որը փաստարկված, խորը քննադատության է ենթարկել բնակչության իրական եկամուտների հաշվարկման այն ժամանակ տիրապետող մեթոդոլոգիան, որը հաշվի չէր առնում ծառայությունների ոլորտի աշխատանքը: Միաժամանակ նկատելով, որ ծառայության ոլորտի աշխատանքը չպետք է հավասարեցվի նյութական արտադրության ոլորտի աշխատանքի հետ, որքանով առաջինը միայն պայմաններ է ստեղծում, բայց չի ավելացնում բնակչության բարեկեցությունը: Ընտանիքի սպառողական բյուջեի հետազոտությունների ժամանակ նա առաջադրում և հիմնավորում է կիրառել, այսպես կոչված, ակնթարթային (պահային) դիտարկումների մեթոդը, որը ենթադրում էր վիճակագրական տեղեկատվության հետագա կատարելագործման անհրաժեշտությունը: Այդ մեթոդի առավելությունն այն է, որ թույլ է տալիս ընտրություններ կատարել ծավալների էական ընդլայնման միջոցով, կտրուկ մեծացնել հետազոտությունների անցկացման ծախսերի արդյունավետությունը և բարձրացնել տվյալների արժանահավատությունը: Նրա աշխատություններում

առաջադրվում է բնակչության եկամուտների և սպառման դիֆերենցված հաշվեկշռի գաղափարը, որը նոր քայլ էր ենթադրում մաթեմատիկա-վիճակագրական մոդելների համակարգի կառուցման առումով: Ի տարբերություն, զուտ մաթեմատիկական մոդելների, նա առաջադրում է բնակչության եկամուտների հաշվարկման գործընթացների մաթեմատիկական նկարագրության սկզբունքորեն նոր եղանակ՝ ուղղված երևույթների ներքին կապերի բացահայտմանը: Այստեղ, որպես եկամուտների և սպառման դիֆերենցման ելակետ ներառվում են՝ աշխատողների բաշխման անալիտիկ մոդելն ըստ աշխատավարձի չափի՝ հիմնված միասնական տարիֆային սանդղակի և աշխատանքի սահմանված ռեդուկցիայի, ընտանեկան եկամուտների ձևավորման կումուլյատիվ և մուլտիպլիկատիվ մոդելները հիմնված ընտանիքի եկամուտների կազմավորման բաղադրամասերի աստիճանական կուտակման վրա և բնակչության սպառողական պահանջարկի ձևավորման մոդելները:

Ա.Կարապետյանի հետազոտություններում թարմ խոսք է ասված նաև ընտանիքի վերարտադրության վիճակագրական մոդելավորման, անձնական սպառման վերաբերյալ վիճակագրության ավտոմատացված համակարգի մշակման և այլ հարցերի վերաբերյալ: Բերված ուրվագիծը վկայում է Ա.Կարապետյանի ավանդի «գիտության նոր ճյուղի ձևավորման մեջ, որի օբյեկտն է՝ ժողովրդական բարեկեցության համակողմանի ուսումնասիրությունը»:

Աշխ. Методологические вопросы изучения уровня жизни трудящихся, М., 1959 соавтор, Применение математики и электронной техники в планитования, М., 1961, Применение математических методов и статистических методов в изучения проблем народного потребления, Ер., 1961-62, Доходы и покупательный спрос, М., 1968, Дифференцированный баланс доходов и потребления населения, М., 1977, Доходы и потребление населения СССР, М., 1980.

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ ՎԻԼՀԵԼՄԻ

(1963)

Ծնվել է Ստեփանակերտ քաղաքում: 1980-ին ավարտել է Երևանի Տոլստոյի անվան միջնակարգ դպրոցը, իսկ 1985-ին՝ գերազանցության դիպլոմով Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: Կարապետյանի հետագա գործունեության հետագիծն է. 1985-1990-ին՝ ՀՀ պետպլանի հաշվողական կենտրոնում որպես կրտսեր գիտաշխատող, սեկտորի վարիչ և միևնույն ժամանակ դասախոսել ԵՊՀ-ում, 1990-96-ին՝ կոմերցիոն կառույցներում որպես ղեկավար, 1996-1998-ին՝ «Հայէներգո» ՓԲԸ-ն գլխավոր տնօրենի տեղակալ, 1998-2001-ին՝ «Հայէներգո» ՓԲԸ-ն գլխավոր տնօրեն, 2001-ին՝ ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ, 2001-2010-ին «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն վարչության նախագահ - գլխավոր տնօրեն, 2008-2011-ին՝ «Առէկսիմբանկ» ՓԲԸ խորհրդի նախագահ, 2010-2011-ին Երևանի քաղաքապետ, 2011-ից «Գազպրոմբանկ» ԲԲԸ առաջին փոխնախագահ, 2012-ից նաև «Գազպրոմի ռեգիոնալ» ՍՊԸ գլխավոր տնօրենի տեղակալ, 2016-ի սեպտեմբերից՝ ՀՀ վարչապետ:

1985-87-ին դասավանդել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական կիբեռնետիկա ֆակուլ-

տետում: 1995-ին սովորել և ավարտել է ԱՄՆ-ի Հյուստոնի համալսարանի բիզնես դասընթացները:

1989-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի, իսկ 2010-ին՝ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

Կարապետյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության խնդիրներին: Նրա հայեցակարգային մոտեցումները շարադրվել են «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները», «Տարածաշրջանային համագործակցության և էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները Հարավային Կովկասում», «Էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը և բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» մենագրություններում: Աշխատությունների վերնագրերն արդեն իսկ ցույց են տալիս, որ խնդիրը բարդ լուծումներ է պահանջում: Էներգետիկայի համակարգը ներկայացվում է որպես տնտեսության առանձին ոլորտների, համակարգերի և բնական միջավայրի, հետևապես նաև դրանց միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերի ու գործունեության տեխնիկական, նորարական և իրավական գործոնների համախումբ, որոնց գործունեության արդյունքներն ուղղված են հասարակության, պետության և քաղաքացիների էներգետիկայի պահանջմունքների բավարարմանն ու արտաքին և ներքին սպառնալիքներից պաշտպանությանը: Հարցերի այդ շղթայում էլ Կ.Կարապետյանի հետազոտություններում գծագրվում է հանրապետության էներգետիկ անվտանգության խնդիրների քննությունը.

- էներգետիկ անվտանգությունն ազգային անվտանգության համատեքստում,

- էներգետիկ անվտանգության գնահատման մեթոդաբանությունը,
- տարածաշրջանի մյուս երկրների էներգետիկ համակարգերը և Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության հեռանկարները,
- Հայաստանի Հանրապետության էներգետիկ համակարգի ներկա վիճակը և բարեփոխումները,
- Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման ուղիները և հեռանկարները:

Նա էներգետիկ անվտանգությունը դիտում է որպես բազմակողմանի հասկացություն, որը վերաբերում է ոչ միայն էներգետիկ համակարգում, այլ նաև ամբողջ տնտեսությունում տեղի ունեցող գործընթացներին և բնութագրվում է սոցիալական, բնապահպանական, պաշտպանական, իրավական, էներգետիկ, տեղեկատվական և այլ ոլորտներում տեղի ունեցող գործընթացներով: ՀՀ էներգետիկայի ոլորտի ընթացիկ իրավիճակի վերլուծության հիման վրա՝ համաշխարհային և տարածաշրջանային համատեքստում, ինչպես նաև էներգետիկայի ոլորտի հեռանկարային զարգացման միտումների հաշվառմամբ իրականացվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության մակարդակի ինտեգրալային գնահատում, և ներկայացվել են հետագա տարիների համար (մինչև 2020 թվականը) կանխատեսումները: Հիմնավորվում է, որ միջնաժամկետ հեռանկարում ՀՀ-ն կպահպանի հավելյալ արտադրական հզորություններ ունեցող համակարգի կարգավիճակը:

Նշված կանխատեսման համար հիմք են տվել հեղինակի հետևյալ փաստարկները.

- էլեկտրաէներգիայի մատակարարումների հնարավորությունները ներքին շուկայում սահմանափակ են,
- էլեկտրաէներգիայի արտահանման ներկայիս ծա-

վալները չեն համապատասխանում տարածաշրջանում էներգետիկական շուկայում տվյալ հատվածում երկրի մասնակցության պոտենցիալ հնարավորություններին,

- ներկայումս Հայաստանից էլեկտրաէներգիայի արտահանման համար առավել հեռանկարային ուղղություններն են Իրանը, Թուրքիան և Վրաստանը,
- նոր էլեկտրահաղորդման գծերի շահագործելուց հետո կաճի դրանց թողունակությունը:

Հայաստանի էներգետիկ անվտանգության սպասվող տեղաշարժերի ու զարգացման միտումների վերլուծության արդյունքում կատարվում են մի շարք առաջարկություններ, ինչպես, օրինակ, հանրապետությունում տարածաշրջանային և համաշխարհային էներգետիկ շուկաների վիճակների կանխատեսման անկախ կենտրոնների, ինչպես նաև միասնական տեղեկատվական անալիտիկ համակարգերի ստեղծումը, էլեկտրաէներգիայի արտահանման ոլորտում ճկուն գնային քաղաքականության և պետական հարկային քաղաքականության իրականացումը, ինչպես նաև էներգետիկական համագործակցության նոր տարբերակների և տարածաշրջանային էներգետիկ գործընթացների օբյեկտիվ գնահատման համար անհրաժեշտ սեփական տեղեկատվական բազայի ստեղծումը և այլն:

Սկսած 1990-ական թվականներից հանրապետությունը սկսել է ինտեգրվել բարդ ու տարամետ տնտեսական ու քաղաքական միտումներով համաշխարհային հանրությանը: Տեղի է ունենում երկրների ինտեգրում, որը հաճախ դիտվում է որպես վերընթաց զարգացում: Եվ ոչ առանց հիմքի, քանի որ տնտեսական համագործակցությունը դարձել է ազգային տնտեսության զարգացումը կանխորոշող գործոն, առանց որի «նույնիսկ մեծ շուկա ունեցող երկրները չեն կարող ապահովել կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճ»: Այնուհանդերձ գործում է համեմատական

առավելությունների սկզբունքը: Դա վերաբերում է նաև էներգետիկ համակարգին: Այդ դիտակետից էլ հատուկ քննության առարկա է դարձրել Հարավային Կովկասի երկրների զարգացման մարտահրավերները, ինստիտուցիոնալ և համակարգային վերափոխումները, տարածաշրջանային տնտեսական և էներգետիկ զարգացումներն ու համագործակցության հիմնախնդիրները, համատեղ ծրագրերի և Հայաստանի Հանրապետության առևտրային և էներգետիկ շահերը տարածաշրջանում: Նրա աշխատություններում կատարված վերլուծությունները, դիտարկումներն ու առաջարկությունները խորհուրդ ունեն բարձրացնելու հանրապետության էներգետիկ անվտանգությունը, տեղն ու դերը Հարավային Կովկասում տարածաշրջանի երկրների էներգետիկ շուկայում:

Կ.Կարապետյանը պարգևատրվել է ՀՀ նախագահի շնորհակալագրով (2003), Անանիա Շիրակացու մեդալով (2006, 2008, 2016) ՀՀ գերատեսչությունների այլ մեդալներով և հուշամեդալներով:

Աշխ. Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները, Եր., 2008, Տարածաշրջանային համագործակցության և էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները Հարավային Կովկասում, Եր., 2008, էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը և բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2009:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՐՄԵՆԻ

(1940-2003)

Ծնվել է Երևանում: 1962-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1968-ից աշխատել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտում. 1971-ից՝ բաժնի վարիչ, 1990-94-ին, միաժամանակ՝ ՄԱԿ-ի մասնագետ-վերլուծաբան: Տնտեսագիտության դոկտորի աստիճան ստացել է 1988-ին, պրոֆեսորի կոչում՝ 1991-ին:

Նրա գիտական աշխատանքները վերաբերում են ժողովրդագրությանը, բնակչության աճի և սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին: Նրա «Региональные особенности социально-демографического развития Армянской ССР» աշխատությունում քննության են ենթարկվում 1960-80-ական թվականներին ՀԽՍՀ բնակչության վերարտադրության գործընթացների առանձնահատկությունները և բացահայտվում հանրապետության ժողովրդագրական զարգացման ուղու յուրահատկությունը: Ժողովրդագրական գիտությունը հաճախ լավագույն արդյունքներ է տալիս այն ժամանակ, երբ զբաղվում է ժողովրդագրության և էկոնոմիկայի, ժողովրդագրության և սոցիոլոգիայի միջև սահմանամերձ երևույթների և գործընթացի հետազոտություններով, այսինքն, երբ նրա ուսում-

նասիրության օբյեկտներ են դառնում սոցիալ-տնտեսական զարգացման գործոնների փոխադարձ կապը և փոխկախվածությունը, ազգաբնակչության աճի և զարգացման չափումները: Այս տեսանկյունից էլ հանրապետության ժողովրդագրական զարգացման տարածքային առանձնահատկությունների քննությանը հաջորդում են ժողովրդական բարեկեցության հիմնական ցուցանիշների (բնակչության եկամուտների և ձևավորման աղբյուրների, բնակարանային պայմանների և ունեցվածքային վիճակի, բնակչության սպառողական բյուջեի և եկամուտների կառուցվածքի), բնակչության եկամուտների և սպառման դիֆերենցման գործոնների վերլուծությունը: Նշված հարցերին նա անդրադարձել է նաև 1990-ական թվականներին, կատարվող փոփոխությունները համարելով որպես «անցումային շրջանի ծախքեր»՝ բնորոշ բոլոր այն երկրներին, որոնցում կատարվում է տնտեսական մոդելների փոփոխություն, իսկ մյուս կողմից՝ կապում ԽՍՀՄ ապահինտեգրացման և հանրապետության աշխարհաքաղաքական ընդհանուր վիճակի հետ: Ընդհանուր ժողովրդագրական տեղաշարժերը զուգորդվում են ըստ եկամուտների և սպառման մակարդակների բնակչության տեղաբաշխման փոփոխություններով և սոցիալական բևեռացումներով: Նա ցույց է տվել, որ բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալում աշխատանքային եկամուտների տեսակարար կշիռը նվազել է մի քանի անգամ և, ըստ էության, կենսապայմաններն ապահովող գլխավոր միջոց լինելուց վերածվել է «օժանդակ միջոցի»:

Ծայր առավ միգրացիան: Հայաստանը նա բնութագրում է որպես միգրացիայի երկիր: Միգրացիոն գործընթացներում առաջին բեկումը հատկացվում է անցյալ դարի 80-ականների սկզբին, երբ մի կողմից զարգացման տեմպերի նվազումը, մյուս կողմից հանրապետության տարածքի «ծանրաբեռնվածությունը» (Միության համար ռեկորդային ցուցանիշ՝ 1 քառ.կմ-ի վրա՝ 120 մարդ), միգրացիան բերեցին զրոյական սալդոյի: Երկրորդ բեկումը

սկսվեց 1991-ից: Բնակչության արտագաղթը գերազանցապես պայմանավորված էր զուտ տնտեսական գործոններով, որը հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում գործերի վիճակի հայելային արտացոլումն է: Կարապետյանը հանգամանորեն անդրադառնում է անցումային ժամանակաշրջանում հանրապետության սոցիալական ու տնտեսական տեղաշարժերին, հասարակության սոցիալական կառուցվածքի, ժողովրդագրության, ըստ եկամուտների ու սպառման մակարդակի բնակչության տեղաբաշխման ու սոցիալական բևեռացման հարցերի, տնտեսության մեջ 1980-90-ական թվականների աշխատաշուկայի հիմնական ցուցանիշների վերլուծությանը, ուղենշում պետության դերը սոցիալական ոլորտի առաջնահերթ խնդիրների իրականացման գործում:

Ս.Կարապետյանի ժողովրդագրական հարցերի վերլուծությունները բնորոշվում են կացության հարցերի ընդգրկուն դիտարկումներով:

Աշխ. Региональные особенности социально-демографического развития Армянской ССР, Եր., 1986 (համահեղինակությամբ Ռ.Հովսեփյանի), Շուկայական վերափոխումների սոցիալական հիմնախնդիրները (Տե՛ս Տնտեսական վերափոխումները անցումային տնտեսությունում, Եր., 1999):

ԿԱՐՃԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ

(1907-1985)

Ծնվել է Սանկտ Պետերբուրգում: 1930-ին ավարտել է Երևանի պետական համալսարանը: Տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան ստացել է 1972-ին: 1955-84-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող:

Աշխատությունները վերաբերում են գյուղատնտեսության զարգացման տեմպերի և կառուցվածքային փոփոխությունների, ընդլայնված վերարտադրության, աշխատանքային ռեսուրսների, մթերքների արտադրության ու սպասարկման հարցերին:

«Трудовые ресурсы и их использование в сельском хозяйстве Армянской ССР» աշխատության մեջ քննության են ենթարկվում գյուղատնտեսական բնակչության վերարտադրության, կոլտնտեսություններում և սովխոզներում աշխատուժի օգտագործման հարցերը, բացահայտվում են աշխատանքի տարեկան և սեզոնային ռեզերվները և նշվում ռացիոնալացման հնարավորությունները: Հաշվի առնելով հանրապետության բնակչության բարձր խտությունը, կատարվում են հաշվարկներ գյուղատնտեսության մեջ աշխատուժի հեռանկարային պահանջարկի վերաբերյալ:

Նրա «Темпы развития и структурные изменения сельского хозяйства Армянской ССР» ընդգրկուն մենագրությունը փորձ է ցույց տալու ՀԽՍՀ գյուղատնտեսության անցած ուղին և առկա վիճակը (1913-1966թթ.): Նա գտնում է, որ հանրապետության գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի զարգացումը և փոփոխությունը՝ արտահայտելով ժողովրդական տնտեսության շահերը և նրա տարածքում գտնվող յուրաքանչյուր գյուղատնտեսական ձեռնարկության շահերը, միաժամանակ պետք է համապատասխանի ամբողջ երկրի մասշտաբով աշխատանքի ռացիոնալ բաժանման և նրա ժողովրդատնտեսական ընդհանուր պահանջներին: Այս տեսանկյունից էլ նա սոցիալիստական արտադրության պլանային զարգացման ընդհանուր օրինաչափություններից ելնելով, տեսանելի հեռանկարի համար դիտարկում է հանրապետության գյուղատնտեսության զարգացման հիմնական ուղղությունները: Բնատնտեսական պայմաններին համապատասխան քննարկվում է համամիութենական աշխատանքի հասարակական բաժանման ազդեցությունը հանրապետության գյուղատնտեսության մասնագիտացման, տեմպերի և համամասնությունների ձևավորման վրա: Նշված հարցերը Կարճիկյանին շարունակում են հետաքրքրել նաև հետագա տարիներին, դառնալով նոր մենագրության առարկա:

Աշխ. Трудовые ресурсы и их использование в сельском хозяйстве Армянской ССР (համահեղինակներ Մ.Բաբաջանյան, Կ.Պոսոշնիկովա), Ер., 1963, Темпы развития и структурные изменения сельского хозяйства Армянской ССР, Ер., 1968, Экономическая эффективность специализации и концентрации сельскохозяйственного производства в Армянской ССР, Ер., 1982.

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՍԱՐԻԲԵԿԻ

(1919-1995)

Ծնվել է ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի յոթամյա դպրոցում: 1938-ին ավարտել է Գյումրու գյուղատնտեսական տեխնիկումը և երկու տարի աշխատել ուսուցիչ: 1940-ին զորակոչվել է խորհրդային բանակ, մասնակցել Հայրենական պատերազմին, պարգևատրվել շքանշաններով, մեդալներով: 1945-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, ապա ասպիրանտուրա: 1953-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: 1968-1975-ին եղել է ԵՊՀ, 1975-1995-ին՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ժողտնտպլանավորման ամբիոնի վարիչ, միաժամանակ 1975-1979-ին՝ նույն ինստիտուտի ուսումնական աշխատանքի գծով պրոռեկտոր: Տնտեսագիտության դոկտորի աստիճան ստացել է 1973-ին, պրոֆեսորի կոչում՝ 1974-ին:

Կիրակոսյանի աշխատանքները վերաբերում են ժողովրդական տնտեսության պլանավորման տեսության, նյութատեխնիկական մատակարարման կատարելագործման, ինքնարժեքի, գների և պլանավորման այլ խնդիրների:

1963-ին լույս է տեսնում նրա «Ժողովրդական տնտեսության պլանավորման մեթոդոլոգիական հիմքերն ու կազմակերպումը» ձեռնարկը, որտեղ քննության են ենթարկվում ժողովրդական տնտեսության պլանավորման հարցերը, մեթոդոլոգիական հիմքերը՝ կապված վերարտադրության մարքս-լենինյան տեսության հետ, ցույց տրվում ժողովրդատնտեսական պլանի հատվածները, բաժիններն ու ցուցանիշների համակարգը, պլանավորող օրգանների ֆունկցիաները և պետական միասնական պլանը կազմելու կարգն ու առանձնահատկությունները: Ձեռնարկում որոշակի տեղ է հատկացված մաթեմատիկական մեթոդների կիրառմանը ժողովրդական տնտեսության պլանավորման գործընթացում:

Անդրադարձ կատարելով ընդլայնված վերարտադրության հիմնախնդիրների վերլուծությանը, Կիրակոսյանն առանձնացնում է նյութատեխնիկական մատակարարման ոլորտը՝ որպես ընդլայնված վերարտադրության կարևոր բնագավառներից մեկի («Նյութատեխնիկական մատակարարման պլանաչափ զարգացումը Սովետական Հայաստանում»): Մենագրության մեջ հեղինակը հետազոտում է նյութատեխնիկական մատակարարման կեսդարյա պլանաչափ զարգացման հիմնական միտումները Խորհրդային Հայաստանում: Նա նյութատեխնիկական մատակարարումը դիտում է որպես նյութական արտադրության ինքնուրույն ճյուղ և այս դիտակետից տալիս հիմնական տնտեսական ցուցանիշների համեմատական վերլուծությունը, միաժամանակ առաջարկելով կոնկրետ միջոցառումներ, որոնց իրագործումը կարող է որոշակի նշանակություն ունենալ դրանց վերացման ու հանրապետությունում նյութատեխնիկական մատակարարման հետագա կատարելագործման համար:

Իր հետագա աշխատանքում՝ «Սոցիալիստական պլանավորման բնորոշ գծերը», նա տնտեսական աճի ձեռք բերման առումով կարևորում է ժողովրդական տնտեսության պլանավորման դերը, հանգամանորեն քննարկում է ժողովրդական տնտեսության պլանավորման նախադրյալների ստեղծման, տնտեսագիտության համակարգում նրա հետազոտման օբյեկտի գրաված տեղի, մյուս գիտությունների հետ ունեցած փոխադարձ կապերի հարցերը: Պլանավորումը Կիրակոսյանը ներկայացնում է սոցիալիզմի տնտեսական օրենքների հետ ընդհանուր կապերի ու փոխկապվածությունների մեջ: Նա գլխավոր շեշտը դնում է տնտեսական ռեսուրսների ինտենսիվ օգտագործման վրա, նկատելով, որ չի կարելի թույլ տալ տվյալ ռեսուրսի խնայողություն՝ մեկ այլ, ավելի թանկ ռեսուրսի հսկայական գերածախսի հաշվին: Այս ամենը կարգավորելն արդեն պահանջում է գիտատեխնիկական առաջադիմության արագացում, պլանավորման, կառավարման և ողջ տնտեսական մեխանիզմի ոչ թե ձևական, այլ իրական կատարելագործում: Կենտրոնական մարմինների գլխավոր խնդիրը, նկատում է Կիրակոսյանը, պետք է դառնա հասարակական արտադրության արդյունավետության պլանավորումը, անհրաժեշտություն չհամարելով, որ նրանք նորմատիվների փոխարեն մանրակրկիտ պլանային ցուցանիշներ մշակեն ու իջեցնեն յուրաքանչյուր ձեռնարկությանը: Այլ խոսքով, տնտեսագետն առաջ է քաշում վարչական վերահսկման նեղացման հարց, որը պետք է փոխհատուցվի տնտեսական գործունեության ընդլայնմամբ այն հաշվով, որ ձեռնարկություններն իրենց սեփական ցանկությամբ գործեն առաջին հերթին հասարակության շահերից ելնելով: Դա հենց լիակատար տնտհաշվարկին անցնելու ուղի է՝ առանց սահմանափակումների: Եթե գործարանին տրվի «գործարանայինը», պետպլանին՝

«պետպլանայինը», ապա դրանից կենտրոնացված պլանավորման սկզբունքը չի թուլանա, այլ ընդհակառակը, կամրապնդվի: Ի վերջո, պլանաչափությունը, եզրակացնում է տնտեսագետը, մշտապես պահպանվող համամասնություն է, ուստի պետպլանը պետք է զբաղվի այդ համամասնություններով, իսկ միավորումներն ու ձեռնարկությունները՝ առանձին արտադրատեսակների արտադրության պլանավորմամբ, որոնց համար նրանք պատասխանատու են սպառողների առջև և պարտավոր են բավարարել նրանց պահանջները՝ պայմանագրային ժամկետներում: Այլ կերպ, նա առաջարկում է կենտրոնացված պլանավորումը զուգակցել տեղերի նախաձեռնության հետ:

Կիրակոսյանը մի շարք ձեռնարկների հեղինակ է:

Աշխ. Ժողովրդական տնտեսության պլանավորման մեթոդոլոգիական հիմքերն ու կազմակերպումը, Եր., 1963, Արդյունաբերական արտադրանքի մեծածախ գների պլանավորում, Եր., 1969, Նյութատեխնիկական մատակարարման պլանաչափ զարգացումը Սովետական Հայաստանում, Եր., 1973, Սոցիալիստական պլանավորման բնորոշ գծերը, Եր., 1986:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՂԻՇԻ

(1936)

Ծնվել է ՀՍՍՀ Թալինի շրջանի Աշնակ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1965-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1965-67-ին քաղաքատնտեսություն է դասավանդել Երևանի առևտրատնտեսագիտական տեխնիկումում: 1967-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի ասպիրանտուրա: 1971-ին ստացել է տնտեսական գիտությունների թեկնածուի, իսկ 1990-ին՝ «Աշխատուժի վերարտադրության ծախսերի փոխհատուցման տնտեսական օրենքը» հետազոտության համար՝ տնտեսական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Պրոֆեսոր է 1991-ից: 1989-91-ին եղել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, 1991-93-ին՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1993-2006-ին՝ Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ռեկտոր, 2006-ից՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, 2012-ից ՀՊՏՀ ռեկտորի խորհրդատու:

Գ.Կիրակոսյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են աշխատուժի վերարտադրության, շուկայական տնտեսության ձևավորման և անցումային տնտեսության հիմնախնդիրներին: 1980-ական թվականներին նրա հե-

տազոտությունների գլխավոր թեման աշխատուժի վերարտադրության հարցերն էին՝ կապված աշխատուժի ծախսերի փոխհատուցման տնտեսական օրենքի հետ: Ելակետ ունենալով վերջինս, կատարվում է աշխատուժի վերարտադրության ծախսերի դասակարգում և հիմնավորվում կենսամիջոցների բաշխման կատարելագործման անհրաժեշտությունը («Աշխատուժի ծախսերի փոխհատուցման ձևերը սոցիալիզմի ժամանակ»): «Անձնական պահանջմունքները և աշխատուժի ծախսերի փոխհատուցումը» աշխատությունը նվիրված է անձնական պահանջմունքների դասակարգմանը: «Աշխատուժի ինտենսիվ վերարտադրության ժամանակակից խնդիրները» աշխատանքում հատուկ ուշադրություն է դարձվում սոցիալիստական արտադրական հարաբերությունների և, հատկապես, կենսամիջոցների բաշխման հարաբերությունների ինտենսիվ վերարտադրության հարցերին: Աշխատուժի ինտենսիվ վերարտադրությունը քանակական, որակական և կառուցվածքային փոփոխություններ է առաջ բերում դրա վերարտադրության ծախսերում: Այդ տեսանկյունից էլ դիտարկվում են աշխատուժի ծախսերի փոխհատուցման հիմնական ձևի՝ աշխատավարձի հետագա կատարելագործման խնդիրները, ըստ աշխատանքի վերջնական արդյունքի վարձատրման և դրա խթանող դերի հետագա ուժեղացման անհրաժեշտությունը: Անդրադարձ է կատարվում աշխատուժի վերարտադրության նյութական ապահովվածության ամբողջական տնտեսական մեխանիզմի մշակման հարցին:

Գ.Կիրակոսյանի «Անցումային տնտեսության վերափոխումները. տեսության հարցեր» մենագրությունը վերաբերում է ՀՀ-ն տնտեսության շուկայական համակարգին անցնելու հետ կապված ներդրումների խթանման մեխանիզմներին, հարկային և ֆինանսական համակարգերի դերին: Գրքում կարևորվում է շուկայական համակարգին անցման և տնտեսագիտական նոր մտածողության ձևավորման անհրաժեշտությունը, որքանով իրենց հետևանք-

ների մեջ չգիտակցված տնտեսական ռեֆորմները կարող են երկարացնել սպասվող առավելությունների տեսանելիության ժամկետները:

Գ.Կիրակոսյանի համահեղինակությամբ և ղեկավարությամբ ստեղծվել է ուսումնական գրականություն: Եղել է Հայաստանի Հանրապետության տնտեսագետների միության նախագահ, ղեկավարել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդը:

Ստացել է «Անանիա Շիրակացի» մեդալ (1995):

Աշխ. Աշխատուժի ծախսերի փոխհատուցման ձևերը սոցիալիզմի ժամանակ, Եր., 1980, Անձնական պահանջմունքները և աշխատուժի ծախսերի փոխհատուցումը, Եր., 1984, Աշխատուժի ինտենսիվ վերարտադրության ժամանակակից հիմնախնդիրները, Եր., 1987, Տնտեսագիտության ժամանակակից տեսությունները, (ուսումնական ձեռնարկ), Եր., 1995, Տնտեսագիտական բացատրական բառարան (համահեղինակ), Եր., 1999, Ջեյմս Դ.Գոռքնի և Ռիչարդ Լ.Ստրոուպի «Տնտեսագիտություն. մասնավոր և հասարակական ընտրություն» դասագրքի թարգմանության գլխավոր խմբագիր, Եր., 1999, Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ (համահեղինակ և գլխավոր խմբագիր), Եր., 2000, Անցումային տնտեսության վերափոխումները. տեսության հարցեր, Եր., 2002, Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, ուսումնական ձեռնարկ (համահեղինակ և խմբագիր), Եր., 2004, Տնտեսագիտություն դպրոցականների համար (համահեղինակ), Եր., 2004, Բարձրագույն կրթության աուդիտ, ուսումնական ձեռնարկ (համահեղինակ), Եր., 2004, Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ (համահեղինակ և խմբագիր), Եր., 2009:

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ (ՍԵՐԳԵՅ) ԼԱՎՐԵՆՏԻԻ

(1929-1986)

Ծնվել է Ղուկասյանի շրջանի Մեծ Սեպասար գյուղում, 1949-ին ավարտելով միջնակարգ դպրոցը ընդունվել է Երևանի վիճակագրական տեխնիկումը և այն ավարտել 1951-ին: Նուն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը՝ ժողովրդական տնտեսության պլանավորում մասնագիտությամբ: Այն ավարտելով գերազանցությամբ, անցնում է դասախոսական աշխատանքի, որտեղ և աշխատում է մինչև 1962 թվականը: 1962-ին ընդունվում է Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան համալսարանի ասպիրանտուրան: 1964-ին պաշտպանել է թեկնածուական թեզը և ստացել տնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1964-65-ին Ս.Կոստանյանը գործուղվել է աշխատանքի Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետություն: 1965-67-ին եղել է Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ավագ գիտաշխատող, 1967-75-ին՝ Մոսկվայի պետական մանկավարժական ինստիտուտում՝ ժողովրդական կրթության խնդիրների ուսումնասիրման ամբիոնում որպես լաբորատորիայի վարիչ: 1975-ից նա եղել է ԽՍՀՄ մինիստրների խորհրդին կից Պլեխանովի անվան ժողովրդական կրթության ուսումնա-

սիրման ինստիտուտում լաբորատորիայի վարիչ, այնուհետև՝ բաժնի պետ:

1975-78-ին ընտրվել է ՍՍՀՄ մինիստրների խորհրդին կից բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի անդամ: 1980-ին՝ «Կրթության տնտեսագիտական հիմնախնդիրները զարգացած սոցիալիզմի պայմաններում» (տեսության և պրակտիկայի հարցեր) ատենախոսության համար ստանում է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 1969-ին ստացել է դոցենտի, իսկ 1981-ին՝ պրոֆեսորի կոչում: Նրա գիտական գործունեության ցուցակն ամփոփվում է հարյուրից ավելի անուններում. մենագրություններ, հոդվածներ, զեկուցումներ տարբեր գիտաժողովներում, գիտա-խմբագրական աշխատանքներ: Դրանց մի մասը հրապարակվել է այլ երկրներում:

Ս.Կոստանյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են կրթության տնտեսագիտությանը: «Экономика и образование», «Экономика народного образования» և այլ հրապարակումներում անդրադառնալով նշված խնդիրներին՝ ցույց է տրվում, որ կրթության ընդլայնումն ու խորացումը բնութագրում են ոչ միայն երկրի սոցիալական ու մշակության կողմերը, այլև ուղղակի հանդիսանում են ներդրում նրա տնտեսական աճի առումով: Գիտատեխնիկական առաջընթացն ընդգրկում է մարդկային գործունեության բոլոր ոլորտները աշխատանքի որակական տեղաշարժերով: Ուստի կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության ոլորտներում ներդրումները տանում են աշխատանքի արտադրողականության աճի, ի վերջո՝ հսկայական տնտեսական արդյունավետության: Նյութական արտադրության արդյունավետությունը ուղղակի կապի մեջ է գտնվում գիտելիքների ու աշխատավորության որակավորման հետ: Այդ դիտակետից էլ շեշտվում է գիտության և տնտեսության փոխադարձ կապը:

Անցյալ դարի 70-ական թվականներին սկսվում է ձևավորվել կրթության տնտեսագիտության ոլորտը, որպես գիտության նոր ճյուղի, որոշարկվում էին առարկայի

ուսումնասիրության սահմանները: Ս.Կոստանյանի «Предмет и метод экономики образования» ուսումնական ձեռնարկն առաջինն էր միութենական տնտեսագիտական գրականության մեջ: Այս իմաստով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում քննարկվող հարցերի շրջանակները. ժողովրդական կրթության տնտեսագիտության ուսումնասիրության առարկան և մեթոդը, կրթությունը հասարակական վերարտադրության համակարգում, ժողովրդական կրթության զարգացման պլանավորումն ու կանխատեսումը, մասնագետների պատրաստման արդյունավետության հարցերը, տնտեսության մեջ մասնագետների օգտագործման հիմնախնդիրները, մանկավարժական կադրերի վերարտադրությունը, կրթության ոլորտի աշխատողների աշխատավարձի առանձնահատկությունները և կատարելագործման ուղիները, ժողովրդական կրթության նյութատեխնիկական բազան, կրթության ծախսերը և ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը, կրթության տնտեսական արդյունավետության հիմնահարցերը: Վերը նշված դոկտորական ատենախոսությունն ամբողջացնում է նրա գիտական գործունեության հետագիծը:

Ս.Կոստանյանն իր մղումներով հայրենասեր էր՝ օժտված մարդկանց կարեկից լինելու հատկություններով: Նա մի շարք հայ երիտասարդների համար եղել է գիտական ղեկավար: Նա Մոսկվայի մտավորականության շրջաններում աշխատանք էր տանում վերաբացելու Լազարյան ճեմարանը:

Աշխ. Экономика и образование, М., 1970 (համահեղինակ В.А.Жамин), Критика буржуазных теории экономики образования. Сборник трудов, М., 1975, Предмет и метод экономики образования (учебное пособие), М., 1976, Критика современных буржуазных концепции мировой системы социалистического хозяйства, М., 1985 (համահեղինակ В.А.Жамин), Экономика народного образования, М., 1986.

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎՌԱՄ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ

(1898-1941)

Ծնվել է Վաղարշապատում: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսական իրավունքի ֆակուլտետում և ԽՍՀՄ պետպլանին առընթեր ասպիրանտուրայում: 1927-ին Մոսկվայում եղել է ԽՍՀՄ ժողկոմխորհին առընթեր Անդրֆեդերացիայի մշտական ներկայացուցչության ֆինանսական հարցերով խորհրդատու: Վարել է մի շարք պետական-կուսակցական պաշտոններ՝ Էջմիածնի գավառային հեղափոխական կոմիտեի անդամ, Էջմիածնի բանգյուղտեսչության վարիչ, Հայաստանի ժողկոմխորհրդի գործերի կառավարիչ, ֆինժողկոմատի կոլեգիայի անդամ ու ֆինանսական վերահսկողության պետ, լուսժողկոմատի գիտության բաժանմունքի վարիչ:

1928-ից Վ.Կոստանյանն աշխատել է ԵՊՀ-ում: Սկզբում վարել է ֆինանսական, տնտեսական քաղաքականության դասընթացներ, ապա զբաղեցրել տնտեսական քաղաքականության ու պլանավորման ամբիոնի վարիչի պաշտոնը: Դասախոսել է նաև հայկական մանկավարժական և կոոպերատիվ-տնտեսագիտության ինստիտուտներում: 1935-ի նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Նրա խմբագրությամբ լույս են տեսել տնտեսագիտական մի շարք դասագրքեր:

Վ.Կոստանյանը 1935-ի հուլիսից մինչև 1937-ի հունվարը եղել է ԵՊՀ ռեկտոր:

Կոստանյանը հեղինակ է ավելի քան մեկ ու կես տասնյակ աշխատանքների, որոնք վերաբերում են սոցիալիզմի քաղաքատնտեսության, ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման հարցերին: Ընդարձակ է նրա անդրադարձը նոր տնտեսական քաղաքականության՝ որպես սոցիալիստական շինարարության ծրագրի խնդիրների բնութագրությանը, ուշադրության առնելով տնտեսական պլանների հատկապես որակական ցուցանիշներին, մասնավորապես՝ արտադրանքի ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, շինարարության, վարչա-տնտեսական ծախսերի կրճատման, արտադրանքի որակի բարձրացման հարցերը: Նա մերժում է անցման շրջանի տնտեսության «երկու կարգավորիչների» տեսությունը, համաձայն որի տեղի է ունենում կապիտալիզմի ու սոցիալիզմի միաձուլում: Նա դրվատում է գյուղատնտեսության սոցիալիստական կոոպերացումը, կարևորում արդյունաբերության առաջանցիկ աճը մյուս ճյուղերի համեմատությամբ, անդրադառնում գյուղատնտեսության, շրջանառության ոլորտի այլ հարցերի:

1937-ին Վ.Կոստանյանը խորհրդային իշխանության դեմ ակտիվ պայքար տանելու շինծու մեղադրանքով ձերբակալվել և աքսորվել է: 1941-ին մահացել է աքսորավայրում: 1955-ին հետմահու արդարացվել է:

Աշխ. Որակի խնդիրը տնտեսության վերակառուցման շրջանում, «Լենինյան ուղիով», 1928, №11, Սոցիալիստական շինարարության երկու տարին, «Լենինյան ուղի», 1929, №3, Մեր տնտեսական քաղաքականության հանգուցային խնդիրներից, «Կոմունիստ», 1928, №6, Խորհրդային առևտրի և ապրանքաշրջանառության ծավալման խնդիրների մասին, «Տեղեկագիրք», 1934, №4 և այլն:

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԴԱՎԻԹ ՆԵՐՍԻԿԻ

(1973)

Ծնվել է Դիլիջան քաղաքում: 1990-ին ընդունվել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի ընդհանուր տնտեսագիտական ֆակուլտետը, որը գերազանցությամբ ավարտել է 1995-ին՝ էկոնոմիկայի պետական կարգավորում մասնագիտությամբ: Նույն թվականին ընդունվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի ասպիրանտուրա, որն ավարտել է 1998-ին: Ուսմանը զուգահեռ աշխատանքի է ընդունվել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում՝ որպես առաջատար մասնագետ: 1999-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1999-2001-ին ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2001-2004-ին՝ աշխատել է ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության աճուրդի կենտրոնում՝ որպես տնօրենի տեղակալ: Հետագա աշխատավայրերն են՝ «Կոննեկտ» ԲԲԸ, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոց՝ որպես գլխավոր տնօրեն, «էԿՕ-Փյուր» ՍՊԸ: 2014 թվականից աշխատում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում՝ որպես ֆինանսական վարչության պետի տեղակալ: 2007-ից դասա-

վանդում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում: 2016-ին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

2013-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Գլոբալացման պայմաններում Հայաստանի Հանրապետության տնտեսության կարգավորող ինստիտուտների գործունեության հիմնախնդիրները» թեմայով՝ ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

«Կորպորատիվ կառավարում, ակնկալիքներ և իրականություն» մենագրության (համահեղինակ Ա.Մարկոսյան) քննության առարկան կորպորատիվ կառավարման հիմնահարցերն են, որոնք արդիական են անցումային տնտեսություն ունեցող երկրներում: Նրանում, բացի ընդհանուր բնույթի հարցերից, ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում առաջնահերթ լուծման այն հիմնախնդիրները, որոնք էապես կբարելավեն և կբարձրացնեն ինչպես կորպորատիվ կառավարման ամբողջ համակարգի, այնպես էլ նրա առանձին ինստիտուտների և ենթակառուցվածքների արդյունավետությունը:

«Իրականի և անիրականի միջև. տնտեսագիտական-քաղաքագիտական ուսումնասիրություն» աշխատությունը (համահեղինակ Ա.Մարկոսյան) նվիրված է տնտեսության և քաղաքական կյանքի փոխհարաբերություններին և նրանց միջև ձևավորված կապերին, որոնք էապես պայմանավորում են երկրի ամրությունը և նրա ընդունակությունը՝ հաղթահարելու ժամանակի մարտահրավերները: Տնտեսական և քաղաքական համակարգերի փոխհարաբերությունները, զարգացման համընդհանուր միտումների և հասարակական ընտրության կապի, քաղաքական համակարգի և նրա ինստիտուտների, քաղաքական գործունեության և սոցիալ-տնտեսական քաղաքականության ձևավորման առանձնահատկությունների և զարգացման

կոնկրետ ծրագրերի ուսումնասիրությունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ եզրահանգումները ու համապատասխան առաջարկությունների մշակումներն ընկած են այդ աշխատության հիմքում:

«Ինստիտուտներ և տնտեսական աճ» աշխատությունը (համահեղինակներ՝ Ա.Մարկոսյան, Ա.Հովասափյան) որոշակի էքսկուրս է տնտեսության արդի մեկնությունների մեջ քննության ենթարկելու՝ քաղաքականության, ինստիտուտների և տնտեսական աճի, համաշխարհային քաղաքակրթության համակարգում ժողովրդավարության, տնտեսական ազատության և տնտեսական բարեկեցության փոխազդեցության հարցերը և այդ սահմաններում տեղադրելու Հայաստանի ինստիտուցիոնալ միջավայրի էկոնոմետրիկական վերլուծությունն ու նոր տնտեսակարգի երկու տասնամյակների հետագծում նշմարելու բաց թողնված հնարավորություններն ու կորուստները:

Ելակետ ունենալով ինստիտուցիոնալիզմի տեսության և պատմության վերաբերյալ գիտական մտքի արդյունքներն ու որոնումները «Հայաստանի Հանրապետության տնտեսությունը կարգավորող ինստիտուտները գլոբալացման պայմաններում» մենագրությունում անդրադարձ է կատարվում ինստիտուտների և տնտեսական աճի փոխկախվածության տեսական հիմքերին, տնտեսական աճի ինստիտուցիոնալ նախադրյալներին, տնտեսական զարգացման ինստիտուցիոնալ բնութագրերի գնահատման հիմնական մոտեցումներին, արծարծում համաշխարհային քաղաքակրթության համակարգում ժողովրդավարության բաղադրիչների հարցերը: Փորձ է արվում գնահատել հանրապետության տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրը, տալ այդ միջավայրի տնտեսամաթեմատիկական գնահատականը և հանրապետության ինստիտուցիոնալ զարգացման առաջնահերթությունները:

Իրողություն է, որ շուկայական տնտեսություն ստեղծելու սկզբնական շրջանում կարևորվում էին ոչ այնքան ինստիտուտների դերը, որքան ուշադրության առնում տնտեսության ազատականացման, կայունության և մասնավորեցման հարցերը: Մինչդեռ տնտեսական զարգացման փորձը էական է դիտում ինստիտուտների որակի ու առհասարակ ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցությունը տնտեսության զարգացման վրա: Միաժամանակ հեղինակը շեշտում է ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման ընթացքում հետևյալ մոտեցումները. «բարեփոխումների ռազմավարությունը պետք է ուղղված լինի հիմնական ինստիտուցիոնալ սահմանափակումներին», «ինստիտուտների ներմուծումը պետք է համապատասխանի տեղական պայմաններին նրանց հարմարվողականությանը», «բարեփոխումներ իրականացնողները պետք է պատրաստ լինեն ինստիտուցիոնալ փորձարկումների, նաև իրենց քաղաքականության շտկմանը՝ բարեփոխման արդյունքների վերահսկման և գնահատման վրա», «ուշադրություն դարձնել այն ինստիտուտներին, որոնք ապահովում են տնտեսական կայունություն արտաքին ցնցումների նկատմամբ»: Նրա աշխատություններում ինստիտուցիոնալ համակարգի արդի առանձնահատկությունները դիտարկվում են գլոբալացվող աշխարհի համատեքստում:

Հեղինակի մեկ այլ աշխատությունում՝ «Միջազգային կորպորացիաներ» (համահեղինակ՝ Է.Համբարձումյան), մատնանշվում է այն իրողությունը, որ զարգացող երկրներում միջազգային կորպորացիաների ազդեցության մեծացումը հակադարձ (բացասական) արձագանք է առաջացնում ազգային ձեռնարկատերերի և, սովորաբար, նրանց աջակցող կառավարությունների շրջանում: Այստեղից ծագում է արդի դարաշրջանի հիմնական հակասությունը

վերազգային կապիտալի և ազգային պետությունների շահերի միջև:

Աշխ. Սեփականության իրավունքների վերափոխումների և պետական գույքի մասնավորեցման հարցերի շուրջ, Եր., 1998, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., 2002 (համահեղինակներ՝ Ա.Մարկոսյան, Գ.Նազարյան), Կորպորատիվ կառավարում. ակնկալիքներ և իրականություն, Եր., 2003 (համահեղինակ Ա.Մարկոսյան), Իրականի և անիրականի միջև. տնտեսագիտական-քաղաքագիտական ուսումնասիրություն, Եր., 2004, Ինստիտուտներ և տնտեսական աճ. հետաձգված բարեփոխումներ, բաց թողնված հնարավորությունների կորուստներ, Եր. 2010 (համահեղինակ Ա.Մարկոսյան, Ա.Հովասափյան), Առևտրի միջազգային կոնվենցիաներն ու համաձայնագրերը, Եր., 2011 (համահեղինակ՝ Գ.Նազարյան), Միջազգային տնտեսական հարաբերություններ. ուսումնական ձեռնարկ, մաս 1, 2, Եր., 2012 (համահեղինակներ՝ Ա.Մարկոսյան, Գ.Նազարյան), Հայաստանի Հանրապետության տնտեսությունը կարգավորող ինստիտուտները գլոբալացման պայմաններում, Եր., 2013, Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով): Եր.: Տնտեսագետ, 2014 (համահեղինակ), ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները Մաքսային միության անդամակցության պայմաններում Եր.: Տնտեսագետ, 2015 (համահեղինակ), Միջազգային կորպորացիաներ: Ուսումնական ձեռնարկ, Եր.: Տնտեսագետ, 2016 (համահեղինակ՝ Է.Համբարձումյան), Մասշտաբային բնակարանաշինությունը՝ որպես ներքին արտադրության խթանմամբ, տնտեսական աճի ապահովման և համաչափ տնտեսական զարգացման ուղղություն, Եր., 2016 (համահեղինակ):

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՇՄԱՏԻ

(1976)

Ծնվել է Երևանում: 1993-ին գերազանցությամբ ավարտելով թիվ 176 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել և 1998-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտը հաշվապահական հաշվառում և աուդիտ մասնագիտությամբ: 1998-2001-ին սովորել է նույն համալսարանի ասպիրանտուրայում: 2001-ին «Արտադրական ծախսումների կառավարչական հաշվառումը (ՀՀ սննդի արդյունաբերության օրինակով)» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան հաշվապահական հաշվառում և վիճակագրություն մասնագիտությամբ: Նշված մասնագիտությամբ դա առաջին պաշտպանությունն էր հանրապետությունում: 2004-ին նրան շնորհվել է դոցենտի կոչում:

Ա.Հակոբյանը 2012-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Վարձակալության հաշվառման և ֆինանսական կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան հաշվապահական հաշվառում և վիճակագրու-

թյուն և ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտությունների գծով:

Սկսած 1999-ից Ա.Հակոբյանը դասավանդում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառում և աուդիտ, այժմ՝ ֆինանսական հաշվառում ամբիոնում:

Հանդիսանում է ԱԿԲԱ-կրեդիտ Ագրիկոլ բանկի գլխավոր հաշվապահ:

Ա. Հակոբյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ֆինանսական և կառավարչական հաշվառման, հարկման, հանրային և կորպորատիվ ֆինանսների, բանկերի և այլ ֆինանսական ինստիտուտների, արժեթղթերի և այլ ֆինանսական շուկաների, ֆինանսական կառավարման, ֆինանսական վերլուծության, վիճակագրության, մակրո և միկրո էկոնոմիկայի հիմնախնդիրները:

Վարձակալական ծառայությունները վճռորոշ դեր են կատարում մակրոտնտեսական հարաբերությունների կարգավորման գործընթացում և նպաստում են պետական շահեր հետապնդող այնպիսի խնդիրների լուծմանը, որոնցից են՝ ազգային տնտեսության համակարգում մասնավոր ներդրումների ներգրավումը, գործարարության ակտիվացման արդյունքում պետբյուջե հարկային մուտքերի ավելացումները, շուկայական ենթակառուցվածքների համակարգի զարգացման ապահովումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և այլն: Լիզինգի ֆինանսական կառավարումն իր հիմնախնդիրներն ունի նաև միկրոտնտեսական միջավայրում:

Ա.Հակոբյանի «Ֆինանսական վարձակալություն» մենագրությունում ներկայացված են տնտեսվարման մակրո և միկրո մակարդակներում ֆինանսական վարձակալության հիմնախնդիրները: Նրանում նորովի են մեկնաբանվում լիզինգի կազմակերպման և կառավարման խնդիր-

ները, դիտարկվում ֆինանսական ռիսկերի կառավարման բարելավման ուղիները, հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև վարձակալության տնտեսական վերլուծության և արդյունավետության գնահատման մոտեցումները: Մենագրությունում մշակվել է ֆինանսական վարձակալության ռիսկերի կառավարման մեխանիզմ, վարձավճարների օպտիմալացման նպատակով առաջարկվել է կիրառել լիզինգի կողմերի տնտեսական շահերի հակակշռման սկզբունք, ֆինանսական վարձակալության պարտավորությունների կառավարչական հաշվառման մեխանիզմ, վարձակալության հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների բարելավման ուղիներ, իսկ լիզինգի ներխմբային համագործակցության վերաբերյալ դիտողությունները թույլ են տալիս ձևավորելու վարձակալության կողմերի փոխշահավետ տնտեսական հետևանքների ցուցանիշերի տեղեկատվական համակարգ:

Ա.Հակոբյանը մի քանի ուսումնական ձեռնարկների հեղինակ է:

Աշխ. Ֆինանսական վարձակալություն, Եր., 2011, ուսումնական ձեռնարկներ՝ Կառավարչական հաշվառում (մաս 1), Եր., 2000 (համահեղինակ), Հաշվապահություն և վերլուծություն, Եր., 2003 (համահեղինակ), Աուդիտի ստանդարտների մեկնաբանություններ, Եր., 2003 (համահեղինակ), Հարկային հաշվապահություն և վերլուծություն, Եր., 2003, Հաշվապահական հաշվառման և աուդիտի ստանդարտների մեկնություններ, Եր., 2004 (համահեղինակ):

ՀԱԿՈԲՅԱՆ ԼԵՈՆԻԴ ՍԱՄՍՈՆԻ

(1936-2002)

Ծնվել է Լենինականում: Ավարտել է Մոսկվայի ֆինանսական (1957), իրավաբանական (1958), մեքենաշինական (1964) ինստիտուտները, ԽՍՀՄ նախարարների խորհրդին առընթեր ժողովրդական տնտեսության ակադեմիան (1981): 1964-ին Հայաստանի գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզը, իսկ 1984-ին՝ ԽՍՀՄ նախարարների խորհրդին առընթեր ժողովրդական տնտեսության ակադեմիայում դոկտորական թեզը: Պրոֆեսորի կոչում ստացել է 1990-ին: 2000-ին ընտրվել է ՀՀ ԳԱ թղթակից անդամ: Եղել է ՀԵԱ-ի ակադեմիկոս (1996): Նա անցել է պետական-քաղաքական գործունեության հետևյալ ուղին. 1976-79-ին՝ ՀԽՍՀ առևտրի փոխնախարար, 1987-88-ին՝ Հայկոոպի վարչության նախագահ, 1988-90-ին՝ ՀԿԿ ԿԿ աղետի գոտու շինարարական վերականգնողական աշխատանքները համակարգող բաժնի վարիչ, 1992-96-ին՝ ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի էկոնոմիկայի և ֆինանսների մշտական նախագահ, 2000-01-ին՝ ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության նախարար, 2001-02-ին՝ ՀՀ նախագահի

խորհրդական: Եղել է ՀԽՍՀ ԳԽ (1980-90), ՀՀ ԳԽ (1990-95), ՀՀ ԱԺ (1995-99, 1999-2000) պատգամավոր, 1999-ից՝ ՀԿԿ պատգամավորական խմբակցության ղեկավար:

Աշխատանքները վերաբերում են աշխատանքի մեքենայացման, ավտոմատացման և արդյունաբերության մեջ բանվորական կազմի գործառնական կառուցվածքի ու դրա կատարելագործման, բարձր տեխնոլոգիաների ներդրման խնդիրներին:

Աշխ. Функциональная структура рабочего состава в промышленности и проблема совершенствования, Ер., 1975, Социально-экономические проблемы механизации и труда совершенствование структуры рабочих кадров в промышленности СССР, М., 1985.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՍԵՐԳԵՅԻ

(1961)

Մ.Հայրապետյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են տնտեսական քաղաքականության, մակրոտնտեսական գործընթացների կանխատեսման, ինովացիոն զարգացման ու ձեռնարկատիրության հարցերին: 2003-ին «Методологические основы анализа и прогнозирования макроэкономических процессов» ատենախոսության համար ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Նա հանդիսանում է Ռուսաստանի պետական դումայի անալիտիկ կառավարման ապարատի գլխավոր խորհրդականը: Համաձայն նրա առաջադրած կոնցեպցիայի՝ համաշխարհային և մեկուսի երկրների տնտեսական զարգացման ներկա և ապագա բնութագրերն ու տեմպերը, այդ թվում Ռուսաստանի տնտեսական համակարգի զարգացման բնութագրերն ու տեմպերը, իրենց ամբողջության մեջ պետք է որոշվեն հենց առանձին երկրների կողմից, դրանց ազգային և տրանսազգային ֆունկցիաներով ու հատուկ նշանակությամբ և մեկուսի երկրների ու համաշխարհային տնտեսական զարգացման գեներացման ու վերարտադրության մեջ ունեցած դերով, ինչպես նաև համաշխարհային տնտեսա-

կան և մեկուսի քաղաքական ցիկլերի սինխրոն զարգացումով: Ուստի, ժամանակակից Ռուսաստանի զարգացման կարևոր և առավել հրատապ խնդիրը, այդ թվում նրա տնտեսական համակարգի, հանդիսանում է ազգային պետության ամրապնդումն ու ստեղծումը, ինչպես նաև երկրի քաղաքական ցիկլերի ձևավորման ու պարբերական վերարտադրության, հետևապես նաև համաշխարհային տնտեսական ցիկլերի շրջանակներում երկրի տնտեսական զարգացման մեխանիզմի համար պայմանների պահպանումը: Այս տեսանկյուններից է կատարվում տնտեսական կյանքի նրա դիտարկումները:

Մակրոտնտեսական գործընթացների վերլուծության ու կանխատեսման ժամանակակից մեթոդոլոգիաները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող և իրականացվող տնտեսական քաղաքականությունն ունի գերազանցապես սուբյեկտիվ բնույթ: Առաջադրվող մոդելներում ներառվում են աբստրակտ պայմանների, ինչպես նաև տնտեսական զարգացման ուղղությունների քաոսային, պատահական և անորոշ երկրորդական սկզբունքների հավաքածու, որոնց կիրառության ուղղակի հետևանքն է՝ տնտեսական զարգացման բավական ճշգրիտ, համակարգված և փոխկապակցված կանխատեսումների բացակայությունը: Դրանք հաճախ կրկնում են նախորդ տեսությունների այս կամ այն ձևափոխված տարբերակները: Նա գտնում է, որ Ռուսաստանում հակաճգնաժամային միջոցառումները բխում են համաշխարհային տնտեսության և կառավարման պրակտիկայում տեղ գտած հարկաբյուջետային և դրամավարկային մոտեցումներից: Առաջին մոտեցումը ելակետ ունի նեոքեյնսյան կոնցեպցիան, որն առավել արդյունավետ է համարում հարկաբյուջետային միջոցառումները, այսինքն՝ «պետության միջամտությունը» տնտեսության կարգավորմանը, երկրորդ մոտեցումը՝

իր հիմքում ունի նեոդասական տեսությունը, որը նախապատվություն է տալիս վարկադրամական տեսությանը՝ մոնետար կամ տնտեսությանը «պետության չմիջամտելու քաղաքականությանը»: Մինչդեռ այդ հակադրությունը տնտեսական զարգացման ցիկլային բնույթի տեսանկյունից պայմանական է: Դրանցից յուրաքանչյուրը՝ ժամանակակից գլոբալ տնտեսության պայմաններում ավելի բարդացված փողի քանակային տեսության տարբերակում: Այսինքն՝ գների մակարդակի և արտադրության ծավալների կախվածությունը դրամական զանգվածի քանակից և շրջանառության արագությունից: Տարբերությունը կարգավորման տարբեր օբյեկտների մեջ է: Նեոդասականների համար՝ կապված է միկրոտնտեսական, իսկ նեոքեյնսականների համար՝ մակրոտնտեսական պրոցեսների հետ: Մ.Հայրապետյանի կարծիքով Ռուսաստանի ժամանակակից հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը անկարող է ապահովել աճ, և ոչ էլ դա ապահովող էֆեկտիվ պահանջարկ և էֆեկտիվ առաջարկ: Ռուսաստանում առկա է ավելի հիմնավոր պատճառներ: Դա առաջին հերթին կախված է տնտեսական քաղաքականության լիարժեք օբյեկտների բացակայության հետ, պետական և մասնավոր ոլորտների ընդհանուր թուլության հետ: Այդպիսի «թուլությունն» էլ իր մեջ թաքցնում է ինչպես անկայունության և ճգնաժամի, այնպես էլ կայունության և վերելքի աղբյուրները, ուստի և ծնում է պետական կարգավորման ուղղակի և անուղղակի ապահավասարակշռվածություն: Վերջին հաշվով դա օբյեկտիվորեն (անկախ «քաղաքական կամքից») իջեցնում է հարկաբյուջետային և վարկադրամական քաղաքականության արդյունավետությունը: Հետևապես անհրաժեշտ է ստեղծել ուղղակի և անուղղակի կարգավորման օբյեկտ կամ ուժեղ պետական ոլորտ, կամ ուժեղ մասնավոր ոլորտ,

կամ դրանց սիմբիոզը (խառը տնտեսություն): Կարգավորման լիարժեք օբյեկտների և սուբյեկտների բացակայությունը, առավել ևս՝ դրանց միջև հակադարձ կապը, պրակտիկորեն Ռուսաստանի համար շանս չի թողնում ընթացիկ ճգնաժամից դուրս գալու և հետագա ճգնաժամերը մեղմելու համար, առանց տնտեսական աճի տեմպերի պլանավորուման, ընդ որում, առանց ցիկլային տատանումների հաշվառման: Ռուսաստանի համար նրա կանխատեսումները պեսիմիստական են: Երկրում խթանող տնտեսական քաղաքականության միջոցառումների կիրառման, ինվեստիցիաների աճի, տոկոսների և հարկային դրույքաչափերի իջեցման ժամանակն արդեն անցել է: Մ.Հայրապետյանը կազմել է «200-ամյա համաշխարհային ցիկլային ալիքի», համաշխարհային տնտեսական ու քաղաքական սինխրոն ցիկլերի քարտեզը, համաձայն որի 2003-ից սկիզբ առած վերելքի շրջանն ավարտվել է, համաշխարհային՝ այդ թվում Ռուսաստանի տնտեսությունը մտել է 2015-ից 2020 թվականի հավասարակշռված վիճակը՝ ընթացիկ տնտեսական ցիկլի բարձրագույն փուլը, որին կհաջորդի ցիկլային անկումը մինչև 2032 թվականը (նրա կարծիքով մեկուսի երկրի 34,5 տարվա տևողությամբ քաղաքական ցիկլերին համապատասխան տեղի է ունենում մեկուսի երկրի տնտեսական համակարգի և դրա տարրերի զարգացման դինամիկայի թաքնված հարմարվում) մոտակա 4-5 տարիներին իրավիճակը գործնականում չի փոխվի՝ տոկոսները և հարկային միջին դրույքաչափերը, շահույթի նորման կաճեն, դրամական զանգվածը և ինվեստիցիաների ծավալները կկրճատվեն: Որքան էլ հակասական թվա, անհրաժեշտ է պաշտպանողական քաղաքականություն, մեկուսացման միտումը նկատելի է: Տնտեսական ցիկլի հատվածների ճիշտ կանխատեսումը ստացել է հույժ կարևոր նշանակություն: Ակներև է, որ

ֆրիտերադերականության էրան մոտակա 15-17 տարիների համար ավարտվել է, 2020թ.-ից սկսվելու է հովանավորչության շրջանը 10-12 տարիների համար:

Բացահայտելով «պատմության դասերը» Մ.Հայրապետյանը «Глобальный мир. Между Сциллой и Харбидой экономических и политических циклов» աշխատության մեջ քննության է ենթարկում քաղաքական և տնտեսական զարգացման ցիկլայնության վերաբերյալ հայացքների էվոլյուցիան: Հեղինակը հետամուտ է իր կողմից ստորև բերվող առաջադրույթների հաստատմանը.

- Համաշխարհային համակարգի կառուցվածքը մշտապես ենթարկվել է տատանումների, գլխավորապես պայմանավորված համաշխարհային հարստության բաշխման և վերաբաշխման մրցակցությամբ, շնորհիվ այդպիսի տատանումների աշխարհում որոշվել է երկրների կարգավիճակը և ազդեցությունը:
- Համաշխարհային պատմության հիմնական էտապները բնութագրվում են ոչ թե բազմաբևեռ և նույնիսկ երկբևեռ, այլ ուղղակի միաբևեռ աշխարհով, որում համաշխարհային կարգը ձևավորվում է մեկ բևեռով՝ համաշխարհային կենտրոնով, այդ կենտրոնի առաջատար՝ համաշխարհային տերությամբ:
- Տնտեսական և քաղաքական զարգացման սինխրոնիզացիան Անգլիայի և ԱՄՆ-ի գենեզիսի, իսկ XVIII դարի վերջերից – XIX դարում համաշխարհային տնտեսական և ազգային քաղաքական ցիկլերի ընթացքում, թույլ է տվել այդ երկրներին ստեղծելու համաշխարհային և քաղաքական կենտրոններ՝ դառնալու նշված ցիկլերի ծնողը:
- XIX դարավերջի և XX դարասկզբի (1896-1930թթ. համաշխարհային տնտեսական ցիկլի ժամանակահատվածում) ստեղծվել են տնտեսական ցիկլերի հիմնական տեսությունները, որոնք սկսել են տիրապետել առաջավոր

և հավասարակշիռ տեսությունների նկատմամբ:

- Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման պրոբլեմների լուծման պրակտիկ դժվարություններն ամրապնդել և պարբերաբար ուժեղացրել են նրա ետ մնալը արևմտյան երկրներից, նախանշելով նրա տրանսֆորմացիան՝ որպես այդ երկրների «հումքային կցորդ»:
- Համաշխարհային տնտեսության և քաղաքականության բարդացումներն անխուսափելիորեն տանում է պետական ծախսերի և սոցիալական պարտավորությունների աճին, որը կազմում է արդի դարաշրջանի, այդ թվում 1998-2032թթ. համաշխարհային տնտեսական և ազգային քաղաքական ընթացիկ ցիկլերի գլխավոր առանձնահատկությունը:

Աշխ. Тактика и стратегия национального и транснационального экономического развития в рамках экономического цикла М., 1992, Функциональная теория экономического (социального) развития и цивилизаций: философия и периодизация всемирной истории (агрегирования методологическая модель), М., 1999 Стратегия и тактика развития в рамках экономических и цивилизационных циклов (страновой и мировой методологический подход), М., 2001, Бюллетень Межнационального финансово-промышленного клуба (к создания транснациональных экономических систем), М., 1995, Глобальный мир между Сциллой и Харбитой экономических и политических циклов, Мировая экономика, 2014, № 1, 2.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱՐՄԵՆԻ

(1987)

Ծնվել է Երևանում: 2002-ին ընդունվել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի կառավարման ֆակուլտետի կառավարում բաժինը և այն 2007-ին ավարտել գերազանցությամբ: 2007-ին ընդունվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտուրա և 2009-ին պաշտպանելով ատենախոսությունը՝ ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2008-11-ին աշխատել է «Էլոլա» ՓԲԸ-ում որպես փոխտնօրեն: 2013-ին ստացել է դոցենտի կոչում: 2015-ին «Մասնակցային կառավարման զարգացման ուղղությունները տեղական ինքնակառավարման համակարգում (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության համար նրան շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

Վերջին տասնամյակներում կառավարման հարցերը դարձել են հաճախ արծարծվող թեմաներից: Այդպիսի աշխատություններից է Յու.Սուվարյանի ղեկավարած հետազոտական խմբի (անդամներ՝ Ռ.Ա.Հայրապետյան, Ս.Ա.Ասատրյան, Տ.Ս.Մնացականյան) «Պետական կառա-

վարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունը: Դրանում անդրադառնալով պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման արդյունավետության հիմնախնդրին, փորձ է արվել վերլուծել և գնահատել նշված երկու մարմինների փոխհարաբերությունների առանձնահատկությունները հանրապետությունում, լիազորությունների բաշխումը և դրանց համապատասխանությունը ֆինանսական ռեսուրսներին, միջհամայնքային միավորումների, համայնքների խոշորացման և այլ հարցեր:

Ռ.Հայրապետյանի այլ աշխատանքները վերաբերում են քաղաքների կառավարման և զբոսաշրջության թեմատիկայի հետազոտական շրջանակներին:

Աշխ. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2014 (համահեղինակ), Партисипативное управление в крупных городах, Saurbrucken, Germany, 2014, Զբոսաշրջության մրցունակությունը և զարգացման ուղղությունները, Եր., 2014 (համահեղինակ):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏԻ

(1927-2015)

Ծնվել է Նախիջևանի ԻԽՍՀ Ջուլֆա քաղաքում, որտեղից 1930-ին ընտանիքով տեղափոխվել է Երևան: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, իսկ այնուհետև տեղափոխվում նոր բացված ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ և այն գերազանցությամբ ավարտում 1950-ին: 1955-ին ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրան ավարտելուց և թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց ի վեր նրա աշխատանքային ուղին կապվում Երևանի Վ.Բրյուսովի անվան ինստիտուտի (համալսարանի) հետ, սկզբում որպես լաբորանտ, ապա դոցենտ, պրոֆեսոր, 1971-97-ին՝ քաղաքատնտեսության, 1997-ից հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, միաժամանակ 1974-78-ին և 1982-84-ին ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1983-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, 1986-ին՝ պրոֆեսորի կոչում:

Աշխատանքները վերաբերում են արդյունաբերության տեղաբաշխման, արդյունաբերության ճյուղային կառուց-

վածքի խնդիրներին: Նրա «Отраслевая структура промышленности Армянской ССР: тенденции ее развития» աշխատության մեջ մեթոդոլոգիական բնույթի հիմնավորումներին հաջորդում են ՀՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի ձևավորման և առկա վիճակի, կառուցվածքային տեղաշարժերի արդյունավետության և զարգացման միտումների վերլուծությունները:

Վ.Հայրապետյանը եղել է ՀՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ (1985):

Աշխ. ԽՍՀՄ-ում սոցիալիստական արդյունաբերության տեղաբաշխման մասին, Եր., 1958: Отраслевая структура промышленности Армянской ССР: тенденции ее развития, Ер., 1978.

ՀԱՅՐՈՒՄՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ

(1905-1988)

Ծնվել է Եսենտուկի քաղաքում: 1930-ին ավարտել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական ֆակուլտետը: 1939-41-ին և 1946-49-ին աշխատել է հայկական անասնապահության ԳՀԻ-ում, 1958-66-ին՝ հայկական գյուղատնտեսության էկոնոմիկայի և կազմակերպման ԳՀԻ տնօրեն, 1966-83-ին՝ ՀՀ պետպլանի էկոնոմիկայի և պլանավորման ԳՀԻ բաժնի վարիչ: Տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում ստացել է 1972-ին:

Աշխատանքները վերաբերում են գյուղատնտեսության էկոնոմիկայի կազմակերպման, տեղաբաշխման, մերձքաղաքային տնտեսությունների ստեղծման և այլ խնդիրների:

«Հայաստանի գյուղատնտեսության տեղաբաշխումը և մասնագիտացումը» գիրքը Հայրումյանի բազմամյա հետազոտությունների արդյունքն է, որի հիման վրա նա ներկայացնում է գյուղատնտեսության նախախորհրդային և խորհրդային ժամանակաշրջանի զարգացման մակարդակի, գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման ու արդյունավետության տարածքային տարբե-

ությունների բնութագիրը և տնտեսական գնահատականը: Գյուղատնտեսության զարգացման հիմնահարցերի լուծման գործում կարևորելով յուրաքանչյուր շրջանի բնական ու տնտեսական առանձնահատկությունների հաշվառումը, Հայրումյանը մանրամասնորեն շարադրում է աշխատանքի հասարակական բաժանման տեսական հիմունքները, գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման ու մասնագիտացման վրա ազդող կարևորագույն գործոնները: Հեղինակը տալիս է որոշակի հանձնարարականներ՝ հանրապետության գյուղատնտեսության զարգացման ուղղությունների, արտադրության տնտեսապես նպատակային մասնագիտացման համակենտրոնացման վերաբերյալ:

Աշխ. Հայաստանի գյուղատնտեսության տեղաբաշխումը և մասնագիտացումը, Եր.,1974, Агропромышленный комплекс и проблема обеспечения населения продовольствием, Ер., 1988. (составитель и ответственный редактор).

ՀԱՅՐՈՒՄՅԱՆ ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳԻ

(1933-2007)

Ծնվել է Երևանում: 1957-ին ավարտել է Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը: 1958-1960-ին աշխատել է Արարատի տարածաշրջանի Կիրովի անվան սովխոզին կից գյուղատնտեսության էկոնոմիկայի և կազմակերպման գիտահետազոտական ինստիտուտի հենակետում, 1960-63-ին սովորել է նույն ինստիտուտի ասպիրանտուրայում, 1963-70-ին՝ զբաղեցրել կրտսեր գիտաշխատողի, իսկ այնուհետև՝ ավագ գիտաշխատողի պաշտոնները: 1978-94-ին Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի գյուղատնտեսության էկոնոմիկա և արտադրության կազմակերպում ամբիոնում զբաղեցրել է ասիստենտի, դոցենտի և պրոֆեսորի պաշտոնները: 1994-99-ին եղել է Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիայի հաշվապահական հաշվառում և աուդիտ ամբիոնի վարիչ, իսկ այնուհետև զբաղեցրել է պրոֆեսորի պաշտոն:

1991-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական

աստիճան: 1994-ին ընտրվել է ՀՀ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

Աշխատանքները վերաբերում են ագրարային տնտեսագիտության և կառավարման հարցերին: Հայրումյանի աշխատանքների գերակշիռ մասը նվիրված է անասնապահության հիմնական ֆոնդերի արդյունավետ օգտագործման հիմնախնդիրներին (տե՛ս աշխատությունների ցանկը):

Հայաստանը տնօրինում է գյուղատնտեսական վարելահողերի ոչ մեծ մակերեսների, ինչը սահմանափակում է բնակչությանը սննդամթերքներով ինքնուրույն ապահովելու հանրապետության հնարավորությունները: Ուստի, նրա կարծիքով, անհրաժեշտություն է դառնում սեփական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ հողագործության ու անասնապահության նյութատեխնիկական բազայի ռացիոնալ ձևավորման հիմքի վրա, ինչը պահանջում է բազմակողմ համալիր հետազոտություններ՝ ուղղված հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացմանը, հատկապես այն ճյուղերում, որոնց զարգացումը կարող է դառնալ գերակա շուկայական տնտեսությանն անցման պայմաններում:

Նրա աշխատություններում ներկայացված են անասնապահության նյութատեխնիկական բազայի ձևավորման տեսական ասպեկտներն ու շրջանային առանձնահատկությունները, հիմնական ֆոնդերի տնտեսական արդյունավետության բարձրացման գործոնները, ինչպես նաև ճյուղի ռեսուրսային ներուժի ձևավորման միտումներն ու առանձնահատկությունները, հատկապես կարևորելով բնական ռեսուրսների ու պայմանների բնութագրերը, գյուղացիական տնտեսությունների ռեսուրսային ներուժի ձևավորման առանձնահատկությունները, կապիտալ ներդրում-

ների գերակայության բնական ռեսուրսային ու սոցիալ-էկոլոգիական ասպեկտները:

Հայրումյանը շուրջ 125 աշխատանքների հեղինակ է:

Աշխ. Эффективность использования и эффективного функционирования основных средств в животноводстве Армянской ССР, Госплан Арм.ССР, 1989, Вопросы повышения эффективности использования основных фондов и капитальных вложений, Тр.ЕрЗВИ, 1990, Факторы повышения экономической эффективности основных фондов в мясо-молочном подкомплексе Армении. ЕрЗВИ,1990, Методические принципы выбора приоритетных направлений капитальных вложений. ЕрЗВИ.1991, Մարքեթինգ, մենեջմենթ, ուսումնական ձեռնարկ (Մ.Ս.Մելքոնյանի և Վ.Մ.Եդիգարյանի համահեղինակությամբ), Толковый терминологический словарь-справочник делового человека, Е.,1995 (соавтор).

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿ ԳԱՐՈՒՇԻ

(1948)

Ծնվել է Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղում, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը: 1970-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: Նույն տարում ընդունվել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան: 1974-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1978-ին նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: 1973-1981թթ. դասախոսական աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանում, ապա նորաստեղծ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում: Համամիութենական եռաստիճան մրցույթի արդյունքներով (ընդգրկված են եղել 253 թեկնածուներ) 1977-78թթ. գիտական ստաժավորման է գործուղվել Բելգրադի համալսարան (Հարավսլավիա), որտեղ զբաղվել է ռեգիոնալ կառավարման հիմնախնդիրների ուսումնասիրությամբ: Այդ ընտրության համար կարևոր դեր է խաղացել միութենական «Экономические науки» ամսագրի 1975թ. 5-րդ համարում Գ.Հարությունյանի հրատարակած «Оценка эффективности отраслевых структурных сдвигов в промышленности» վերնագրով հոդվածը, որը այդ ոլորտում գիտական նոր մոտեցումների լուրջ հայտ էր ներկայացնում:

Գ.Հարությունյանը 1982-1987 թթ. աշխատել է տնտեսագետ-դասախոս Հայաստանի կոմկուսի Կենտկոմում:

1987-ին նշանակվել է Կենտկոմի սոցիալ-տնտեսագիտական բաժնի վարիչ: Նրա նախաձեռնությամբ մշակվել են Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջանների զարգացման, արտադրողական ուժերի տեղաբաշխման, տնտեսության կառուցվածքի ու պետական կառավարման համակարգի կատարելագործման, Հայաստանում ազատ տնտեսական գոտու ձևավորման և մի շարք այլ ծրագրեր, որոնք ընդհուպ միութենական կառավարության հավանությանն են արժանացել: 1988-ի ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո Գ.Հարությունյանը ղեկավարում է ԽՍՀՄ կառավարության նախագահի ղեկավարությամբ գործող երկրաշարժի հետևանքները հաղթահարող միութենական հանձնաժողովի աշխատանքային խումբը, որը իրականացնում է ոչ միայն անհետաձգելի օպերատիվ աշխատանքներ, այլև կազմակերպում է միութենական կառավարության որոշումների նախագծերի մշակումը՝ Հայաստանում երկրաշարժի հետևանքների հաղթահարման վերաբերյալ:

Գ.Հարությունյանը 1988-ին, որպես ԽՍՀՄ կառավարությանն առընթեր կառավարման պետական ակադեմիայի դոկտորանտ, ռեգիոնալ կառավարման արդյունավետության հիմնահարցերի վերաբերյալ դոկտորական ատենախոսություն է ներկայացնում հրապարակային պաշտպանության, որի նախապաշտպանությունը տեղի է ունենում նույն թվականի հոկտեմբերին: Այնուհետև վրա հասած երկրաշարժով և ապա ղարաբաղյան շարժմամբ պայմանավորված արտակարգ իրավիճակները ժամանակ ու հնարավորություն չեն տալիս այդ ուղղությամբ հետագա քայլեր իրականացնել:

1990-ին Գ.Հարությունյանն ընտրվում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր, նույն թվականին՝ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ: Նա ծավալուն աշխատանք է իրականացնում Գերագույն խորհրդի կողմից ընդունվելիք օրինագծերի նախագծերի մշակման ու օրենսդրական նոր քաղաքականության իրականացման գործում: Գ.Հարությունյանը

Հայաստանի անկախության մասին հռչակագրի տեքստի նախագիծը մշակող խորհրդարանական հանձնաժողովի անդամ ու նախագծի համահեղինակ է:

1991-ին Գ.Հարությունյանը համաժողովրդական քվեարկության արդյունքներով ընտրվում է Հայաստանի Հանրապետության փոխնախագահ, միաժամանակ 1991թ. նոյեմբերից մինչև 1992թ. հուլիսը կատարում է նաև ՀՀ վարչապետի պարտականությունները: Նրա նախաձեռնությամբ Հայաստանում ներդրվեցին ճգնաժամային կառավարման այնպիսի մոտեցումներ, որոնք հնարավորություն տվեցին զգալիորեն մեղմել պատերազմի, շրջափակման, էներգետիկ ճգնաժամի և համակարգային փլուզման այլ բացասական ազդեցությունները:

Գ.Հարությունյանի նախաձեռնությամբ 1992-ին ստեղծվում է Հայաստանի համահայկական հիմնադրամը, նրա ղեկավարությամբ է գործում «Հայաստան-Իրան» միջպետական հանձնաժողովը, նա համակարգում է իրավաստեղծ ոլորտում ՀՀ նախագահի լիազորությունների իրականացման աշխատանքները, ակտիվ աջակցություն է ցուցաբերում երկրի պաշտպանունակության ամրապնդման գործին, վերջին 15 տարիների ընթացքում շարունակաբար եղել է ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի անդամ:

1996թ. փետրվարի 6-ին Գ.Հարությունյանը ՀՀ Ազգային ժողովի կողմից նշանակվում է ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ և մեծ ջանքեր է ներդնում պետական իշխանության այս նոր ինստիտուտի կայացման ու միջազգային ճանաչման գործում:

1996թ. նրա նախաձեռնությամբ ստեղծվում է ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնը, և նա ընտրվում է կենտրոնի խորհրդի նախագահ: 1997-ին Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի նախագահի հետ միասին նախաձեռնում է «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպության ստեղծումը, որի անփոփոխ նախագահն է: 1997թ. դեկտեմբերին նա

ընտրվում է Ինֆորմատիզացիայի միջազգային ակադեմիայի անդամ: 1997թ. հոկտեմբերից «Конституционное правосудие» միջազգային եռամսյա տեղեկագրի խմբագրական խորհրդի նախագահն է, իսկ 2001 թվականից՝ «Սահմանադրական արդարադատությունը նոր հազարամյակում» միջազգային քառալեզու տարեգրքի հրատարակման ծրագրի ղեկավարը:

Գ.Հարությունյանը 1997-ից Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) անդամ է, 2012 թվականից՝ նույն հանձնաժողովի բյուրոյի անդամ, իսկ 2009-ից՝ Սահմանադրական դատարանների համաշխարհային կոնգրեսի բյուրոյի անդամ (կոնգրեսը ներառում է 110 երկիր, բյուրոն ներկայացնում են 10 երկրներ):

2016 թվականին Գ. Հարությունյանն ընտրվում է «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ: Իր հետ միասին կենտրոնի համահիմնադիրներ են 18 երկրների 40 ճանաչված սահմանադրագետներ:

Հայաստանի Հանրապետության նախագահի 1998թ. ապրիլի 23-ի հրամանագրով նրան շնորհվել է դատավորի որակավորման բարձրագույն դաս:

1998թ. նոյեմբերից Գ.Հարությունյանը Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության անդամ է:

1999թ. մարտին Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Սահմանադրական դատարանը պետական իշխանության համակարգում (համեմատական վերլուծություն)» թեմայով:

Իրավագիտության դոկտոր է 1999 թվականից, պրոֆեսոր՝ 2004-ից:

2009թ. սեպտեմբերին հայ իրավաբանների միջազգային խորհրդաժողովում Գ.Հարությունյանն ընտրվել է որպես միջազգային այդ կազմակերպության խորհրդի աշխատանքները համակարգող նախագահ: Գ.Հարությունյանը հեղինակ է հայերենով, ռուսերենով, անգլերենով և ֆրանսերենով հրատարակված շուրջ 31 գրքերի

և 200-ից ավելի գիտական հոդվածների՝ նվիրված տարածաշրջանային զարգացման պետական կառավարման, ժողովրդավարական զարգացումների, սահմանադրական իրավունքի և սահմանադրական արդարադատության հիմնախնդիրներին:

Նա մասնակցել է 60-ից ավելի միջազգային գիտաժողովների և հանդես եկել գիտական զեկուցումներով: Նրա գիտական ուսումնասիրությունների արդյունքները միջազգային լուրջ ճանաչում են ձեռք բերել և կարևոր ներդրում են պետականագիտության և անցումագիտության բնագավառներում՝ ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Գ.Հարությունյանը համարվում է «Սահմանադրական ախտաբանություն» և «Սահմանադրական մշտադիտարկում» գիտական ուղղության հիմնադիրներից մեկը: Մասնագետների շրջանում լայն ճանաչում են գտել Գ.Հարությունյանի կողմից առաջ քաշված և հետևողականորեն զարգացվող դոկտրինալ մոտեցումները «սահմանադրականության», «սահմանադրական մշակույթի» և հասարակական համակարգի իմունային անբավարարության հաղթահարման վերաբերյալ: Նրա կողմից պատրաստված փորձագիտական զեկույցները Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի շրջանակներում համաեվրոպական կարևորություն են ձեռք բերել:

2016-ին լույս է տեսել Գ.Հարությունյանի «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» աշխատությունը՝ հայերենով և անգլերենով: Այն իր բնույթով հիմնարար է, որում հարցերի քննությունը կատարվում է տեսափիլիսոփայական, պատմատրամաբանական, համակարգային ճանաչողական, համեմատական-սահմանադրական, իրավակիրառական բազմաշերտ դրսևորումների դիտակետերից: Ինչպես նկատում է հեղինակը, «սահմանադրական մշակույթը սոցիալական հանրության մտավոր ու մշակութային ողջ ժառանգության ու նաև ժողովրդի պատմական հիշողության կարևոր բաղադրամասերից է, և դրա ճանաչողությունն ու իմաստավորումը յուրաքանչյուր ազգի ու ժողովրդի համար

ինքնաճանաչման մեծ խորհուրդ ունի: Հենց այս մղումներով էլ Գ.Հարությունյանը հիմնախնդրի շարադրանքը սկսում է վաղ քրիստոնեական շրջանից հայ իրականության մեջ սահմանադրական մշակույթի ձևավորման պատմական արմատների վերլուծությունից:

Հասարակության էվոլյուցիայի հետ ընդլայնվել են «սահմանադրական մշակույթ» հասկացության բովանդակային սահմաններն ու զարգացման միտումները: Աշխատության մեջ սույն հետագծի բացահայտումներին հաջորդում են սահմանադրական մշակույթի արդի դրսևորումների, զարգացումների, անցումային երկրներում իրավական ու ժողովրդավարական տեսության լինելիության հարցերի քննությունը: Աշխատության շնորհանդեսը 2017թ. հունվարի 26-ին կայացավ Ստրասբուգում, Եվրախորհրդում՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի անմիջական մասնակցությամբ:

Գ.Հարությունյանը 1970-ից սկսած չի ընդհատել դասախոսական աշխատանքը, ղեկավարել է բազմաթիվ ասպիրանտների գիտական թեզեր, ՀՀ պետական համալսարանում և ՀՀ կառավարման ակադեմիայում գործող գիտական աստիճաններ շնորհող իրավագիտության գծով մասնագիտական խորհուրդների անդամ է, Երևանի տնտեսագիտական համալսարանի պատվավոր դոկտոր, սահմանադրական իրավունքի ու սահմանադրական արդարադատության հարցերով բուհական դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների հեղինակ ու համահեղինակ: Նա նաև «Իրավունք» հրատարակչության գիտական խորհրդի նախագահն է ու տարբեր ամսագրերի գիտական խորհուրդների անդամ: Նրա գիտական խմբագրությամբ ու առաջաբաններով են հրատարակվել շուրջ երկու տասնյակ մենագրություններ:

ԼՂՀ նախագահի հրամանագրով Գ.Հարությունյանը պարգևատրվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով, իսկ ՀՀ նախագահի հրամանագրով՝ «Տիգրան Մեծ» շքանշանով:

Աշխ. Ռեգիոնալ վերարտադրության տնտեսական արդյունավետությունը, Երևան, «Հայաստան», 1984 (համահեղինակ), Սահմանադրական վերահսկողություն (համեմատական վերլուծություն), Երևան, «Նժար», 1977 (ամփոփումը ռուսերենով և անգլերենով). տե՛ս նաև՝ Armenian Philosophical Academy, “Armenian Mind”, 1988, vol. II, N 1, pp.149-159, Конституционный контроль: характер функционирования и развития системы, Москва, 1997, THE CONSTITUTIOANL REVIEW AND ITS DEVELOPMENT IN THE MODERN WORLD (A COMPARATIVE CONSTITUTIONAL ANALYSIS), Yerevan – Ljubljana, 1999 (համահեղինակ), Конституционный Суд в системе государственной власти / сравнительный анализ/. Ереван, 1999, Դատական իշխանություն. համակարգային գործակցության եվրոպական զարգացումների փորձից, Երևան, «Նժար», 2002, Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Երևան, «Նժար», 2003, Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան «Նժար», 2004, De la Constitution au Constitutionalisme, Erevan-2005, Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, «Նժար», 2005 և 2016, Конституционное право: Энциклопедический словарь. М., НОРМА, 2006 (համահեղինակ), Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք (դասագիրք բուհերի համար, լրամշակված վերահրատարակություն), Երևան, 2008, գլխ. 7, գլխ. 24, Սահմանադրական վերահսկողություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար (լրամշակված վերահրատարակություն), Երևան, «Իրավունք», 2008, CONSTITUTIONAL CULTURE: THE LESSONS OF HISTORY AND THE CHALLENGES OF TIME. Yerevan, 2009 և 2017, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր գիտ. խմբագիր, առաջաբան, հոդվածներ, 1, 2, 3, 5, 8, 93, 99, 100), Երևան, «Իրավունք», 2010: Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Եր., 2016:

Конституционализм. уроки, вызовы, гарантии сборник избранных публикации и выступлений на международных форумах, посвященных данной проблематике / Г.Г.Арутюнян,- Киев, Логос, 2011.-308с., New Millennium constitutionalism.Paradigms of Reality and Challengens. Published on the Initiative and with Foreword of Dr. G.G.Harutyunyan. Yerevan. Hjar. 2013. 526p.

Առավել ամբողջական ցանկը սե'ս ՀՀ սահմանադրական դատարանի ինտերնետային կայքում՝ www.concourt.am:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՐՈՒՇ ՍՈՂՈՄՈՆԻ

(1937-1989)

Ծնվել է Սիսիանի Բռնակոթ գյուղում (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում): Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1964-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը և կարճ ժամանակ Պետբանկում աշխատելուց հետո ընդունվել ասպիրանտուրա: 1969-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և սկսել դասախոսել համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնում: 1985-ին Թբիլիսիի պետական համալսարանում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, իսկ 1988-ին՝ պրոֆեսորի կոչում: Նա 1975-ից աշխատել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնում, 1988-89-ին եղել է նույն ամբիոնի վարիչ:

Գ.Հարությունյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են հասարակական ամբողջական արդյունքի վերարտադրության, ապրանքային հարաբերությունների տեսության և մեթոդաբանական խնդիրներին: Նա գտնում էր, որ խորհրդային տնտեսագիտական միտքը կատեգորիաների և երևույթների տեսական վերլուծության առումով որոշակի նահանջ է ապրում՝ կապված նրանում «մաթեմատիկայի հախուռն օգտագործման» հետ, որը ելնում է «տնտեսական հարաբերությունների քանակա-

կան և որակական որոշակիությունից»: Դրանցում հաճախ արտադրահարաբերությունների առանձնահատկությունները և տնտեսական հարաբերությունները նույնացվում են մեխանիկականին՝ անտեսելով դրանց սոցիալական բովանդակությունը:

Այսինքն, գիտական միտքը սահմանափակվում է պրագմատիստական մտածողության շրջանակներով: Այս տեսանկյուններից էլ նրա «Սոցիալիստական արդյունքը տնտեսական հարաբերությունների համակարգում» (տեսության հարցեր) մենագրության մեջ վերլուծության են ենթարկվում քաղաքատնտեսության մեջ խնդրի դրվածքի, աշխատանքի էության, սոցիալիստական արտադրության ու արդյունքի հասարակական բնույթի և վերջինիս՝ որպես ելակետային կատեգորիայի հարցերը:

Տեսության ու մեթոդոլոգիայի հարցերն են դիտարկվում նրա «Стоимостная определенность социалистического продукта» աշխատության մեջ: Նրանում առանձնահատուկ տեղ է հատկացվում սոցիալիզմի ժամանակ հասարակական արդյունքի բնույթին: Փորձ է արվում արտադրական և վերարտադրական կառուցվածքների հարցերը դիտարկել հետևյալ հաջորդական կապերի մեջ. հասարակական արդյունքի հիմնահարցը սոցիալիզմի քաղաքատնտեսության մեջ, սոցիալիստական արդյունքի հասարակական բնույթը, սոցիալիստական արդյունքը՝ սոցիալիզմի քաղաքատնտեսության ելակետային կատեգորիա է, արժեքային հարաբերությունները և դրանց դրսևորումները սոցիալիստական հասարակարգում, սոցիալիստական արդյունքի արժեքի ձևավորումը, սոցիալիստական արդյունքի արժեքային կառուցվածքը:

Նա շուրջ հիսուն գիտական հրատարակումների հեղինակ է:

Աշխ. Սոցիալիսական արդյունքը տնտեսական հարաբերությունների համակարգում (տեսության հարցեր), Եր., 1980, Стоимостная определенность социалистического продукта. Вопросы теории и методологии, Ер., 1983.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ

(1985)

Ծնվել է Երևանում: 2001-ին ավարտել է թիվ 88 դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ, որը գերազանցությամբ ավարտել է 2006-ին՝ ստանալով տնտեսագիտական մագիստրոսի աստիճան: Նույն թվականին ընդունվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտուրան և 2008-ին պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2009-ին վերապատրաստում է անցել Ֆլետչերի իրավաբանական և դիվանագիտական դպրոցում (ԱՄՆ, ք. Բոստոն): 2013-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով՝ ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

Դ.Հարությունյանի աշխատանքային գործունեության ուղին. 2004-ին «ԱՍՔ» ՍՊԸ-ում հաշվապահ, 2005-07-ին՝ «Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ում՝ հարկային խորհրդատու, 2007-2011-ին՝ «Փրայսուոթերհաուս Կուպերս Արմենիա» ընկերությունում՝ ավագ հարկային խորհրդատու, իսկ 2011-ից մինչև 2013թ.՝ հարկային և իրավաբանական բաժնի

մենեջեր, 2013-ից՝ «Գրանթ թորնթոն» ընկերությունում գործընկեր (բաժնետեր): ՀՀ ներքին աուդիտորների խորհրդի անդամ է: Դասավանդել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, Հայաստանի ֆրանսիական համալսարանում, իսկ ներկայումս՝ Հայաստանի ամերիկյան համալսարանում:

Դ.Հարությունյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են հարկերի, հանրապետության վճարային հաշվեկշռի, գործարարության տնտեսական խթանների, հակաճգնաժամային միջոցառումների և մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության միտումների հարցերին:

Շուկայական տնտեսությանն անցման շրջանում տնտեսագիտական միտքը հաճախ է անդրադառնում գործարարություն, ձեռնարկատիրություն, ձեռներեցություն և այլ հասկացությունների բովանդակային մեկնություններին, փորձելով սահմանազատել դրանց միացնող ու բաժանող տիրույթները: Դ.Հարությունյանը «Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում» մենագրության մեջ՝ անդրադառնալով գործարարության էությանը, էվոլյուցիային, ձևերին ու դրսևորումներին, խնդիրը դիտում է լայն շրջանակներում, ներառելով գործարարության պետական կարգավորման անհրաժեշտության, զարգացման մակարդակի և նրա հիմնախնդիրների, ծավալման ուղիների հարցերը: Աշխատության մեջ, բացի նշված հարցերի ընդհանուր վերլուծությունից, կատարվում են գործնական բնույթի և օրենսդրական դաշտի կատարելագործման մի շարք առաջարկություններ: Մասնավորապես.

- Կանխավճարային մուծումներ սահմանող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 59-րդ հոդվածները, որոնք գործարարներին պարտադրում են դեռևս չստացված շահույթի դիմաց, կանխավճարային կարգով, վճարումներ կատարել պետական բյուջե, որը որակվում է որպես գործարարների կողմից պետությանը տրվող անտոկոս «վարկ»՝ այն դեպքում, երբ գործարարներն իրենք

ունեն շրջանառու միջոցների համալրման հիմնախնդիրը:

• Հարկային արտոնություն սահմանող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը, հակասում է հարկային արդարության ու հավասարության սկզբունքին, անհավասար մրցակցային պայմաններ են ստեղծում տեղական ու օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների միջև և արգելակում փոքր ու միջին օտարերկրյա, ինչպես նաև ներքին ներդրումների ներհոսքը և այլն:

«Հարկեր և հարկագանձում» աշխատությունը (համահեղինակներ Վ.Հարությունյան, Տ.Հարությունյան) ըստ էության ՀՀ նոր հարկային համակարգի լինելիության և հետագա բարեփոխումների ընթացիկ պատմությունն է:

«Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի կառավարման հիմնախնդիրները», «Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» մենագրությունների վերնագրերը ցույց են տալիս հանրապետության և ընդհանրապես շուկայական տնտեսությանն անցնող երկրների համար կարևորության մասին:

Հայտնի է, որ ամեն մի գիտություն իր զարգացման ընթացքում այս կամ այն երևույթի պատճառի ու հետևանքի մեջ առաջադրում է տեսակետներ, փորձում հարցերը ենթարկել քննության տարբեր կապակցությունների մեջ: Այս իմաստով էլ Դ.Հարությունյանը փորձում է ուրվագծել, թե ինչ տրամաբանական նախադրյալների վրա են կառուցվել վճարային հաշվեկշռի վերաբերյալ տեսակետները, սկսած Դ.Հյումի առաջին դիտողություններից մինչև Ռ.Մանդելի, Ռ.Հարրորդի և Տ.Սցիտկովսկու էկոնոմետրիկ մոդելների, նորմատիվային, դրամավարկային, բյուջետային և արժութային, մոնետար և այլ մոդելներ:

Արձանագրվում է այն փաստը, որ, ինչպես վկայում է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի դինամիկան, հանրապետության տնտեսությունը շարունակում է զգալիորեն կախված մնալ արտաքին աշխարհից, որպես զուտ վարկառու և արտաքին պարտք/ ՀՆԱ 46

տոկոսի միջակայքում դեռևս համարվում է կառավարելի կացություն: Ի վերջո, հարցի լուծումը առնչվում է մի էական հանգույցի՝ հանրապետության տնտեսական անվտանգությանը: Վճարային հաշվեկշռի կարգավորումը կապված է պետության մի ամբողջ շարք միջոցառումների իրականացման հետ, որոնց անդրադարձ է կատարվում դրա ձևավորման առանձնահատկությունների, միջազգային փորձի, հանրապետության ներկա պայմաններում առկա հնարավորությունների, բարելավման հնարավորությունների վերաբերյալ դիտողությունների ենթաշերտերում:

Վճարային հաշվեկշռի հարցերը ենթադրում են ոչ միանշանակ ընկալումներ, անհրաժեշտություն դարձնելով իրականի և թվացյալի զարգացման միտում բնութագրող գործընթացների տարանջատումը:

Վճարային հաշվեկշռի խնդիրը տնտեսական գիտությունը դիտարկում է տարբեր տեսանկյուններից: Ո՞րն է ճիշտ, երբ արտահանումը գերազանցում է ներմուծմանը, թե՞ ընդհակառակը: Դժվար է որոշել դրանց բաժանող սահմանագծերը: Օրինակ, հարցը դիտարկելով հենց այդ կտրվածքով, 2003 թվականի Ռուսաստանի վճարային հաշվեկշիռն ունեցել է դրական մնացորդի, պայմանավորված նավթի համաշխարհային բարձր գների հետ: Կապված արտասահմանյան տարադրամի ներհոսքի հետ, ամբողջ 2003-ին բարձրացել է ռուբլու փոխանակային կուրսը և համապատասխանաբար նվազել է դոլարի փոխանակային կուրսը: Իսկ ազգային տարադրամի փոխանակային կուրսի աճը սահմանափակում է այլ՝ ոչ հումքային ճյուղերի արտահանության հնարավորությունները: Իսկ, եթե վճարային հաշվեկշռի հավասարակշռությանը նայենք տառացիորեն, ապա դա կնշանակի, որ պետությունը չպետք է վերցնի փոխառություններ կամ փոխառություններ տրամադրի այլ երկրների: Եթե հարցը դիտարկում ենք նշված սկզբունքով, ապա վճարային հաշվեկշռի դեֆիցիտը միանգամայն անցանկալի երևույթ է: Սակայն մյուս կողմից, եթե դեֆիցիտն առաջ է եկել ինվեստիցիոն նախա-

գծերի հետ կապված փոխառություններ վերցնելու հետ, ապա եկամտի ապագա աճը հիմք է ստեղծում տնտեսական զարգացման և, ի վերջո, դեֆիցիտի կրճատման համար: Իսկ վարկերի ոչ ռացիոնալ ու ոչ նպատակային ծախսերը տնտեսության համար կստեղծեն նոր անցանկալի խնդիրներ:

Հետևապես, ընդհանրացնում է Դ.Հարությունյանը.

- արտաքին առևտրային ապրանքաշրջանառության ավելացումը դեռ չի նշանակում մրցունակության բարձր մակարդակ և արտահանման ավելացում, այն կարող է ավելանալ ներմուծման աճի հաշվին և ավելացնել արտաքին առևտրի դեֆիցիտը,
- ներմուծման փոխարինման քաղաքականությունը դեռևս չի նշանակում արտահանման խթանման քաղաքականություն, որը թույլ է տալիս արտոնյալ վարկավորմամբ և արժութային արդյունավետ քաղաքականությամբ խթանել երկրի արտահանման կարողությունը:

2013թ. ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի, մինչև 35 տարեկան անցկացվող մրցույթի արդյունքներով արժանացել է տնտեսագիտության և իրավագիտության մասնագիտության գծով Մ.Գոշի անվան առաջին կարգի մրցանակի: Իսկ «Լավագույն գիտական աշխատանք 2013» մրցույթի արդյունքների ամփոփման արդյունքում տնտեսագիտության ոլորտում «Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի կառավարման հիմնախնդիրները» աշխատության համար՝ առաջին կարգի մրցանակի:

Աշխ. Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2007, Հարկեր և հարկագանձում, Եր., 2010 (համահեղինակ), Հակաճգնաժամային միջոցառումները և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները, Եր., 2011 (համահեղինակ), Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի կառավարման հիմնախնդիրները, Եր., 2012, Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2013:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՄԱՋԱՍՊ ՀՈՎԱԿԻՄԻ

(1902-1971)

Ծնվել է Բաքվում: Ունեցել է արտակարգ ու լիազոր դեսպանի աստիճան: 1923-28-ին սովորել է Մոսկվայի պետական համալսարանում, որն ավարտելուց հետո մեկ տարով ուսումնառության է մեկնել ԱՄՆ՝ Մինեսոտայի համալսարան: 1930-43-ին աշխատել է ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում: Եղել է «Проблемы экономики» ամսագրի պատասխանատու քարտուղար: 1942-ին ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում: 1943-ից զուգակցել է գիտական գործունեությունը դիվանագիտական աշխատանքի հետ: 1944-45-ին եղել է ԽՍՀՄ արտգործնախարարության տնտեսագիտական բաժնի վարիչի տեղակալ, վարիչ, ԽՍՀՄ ներկայացուցիչ ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդում և ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովում, 1948-53-ին՝ ԽՍՀՄ արտգործնախարարության կոլեգիայի անդամ, 1954-55-ին՝ նույն նախարարության խորհրդական, 1955-58-ին՝ նախարարության Եվրոպական բաժնի վարիչ, ԽՍՀՄ ներկայացուցիչ Աշխատանքի միջազգային կազմակերպության ադմինիստրատիվ խորհրդում, 1958-63-ին՝ ԽՍՀՄ դեսպան Կանադայում, 1963-70-ին՝ պատասխանատու աշխատող ԽՍՀՄ արտգործնախարարության կենտրոնական ապարատում: Նա մասնակցել է մեծ տե-

ությունների՝ Թեհրանի, Ղրիմի, Պոդսդամի կոնֆերանսնե-րին, Փարիզի խաղաղության կոնֆերանսին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջաններին: Կյանքի վերջին տարինե-րին դասավանդել է Մոսկվայի պետհամալսարանում և միջազգային հարաբերությունների ինստիտուտում:

Հ.Հարությունյանի աշխատությունները նվիրված են համաշխարհային տնտեսության (տնտեսական ճգնաժամեր, ցիկլերի պարբերականություն, զբաղվածություն, սպառում) և միջազգային տնտեսական հարաբերությունների զար-գացման միտումներին ու այլ հարցերին:

Պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի (2), «Պատվո նշան» շքանշաններով:

Աշխ. Негритянские рабочие в Соединенных Штатах, М., 1933 (под псевд. АМО), Развитие Советской экономики (учебное пособие), М., 1940 (соавтор), Гарвардские экономисты и буржуаз-ное конъюнктуроведение в США, М., 1941 (докт. дисс.).

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԼԵՆԻ

(1966)

Ծնվել է Լենինականում: 1989-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ֆինանսա-հաշվարկային ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունը. Գյումրու տարածքային տեսչություն՝ 1990-95-ին բաժնի պետ, 1995-2000-ին՝ վերահսկողության բաժնի պետ, 2000-2006-ին՝ ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության գլխավոր մասնագետ, խմբի ղեկավար, 2006-11-ին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր, 2013-ից՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի խորհրդական: 2000-ից դասավանդել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտում և ՀՀ պետական կառավարման ակադեմիայում: 1996-2000-ին սովորել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի ասպիրանտուրայում: 2000-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի, իսկ 2008-ին՝ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանները: Պրոֆեսորի կոչում ստացել է 2011-ին:

Գիտական հետաքրքրությունները վերաբերում են հանրային կառավարման ոլորտին:

«Համայնքի բյուջե. ձևավորման և օգտագործման հիմնահարցերը» մենագրությունում, որը նախատեսված է տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմի

մասնագետների համար, քննության են առնվում տեղական ինքնակառավարման տնտեսական հիմքերի, համայնքի բյուջեի մուտքերի և դրանց օգտագործման ուղղությունների, բյուջետային գործընթացի և ծրագրային զարգացման ապահովման հարցերը: Նշված խնդիրներն իրենց հետագա շարունակությունը ստացել են «Բյուջետային գործընթացի և ֆինանսական կայունության գնահատման հիմնահարցերը տեղական ինքնակառավարման համակարգում» աշխատությունում: Նրանում, նպատակ ունենալով նպաստել համայնքներում ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացումը միջազգային և հանրապետության փորձի հաշվառումով վեր են լուծվում նաև միջբյուջետային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների, ՀՀ համայնքների ֆինանսական կայունության գնահատման խնդիրները:

Աշխ. Համայնքի բյուջե. ձևավորման և օգտագործման հիմնահարցերը, Եր., 2003, Բյուջետային գործընթացի և ֆինանսական կայունության գնահատման հիմնահարցերը տեղական ինքնակառավարման համակարգում, Եր., 2007, Հանրային կառավարում (ուսումնական ձեռնարկ), Եր., 2008, Բյուջետային գործընթացը հանրային կառավարման համակարգում (ուսումնական ձեռնարկ), Եր., 2011:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ

(1983)

Ծնվել է Երևանում: 1999-ին ավարտելով «Վարդանանց ասպետներ» կրթահամալիրը, նույն տարում ընդունվել է ԵՊՀ, վերջինս գերազանցությամբ ավարտել է 2005-ին և նույն թվականին ընդունվել Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտի ասպիրանտուրան: 2006-ին պաշտպանել ու ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2015-ին պաշտպանել և ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Ունի ՀՀ աուդիտորի և հաշվապահի որակավորում: Վերապատրաստվել է Գլազգոյի երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայում (ACCA) և 2009-ին ստացել է աուդիտորի և հաշվապահի միջազգային բազային որակավորում: Ունի դոցենտի կոչում:

Աշխատանքային գործունեությունը. 2003-ին՝ «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ում՝ տնտեսագետ, 2004-2009-ին՝ «Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ՝ աուդիտորի օգնական, ավագ աուդիտոր, 2009-2014-ին՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ՝ ներքին աուդիտի բաժնի պետ: 2011-ից ղեկավարում է «Գլոբալ Կոնսալտ» ՍՊԸ հաշվապահական և խորհրդատ-

վական ընկերությունը և համատեղությամբ աշխատում է «Ջեներալ ստանդարտ քընսալթինգ» ՍՊԸ աուդիտորական ընկերությունում՝ որպես աուդիտի ավագ մենեջեր,

Տ.Հարությունյանի գիտական հետազոտությունների ոլորտը հարկային տնտեսագիտությունն է: Ինչպես գիտության բոլոր բնագավառներում, այնպես էլ տնտեսագիտության մեջ, իր զարգացման ընթացքում շրջանառության մեջ են դրվում հասկացություններ, որոնք իրենց տարողությամբ արագ դառնում են ժամանակի տնտեսական մտածողության և տնտեսական մշակույթի կարևոր բաղկացուցիչներից մեկը: «Հարկային վարչարարություն» հասկացողությունը գիտական շրջանառության մեջ է դրվել 1990-ական թվականների վերջերին, նրա էությունը ենթարկելով տարբեր չափումների: Մի դեպքում այն ներկայացվում է որպես հարկային մարմինների գործունեություն, մի երկրորդ կարծիքի, «հարկային վարչարարությունը» նույնացվում է «հարկային վերահսկողության» հետ, մի երրորդ դեպքում՝ այն դիտարկվում է որպես հարկային ոլորտի կառավարման յուրատեսակ մեխանիզմ, որը կոչված է ապահովելու պետական բյուջեի անհրաժեշտ հարկային մուտքերը, համաձայն մի չորրորդ տեսակետի, այն պետության կողմից հարկային հարաբերությունների ամբողջ համալիրի կառավարման համակարգ է, այլ հեղինակներ այդ հասկացության համար ուրվագծում են ընդգրկումների և գործունեության մեկ տասնյակից ավել գործընթացներ և այլն: Բերված կարծիքները վկայում են «հարկային վարչարարություն» հասկացության անհամակարգ օգտագործման, նրա ամբողջական տիրույթի ընդգրկումների բնութագրության և տեսական հետևությունների դժվարությունների, հետևապես նոր հետազոտությունների իրականացման մասին: Թեև հարցի վերաբերյալ որոշակի արծարծումներ առկա էին «Հարկեր և հարկագանձում» (համահեղինակներ

Վ.Հարությունյան, Դ.Հարությունյան) մենագրության մեջ, սակայն հիմնախնդիրը հանգամանալից քննության է ենթարկվել նրա «Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», «Հարկային բեռի արդարացի բաշխման և վարչարարության բարելավման հիմնախնդիրները ՀՀ-ում» ուսումնասիրություններում: Նշված աշխատություններում տեսանելի են դառնում հարկային վարչարարության հիմնական սկզբունքները, որպես օրինականության, օբյեկտիվության, միասնականության և արդյունավետության միասնություն:

Ելակետ ունենալով խնդրի վերաբերյալ հրապարակումների հետազոտական փորձը, հեղինակն ուրվագծում է հարկային վարչարարության հիմնական խնդիրներն ու դինամիկան.

- «Պետական եկամուտների և հարկատուների ֆինանսատնտեսական վիճակի վերլուծությունը և գնահատումը՝ ելնելով երկրի տնտեսական իրավիճակի փոփոխություններից,
- հարկային բեռի բաշխման և տնտեսվարման պայմանների վրա դրա ազդեցության գնահատումն ու կառուցվածքի ռացիոնալացումը,
- հարկային քաղաքականության կատարելագործման գերակայությունների բացահայտումը՝ ելնելով հարկերի ֆիսկալ և կարգավորիչ գործառույթների արդյունավետ համադրման անհրաժեշտությունից,
- հարկման մեխանիզմների արդյունավետ ձևերի մշակման և կատարելագործման ուղղությամբ ռազմավարական որոշումների ընդունումը,
- տնտեսական համակարգում հարկման տեսանկյունից կարևորություն ներկայացնող ֆինանսական հոսքերի նկատմամբ մշտական մոնիտորինգի իրականացումը»:

Հարկային վարչարարության ձևավորումը, որպես կառավարման որոշակի համակարգի, «անցման» երկրներում կապված է իրավական, կազմակերպական և սոցիալ-հոգեբանական դժվարությունների հետ:

Այստեղ միօրինակություն լինել չի կարող, իսկ այս կամ այն երկրի փորձի հաշվառումը կարող է ունենալ պայմանական բնույթ: Այլապես կունենանք ոչինչ չասող մտայնության վրա կառուցված տեսականորեն կապակից, սակայն իրականում չգործող, ինչ-որ անկապակից համակարգ: Ահա թե ինչու, աշխատության մեջ անդրադառնալով տարբեր երկրների, մասնավորապես Եվրամիության, ինչպես նաև «անցման» շրջանում գտնվող երկրների փորձին, Տ.Հարությունյանը նկատում է, թե «...Եվրոպան միայն ինֆորմացիա է մտածելու և ոչ թե կուրորեն ընդունելու համար: Հաշվի առնելով երկրի առանձնահատկությունները, ոչ մի հարկային համակարգ ամբողջությամբ կրկնել հնարավոր չէ, մեր երկրին յուրահատուկ մոտեցում է անհրաժեշտ: Հայաստանում կարելի է կիրառել հարկային համակարգի լավ կազմակերպումը, մասնավորապես վերաբաշխման գործառույթը պետք է փոխանցվի տեղական ինքնակառավարման մարմիններին: ... Այնուամենայնիվ, ցանկացած նորարարություն պետք է համապատասխանեցնել հայ մարդուն, նրա մտածելակերպին», իսկ դա նշանակում է, որ որքան էլ հրապուրիչ ներկայանան այս կամ այն երկրի հարկային վարչարարության այս կամ այն տարրերը, Հայաստանում արդյունավետ հարկային վարչարարության ձևավորման համար պահանջվում է ինքնազարգացման մի որոշակի հատված օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման, հարկային լծակների ընտրության առումներով: Հարցերն իրենց խտացումներն են ստացել «Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության կատարելագործման հիմ-

նախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» մենագրության մեջ: Հանրապետության մամուլում կարելի է հանդիպել հրապարակումների, որոնցում տեսակետ է հայտնվում, թե անցած տասնամյակների ընթացքում «ձևավորել ենք մի համակարգ, որն ունի մի նպատակ՝ ցանկացած գնով ապահովել բյուջեի եկամուտները... Մինչդեռ նորմալ զարգացող երկրներում հարկային համակարգի նպատակն է խթանել տնտեսության զարգացումը, խթանել բիզնեսի և բնակչության եկամուտների աճը»: Հատկապես այս վերջին առումով դա հարկային համակարգի գործունեության ընդհանուր ճշմարտություններից է, բայց կա նաև հարցի երկրորդ կողմը, իսկ, եթե երկիրը տարիներ շարունակ գտնվում է շրջափակման մեջ, եթե, ըստ էության, պատերազմական կացություն է, եթե ... և այլն, և այլն: Սա հենց այն իրավիճակն է, ինչպես նկատում է Տ.Հարությունյանը, երբ «Տնտեսագետների շրջանում հարկման արդյունավետության մակարդակի վերաբերյալ միասնական մոտեցում գոյություն չունի: Ավելին, այն հաճախ մեկնաբանվում է տարբեր դիրքերից, և այդ նկատառումով բոլորը միակարծիք են հարկման արդյունավետության բարձրացման հարցում, բայց տարակարծիք իրացման միջոցների և ուղղությունների հետ կապված հարցերի շուրջ: Դա բնական է, քանի որ հարկման արդյունավետության մակարդակը մեծապես պայմանավորված է մի կողմից՝ ֆինանսական միջոցների նկատմամբ պետության ունեցած պահանջարկով և մյուս կողմից հարկ վճարողների վճարունակությամբ»: Այստեղ է, որ հարկային հարաբերությունների կարգավորման օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման, հարկային լծակների ընտրության կարևորման առումով կարևոր նշանակություն են ստանում տվյալ երկրի տնտեսության

առանձնահատկությունների ուսումնասիրության ու հարկման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները:

Այս իմաստով Տ.Հարությունյանը «հարկային վարչարարության» հարցերն առնչում է ՀՀ բիզնես միջավայրի հետ կապին, դիտողություններ կատարում ՀՀ հարկային ներուժի գնահատման, հարկերի հավաքագրելիության, ուղղակի հարկատեսակների դերի մեծացման, հարկային բեռի արդարացի բաշխման, հարկային արտոնությունների, հարկային պարտավորությունների կատարման վիճակի գնահատման համար իրականացված ստուգումների տվյալների վերլուծության առումներով:

Աշխ. Հարկեր և հարկագանձում, Եր. 2010 (համահեղինակներ՝ Վ.հարությունյան, Դ.Հարությունյան), Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում Եր.,2014, Հարկային բեռի արդարացի բաշխման և վարչարարության բարելավման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2014 (Գ.Ֆ.կիրակոսյանի համահեղինակությամբ), Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2016:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ

(1957)

Ծնվել է Լոռու մարզի Քարինջ գյուղում մայիսի 21-ին: 1974-ին ավարտելով Կիրովականի (այժմ Վանաձոր) ֆիզիկա-մաթեմատիկական թեքումով թիվ 1 միջնակարգ դպրոցը նույն տարում ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, իսկ 1979-ին գերազանցությամբ ավարտել Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (այժմ՝ ՀՊՏՀ) ֆինանսներ և վարկ բաժինը: Նույն տարում ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ասպիրանտուրան: 1988-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2004-ին՝ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճաններ, իսկ 2007-ին նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

Վ.Հարությունյանը եղել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող տնտեսագիտական մասնագիտական խորհրդի նախագահը, ինչպես նաև եղել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող 014 մասնագիտական խորհրդի և ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Ֆինանսներ և էկոնոմիկա» ու «էկոնոմիկա» ամսագրերի գիտական խորհուրդների անդամ: 1981-1988-ին դասախոսել է Երևանի

ժողովրդական տնտեսության ինստիտուտում, իսկ 2003-2010-ին՝ Երևանի պետական համալսարանում (համատեղությամբ)՝ «Հարկաբյուջետային քաղաքականություն», «Պետական և մունիցիպալ ֆինանսներ» և «Հարկային քաղաքականություն» իր հեղինակած առարկաները: Նա գիտահետազոտական աշխատանքներ է կատարում ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, ունի բազմաթիվ ասպիրանտներ: Նրա գիտական ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել տասնյակ ասպիրանտներ: Նա շուրջ 14 մենագրության և 100 գիտական հոդվածների (այդ թվում 10 միջազգային) հեղինակ է:

Վ.Հարությունյանը տարբեր տարիների պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել ֆինանսական, հարկային, բանկային համակարգերում և արտադրական ոլորտներում: 1979-1991թթ. աշխատել է Երևանի քաղգործկոմի ֆինանսական վարչությունում որպես ավագ տնտեսագետ (1979-1987թթ.), հաստիքային բաժնի պետ (1987-1990թթ.), ֆինանսական վարչության պետի տեղակալ (1990-1991թթ.), 1991-1992թթ.՝ Հայագրոբանկում որպես բաժնի պետ, 1992-1993թթ.՝ Հայարդշինբանկի մասնաճյուղի կառավարչի տեղակալ, 1993-1996թթ.՝ Երևանի քաղգործկոմի ֆինանսական վարչության պետ, 1996-1997թթ.՝ Երևանի քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետ, 1997-1999թթ.՝ ՀՀ հարկային տեսչության համակարգում որպես վարչության պետի տեղակալ (1997թ.), այնուհետև Շենգավիթի (1997-1998թթ.), Շահումյանի (1998-1999թթ.), Էրեբունու (1999թ.) ՏՀ տեսչությունների պետ, 1999-2000թթ.՝ Հայխնայբանկում որպես բաժնի պետ, 2000-2001թթ.՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում որպես ֆինանսական վարչության պետ, «ՀՀ երկաթուղու փոխադրումներ» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն, 2001-2002թթ.՝ ՀՀ պետական եկամուտների նախարարության համակարգում որպես էջմիածնի ՏՀ տեսչության պետ, կենտրոնական ստուգումների վարչության բաժնի պետի տեղակալ, 2002թ.՝

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում՝ որպես ֆինանսական տնօրեն, 2002-2003թթ.՝ «Արդշին» և «Արդշինինվեստ» բանկերում որպես ադմինիստրացիայի ղեկավարի գլխավոր խորհրդական, մասնաճյուղի կառավարիչ, վարչության պետ, 2003-2005թթ.՝ «Հայաստան համահայկական հիմնադրամում» որպես ֆինանսական բաժնի պետ, 2005-2006թթ.՝ «Նաիրիտ» ՓԲԸ-ում որպես ֆինանսական տնօրեն:

2006թ. նոյեմբերի 8-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, իսկ 2008-2014թթ. ընդգրկվել ՀՀ կառավարությունում մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստերի աշխատանքներին՝ ներկայացնելով ինստիտուտի դիրքորոշումները քննարկվող հարցերի վերաբերյալ:

ՀՀ կառավարությունը 2007թ. մարտի 7-ին որոշում կայացրեց տնտեսագիտական ուղղվածություն ունեցող ճյուղային տարբեր ենթակայության (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի ու գյուղատնտեսության նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն) երեք գիտահետազոտական ինստիտուտները՝ «Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ», «Գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ», «Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպել և միացնել «ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, որն իրականացվեց Վ.Հարությունյանի հետևողական աշխատանքային փորձառության շնորհիվ՝ որին հաջորդեցին միացյալ ինստիտուտի նոր կոլեկտիվի, նորացված գիտական խորհրդի, գիտական նոր ուղղությունների, ինչպես նաև ինստիտուտի գիտակազմակերպչական նոր կառուցվածքի ձևավորումը: Ինստիտուտի տնօրեն Վ.Հարությունյանի գործունեության առանձնա-

հատկություններն են. ա) հետազոտվող գիտական թեմաներին առավել շատ գործնական ուղղվածության հաղորդումը և թեմային վերաբերող եզրակացություններն ու առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը՝ վերջինիս կողմից մշակվող հայեցակարգային ու ռազմավարական փաստաթղթերում դրանք հաշվառելու և ներառելու համար, բ) հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին նվիրված հանրապետական ամենամյա գիտաժողովի անցկացումը և գիտական հոդվածների հսկայածավալ ժողովածուի հրապարակումը, գ) ինստիտուտի գիտական կոլեկտիվի երիտասարդացումը, դ) հրապարակվող գրքերի տարեցտարի ավելացումն ու որակի բարելավումը, ե) արտերկրում անցկացվող գիտաժողովներին երիտասարդության մասնակցության ապահովումը:

Երկար տարիներ աշխատանքային փորձառություն ձեռք բերելով ֆինանսական և հարկային համակարգերում Վ.Հարությունյանը դոկտորական ատենախոսություն է պաշտպանում «Հարկաբյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով և հետագա հետազոտությունների առանցք է դարձնում նշանակալից հետաքրքրություն ներկայացնող հարկաբյուջետային հիմնախնդիրները, դրանք քննարկելով ոչ միայն տեսական, այլև գործնական հարթության դաշտում: Մինչ այդ հայ հետազոտողների ուշադրությունից դուրս էին մնացել հարկային քաղաքականության սողանցքների բացասական ազդեցությունների հետևանքների ու դրանց վերացման ուղիների հիմնախնդիրները, որոնք «թաքնված են» գործող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում և հանդես են գալիս հարկային լծակների ու գործիքների ձևով (հարկադրույք, հարկման բազա, հարկման օբյեկտ, հարկային արտոնություններ և այլն): Դրանց և այլ հիմնախնդիրների լուծումներն իրենց արտացոլումն են ստացել Վ.Հարությունյանի «Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնա-

հարցերը Հայաստանի Հանրապետությունում» (Երևան, «Զանգակ-97», 2003) մենագրությունում, որում հեղինակը առաջինն է տվել. ա) ՀՀ-ում իրականացված հարկային քաղաքականության փուլային բաժանումը, բ) համալիր ու ամբողջական առաջարկներ է արել հարկային օրենսդրության կատարելագործման ուղիների վերաբերյալ և հիմնավոր ու փաստարկված քննադատության ենթարկել «Պարզեցված հարկի մասին», «Հաստատագրված վճարների մասին», «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին», «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներն ու առաջարկել «հրաժարվել հաստատագրված վճարներից և պարզեցված հարկից», որոնք կյանքի են կոչվել մենագրության հրապարակումից տարիներ անց (2009-ից):

Վ.Հարությունյանը արժեքավոր առաջարկություններ է կատարել բյուջետային քաղաքականության կատարելագործման, տեղական ինքնակառավարման համակարգի կայացման ու ֆինանսական համահարթեցման հիմնախնդիրների լուծման ուղիների վերաբերյալ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է իշխանության կառավարման տարբեր մակարդակների միջև ծախսային իրավասությունների բաշխմանը, բոլոր մակարդակների բյուջեներից ֆինանսավորվող միավոր աշխատանքների ու մատուցվող ծառայությունների նորմատիվների օրենսդրական մակարդակով սահմանմանը, համայնքային բյուջեների եկամտային բազայի ամրապնդմանը, համայնքների վարչատարածքային բաժանման խոշորացմանը, պետական պարտքի և բյուջեի դեֆիցիտի արդյունավետ կառավարմանը, պետական բյուջեի եկամուտների ու ծախսերի դասակարգման կատարելագործմանը, համայնքային բյուջեներին հատկացվող դոտացիաների արդարացի բաշխմանը, որի նպատակը հեղինակը համարում է «համայնքներում մարդկանց կյանքի որակի բարելավումը և տարբեր համայնքների միջև առկա տարբերությունների նվազեցումը»

և այլն (նշված հիմնախնդիրների ու դրանց լուծումների մասին տե՛ս «Բյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», «Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիները», «Ֆինանսական համահարթեցման հիմնախնդիրները» աշխատություններում):

2003-2008թթ. ազգային արժույթի միտումները, սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը և դրանից բխող ազդեցության տարաբնույթ դրսևորումները, շուկայական հարաբերությունների կառուցակարգային հիմքերի վերանայման քննարկումները և այլն, ստիպում են նոր դիտակետից հետազոտել արտաքին տնտեսական քաղաքականության և միջազգային համագործակցության հիմնախնդիրները, որոնք, մասնավորապես, կապված են արտահանման խրախուսման ու տնտեսության մասնագիտացման, արժութային կուրսերի և տնտեսական աճի փոխազդեցության կարգավորման, ներդրումային միջավայրի բարելավման հետ: Այս հիմնախնդիրների համատեքստում Վ.Հարությունյանն իր «Արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2009) աշխատության մեջ քննարկման առարկա է դարձրել արտաքին տնտեսական հարաբերությունների էվոլյուցիան, արտահանման աճի, տնտեսության մասնագիտացման և ազգային տնտեսության պաշտպանվածության գնահատման չափորոշիչներն ու մեթոդական հիմքերը, ՀՀ միջազգային համագործակցության ձևաչափերն ու ռազմավարությունը, արտահանման ու ներմուծման միտումները, դրանց խոչընդոտները և հաղթահարման հնարավոր տարբերակները՝ դրանք քննարկելով տեսագործնական ու մեթոդաբանական հարթությունում:

Վ.Հարությունյանի գիտական հետաքրքրությունների մի բաժինն էլ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմնախնդիրներն են, որոնք իրենց արտացո-

լումն են ստացել «Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր» (Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009) մենագրությունում: Այն ճգնաժամին նվիրված առաջին գիրքն է ՀՀ-ում, որում հեղինակը ներկայացրել է ճգնաժամի առաջացման պատճառները, առանձնահատկությունները, նրա բացասական դրսևորումները, աշխարհի թվով 39 երկրների, Արևելյան Ասիայի ու Մերձավոր Արևելքի երկրների հակաճգնաժամային միջոցառումների փորձը, և միաժամանակ կիրառական բնույթի առաջարկություններ է ներկայացրել ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության բարձրացման ուղիների վերաբերյալ: Նշված հարցերը իրենց հետագա զարգացումներն են ստացել «Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում» աշխատության մեջ:

Ամեն անգամ հետճգնաժամային ուսումնասիրությունները բնորոշվում են դրանց պատճառների բացահայտմանն ուղղված բնութագրություններով, ընդլայնելով հարցի իմացաբանական տարողությունը: Արդի պայմաններում դրանք ավելի են խճճվել որպես ներքին ու արտաքին պատճառների բազմաշերտ կապերի ամբողջություն: Իսկ, ինչպես ցույց են տալիս հակաճգնաժամային ծրագրերը, ինչպես նկատում է Վ.Հարությունյանը. «Ակնհայտ է, որ պետությունների ակտիվ գործողությունների արդյունքում հնարավոր դարձավ համեմատաբար արագ կերպով հաղթահարել ճգնաժամի ստացման փուլը և տնտեսությունը բերել բնականոն գործողության վիճակի… դառնալով տնտեսական, ֆինանսական, իրավական, կազմակերպչական և կառավարչական գործընթացների կազմակերպիչն ու ուղղորդողը»: Նշված հարցերը քննության առարկա են դարձել «Պետական հակաճգնաժամային քաղաքականության միջազգային փորձը և դրա վերլուծությունը», «Հակաճգնաժամային միջոցառումները և մակրոտնտեսա-

կան հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները» մենագրություններում:

Շուկայական տնտեսակարգը ենթադրում էր հանրապետության հարկային համակարգի արմատական փոփոխություն: Սակայն, թեև իր ամբողջության մեջ ուրվագծվել է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը, սակայն նրա օրենսդրական դաշտում դեռևս առկա են անորոշություններ, հակասական կողմեր՝ հարկաբյուջետային իրավասությունների և սոցիալ-տնտեսական պատասխանատվությունների կենտրոնի ու տեղերի հստակեցման և այլ առումներով: Եվ, ոչ պատահականորեն, վերջին տարիներին ինստիտուտում համակարգված ուսումնասիրությունների առարկա է դարձել հարկային համակարգը՝ հետազոտական տարբեր խմբերի կողմից՝ ուշադրության առնելով նրա տարբեր շերտերը Վ.Հարությունյանի ղեկավարությամբ: Այս իմաստով հատկապես ուշագրավ պետք է դիտել «Հարկեր և հարկագանձում» ծավալուն աշխատությունը (հեղ.՝ Վ.Հարությունյան, Դ.Հարությունյան և Տ.Հարությունյան) (Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010): Այն հետաքրքիր տեղեկություններ է պարունակում հարկերի և հարկագանձման սկզբունքների ու տեսահրավական հիմքերի վերաբերյալ սկսած հին աշխարհից, ինչը գալիս է հաստատելու, որ ժամանակակից գրեթե բոլոր հարկատեսակներն այս կամ այն չափով ունեցել են իրենց նախնական դրսևորումները և, որ հարկերը տնտեսական հարաբերությունների ամենահնագույն ձևերից են: Ընդհանրապես, պետության մեջ հարկային հարաբերությունները արտահայտվում են հարկային քաղաքականության մեջ, որը կոչված է պետության գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովման, ազգային տնտեսության արդյունավետության բարձրացման բարենպաստ պայմանների ստեղծման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Սակայն, ինչպես նկատում են հեղինակները. «Հարկային քաղաքականությունը տնտեսության պետա-

կան կարգավորման այն տեսության ածանցյալն է, որը որդեգրում է տվյալ երկրի իշխանությունը:

1990-ական թվականների ՀՀ-ի համար այդպիսին մոնետարիստական տեսությունն էր, որում շուկայական տնտեսությանն անցնող երկրների վերաբերյալ ցուցումներ չկային, և վերածվեց արագ վերականգնման հույսերի էյֆորիայի»:

Աշխատության մեջ ՀՀ հարկային օրենսդրության պատմությունը բաժանվում է երկու փուլերի՝ 1992-1997թթ.՝ որպես առաջին կամ ձևավորման փուլ և 1997-ից հետո որպես երկրորդ կամ բարեփոխումների փուլ: Ինչպես ամբողջ տնտեսական համակարգի, այնպես էլ նրա մի մասը կազմող հարկային համակարգի համար դա բեկման ժամանակաշրջան էր, երբ նորմատիվ օրենքներով կարգավորվածությունը, գործողության մեջ դրված հարկատեսակներն ու տուրքերը հաճախ իրական հատվածում ունենում էին այլ հետևանքներ, ազգային տնտեսության աճի լծակներից վերածվելով «պատժամիջոցների»: Նշված հարցերը ստացել են համապատասխան մեկնություններ և ժամանակի հոսքի մեջ վեր հանել հարկատեսակների և տուրքերի գործողության սահմաններն իրենց հակասական և կատարելագործում ակնկալող պարագծերում: Տնտեսական կյանքի երևույթները մշտապես գտնվում են հակադրության բանաձևի առաջ, ո՞րն է ճիշտ, ո՞րը սխալ, եթե դա ճշմարիտ է մի երկրի համար, ինչու է անընդունելի մեկ ուրիշի համար, ինչպես համադրել այդ անջատումը և բազմաթիվ այլ հարցեր վերջին տասնամյակներին ուղեկցել են «հարկային հիմնախնդրի» հետ կապված վերլուծությունների ժամանակ: Այս իմաստով «Հարկեր և հարկագանձում» մենագրությունը հարկային պարտավորությունների հաշվարկման օրենսդրական և մեթոդաբանական հիմքերը ՀՀ-ում, հարկման արդյունավետության և պետական բյուջեի հարկային եկամուտների գնահատականը ՀՀ-ում, ՀՀ հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման ու օրենսդրական մոտեցումները

ՀՀ-ում, փոքր ու միջին ձեռնարկատիրության հարկման հիմնախնդիրները և դրանց լուծման մոտեցումները ՀՀ-ում, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները և հակաճգնաժամային միջոցառումների բարելավման ուղիները, ըստ էության ՀՀ հարկային օրենսդրության ընթերցումներն են կոնկրետացված ազգային տնտեսության տեսադաշտի վրա իրականության հետ համադրման, պարզաբանումների և միջազգային փորձի հաշվառման առումներով:

Ինստիտուտի գիտական թեմատիկայում կարևոր տեղ է հատկացվել գիտելիքահենք տնտեսության հիմնախնդրին: Հասարակության զարգացման պատմությունը, ըստ էության գիտելիքի զարգացման պատմություն է: Արդի տնտեսության զարգացման ու տնտեսական մրցակցության հիմնահարցերն ուղղակիորեն կապված են գիտության ու կրթության լծակների հետ: Հենց այդ փոխադարձ կապին է նվիրված «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» աշխատությունը (հեղինակներ՝ Յու.Սուվարյան, Վ.Հարությունյան, Վ.Սարգսյան, Վ.Խաչատրյան): Նրանում անդրադառնալով տնտեսական զարգացման վրա գիտակրթական համակարգի ներազդեցության գնահատման մեթոդաբանական առանձնահատկություններին, կրթության դերը դիտարկվում է տարբեր համակարգերի հիերարխիայում, այն կոնկրետացնելով ՀՀ տնտեսական զարգացմանը, կատարելով որոշակի ընդհանրացումներ ու առաջարկություններ: Նշված աշխատության օրգանական շարունակությունն է նույն հեղինակների «Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը» ուսումնասիրությունը: Ինչպես նշվում է աշխատության ներածականում, կրթության և գիտության փոխադարձ կապի հարցերը մակրոմակարդակում հաճախ կատարվում են «միասնական կառավարման մեկ մարմնի (նախարարության) միջոցով: Սակայն տնտեսության նորամուծական զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությունը ներկայումս օրախնդիր է դարձնում ստեղծել կառավարման այնպիսի համակարգ, որն ապահովի կրթության, գիտության և ար-

տադրության իրական միասնացումը»: Հենց այդ դիտակետից էլ միջազգային փորձի քննության արդյունքում փորձ է արվում բացահայտել հանրապետության «դեռևս չլուծված հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիները»:

Ընդհանրապես տասը տարին մի ժամանակահատված է, որը պատկերացում է տալիս ցանկացած գործողության արդյունքների մասին: «Տնտեսագիտության ինստիտուտը տասը տարում. 2006-2016 (հետազոտական արդյունքների ուրվագիծ)» աշխատությունը (հեղինակներ՝ Վ.Հարությունյան, Ռ.Սարինյան) կատարած աշխատանքների լոկ խրոնոլոգիա չէ, այլ այդ ժամանակաշրջանում ինստիտուտի գործունեության, ըստ ուղղությունների հրատարակված աշխատությունների հանգամանալից վերլուծություն, որը պատկերացում է տալիս ինստիտուտի տնտեսագիտական մտքի տեսական և կիրառական հարցերի առջադրվող լուծումների տեսադաշտի վերաբերյալ:

Վ.Հարությունյանը գիտության և կրթության բնագավառում մատուցած ակնառու ծառայությունների համար 2013 թվականի հոկտկտեմբերի 14-ի ՆՀ-260-Ա հրամանագրով պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով: ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից 2014 և 2016 թվականներին գիտատեխնիկական և գիտական թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների համար հայտարարված հանրապետական մրցույթի հաղթող է:

Աշխ. Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003, Բյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007 (համահեղինակ և պատասխանատու խմբագիր), Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիները, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008 (համահեղինակ), Ֆինանսական համահարթեցման հիմնախնդիրները, Եր., ՀՀ

ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008 (համահեղինակ), Модели социального страхования в постсоциалистической системе социальной поддержки населения. Сравнительный анализ опыта стран СНГ (Армения), Общество и экономика, -М., 2008 (համահեղինակ), Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008 (համահեղինակ և պատասխանատու խմբագիր), Արտահանման աճի և տնտեսական մասնագիտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009 (համահեղինակ), Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009 (համահեղինակ և պատասխանատու խմբագիր), Նշանավոր տնտեսագետների տողանը (հետքեյնսյան շրջան) գիտակենսագրական ուրվագծեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009 (գիտական խմբագիր), Ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանում և աշխարհում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009 (համահեղինակ և գիտական խմբագիր), Հարկեր և հարկագանձում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010 (համահեղինակ), Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010 (համահեղինակ), Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010 (համահեղինակ և պատասխանատու խմբագիր), Հայ տնտեսագետներ (գիտակենսագրական ուրվագծեր), Եր. 2010, (համահեղինակ), Հակաճգնաժամային միջոցառումները և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները, Եր., 2011 (համահեղինակ), Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչքեյնսյան շրջան) գիտակենսագրական ուրվագծեր Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012 (համահեղինակ), Պետական հակաճգնաժամային քաղաքականության միջազգային փորձը և դրա վերլուծությունը, Եր., 2014 (համահեղինակ), Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում 2006-2016թթ. (հետազոտական արդյունքների ուրվագիծ) Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016 (համահեղինակ):

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԻՐԻՆԱ ՌՈՒԲԵՆԻ

(1945)

Ծնվել է Գորիսում: 1960-ին ավարտել է Ա.Բակունցի անվան միջնակարգ դպրոցը և ընդունվել Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը, որն ավարտել է 1965-ին: Մինչև 1980թ. աշխատանքի է գործուղվել Երևանի համալիր էլեկտրասարքավորումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտ՝ բարձր պտտունակության գեներատորներ և ագրեգատներ բաժնում որպես ինժեներ, ավագ ինժեներ, կոնստրուկտոր: 1980-2006-ին աշխատել է «Նեյտրոն» ԳԱՄ-ում առաջատար ինժեներ, գլխավոր տնօրենի տեղակալ՝ գիտական աշխատանքների գծով: 1984-1988-ին եղել է Լենինգրադի Կալինինի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ասպիրանտ՝ մեքենաշինության արտադրության էկոնոմիկա ամբիոնում, որտեղ էլ 1989-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1987-1991-ին համատեղությամբ դասախոսել է ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության նախարարության ղեկավար աշխատողների և մասնագետների վերապատրաստման ինստիտուտի Երևանի մասնաճյուղում՝ որպես ավագ դասախոս: 1988-1996-ին աշխատել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալ-

սարանի (պոլիտեխնիկ) արդյունաբերական ձեռնարկությունների և էներգետիկայի տնտեսագիտություն, կազմակերպում, պլանավորում և կառավարում ամբիոնում որպես ավագ դասախոս: 1996-2011-ին դասախոսել է Ակադեմիական միջազգային ինստիտուտի (Մոսկվա) Երևանի մասնաճյուղում՝ զբաղեցնելով դոցենտի, իսկ 2000-ից՝ պրոֆեսորի պաշտոնները: 1999-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Բարդ տեխնոլոգիական համակարգերի տնտեսական հիմնավորման խնդիրները և լուծման մեթոդական մոտեցումները» թեմայով և ստացել տնտեսագիտության դոկտորի աստիճան: 2000-ին ընտրվել է Սանկտ Պետերբուրգի բնապահպանության և անվտանգության կենսագործունեության գիտությունների միջազգային ակադեմիայի, 2004-ին՝ Հայաստանի տեխնոլոգիական ակադեմիայի ակադեմիկոս (իսկական անդամ) և փոխնախագահ, 2012-ին՝ Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի իսկական անդամ: ՀՀ ԳԱԱ-ի գիտակրթական միջազգային կենտրոնի պրոֆեսոր է:

Մեքենաշինության և ռազմաճարտարագիտության բնագավառներում ներդրած գիտական գործունեության համար Սանկտ Պետերբուրգի բնապահպանության և անվտանգության կենսագործունեության գիտությունների միջազգային ակադեմիայի նախագահության որոշմամբ 2002-ին պարգևատրվել է Մ.Վ.Լոմոնոսովի անվան ոսկե մեդալով, 2007-ին՝ «Գիտնականի աստղ» շքանշանով, շնորհվել է նաև «Գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր կոչումը:

Ի.Հովակիմյանի «Технико-экономическое обоснование выбора оптимальных вариантов технических решений» մենագրության մեջ արծարծվում են արդյունաբերական արտադրության ավտոմատացման տնտեսական հարցերը, տեխնիկայի և տեխնոլոգիայի մի շարք նվաճումների մշակման և գործնական կիրառության խնդիրները:

ՀՀ տնտեսությունը ստագնացիոն վիճակից դուրս բերելու համար, Հովակիմյանը կարևորում է անցումը նոր,

առավել լիբերալ տնտեսական հարաբերություններին, ինչի արդյունքում կտրուկ կմեծանա արդյունաբերության և տնտեսության կատարելագործման նշանակությունը: Այս առումով, ժամանակակից արդյունաբերության զարգացման համար մեծ նշանակություն են ձեռք բերում տնտեսական, տեխնիկական և տեխնոլոգիական հարցերի օպտիմալ լուծումը, թողարկվող արտադրանքի որակի, մրցունակության, աշխատանքի արտադրողականության անընդհատ բարձրացումը, մետաղի և այլ նյութերի ծախսերի կրճատումը, թողարկվող արդյունքների ինքնարժեքի ու քաշի իջեցումը: Իսկ այս ամենը հնարավոր է միայն գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների հիմքի վրա: Հովակիմյանը մեծ տեղ է հատկացնում նոր էլեկտրական մեքենաների ու ապարատների, ավտոմատ ռոտորների ու ռոտորափոխակրիչային հոսքային գծերի նախագծման և կոնստրուկտորական աշխատանքների լուծման նորագույն մոտեցումներին (1988-1998-ին նրա մասնակցությամբ «Նեյտրոն» ԳԱՄ-ում ստեղծվել և կատարելագործվել են 24 տեսակի ավտոմատ ռոտորային և ռոտորա-փոխակրիչային հոսքագծեր և համալիր ավտոմատ ռոտորային համակարգ, որոնք նախատեսված էին փոփոխական ռեզիստորների և ռազմական այլ կարևոր սարքերի մասսայական արտադրության համար):

Հովակիմյանը շուրջ հարյուր գիտական և ուսումնական հրապարակումների հեղինակ է:

Աշխ. Ֆունկցիոնալ արժեքային վերլուծություն (ուսումնական ձեռնարկ), ՀՊՃՀ, 1995, Функционально-стоимостный анализ в проектировании специального технологического оборудования, Ер., 1997, Технико-экономическое обоснование выбора оптимальных вариантов технических решений, Ер., 1999, Проблемы экономического обоснования сложных технологических систем и методические подходы их решения, Ер., 1999, Մենեջմենթի հիմունքներ (ուսումնական ձեռնարկ), Եր., 2006: Ծառայությունների մարքեթինգային հաղորդակցություն (ուսումնական ձեռնարկ), Եր. 2016, Գովազդ և մերչենդայզինգ (ուսումնական ձեռնարկ), Եր., 2017:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԲԳԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

(1849-1904)

Ծնվել է Թիֆլիսում: Սկզբում սովորել է Կարապետ Եզեկյանի պանսիոնում, ապա Պետերբուրգի և Թիֆլիսի գիմնազիաներում: Պետերբուրգի համալսարանում մեկ տարի իրավաբանական ֆակուլտետում սովորելուց հետո, ուսումը շարունակում է Լայպցիգի համալսարանում, ավարտելով փիլիսոփայական ֆակուլտետի տնտեսագիտական բաժինը՝ 1872-ին ստանաում է փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան: Այնուհետև Պետերբուրգում շուրջ մեկ տարի ֆինանսական ու հաշվապահական գիտություններում խորանալուց հետո վերադառնում է Թիֆլիս և ստանձնում առևտրական բանկի տնօրենի պաշտոնը: 1879-ից մինչև կյանքի վերջը աշխատել է որպես փոխադարձ վարկի ընկերության կառավարիչ: 1879-80-ին Թիֆլիսի հայկական թատրոնի տնօրենն էր, 1880-89-ին՝ իր իսկ ստեղծած «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության ընկերության» նախագահը: 1876-81-ին լույս է ընծայել «Փորձ» ազգային գրական հանդեսը, որը նյութական դժվարություններով պայմանավորված փակվում է: 1882-98-ին հրատարակել է «Արձագանք» պարբերաթերթը: Նա մեծապես նպաստեց հայ գրականությունն ու մշակույթը եվրոպական ընկերություններին ներկայացնելու գործին:

Ինչպես «Փորձը», այնպես էլ «Արձագանքը» հատկապես, բազմիցս անդրադարձել են երկրամասի տնտեսական փոխակերպությանը: Դեռևս ժամանակին «Փորձը» հասարակական զարգացումը և առաջադիմությունը համարում էր որպես օրինաչափ երևույթ, որպես անընդհատ փոփոխման ու լինելիության շարունակական շղթա, կապիտալիզմը դիտելով որպես անհատականության սկզբունքի հաստատման և բանականության ժամանակաշրջան, զետեղում հոդվածներ, խոսում էր քաղաքակրթության այն նվաճումների մասին, որոնք ուղղված էին «ժողովրդի նյութական բարեկեցությանը»:

Տնտեսության նոր կացութաձևը ուղի էր հարթում նաև Անդրկովկասում: Ա.Հովհաննիսյանը և «Արձագանքի» մյուս տեսաբաններն այն համարելով անխուսափելի, Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման, տեղական բուրժուազիայի դերի և օտար կապիտալների մուտքի, արտադրության կատարելագործման, առևտրական բուրժուազիայի, գյուղական համայնքների, սոցիալական և այլ հարցերի վերաբերյալ ընդհանրություններ էին հայտաբերում ազատամտական հայեցության հետ: Սակայն զերծ էին պահպանողական մյուս թևի («Մեղու Հայաստան», «Նոր Դար») «ծայրահեղություններից»: Ա.Հովհաննիսյանը միտում ուներ միջակա դիրք գրավել ազգային-պահպանողական և ազատամտական հոսանքների միջև, որն ուրույն երանգ է տալիս նրա սոցիալ-տնտեսական հայեցությանը: «Փորձ» և «Արձագանք» պարբերականները, որոնց Ս.Սարինյանն անվանում է լիբերալ-պահպանողականներ՝ ելակետ ունենալով ազգի «բարոյական ամբողջության» պատմափիլիսոփայության ընդհանուր սկզբունքը, միաժամանակ հայտաբերում էին որոշ առանձնահատկություններ. «Ազգային պահպանողական հոսանքի լիբերալ թևը 90-ական թվականներին շարունակում էր իր գոյությունը Աբգար Հովհաննիսյանի «Արձագանք» շաբաթաթերթում: Չբաժանելով կապիտալիզմի նորդարական ռոմանտիկական քննադատությունը, պահպանողականների լիբերալ գաղափա-

ռախոսություններն ավելի արմատական ձևով էին դնում հասարակության բուրժուական զարգացման անհրաժեշտությունը, հավատում բուրժուական քաղաքակրթության բարօրությանը, պահպանողական ծայրահեղությունները չափավորելով ինտելիգենտական շրջահայեցությամբ: «Արծագանքի» գաղափարախոսները տարամիտվելով բուրժուական լիբերալների հետ՝ ազգային եկեղեցու, սովորությունների, ավանդական հաստատությունների հարցում նորից հակում են ցուցաբերում չափավորելու ազգային պահպանողականների ծայրահեղ սեպարատիզմը»:

«Արծագանքը» տեսնում էր ազգի բարոյական դիմապատկերի կախվածությունը սոցիալ-տնտեսական պայմաններից՝ հանգելով մարդկության աստիճանական կատարելագործման գաղափարին: Երկրամասում կապիտալիստական հարաբերությունների հաղթանակի անխուսափելիության գիտակցումը թերթի տեսաբաններն առաջադրում էին ավատական կապերը, ազգային ավանդույթներն ու սովորությունները նոր հարաբերությունների հետ սինթեզելու հայեցությունը. «Միանգամայն ապարդյուն կլինի հասարակության մեջ նահապետական կյանքը պահպանելու բոլոր ջանքերը, հասարակություն, որ ամենուրեք անհատականության տարրերի վրա է հիմնված: Խնդիրն այն է, որ նահապետական կյանքի գերդաստանական տարրերն այնպիսի տարրերով փոխարինվեն, որոնք գերդաստանական կապերին առաջվա ամրությունը տային, իհարկե նոր սկզբունքների վրա հիմնվելով», դրանով իսկ ազգային սոցիալական ու մշակութային առաջընթացի խնդիրը լուծել համաշխարհային քաղաքակրթության համընթացի մեջ:

Ռ.Ն.ՍԱՐԻՆՅԱՆ
Վ.Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՐԿՈՒ ԴԱՐԸ

Գիտակենսագրական հանրագիտարան

I

Ա - Ղ

Հրատարակչության խմբագիրներ՝ Ա. Հովակիմյան, Լ. Սահակյան
Համակարգչային շարվածքը՝ Մ. Բաբայանի
Էջադրումն ու ձևավորումը՝ Մ. Համբարձումյանի

Հրատ. պատվեր № 756
Չափսը՝ 60×84 1/16, 29 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան 24: